


ՄԵԾԵՐԸ

ԱՄԵՆԱՄԵԾԻ ՄԱՍԻՆ

(Վերնադրան անդամները Թումանյանին)



929: 891, 981 / 1 մեծագույն



ՄԵԾԵՐԸ ԱՄԵՆԱՄԵԾԻ ՄԱՍԻՆ

(ԿԵՐՆԱՏԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ)

**ԿԱԶՄԵՅ ԵՎ ԱՍԱԶԱԲԱՆԸ ԳՐԵՅ
ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԸ**

A II
85399



ՊՏԴ 891.981.0

ԳՍԴ 83.371

Մ 857

ԳԻՐՔԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 130-
ԱՄՅԱԿԻ ԵՎ ՎԵՐՆԱՏԱՆ ԶԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՎՈՐԹԻՎ
ԴՍԵՂՅԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱՍԵՐ **ՍԱՄՎԵԼ ԶՐԱՅՐԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ**
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Մ 857 – Մեծերը ամենամեծի մասին (Վերնատան անդամները
Թումանյանին) – Եր.: ԶԶ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999,
156էջ, 14նկ.:

Ղաբասկյաքի հայ գեղարվեստական մշակույթի կենտրոնական դեմքը
Թումանյանն էր: Նրա հյուրընկալ տանը լինում էին այդ մշակույթի գրեթե
բոլոր աչքի ընկնող մարդիկ: Բայց Վերնատուն գրական խմբավորման
անդամները միայն վեցն էին՝ Ղապարոս Աղայան, Հովհաննես Թումանյան,
Լևոն Շանթ, Նիկոլ Աղբալյան, Ավետիք Իսահակյան և Գերենիկ Գեմիլոնյան:

Այս գրքում տեղ են գտել բացառապես Վերնատան անդամների այն
նամակները, հուշերը և հոդվածները, որոնք վերաբերում են Թումանյանին
և Վերնատանը:

Մ 4603010000
703(02)-99

ԳՍԴ 83.37

ISBN 5-8080-04-01-2

*Կազմի վրա՝ Վերնատան անդամների լուսանկարը (1903): Նստած են՝
Իսահակյան, Աղայան, Թումանյան: Կանգնած են՝ Շանթ և Գեմիլոնյան:
Բացակայում է Աղբալյանը, որ այդ ժամանակ գտնվում էր Պետերբուրգում:*

ՎԵՐՆԱՏՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ԵՂԵԼ Է

1985-ի աշունն էր:

Թումանյանի տուն-թանգարանում տնօրենի՝ բանաստեղծի կրտսեր դուստր Թամարի եռանդուն ջանքերով վերականգնվել էր Վերնատան սենյակը: Ինձ պատիվ արվեց խոսք ասելու բացման հանդեսին: Հետո այդ խոսքը («Վերնատունը, ինչպես եղել է») տպագրվեց «Գրական թերթում»:

Հիմա 1999-ի ծմեռն է:

Թումանյան հայրենակցական ընկերությունը բանաստեղծի ծննդյան 130-ամյակի և Վերնատան հիմնադրման 100-ամյակի առիթներով, ի շարս այլ նախաձեռնումների, սիրով համաձայնեց մի ժողովածու լույս ընծայել «Մեծերը ամենամեծի մասին» վերնագրով, ուր պետք է տեղ գտնեն բացառապես այն նյութերը, որ գրել են Վերնատան անդամները Թումանյանի մասին:

Ճիշտն ասած, առաջարկն ինձնից էր գալիս, ու ես էլ հանձն առա կազմել ժողովածուն և գրել առաջաբանը: Հանձն առա ի սրտե, ինչպես ամեն ինչ, որ կապվում է Թումանյանի հավերժ նվիրական անվան հետ: Կարդացի տասնչորս տարի առաջ գրածս խոսքը և տեսա, որ հիմա ավելի լավ, ավելի ներշնչված չեմ կարող գրել. ո՛չ տարիքս է է՛ն, ո՛չ տրամադրությունս: Մտածեցի, որ ավելի լավ է տպագրել հիմ գրվածը՝ սկզբից և վերջից անհրաժեշտ հավելումներ անելով:

Եվ այսպես, 1985-ի հոկտեմբերի 25, Թումանյանի տուն-թանգարան (առաջ այդպես էր կոչվում, հետո միանգամայն իզուր «տուն»-ը հանեցին), խոսք Վերնատան սենյակի բացման հանդեսին.

«Այսօր, միայն այսօր, ես կուզենայի, որ ինձ լսեն փակ աչքերով. պատճառն այն չէ միայն, որ այնքան տպավորիչ ասել է Լևոն Շանթի Վանահայրը՝ «Աշխարհիս երեսին եթե տեսնել կուզես ինչ որ սրտիդ ուզածն է՝ պետք է նայիս փակ աչքերով»: Պատճառն այն է նաև, որ իմ խոսքը հասցեագրված է ձեր երևակայությանը, իսկ երևակայությունը պատրանքներ սիրում է հյուսել այն ժամանակ, երբ կողմնակի ոչինչ չի շեղում իր սևեռումը:

Այն, ինչ պիտի ասեմ իմ ունկնդիրներին, ուրիշ բան չէ, քան հրավեր մի քանի ռոպեով – փսոսու, որ մի քանի ռոպեով միայն – պոկվելով մեր առօրյա կենցաղից ու հոգեմաշ հոգսերից, երևակայության ուժով ետ գնալու մինչև անցյալ դարի ամենավերջին ու ներկա դարի առաջին մի քանի տարիները, երբ գործել է գրական ու ընկերական այն երջանիկ խմբավորումը, որ կրել է Վերնատուն գեղեցիկ անունը և որին նվիրված է մեր այսօրվա հանդեսը:

Մի հրավեր՝ ձեզ հետ միասին գնալու Թիֆլիսի Բեիբության փողոցի 44-րդ տունը, առանց վերելակի բարձրանալու այդ տան 5-րդ հարկը, հաղթահարելով 102 աստիճան, և մտնելու Վերնատուն, որի վերստեղծման առիթով ենք հավաքվել այս հարկի տակ:

1899-1904 թվականներ՝ Հովհաննես Թումանյանի կյանքի ամենալավ, ամենի՛ց բախտավոր տարիները, որ ամենայն իրավամբ կարող ենք կոչել Վերնատան տարիներ: Նա, ասես, ծնվել և ապրել էր գլխավորապես այս հինգ-վեց տարվա համար:

Ինչո՞ւ այսպես անվերապահ: Որովհետև, եթե «Հովհաննես Թումանյան» կոչվող վիթխարի երևույթն անմտածելի, աներևակայելի է առանց «Փարվանայի», «Թմկաբերդի առման», «Սասունցի Դավթի», առանց վերստեղծված «Անուշի» և «Լոռեցի Սաքոյի», երկեր, որ Իսահակյանի համոզմամբ «կազմում են մեր գրի ամնահ փառքն ու զոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը», ապա այդ երկերը ստեղծվել կամ վերստեղծվել են հիշած տարիներին:

Վերնատան ընկերական կյանքի և իր անհատական կյանքի վերելքների համընկնում: Երկուսի բարձրակետը միաժամանակ:

Պատահակա՞ն զուգադիպություն:

Ի հարկե, ոչ:

Վերնատունը հանգամանքների շատ բարդ խաչաձևման նվերն էր Թումանյանին, նրա անդամներին, հայ գրականության պատմությանը, նրա ամենագեղեցիկ ու հրապուրիչ էջերից մեկը:

Ահա և հրավիրում եմ ձեզ մտնելու Վերնատուն և տեսնելու, թե ինչով են զբաղված մեր վերնականները:

Նախ իմանանք, թե ովքեր էին նրանք: Ժողովրդական գիտակցության մեջ՝ գրեթե բոլոր աչքի ընկնող գրողներն ու մտավորականները, որ լինում էին Թումանյանի տանը: Բայց ո՞վ միայն չէր լինում նրա տանը: Վերնականնե՞ր էին բոլորը: Ոչ:

Վերնականները վեցն էին. թվեմ հասակի կարգով՝ Ղազարոս Աղայան, Հովհաննես Թումանյան, Լևոն Շանթ, Նիկոլ Աղբալյան, Ավետիք Իսահակյան, Դերենիկ Դեմիրճյան:

Ասեմ նաև, չգիտես ինչու մենք նրանց պատկերացնում ենք իբրև մշտապես տարիք առած պատկառելի մարդիկ: Մինչդեռ, երբ

Վերնատունը սկսեց գործել, միակ տարեցն Աղայանն էր, որ վաթսուն էլ չկար, բայց ընդունվում էր իբրև պատկառելի ծերունի, որին Նահապետ էին կոչում: Այն ժամանակ մարդիկ պատկառելի էին: Թումանյանը և Շանթը երեսունն էլ չէին լրացրել, Աղբալյանը 26 տարեկան էր ընդամենը, Իսահակյանը՝ 24, Դեմիրճյանը՝ 22... Մարդու հավատալն իսկ չի գալիս:

Միջազգային և ազգային երկնականաբար համեմատաբար հստակ էր ու խաղաղ, ավելի, քան դրանից մի քանի տարի առաջ և շատ ավելի, քան պիտի լիներ մի քանի տարի անց:

Երիտասարդ, համեմատաբար անհոգ մարդիկ, որ կամ դեռ երեխաներ չունեին, կամ երեխաները դեռ փոքր էին, ուստի և հայրական հոգսերը՝ նույնպես: Դեռևս չունեին կուսակցական հակադիր շեշտված դիրքորոշումներ, որ պիտի գային հետո՝ ջրբաժան քաշելու երբեմնի մտերիմների միջև: Նրանք միասնական էին գրականության դերի ընդհանուր հասկացությամբ, որ, ըստ Դեմիրճյանի, հակադիր էր ազգայնական նեղմիտ ըմբռնումներին:

Եվ, ահա, այդ հողի վրա ի մի էր եկել այս վեցյակը՝ յուրաքանչյուրն իր անհատականությամբ, լրացնելով միմյանց ամեն մեկն իր բնաշխարհի գույներով, մտածողության յուրահատկություններով, իրենց անկրկնելի բնավորությամբ ու նկարագրով:

Նրանք չգիտեին, որ իրենք հայ գրականության դասականներն են դառնալու:

Եվ դա էր լավը:

Զգիտեին, որ իրենց Վերնատունը գրական մարդկանց մտերմության իրոք որ պատմական իրողություն է:

Եվ լավ է, որ չգիտեին:

Այն էլ չգիտեին, որ այդ մի քանի տարին իրենց կյանքի ամենաերջանիկ տարիներն էին, որ հետո պիտի մտաբերեին բաղձանքով:

Եվ լավ է, որ այդպես էր՝ երջանիկները չեն գիտակցում իրենց երջանկությունը, ինչպես երեխաները:

Նրանք պարզապես տաղանդավոր մարդիկ էին, ի վերուստ շռայլորեն օժտված մարդիկ, արվեստի, գրականության, պատմության, գեղագիտության մասին, ազգային և միջազգային կյանքի մասին ունեցած մեծ խոհերով լեցուն անհատներ: Մարդիկ, որ միմյանց ասելու և միմյանց լսելու շատ բան ունեին, և ասում ու լսում էին ժամերով, երբեմն մինչև լուսաբաց: Ասում և լսում էին՝ շաբաթը մեկ-երկու անգամ հավաքվելով ամենախյուրասեր հայ մարդու հարկի տակ:

Գործող անձանց ներկայացնելուց հետո, վերջապես, իմանանք, թե ինչ էին անում նրանք, որն էր նրանց գործի անունը:

Եթե ուզում ենք իմանալ՝ լավագույնը չէ՞ ունկնդիրը լինել նրանցից

մեկի, այնպիսի անխաղճախ մի վկայի, որ Ավետիք Իսահակյանն է.

«Ընթերցում էինք մեր նոր գրած բաները, քննադատում, կարծիքներ փոխանակում: Խոսում էինք հայ, ռուս և օտար գրական նորությունների մասին, հաղորդում իրար մեր տպավորությունները:

Ի՞նչ նյութերի շուրջը ասես՝ չէր դառնում մեր զրույցը: Խոսում էինք հասարակական և քաղաքական երևույթների մասին: Խոսում ազգերի պատմությունից, ժողովուրդների կյանքից, արվեստներից, փիլիսոփայությունից և մանավանդ գրականությունից: Կարդում էինք դասական հեղինակներից՝ արևմուտքի և արևելքի, նույնպես նոր հեղինակների գործերը: Մեզնից յուրաքանչյուրն իր սիրած հեղինակն ուներ, որ ի մի գումարած ընդգրկում էր վերջ ի վերջո գրեթե բոլոր հանճարները...» «Ինքնաբերաբար, մեր հավաքույթների առաջին շրջանում, լուրջ թե կատակով, փափագ զարթնեց մեր գրական խմբակին, մեր հավաքույթներին անուն տալ: Օհաննեսն ասաց, թե Գոնկուր եղբայրներն իրենց գրական խմբակն ունեին (որի անդամներն էին Էմիլ Զոլա, Ալֆոնս Դոդե, Տուրգենև, Յուսիմանս...), որ հավաքվում էին Գոնկուրների տան վերնահարկում, որին «Ամբար» անունն էին տալիս: Նույն նմանողությամբ, չեմ հիշում ում կողմից, առաջարկվեց «Վերնատուն» անունը. իսկույն հավանություն տվինք, գտնելով այն շատ պատշաճ և տեղին, որովհետև Օհաննեսի բնակարանն այն ժամանակ չորրորդ՝ հարկում էր: Կնքեցինք «Վերնատուն» անունով մեր հավաքույթների վայրը:

Այդ անունն այլևս ընդմիշտ կապվեց մեզ հետ և քաղաքացիություն ստացավ: Հասարակության մեջ պարզապես կիրառվում էր՝ «Վերնատան» անդամները»:

Ի՞նչ տարակույս, որ, ամեն ինչից բացի, Վերնատունը եղել է մի տեսակ գրական համալսարան, և այն պարագան, որ հետագայում Բրյուսովը թուևանյանին «ավտոդիդակտ»՝ ինքնակիրթ պիտի կոչեր, այդ ինքնակիրթը Վերնատանն է կրթվել, համեմայնդեպս՝ նաև Վերնատանը: Եվ, իհարկե, սա վերաբերվում է ոչ միայն թուևանյանին:

Վերնականներից մեկ ուրիշը՝ Լևոն Շանթը, հուշեր չի թողել Վերնատան մասին, բայց թուևանյանին հղած նրա նամակները լեցուն են բավականաչափ տվյալներով և Վերնատան այնպիսի բուռն կարոտով, որ պատկերացում են տալիս, թե ինչ է կատարվել այնտեղ:

Նրան էլ լսեմք. «Այսպես ուրեմն՝ մնացեր ես դուռ մեր Վերնատան հավատարիմ պահապան. կուզանք, Հանես ջան, կուզանք, կժողվվինք նորեն, կկարդանք նորեն մեր Սոֆոկլեսն ու Սերվանտեսը, կխոսինք նորեն ամբողջ ծմեռվան երկար գիշերներով հիմեն-նորեն, գյուղեն ու

Իսահակյանը սխալվում էր՝ հինգերորդ:

«խաչախներեն», տակնուվրա կանենք նորեն մեր ամբողջ գրականությունը ու կտաքնանք ու կոզկորվինք մեր սկզբունքներով, մեր տաղանդով, մեր գործովն ու գիտելիքներով... Իսկ առայժմ համբույրներս կլրկեն քեզի, մտերիմ ընկերոջ ջերմ, մաքուր, անկեղծ համբույրներ: Լևոնդ»:

Այսքան տաքուկ, գեղունակի նամակ այնքան զուսպ, սեղմ կոճկված Շանթից՝ անհավատալի է նույնիսկ: Բայց իրողություն է սա, քանի որ ակունքը Վերնատունն է:

Վերնականներից ամենակրտսերը՝ Դերենիկ Դեմիրճյանը, որ մեր ժամանակներում արդեն պիտի դառնար Թումանյանի ստեղծագործության ամենախորունկ մեկնաբաններից մեկը, Վերնատունը ներկայացնում է գրեթե իբրև դպրոց. «Մենք սկսեցինք մեր հավաքույքներից դուրս նաև պարապել: Տանը պատրաստվում էինք և ամեն շաբաթ հավաքվում էինք «Վերնատանը», քննադատում էսքիլեսի, Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի, Շեքսպիրի, Բայրոնի և այլ կլասիկների»: Բայց նույն Դեմիրճյանը, որ Թումանյանի տանն իրեն զգում էր ինչպես սեփական տանը, զուցե և ավելի լավ, այդ տունը տեսել ու մտաբերել է նաև ուրիշ, ոչ պակաս թանկագին մի կողմով.

«Թումանյանը թովիչ հատկություն ուներ: Արդեն նրան տեսնելով դահլիճի մեջտեղ կամ առանձնասենյակի թիկնաթոռին կամ սեղանատանը սեղանի գլխին նստած՝ ներս մտնող հյուրը զգում էր, որ սենյակը լիքն է: Թումանյանը լցնում էր բնակարանը, մարդկանց հավաքույթը: Նրա դահլիճը՝ «մեջլիս» էր: Իսկ այդքան հյուրերի բազմությունը, հաճախությունը, հազար ու մի առիթներով գնալ-գալը, այդ հացկերույթները, աշխույժ նրա տունը դարձրել էին վանք, տոնախմբություն, շարունակական, հարատև տեսակցությունների վայր»:

Ազատություն տալով մեր երևակայությանը, մենք կարող ենք պատկերացնել Թումանյանի տունն ու Վերնատունը միասնաբար, իբրև խնջույքի վայր, ինչպես հասկանում էին հին հույները, նաև այն խնջույքի, ինչպես հասկանում ենք մենք:

Վկայություններ կան, որ վերնականները կերել են քիշմիշ-լաբլաբու, որ վերնահատիկ են կոչել: Բայց բանը վերնահատիկով չի ավարտվել, այլ սկսվել է միայն... Պետք է ավելի լավ կարծիք ունենալ վերնականների ոչ միայն գրական ճաշակի, այլև քիմքի ու ախորժակի մասին, բայց շատ ավելի բարձր կարծիք մենք պարտավոր ենք ունենալ այդ ամենին գոհացում տվող ընտանիքի մասին: «Վանք», «տոնախմբություն», «հարատև տեսակցությունների վայր» մինչև իսկ այն ժամանակ, երբ տանտերը տանը, նույնիսկ քաղաքում չի եղել: Ամենաբարձր կարծիքը տանտիրուհի Օլգա Թումանյանի, հետագայում

ճակ՝ հասակ առած բազում դուստրերի և ուստրերի մասին, որոնք ոչ միայն հանդուրժել են այս ամենը և դիմացել այս ամենին, այլև ընդառաջել են նվիրումով՝ գիտենալով, թե ում են ծառայում և ինչու են ծառայում:

Առանց դրա անհնար պիտի լիներ, որ Թումանյանի տունը դառնար մտքի խնջույքի և առհասարակ խնջույքի տուն, «վանք», ինչպես ասել է Դեմիրճյանը: Այս հրաշակերտը, որի ստեղծմանն ընդունակ է եղել հայկական միջավայրը երբևէ, և որի ոգին Դավիանեն Թումանյանն էր՝ «քեֆի ու հանճարի» զարմանալի զուգորդումը՝ Վալերի Բրյուսովի ընկալմամբ:

Ուրեմն, ես վերստին դիմում եմ ձեր երևակայության գաղտնախորհուրդ ծալքերին՝ ձեր ներքին հայացքով տեսնելու Վերնատունն ու վերնականներին:

Ղազարոս Աղայանին՝ առարկություն չընդունող վճռականությամբ բանավիճելիս և իր բամբ ծայնով հերոսական երգեր թնդացնելիս:

Ապա և Ավետիք Իսահակյանին՝ Շիրակի գույներով ու բարբառով, խոսքը՝ որքան սակավ ու դանդաղասահ, նույնքան իմաստալից, իր կակազով, որ այնպիսի հմայք էր տալիս նրա խոսվածքին, ինչպես, երևի, կիիշեն իր հետ շփում ունեցած մարդիկ:

Ամենից կրտսերին՝ Դերենիկ Դեմիրճյանին, որի կակազը նույնպես չէր խանգարում նրա պարադոքսալ մտքի փայլատակումներին, ինչպես և չխանգարեց մինչև վերջ, առավել ևս չէր խանգարում, որ նա ջութակ նվագի և մտերմական ծաղրապատկերներ նկարի...:

Պատկերացրեք Վերնատունն իր պատվական վերնականներով և իրենց պատվարժան կին հյուրերով, որոնց վերնանուշներ էին կոչում, ու միտք արեք՝ հայ մշակույթի երկարամյա պատմությունը երբևէ տեսնել է գրական ու ստեղծագործական, ընկերային ու մարդկային այսքան սրտագին մտերմության մեկ ուրիշ օրինակ: Եվ այսքան տաղանդավոր ու այսքան արգասավոր:

Երևի՝ ոչ:

Մեծ է Վերնատան պատմական խորհուրդը, պատմական կշիռը հայ գրականության մեջ: Թերևս առավել մեծ է բարոյականը: Եվ ափսոս որ՝ անհասանելի, թեև մշտապես բաղձալի...:

Ահա թե ինչ ասել է Վերնատուն, վեր բոլոր առումներով, բոլոր չափանիշներով»:

Սա, ինչպես ասացինք, գրվել և հրապարակվել է 1985-ին: Դիմի այսպիսի մի հարցում. կարևոր ու հետաքրքիր չէ՞ իմանալ, թե ինչ են մտածել, ինչ են գրել Վերնատան անդամները Թումանյանի և իրենց Վերնատան մասին:

Ե՛վ կարևոր է, և՛ հետաքրքիր:

Այս գիրքը հենց այդ հարցման պատասխանն է: Գիրքը կազմված է այնպես, որ բոլոր վերնականները տեղ ունենան այստեղ՝ հասակի կարգով: Ամենից տարեցը Ղազարոս Աղայանն էր (1840-1911), Վերնատան Նահապետը, Թումանյանի սիրելին: Նա միայն մի փոքր հոդված է գրել կրտսեր գրչեղբոր մասին՝ «Յուզի. Թումանյանի «Անուշից» մի ճաշակ» վերնագրով՝ 1893-ին, երբ հեղինակը հայտնի անուն չէր հայ պոեզիայի երկնականարում, ոչ էլ «Անուշն» էր մեզ ծանոթ վերամշակված, բյուրեղացած պոեմը: Եվ նշանակալին հենց դա է, այն, որ Աղայանը մատը դրել է տակավին անհայտ 24-ամյա բանաստեղծի գրվածքի վրա և ողջունել նրա մուտքը գրական ասպարեզ: Գրքում Աղայանից տեղ են գտել այդ հոդվածը և մի քանի նամակ:

Թումանյանի հասակակից Լևոն Շանթը (1869-1951), վերնականներից միակ արևմտահայ գրողը (պոլսեցի), հոդված չի հրապարակել ընկերոջ մասին: Բայց դրա փոխարեն նրան գրել է այնպիսի սրտալի նամակներ, որոնք վառ պատկերացում են տալիս և՛ Վերնատան, և՛ Թումանյանի հանդեպ ունեցած իր ջերմագին վերաբերմունքի մասին: Այդ նամակներից գրքում զետեղված է մի ընտրովի շարք: Ասենք նաև, որ, իհարկե, ընտրությամբ գրքում տեղ է տրված Վերնատան մյուս անդամների մի քանի նամակներին նույնպես, քանի որ նամակներում ամենից լավ են երևում նրանց անձնական-մտերմական կապերն ու հարաբերությունները:

Վերնատան միակ անդամը, որ բանաստեղծ չէր, այլ գրական քննադատ և գրականագետ, Նիկոլ Աղբալյանն էր (1873-1947): Ավարտել է Ներսիսյան դպրոցը և Գևորգյան ճեմարանը, ազատ ունկնդիր եղել Պետերբուրգի, Մոսկվայի, Լոզանի և Փարիզի համալսարաններում: Գիտուն, լրջախոհ, նուրբ ճաշակի տեր գրադատ՝ նա հայտնի է ոսկեդարյան հայ պատմիչներին նվիրված հմտալից աշխատություններով, Սայաթ-Նովայի, Իսահակյանի, Թումանյանի, Շանթի, Տերյանի, Զորյանի, Զարենցի մասին գրած խորամիտ հոդվածներով: Դրանք ամփոփվել են 1959-70 թվականներին Բեյրութում լույս տեսած չորս մեծադիր հատորում: Նա եղել է Հայաստանի առաջին հանրապետության լուսավորության և արվեստի նախարարը: 1920-ից դարձել է վտարանդի, ապրել և իբրև ուսուցիչ աշխատել է Իրանում, Եգիպտոսում, կյանքի վերջին տասնամյակները՝ Բեյրութում: 1930-ին Լևոն Շանթը և Աղբալյանը Բեյրութում հիմնադրել են նշանավոր Հայ ճեմարանը, ուր աշխատել են մինչև իրենց կյանքի վերջը: Արտասովոր հմայքի տեր մարդ՝ նա եղել է լիբանանահայ գաղութի ամենահարգված հասարակական գործիչներից, ամենասիրված ուսուցիչներից մեկը, ըստ արժանվույն վայելել «մեծ

հայի» անվերապահ հռչակը: Վախճանվել է Լիբանանում, 1947-ին: Այս գրքում Աղբալյանից կարելի է կարդալ մի քանի նամակ և երեք հողված թումանյանի գրվածքների մասին:

Երկի ոչ մի հայ գրողի մասին այնքան շատ հուշեր չեն գրվել, որքան թումանյանի: Դրանց մեջ ամենից գեղեցիկն Ավետիք Իսահակյանի (1875-1957) գրածներն են՝ ճշմարիտ արվեստի կնիքով: Դրանցից ընտրել ենք նրա հուշագրությունը և մի քանի արժեքավոր հողվածներ և գրառումներ:

Եթե ոչ ոք թումանյանի կերպարը չի ներկայացրել ավելի վառ ու տպավորիչ, քան Իսահակյանը, ապա ոչ ոք թումանյանի ստեղծագործությունը չի մեկնաբանել ավելի խորամիտ, քան Դերենիկ Դեմիրճյանը (1877-1956), Վերնատան կրտսեր անդամը: Նրա բացահայտումները, մեկը մյուսից ինքնատիպ, այսօր էլ ուսանելի են ամեն մեկի համար, որ կուզենա խորանալ թումանյանի «աչքի նման թափանցիկ, պարզ և աչքի նման բարդ» արվեստի էության մեջ: Ահա ինչու գրքում ամենից շատ տեղ է տրված Դեմիրճյանի հուշագրությանը և հողվածներին:

Վստահ ենք, որ այս գիրքը լավ նվեր կլինի բոլոր նրանց, ում համար թանկ է թումանյանի մարդկային և ստեղծագործական վսեմ նկարագիրը:

Լևոն Յախվերդյան

ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇԻՑ» ՄԻ
ՃԱՇԱԿ¹

Վերջին ժամանակներս մեր գրականության նորատունկ բուրաստանի մեջ մինը մյուսի ետևից դուրս եկան նոր նոր ծաղիկներ. նորերունս փթթեց մի նոր ծաղիկ ևս, անուշահոտ և համեստ, ինչպես վճիտ աղբյուրների ափերում բուսած մանուշակը Գուգարաց աշխարհում –

*Այն ճոխ գավառում, ուր Չաթինդաղի
Ուսերից պայծառ արևը ծագում,
Իրիկնապահին Ղարախաչ սարի
Երևն է շիկնած երեսը ծածկում,
Ուր որ Քոշաքար, Լավար ու Դվալ,
Նսկա պահնորդներ իրանց շարքերով,
Բարձրացած խրոխտ և լայնածավալ,
Նսկում են երկրին անքուն աչքերով,
Ուր ծեր Դերեղը յուր վրակներով
Ամեն մի քարի մոտից անցնելիս՝
Վառված վաղեմի հիշատակներով
Մերթ զայրանում է, մերթ փղծկում, լալիս...*

Ծննդարանը մարդուս երկրորդ ծնողն է: Ծնողները տալիս են իրանց հոգու և մարմնի հատկությունները, ծննդարանն էլ սնուցանում է նրան իր հոգովն ու մարմնովը: Երանի նրան, ով որ Ադամի նման դրախտումն է ծնվում: Եթե կա մեր երկրումը մի դրախտ, այդ Գուգարաց աշխարհն է: Մեր բանաստեղծը – Հովհաննես Թումանյանը – մեզ «Անուշ» բանաստեղծություն տալու համար՝ ծնվել ու սնվել է այդ անուշ երկրումը, –

*Այն սառն ու հստակ աղբյուրների մոտ,
Որ ապառաժից հորդառատ բրդխում,
Ավազի վրրա կայրատ, ծիծաղկոտ
Երեխի նման կրկնում են, խաղում,
Պարզ առունների դայար ափերին,
Որ սահանքալիտր իջնում են փրփրած,*

¹ Հովհաննես Թումանյանց «Բանաստեղծություններ», հատ. 2-րդ: Այս հատորի մեջ, որ նոր է լույս տեսել, զետեղված են երիտասարդ բանաստեղծի բազմաթիվ ուտանավորներ և երեք պոեմ – «Անուշ», «Մերժած օրենք» և «Մարտ»:

*Ուր որ կենսաշունչ հովը լեռնային
Մերթ վազվրզում է, մերթ զրզվում կամաց.
Ուր որ համասփյուռ բուրմունքը ծաղկի
Եվ ծրծրմբային հոպը կայծակի
Խառնվում են իրար...*

Այստեղ ահա, այս անուշ հովիտներում, Սարոն, որ մի հովիվ է, դեռևս պատանի, բայց ուժեղ և սրտոտ, սիրում է գեղեցիկ Անուշին.

*Եվ մի հայացքով պապանի Սարոն
Գրկեց Անուշի պապկերը հոգով,
Այն ինչ գեղեցիկ Անուշը նրբան
Միրեց կուսական առաջին կրրքով:*

Սիրո այս առաջին կայծը սկսում է բոցավառվել նրանց կուսական սրտերում և այնպիսի վիճակ է ստանում, որ բանաստեղծը հրաժարվում է նկարագրելուց և վերջը բացականչում է.

*Չէ...
Ես չեմ կամենում բառերով չնչին
Խոսել սիրավառ սրտի բոցերից,
Անպարմելի է սերը առաջին,
Նա վեր է մարդու բոլոր խոսքերից...*

Սակայն չարության ոգին, որ գիտե ներս սողալ նույնիսկ դրախտի մեջ, որ մարդուն աստժո երեսից ձգե, արդարին եղեռնագործ շինե, այս չար ոգին իր պոչը խառնում է Անուշի ու Սարոյի սուրբ սիրո մեջ և նրանց այդ կենսատու զգացմունքը մահատու դարձնում: Մի հարսանիքում Սարոն և Անուշի եղբայրը՝ Մոսին՝ կոխ են կենում, և որովհետև –

*Ընկերի մեջ օրենք է շապ հին,
Որ այսպիսի մեծ բազմության մեջում
Չպետք է գեպնին զարկել ընկերին,
Այլ պետք է անել հարկավոր զիջում:
Մոռացավ Սարոն օրենքն ու աշխարհք,
Երբ կանանց միջին Անուշին փեսավ,
Միրորն ըսկսեց բաբախել արագ,
Աչքերը խկույն արնով լցվեցավ.
Եվ այսպես՝ մինչդեռ անհոգ էր Մոսին,
Սարոն իր բոլոր ուժը հավաքեց,
Ուջն քաշելով հանկարծ ընկերին
Գեպին փապայեց ու կրծքին չոքեց...
... Յնծության ձայներ, ծափերի զարկից
Շարժվում, դողում են օճորք ու պապեր,
Իսկ նորահարսի փարդի քամակից*

*Նայում, գովում են աղջրկերք, հարսներ...
... Եվ թագավորի թախտիցը Սարոն,
Պարզև սրացավ մի կարմիր խնձոր,
Իսկ Մոսին, ուրախ հարսանքալսնից
Դուրս գնաց իսկույն, սաստիկ վիրավոր...*

Այս պատճառով ահա, Սարոն այլևս չէր կարող սովորական կարգով ճշանել Անուշին, Մոսին այլևս նրան աղջիկ չէր տալ: Ի՞նչ աներ խեղճ Սարոն, ի՞նչ աներ Անուշը, որ ոչինչ մեղ չուներ: Այսպես անճարացած՝ Սարոն փախցնում է Անուշին և մի ամբողջ ամիս այնպիսի անմատչելի ձորերում է տանում, որ ինչքան փնտրում են – չեն գտնում: Մի անսից հետո, հին աղաթով Սարոն Անուշին ուղարկում է հորանցը, որ այնտեղից պատվով դուրս բերի նորից, ինչպես սովորաբար անում են այսպիսի դեպքերում: Գյուղացիք ուրախանում են, աղջիկը խոստովանում է տերտերին, ինքը սիրում է Սարոյին, որ իր կամքովն է փախել նրա հետ, որովհետև ուրիշ ելք չկար: Ամենքն էլ ժպտում են, մարդ են ուղարկում, որ Սարոն գա, բայց Մոսին, որ չի կարողանում տանել Սարոյի հասցրած այդ երկրորդ անպատվությունը (քրոջ փախցնելը), դիմավորում է նրան և հրացանի մի գնդակով գետին տապալում Դեբեդի ափերում...

*Եվ մի քանի ընկեր փղերք
Դերեդի ճոխ ափերին
Փոս փորեցին և սրտաբեկ
Ամփոփեցին հովվի դին:
Ծաղիկները այս հանդեսին
Բուրմունք փրվին դուրեկան,
Ձորագետն էլ ահեղաձայն
Երգեց վսեմ շարական...*

Այս աղեկտուր դեպքը չէր կարող տանել Անուշի սիրահար քնքուշ սիրտը, նա ցնորվում է և (ՕՖելիայի նման) թափառելով գետափին, ծաղիկներ է քաղում անշուշտ և նրանցով զարդարում է իր սիրելու գերեզմանը: Անուշի երգերին ձայնակցելով՝

*Վըշվըշում է գետը – վո՛ւշ, վո՛ւշ,
Նորձանքներ է փալխ հորդ
Եվ կանչում է – «Արի՛, Անուշ,
Արի փանեմ յարիդ մոտ...*

1893
«Մուրճ» 1893թ. N3:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Հունվարի 11, 1894, Էջմիածնից Թիֆլիս

Սիրելի Օհաննես.

Այ տղա, դու ի՞նչպես մարդ ես: Մի ամիս առաջ նամակ ես գրում, թե սրա հետ ուղարկեցի բանաստեղծություններս Հայրիկին՝ ընծա, բայց ես այսօր միայն ստացա: Որ չէիր ուղարկել, ինչո՞ւ էիր գրում թե ուղարկեցի:

Այսօր գրքերդ տարա տվի իրան, քու փոխանակ էլ ձեռքը համբուրեցի: «Շատ ապրի, ասաց, շնորհակալ եմ»: Հարցրուց՝ ո՞վ է, ի՞նչ է, ես էլ քեզ, էլ ինչ ասել կուզի, փառացի փառս արի, շատ գովեցի:

Փիլիպի ուղարկած բանաստեղծություններիդ ժողովածուն էլ ստացա, տվի վերակացուներին, որ բաժանեն, կարծեմ արդեն քոցրել են բոլորն էլ: Հաշիվ կստանամ և փողը կուղարկեմ: Տարեմուտի երեկոյան ճեմարանումը հանդես էր: Կարդացին և քո «Շունն ու կատուն», շատ լավ կարդացին, բոլ ծիծաղեցինք: Չէ՛, աստված չար աչքից փրկի, և մեկ էլ նոր աշխույժ և եռանդ տա, ծավար չանես, միշտ լավ աղաս, չհափշտակվես, խելքդ գլխիդ պահես, ազգային և ժողովրդական հողից չհեռանաս, քիչ կարդաս, շատ մտածես, ոգևորության րոպեից օգուտ քաղես, հորանջելով չգրես ոչինչ, այլ երկաթը միշտ տաք-տաք ծծես:

Մեր Սիմեոն Պառավանյանից երկու նամակ եմ ստացել, պատասխան չեմ գրել, օդով ինչ պատասխանեի դարդակ: Էսօր լսեցի, որ դրա խնդիրը գաղել² եմ վեհարանի դիվանատան նորդարականները, խորեն Ստեփանեն³ հանել է և շատ զայրացել: Ուրեմն շուտով մի տնօրենություն կլինի, կիմանամ և իրան կգրեմ: Իմ վիճակի մեջն են և Արիստակեսն ու Երեմյանը, ի՞նչ անեն խեղճերը. նրանք նույնպես սպասում են մի բան լինի, որ իրան պատասխանեն: Այսբանն իրան իմաց տուր, մինչև կգրեմ: Իմ գրքի բանն ի՞նչ դառավ, որտե՞ղ մնաց: Շատ շուտով իմ այդ երրորդ գրքույկից ուղարկիր ինձ երեք հարյուր օրինակ, որ այստեղից ուղարկեմ բաժանորդներին: Մնացածը հանձնիր Կենտրոնական գրավաճառանոցին ու ասա Ստեփանին, որ իմ անունով ուղարկի այստեղ «Արություն ու Մանվելիս» Ա գրքից 150

Տպագրվում է Դ. Աղայանի «Երկերի» 4-րդ հատորից (Երևան, 1959):

¹Խորհյան Հայրիկ-Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

²Գաղել-թաքցնել:

³Ստեփանե խորեն-մանկավարժ. խմբագիր, բանաստեղծ:

օրինակ, Բ գրքից նույնպես 150 օրինակ: Տեր Օհաննեսին, ծերունց և Փիլիպենց ողջույն:

Քո Ղ. Աղայանց

Մարտի 1, 1898, Բուլնիս-խաչենից Թիֆլիս

Սիրելի Յովհաննես,

Բաց նամակդ ստացա, բայց նրանում հիշված վաղուց գրած երկար նամակդ չեմ ստացել: Շնորհավորում եմ տիկնոջ ազատությունը նոր երկունքից: Խորհուրդ եմ տալիս բավականաճառ եղածներով: Արդ կլինի հակառակ բնության, բայց ոչ բանականության: Մարդը պետք է կռվե բնության դեմ իր բանականությամբը, իհարկե բնության այն հանգամանքների հետ, որոնք վնասակար են: Արդ, բազմաթիվ զավակներ ծնելը ամեն կողմով վնաս է և այնպիսի մի ցավ է, որից պետք է բշկվել:

Շնորհակալ եմ հաղորդած ուրախ լուրիդ համար: Այստեղ մեր պրիստավի ձեռքով երկու անգամ հաջորդաբար հայտնեցին պաշտոնական թղթերով, որ ես ըստ Բարձրագույն իրամանի ենթարկվում եմ պոլիցիայի հսկողության արտաքո Անդրկովկաս երկու տարով սկսյալ 97 դեկտեմբերից մինչև 99 դեկտեմբեր և թե՛ վերջնական կարգադրությունը կգա Ներքին գործերի մինիստրից¹: Տայսօր չեկավ այդ վերջնական կարգադրությունը: Ջարմանալի է, որ երկու անգամ վճիռ է կայացել, բայց դեռ ոչ մեկը վերջնական չէ:

Ոչ մի լրագիր չեմ ստանում, «Մշակ» ուղարկում եմ, բայց մեր փոստն անկանոն լինելով փետրվարին ստանում եմ անցյալ դեկտեմբերի համարները: Շատ վաղուց է, որ «Աղբյուր-Տարագի» երեսը չեմ տեսել: Երևի Տիգրանն այլևս չի ուզում ձրի ուղարկել, և եթե ասե՛ մենք ուղարկում ենք, - չհավատաս: Շիրվանին ասա՛ գուցե կարողանա «Նովոյե օբզորենիե» ուղարկել, գատկին կգամ փողը կվճարեմ:

Փո՛ղ, փո՛ղ, փո՛ղ չկա: Այս մարտն ինչպես լինի դուրս կտանեն, իսկ ապրիլին իմ ապրելը պիտի դժվարանա: Ուրեմն վանեցին չուզեց իր պարտքը հիշել և վճարել հարյուր մանեթը, Բաքուն էլ երևի ընդհատեց մեր թոշակը: Ի՞նչ պիտի լինի մեր ճարը՝ չգիտեմ: Ես ուրախ էի, որ պիտի աքսորեն, այնտեղ գուցե մի պարապմունք կգտնեի և այլևս նեղություն չէի քաշիլ, իսկ այստեղ ի՞նչ կարող եմ անել: Պիտի քիչ քիչ ծախսեմ ինչ որ ունեմ, բայց հետո՞: Ե՛հ, աստված ողորմած է: Այս

¹ Գնչակյան կուսակցությանը պատկանելու մեղադրանքով Ղ. Աղայանն աքսորվել է Նոր Նախիջևան (Դոնի Ռոստով), ապա Դրիմ (1898-1900):

մասին շատ էլ դարդ չեն անում:

Մեր Ա.Պառավանցը Շուլավերից գրել է, որ դու դուրս ես եկել տերտերից, առանձին տուն ես վարձել, բայց հանկարծ հայրդ մերձ ի մահ հիվանդացել է, դու գնացել ես Դսեղ, իսկ տիկինը նորից գնացել է մորը մոտ: Ուրեմն քո դրությունն էլ երևի բավական խառնաշփոթ է: Հայրդ հիմա ա՞յս աշխարքումն է, թե՞ ի վերին Երուսաղեմ է գնացել: Եթե գնացել է, շատ էլ լավ է արել: Այս աշխարհումն ապրել չարժե նրանց, որոնք հավատում են մյուս աշխարհքին: Աստված դրանից ավել տխրություն չտա քեզ և փոխարինե նոր ուրախությունով:

Նամակս եղբորս ձեռքով եմ ուղարկում: Եթե տանը կպատահես, ձեռաց գրիր երկար նամակիդ բովանդակությունը և հանձնիր իրան, իսկ եթե չես պատահիլ, հանձնիր Սանդղոյին, նա մեր փոշտից ավելի շուտ կհասցնի և անկորուստ:

Փոստային հարաբերության մասին մի ընդարձակ և մշակված հոդված պետք է գրվի: Մեր գյուղերը առհասարակ կտրված են աշխարհից: Նրանց մթության մեջ մնալու մի գլխավոր պատճառն էլ հարաբերության դժվարությունն է: Ինչի՞ են պիտանի մեր գյուղական կառավարությունները իրանց քոխվանքերով, սուղիաներով և եսալներով, ինչի՞ են պետք մեր պրիստավները իրանց ձրիակեր չափարներով: Դրանք ամենքն էլ հասարակությունների տված վարձովն են ապրում, բայց ի՞նչ օգուտ են տալիս հասարակությունների մտավոր զարգացմանը - ոչ մի, բացի վնասից: Մինչդեռ կարելի էր պարտավորեցնել, որ ամեն մի շինական կառավարություն իր փոստարկղն ունենար, շաբաթական նշանակած օրեր ունենար ստանալու և հանձնելու: Ամեն մի պրիստավ նույնպես պիտի դրա համար հատուկ մարդ և փոստարկղ ունենար: Ոչ մի այդպիսի բան չկա: Իսկի Աֆրիկայի վայրենիներն էլ մեր վիճակը չունեն այդ կողմանե: Այս անբանական դրությունը ինձ այն մտքին է բերել, որ ինչ ունիմ չունիմ ծախսեմ, տուն-տեղ և այլն և տեղափոխվեմ երկաթուղու գծի վրա գտնվող մեծ կայարանների մոտ: Կարծեմ Ղարաքիլիսան ամենից հարմարը կլինի: Այս մասին կխորհենք մի օր միասին: Չատկին մտադիր եմ գնալ Գանձակ, այնտեղից – Բաքու: Աղջկեքս պահանջում են: Ուրեմն, եթե ողջ մնացի և չաքսորվեցի, շուտով կտեսնենք միմյանց:

Ես առողջ եմ, ունեցած տկարությունս երբեմն երևում է, բայց մի առանձին նեղություն չի տալիս: Կինս տխուր է, որ գյուղումն է, իսկ ես ուրախ: Ասում եմ «որովհետև երկուսիս ճաշակը տարբերվում է ամեն կողմով, եկ բաժանվենք, դու այնտեղ ապրիր, որտեղ կուզես և ինչպես կուզես, իսկ ես էլ որտեղ ուզեմամ»: Չի համաձայնում:

... Մեր գյուղից նորություն չեմ կարող հաղորդել, ոչինչ նորություն չկա, բացի մեծ ծյունից, որ այս օրերս բավական եկավ և պինդ նստեց,

մինչև գատիկ միտք չունի տեղիցը վեր կենալու: Այստեղ ամենից հարուստը ըստ կեցության և ամենից աղքատը ըստ կարողության՝ ես եմ: Ամենից քիչ ունենալով՝ ամենից էլ լավ եմ ապրում: Մեր հարուստները խնայողությամբ փող են դիզում, ես չեմ խնայում, ուտում եմ: Աստված հասցնում է: Ի՞նչ հարկավոր է վաղվա համար մտածել: Բայց ասա ի՞նչ ես ուտում, որ ուտում ես: Իհարկե այն, ինչ որ հարևան ունի և չի ուտում: Համադամ կերակուրներ հո չես գտնիլ գյուղումը: Եվ ավելի լավ որ չես գտնիլ: Դրանով համ ստամոքսդ առողջ կմնա, համ գրպանդ: Էլի կգրեի, բայց էլ տեղ չկա: Մերոնցից ձերոնց ողջույն:

Քո Ղ. Աղայանց

Հունվարի 30, 1899, Նոր Նախիջևանից Թիֆլիս


Սիրելի Օհաննես.

Ինչպես որ ինձ գրած նամակներդ ես բանաստեղծում, նույնպես բանաստեղծիր և իմ ներկա դրությունը: Պատճառն ի՞նչ է, որ խոստումներդ բոլորն էլ սուտ են դուրս գալիս: Ինչո՞ւ համար վերջին նամակիս պատասխանը չես գրում: Արդյոք դու է՞լ ես ինձ նման հիվանդ պառկած տեղումդ: Բայց ես ահա տեղումս վերմտած՝ գրում եմ, դու էլ կարող ես ինձ պես անել: Իմ տկարությունը քո անցյալ տարվա տկարությունիցն է, մեկ լավանում եմ, մեկ էլ նորից պառկում, և լինի ետինն չար քան զառաջինն: Ուննի՞ց ստացար այն քսանհինգ մանեթը, որ ուղարկել էիր ինձ: Եթե վարդապետը տվավ և խոստացավ, որ մնացածն էլ շուտով կտա, բա ինչո՞ւ չի տալիս: Եթե ստացել ես և ինքդ ծախել, ես շատ ուրախ կլինեմ, միայն գրիր: Միևնույն չէ՞, թե ես նեղություն քաշած, թե դու, քո նեղությունն էլ իմն եմ համարում: Միայն սևագլխները չվայելեն մեր վաստակը: Գրիր ինձ պարզիպարզ ամեն բան, հակառակ դեպքում ես քո անունը կջնջեմ իմ բարեկամների ցուցակից և այլևս ոչ մի հարաբերություն քեզ հետ չեմ ունենալ:

Տաքությունս 39-ից իջել է 38-ի, մի երկու ժամից ըստ սովորականին պիտի բարձրանա:

Պռոշյանից ստացա հանձնաժողովի հրավերը, որով առաջարկում են տոնել նրա 40-ամյա գրական գործունեությունը: Վերջապե՛ս... հետին դերասաններից հետո կարգն ընկնում է առաջնակարգ վիպասաններին:

Ախալքալաքի ինտելիգենցիայից ես մի ուղերձ ստացա, որով շնորհակալություն են հայտնում իմ «Մուրճ»-ում տպված հոդվածիս համար: Իսկ դու այս մասին ոչինչ չես գրում, իսկ ինձ համար քո տպավորությունն ավելի թանգ արժե: Ստացա Ալեքսանդր



Ծառուրյանից իր բանաստեղծության երկրորդ հատորը: Այս հատորը առաջինից անհամեմատ լավ է: Բայց, հոգիս, իմ ուզածս չէ: Այս անգամ լեզուն էլ է գեղեցիկ, բանահյուսության օրենքներն ևս խիստ կերպով պահպանված են, ոչ մի բռնագրոսություն, ոչ մի անհարթություն չկա: Բայց ստեղծագործություն չկա...

Մինասի «Կյանքն» արդեն մամուլի տակ է: Քեզանից նամակի էր սպասում, չգիտեմ, ստացա՞վ թե ոչ: Քո խորտակված կյանքն ուղարկիր չխորտակված կյանքին, գուցե նրանում կազդուրվի: «Տարագ»-ը շատ է մեծ-մեծ խոսում, բայց այսուամենայնիվ մեջը դատարկ է: Պատկերները բոլորն էլ աննպատակ ու անմիտ են, բոլորն էլ գոռշանոց բաներ, իսկ Թառայանը որքան շատ է երկնում, այնքան փոքր է ծնում: Թե մշակականները դառել են փոշտի յոռուղ ձիաներ, կասկած չկա, բայց ձիաների տեղը էշերը բռնել չեն կարող:

Բաքվից ի՞նչ լուր ունիս. արդյոք այս տարի էլ մեզ պիտի նպաստեն, թե՞ ոչ: Շուտ մի շատ երկար նամակ գրիր, որ միշտ խոստանում ես, բայց չես գրում:

Քո Ասլան Ապեր

ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Նոյեմբերի 1, 1901, Անվերսից (Բելգիա) Թիֆլիս

Սիրելիս, չգիտեմ ուրկե սկսիմ, չգիտեմ որը գրեմ, որը թողնեմ, այնքան բան է խռնած գրչիս ծայրը, որ կուզե դուրս հորդի: Լավն ան է սկսիմ Ադամ-Եվայեն: Այսպես ուրեմն, ճիշտ ամսվան մը ողիսականես վերջը, հուլիսի գեղեցիկ առավոտ մը անցա Բելժիկայի սահմանը ու ոտքս դրի ավետյաց երկիրը: Շոգեմավերեն, վակոններեն, հյուրանոցներեն, կայարաններեն այնպես էի հոգնած, որ վակոնիս պատուհանեն երնեկ կու տայի առջես ետ-ետ վազող տուներուն մեջ իրենց համար հանգիստ սենյակ մը ունեցող բոլոր երջանիկներուն: Անվերս ժամանելուս պես, առաջին գործս եղավ գնալ դպրոց ու խոսել տնօրենին հետ, երկրորդ գործս բանսիոն մը վարձել, երրորդը՝ ուսուցիչ մը գտնել և չորրորդը՝ ոտքերս փռել ու պառկել կռնակիս վրա իմ սենյակիս մեջ, այն երջանիկ գիտակցությամբ, որ վերջապես իմ սենյակիս մեջն են: Բայց դժբախտաբար երջանկությունները շատ են կարճատև, ինչպես որ իհարկե գիտես: Ճշմարիտը խոսելով, շատ քան զգացումով մը չէր, որ առաջին անգամ ծուռ ակնարկ մը նետեցի «Յաշվապահության» դասագրքին վրա, ուր զանազան անհասկանալի կրճատումներ, գիծեր, հաշիվներ, թիվեր այնպիսի հաստատական որոշումով մը ինծի խրտնեցնիլ կուզեին կարծես: Ես մուզաս օգնության կանչեցի, մուզաս եկավ, բայց խեղճը ինձմե ավելի էր խրտներ, այնպես որ մեղքցա, ետ ճամփու դրի ու ֆրանսերեն բառարանիս հետ ձեռք-ձեռքի նետվեցա այդ հաշիվներու ու տոմարներու ծովը: Շատ լողացի թե քիչ, ուր, աստված գիտե, միայն հանկարծ այնպիսի հոգնություն մը, դառնություն մը, դժգոհություն մը, մաղձ մը զգացի մեջս, որ չգիտեմ ճշմարիտ ինչով կը վերջանար, երբ այս անգամ մուզաս ինքը չիզար ինծի օգնության, քանի մը «տրամացու» դրած թևին տակ: Եվ այդ օրեն դարձա երկու մարդ, ցորեկը հաշվապահությունը իր շքախմբով, գիշերները մուզաս իր տրամաներով, այսինքն իր տրամաներու ծրագիրներով: Այս առաջին ներքին մաքառումներով, ֆրանսերենի փեհլեվանությամբ, բանսիոնական չոր կյանքով ու անծանոթ քաղքի մը անծանոթ սովորություններուն առաջին վարժություններովը հասեր էի օգոստոսի կեսերը: Կուզե՞ս քեզի ներկայացնեմ այս մեծապատիվ երկրին կամ

Տպագրվում է «Թումանյան. ուսումնասիրություններ և հրապարակումներ» հատորաշարի 4-րդ գրքից (ԳԱ հրատ., 1985): Բնագրերը պատրաստել և ծանոթագրել են Խ. Գյուլնազարյանը և Զ.Ավետյանը:

մեր քաղաքը ներկայացնե՞մ քեզի: Բելժը աշխատանքի մարդն է, այնպես որ քեզի բնավ խորհուրդ չէի տար այս կողմերը ոտք դնես: Այս մեկ: Բելժը դեմոկրատ է բնականեն, դեմոկրատ՝ իր լավ ու վատ բոլոր կողմերով, քիչ մը պանալ, քիչ մը յունիֆորմ, բայց պարզ, դեմ եկող ու մանավանդ «խմբական» անգամ մը տեսնելու ես, թե հոս ժողովուրդը ինչպե՞ս կուրախանա, գաղափար կազմելու համար, թե ի՞նչ ըսել է խմբական կյանք: Երևակայե գիշերով ամբողջ գյուղ մը, կամ քանի մը թաղ, քանի մը հարյուր հոգի, ծեր-երիտասարդ, աղջիկ-մանչ, թև-թևի, շարք-շարք ամբողջ փողոցի լայնքով, զինվորների վաշտի մը պես, երգելով, պարելով, ցատկելով, երաժշտական խումբ մը առջևը ձգած, լամպիոններով, դրոշակներով, ծոպերով զարդարված կանցնին առջևեղև հարյուրավոր երեխաներու մրջնոց մը, որ այդ զանգվածին շուրջը կը ցատկեն, կը դառնան երաժշտության թաքտին տակ: Այդ նույն չափին տակ տատանվող, նույն ուրախության մեջ հռհռացող, նույն գրգռված ինստինկտներով իրար հրմշտող զանգվածին դեմ՝ ես ականա կը մտածեմ մեզի, մեր ժողովուրդը, ուր տասը հոգի իրարու մոտ գալ չի կրնար, ուր կինը առանձին է միշտ, մոտի բաժանմունքը, ուր փողոցին մեր երգելը հարբածի բաժինն է միայն, իսկ պարելն ու ցատկելը, նու, միայն գժանոցեն փախածի: Ահա քեզի այն մեծ տարբերությունը արևմուտքի ու արևելքի ամբոխի-անհատի ծուլունը խմբի մեջ, արևելքի մեջ մասսան անհատներու կուտակում մըն է, իրարմե անջատ, արևմուտքի մասսան անհատներու կապակցումեն առաջացած նոր օրգանական մարմին մըն է արդեն: Գալով մասնավորապես Անվերսիեն, առուտուրի քաղաք է, գործի քաղաք: Ամեն տեղ, ամեն բանի մեջ կրնաս նշմարել նույնը: Ամենքը անխտիր նույն գործավորի ու վաճառականի դեմքը, հագուստն ու շարժումը ունին: Արդեն միօրինակությունը շատ է աչքի ինկնող: Կառապանն ու իր վարձողը միայն մեկ միջոցով կրնաս իրարմե զանազաներ, իրենց նստած տեղեն: Մեկ ուրիշ հատկություն, որ հազիվ թե քու նախանձը շարժե, երեխաներու առատությունն է: Երբեմն փողոցները այնքան իրարու վրա թափված կըլլան, որ անցնելու ժամանակ ականա հարց կու տաս, թե այդ մարդիկը ե՞րբ ժամանակ կը գտնին իրենց մյուս առօրյա գործերն էլ վարելու: Բայց ես դառնամ նորեն ինձի, որ քեզի համար երևի ավելի հետաքրքիր է, քան Անվերսի բոլոր փողոցները իր բոլոր երեխաներով: Օգոստոսի վերջերն էր, որ նորեն զեղեցիկ առավոտ մը վերցուցի պայուսակներես մեկը ու մտա վակոն: «Ռ՛ւր բարով նորեն» պիտի հարցնես: Գյուղ, Օհաննես ջան, գյուղ քիչ մը բնության մեջ թարմանալու, թափ տալու վրայես «ելք ու մուտքերու» փոշին: Դպրոց ընդունվելու համար անհրաժեշտ եղածը արդեն աչքի անցուցեր էի, քանի մը ուրիշ կարողալու բան էր մնացեր միայն, լեցուն էր արդեն պայուսակս այդ գրքերով, որոնք պիտի կարդայի

գյուղը, բնության ու հանգստության ծոցին մեջ: Ինչպե՞ս չէ: Հինգ-վեց շաբաթ այնպիսի փառավոր ծուլությամբ մի ծուլացա, որ մինչև անգամ քու հիացումը կրնայի շարժեր: Եվ այդ ընդարձակ ծուլությանս միջոցին, հասա այն եզրակացությանը, թե իսկապես մենք՝ «բանաստեղծներս», բնավ իրավունք չունենք մեր աղքատությունն գանգատվելու, հարստանալու համար պետք է աշխատել, աշխատել շարունակ, իսկ «բանաստեղծներս» ավելի գերադասած ենք աղքատ ըլլալ, միայն թե չաշխատել. ծուլությունը մեր կյանքի, մեր օրգանիզմի, մեր ջիղերու մեկ անհրաժեշտ պետքն է, մեկ թանկագին պահանջը. այնպես փռվել կռնակի վրա ու մտածել, երագել, երևակայել, կամ թափառել դաշտն ու անտառ անգործ, անհոգ իր մուզային հետ, իր անուրջներուն: Ես լուրջ կը խոսիմ, ծուլությունը շատ, շատ մեծ պետք մը, երջանկություն մըն է «բանաստեղծներուս» համար, ու ես այդ ծուլությունը հիմա շատ թանկ կը գնահատիմ, հիմա, երբ ստիպված եմ թրանվայի ձիու պես աշխատելու: Բայց եթե խել մը վարկն ալ կը կորսնցնենք վերջնականապես: «Ախր» ես ալ, դուն ալ վաճառական մարդ ենք հիմա: Ուրեմն դեպի գյուղ՝ վալոն (ֆրանսական բեւժ) ընտանիքի մը մեջ, «փոմեշչիքի» նման բան մը. ազարակ, պարտեզ, այգի բոլորը տրամադրությանս տակ, տրամադրությանս տակ նաև երկու աղջիկներ, բոլորովին իմ տանս կարծես. քիչիկ մը երաժշտություն, քիչիկ մը չարածիություն, քիչիկ մը... պաչիկ մը, ըստ օրինացն Մովսեսի, վերջապես: Իսկ տունեն դուրս գյուղն ու դաշտերը, դաշտերը, դաշտերը, դաշտի գեղեցկությունը ես առաջին անգամ հոս զգացի: Լեռներ չի կան, բայց հողը ալիքոտ է, որ աչքին միօրինակություն չի տար: Եթե գիտնաս ինչքա՞ն թափառեր եմ գյուղե-գյուղ, հիանալի խճուղիներով, մեծ մասով ծառուղի, մարդու քալելը կու գա և գյուղ որ կըսեն քու Դսեղդ չի հասկնաս, հոս քու Դսեղիդ բնության վեհությունը չի կա, բայց չի կա և այն քուլտուրական խեղճությունը, հոս գյուղերը գետնատակ քսենոֆոնյան խրճիթներ չեն, այլ քարաշեն փոքր տուներ, մեծ մասով երկախարկ, վերին հարկը՝ մնջարամները իր մահճակալներովն ու պարագաներովը, վարը՝ մյուս սենյակները: Երբ հոստեղի գյուղացուն մեր գեղերու մասին պատմես, միևնույն է թե քեզի խոսիմ հոթենթոտներու մասին: Այդ պտույտներս ալ երբեմն ընկերոջս հետ, բայց մեծ մասով առանձին: Ախ, ի՞նչ կըսեն, ինչպե՞ս թե առանձին, մուզայիս հետ թև-թևի: Ո՞վ երջանիկ բանաստեղծական ծուլություն: Եվ հիմա՞: Հոկտեմբերի կեսին դասերը սկսան, և ես այժմ ուսանող մըն եմ նորեն. «նորեն» որ կըսեն բառը ճիշտ չէ, որովհետև իմ լայպցիկյան ու մյունխենյան ուսանողությունն բոլորովին ուրիշ բան էր, հիմակվանը ուրիշ բան. հոն ազատ էի, ժամանակս արձակ, ընտրությունս քեֆիս և աշխատանքս սրտովս: Իսկ

հոս օրական 5-6 ժամ դպրոցի մեջ միայն գործ ունիմ, մեկ-երկու ժամ ալ տանը պատրաստվիլ կուզե: Հազիվ օրվան լրագիրներն ու մեկ-երկու հանդես թղթատելու ժամանակ կը մնա ինձի: Մեքենայի պես բան մըն եմ դարձած հիմա, ամբողջ օրը «դաս պատրաստելու» վրա եմ, ալ առևտրական մյուսեր կուզես, քաղաքական տնտեսություն կուզես, Նաբուլեոնի օրենսգիրքը կուզես, տնտեսական աշխարհագրություն կուզես, հապա լեզուները, զանգիս տակ վայլս կը դառնան, մյուսը բոլկա, երրորդը չգիտեմ ինչ, իտալերենն ալ կաստանես և այս բոլոր «խալմաղալին» մեջ խեղճ հայերենս փախեր մտեր է անկյուն մը և ապշած-ապշած կը նայի, թե սա ի՞նչ խայտառակություն է: Եվ երբ հոգնած, գլուխս բազկաթռոհն հենած, ոտքերս կերկնցնեմ պահ մը հանգստանալու, լռիկ սենյակիս մեջ, լամպիս լույսին տակ, այս առևտրական տակնուվրայությունեն, ակամա մտքերս կը թռչին Թիֆլիս ու դեմքիս ժպիտ մը կը ծլի, երբ կը հիշեմ, որ անցած տարի այս ատեն ամսվան մը մեջ Հոմերոս մը կը կարդայինք, երկու-երեք շաբաթվա մեջ Շեքսպիրեն բան մը կամ Էսքիլոսեն, ա՛հ, Պրոմեթեո՛սը, դառն ժպիտ մը կը ծլի շրթունքիս ու անուշ կարոտ մը մեջս:

Այս բոլորը երբ կարդաս, գուցե հանկարծ թեթև կասկած մը մեջդ սպրդի, Հանես ջան, թե չըլլա որ «խալխը» իրավունք ունի, որ ես արդեն «բուխկալտեր» դարձա ու գնաց: Մի՛, մտքեդ անգամ անցնելու չես. «խալխը» միշտ «խալխ» է, որ երբեք բան չի հասկնար: Ես գուցե կրնամ թղթակից մը դառնալ, գուցե հաշվապահ մը, գուցե մույմիսկ այս բոլորեն ոչինչ ալ դուրս չի գա. չգիտեմ, ինձի տվեր եմ հոսանքին ու կսպասեմ տեսնեմ ինչով պիտի վերջանա՝ տեսակ մը փորձ է սա կյանքի մեջ իբրև մարդ իմ անկախությունս ապահովելու, ուրիշին կարոտ չըլլալու, հացի խնդիրը իմ գրական աշխատանքիս առջևեն վերցնելու: Տեսակ մը տարօրինակ փորձ, գուցե և հիմար ու անկարելի: Չգիտեմ, ճշմարիտ: Գիտեմ միայն բան մը, թե ես գրագետ մըն եմ և միմիայն գրագետ մը, ինչ դիրքի ու տարագի տակ ալ որ ծպտիմ: Գալով «խալխին», ես անոր կարծիքը երբեք չեմ հարցուցած ու հարցնելու ալ միտք չունիմ: Այս հառաջաբանես վերջը ուրախությամբ քեզի փոքրիկ լուր մը տամ. լուր մը, թե այս քանի մը ամիսներս բոլորովին անպետք անցած չէ հայոց ազգի գրականության համար: Նախ երկու թե երեք տրամացու գլխուս մեջ պատրաստ է. կը տեսնե՞ս ի՞նչ առատություն: Բայց որովհետև լավ գիտեմ, թե «գլխուս մեջ պատրաստ եղող» տրամաները քեզի համար շատ գին չունեն, իսկույն ավելացնեմ, թե թուրքի վրա ալ բանիկ մը ունիմ: Գյուղեն դարձես մինչև դասերու սկիզբը տաւ-տասնհինգ օր ժամանակ ունեի՝ անմիջապես թարմ ուժերով սկսա գործի ու երբ դպրոցը սկսավ, ես արդեն ավարտած էի տրամայիս կեսը, այսինքն մինչև մեկուկես արար: Դպրոցի բացումեն

ալ վերջը մինչև հիմա շաբաթ ու կիրակի օրերես օգտվելով երկրորդ արարը ավարտելու վրա եմ: Կը մնա միայն երրորդը, որը հույս ունիմ մինչև նոր տարի ամբողջացնելու: Այսինքն աշխատանքն ու տրամադրությունը չի պակսեր հիմա ինձի, պակասածը ժամանակն է, կ'ընիմ, ինչ որ կրնամ, և եթե հաջողեմ մինչև նոր տարի ավարտելու, իհարկե, շատ ուրախ պիտի ըլլամ, ո՛չ այնքան, իսկապես, տրամայիս համար, որքան ինձի օգնողներուն վրաս դրած հույսը արդարացնելու համար: Անկեղծ խոսելով, ես հիմա շատ գոհ եմ, որ հոս գալս թատրոնական գործին հետ կապվեցավ: Առանց իմ իշխանուհիին ու Ֆիլիպին տված խոստումիս, դժվար թե այս պայմաններուն մեջ կարող ըլլայի գրական աշխատանքով ալ զբաղվելու: Շաբաթ ցորեկները դպրոցեն դարձիս մեծ ուրախություն մը ունիմ, որ մինչև կիրակի իրիկուն ժամանակս իմս է, իմս ու տրամայիմս և այդ ուրախությունը զուցե իմ միակ արդի իրական հաճույքս է հիմա: Տրամայիս կենդրոնը կին մըն է, գործողությունը կը կատարվի Թիֆլիս: Անունը «Ուրիշի համար»¹, ձեռներեց, աշխատանքի ու գութի կին մը, որ շարունակ ապրած է ուրիշներուն համար, ուրիշներուն օգնելու, ծառայելու, որ կուզե ու պահանջը կըզգա իր համար ալ ապրելու վերջապես, բայց իր հաճույքին համար ապրել կարողանալու համար պետք է ուրիշներու ցավը հոգ չընել. ամբողջ տրամաս այդ մաքառման մեջն է՝ բուռն եսական պահանջ մը ապրելու, որուն դեմ կելնին գութն ու սովորությունը: Ինչպես կը տեսնիս՝ զուտ հոգեբանական նույթ, և արդեն ինձնե ուրիշ բան ալ, իհարկե, չէիր կրնար սպասեր, բարքերու ու տեղական կյանքի նկարագրության հետ, գիտես, որ գլուխ չունիմ: Ավելցնեմ նաև, որ ես ինքս առայժմ իմ գրածես գոհ եմ: Հիմա կը մնա միայն, որ ուրիշներն ալ գոհ ըլլան:

Իսկ դո՞ւն, տես, ինձնե օրինակ առ ու երկար-բարակ նստե գրե: Առողջությունդ, ամառվան կյանքդ, արդի դրությունդ ու գրական կյանքդ: Գրե նույնպես ինչ որ կա քիչ-միչ հետաքրքիր շուրջդ գրական աշխարհքին մեջ: Ես հոս բոլորովին կտրված եմ ձեր բոլոր գրական բարիքեն ալ, շարքեն ալ, գոնե քեզնե մեկ-երկու խոսք լսեմ: Ի՞նչ հալի են մեր թերթերը, անկոթ «Մուրճը», փալանը կորուսած «Մշակը», հնադարյան «Նոր-Դարը», ցամքած «Աղբյուրը», անտարակ «Տարազը» և մյուս մեթերները: Եվ մի՞թե վերնատուննիս այդպես բոլորովին դատարկ է հիմա, ո՞չ ոք: Գրե աշուղ Իսահակին, որ ամոթ է, տղամարդուն չի վայլեր այդպես փեթռած շուշաններու ետևեն ախվախ ընելը, թող բան մը ընե, թող գրե, թող բանի մը պետք գա, բայց սրտե բխած աղվոր բան մը: Գիտեմ, որ իր փնտռած շուշանը իրական

¹ «Ուրիշի համար» դրաման առաջին անգամ հրատարակվել է «Մուրճ», 1905. N 11-12 և 1906, N1, այնուհետև առանձին գրքով (Թիֆլիս, 1914):

բուսնող ու թռռնող շուշաններեն չէ, այլ շուշան մը, որ միայն բանաստեղծի հոգիին խորքը կարոտեն կը ծլի ու պատրանքով կը սնանի և որ արտաքին շուշանի անունն ու քանի մը ձևերը միայն ունի իր վրա: Թող նկարե մեզի իր այդ իղեալ Շուշանը, եթե անպատճառ իր Շուշանեն գատվիլ չի կրնար: Հապա Դերե՞մը, մի՞թե մինչև հիմա չերևցավ, եթե եկած է, թող գրե ինձի ան ալ ու թող հասցե տա կամ գրե իրեն նույնը, եթե եղած տեղը գիտես:

Այսպես, ուրեմն՝ մնացեր ես դուն, մեր Վերնատան հավատարիմ պահապան, կու գանք, Հանես ջան, կու գանք, կը ժողվվինք նորեն, կը կարդանք նորեն մեր Սոֆոկլեսն ու Սերվանտեսը, կը խոսինք, կը խոսինք նորեն ամբողջ ձմեռվան երկար գիշերներով հինեն-նորեն, գյուղեն ու «խաչախներեն», տակնուվրա կընենք նորեն մեր ամբողջ գրականությունը ու կը տաքնանք ու կոզևորվենք մեր սկզբունքներով, մեր տաղանդով, մեր գրածովն ու գրելիքներով... Իսկ առայժմ՝ համբույրներս կը խրկենք քեզի, մտերիմ ընկերոջ մը ջերմ, մաքուր անկեղծ համբույրները:

Լևոնդ

Դեկտեմբերի 30, 1901, Անվերսից Թիֆլիս

Իմ անգին Հանես, ամեն անգամ, որ նամակդ առնեմ, ինձի համար ահագին ուրախություն է և երևի սաստիկ ուրախութենես սրտի լայնացում չստանալու համար է, որ այդքան հազվագյուտ եմ նամակներդ, այսինքն՝ չեքե-չեք: Արտահայտության եղանակը քեզի թող չի զարմացնե: Հիմա իմ օրացույցս ստացած չեքերուս վրա է ձևած, որոնք քու նամակներուդ չափ հազվագյուտ են: Դուք հող ծիծաղեցեք իմ վրաս, ինչպես որ կըսես, իսկ ես հոս ամենահիմար հոգեկան դրության մեջ եմ. քանի դպրոցն էի, տեսակ մը ինկած էի հոսանքին մեջ ու կամա-ակամա կաշխատեի, իսկ հիմա, երբ բոլորովին ազատ եմ ուզածիս պես ժամանակս տնօրինելու, երբ մուգաս սատանի պես մտեր է թևիս տակը ու ինձի հանգիստ չի տար, երբ գրելու պահանջը, նյութը, ծրագիրները մեջս կեռան, դե՛հ, խնդրեմ, դե՛հ, հրամմե նստե ու առևտրական նամակագրություններու թարգմանությունովը զբաղվե: Բայց պետք է, պետք է զբաղվիլ, տարին շուտով կանցնի ու վերադարձիս գործնական բան մը պետք է հետս բերե՞մ, թե՞ չէ: Կամաց-կամաց այն ձախորդ եզրակացության կու գամ, որ իմ ջանքս մեկ թևով երկու ձմերուկ բռնել ուզել է, որը կարելի բան չէ, եթե հավտանք ժողովրդական առածին: Ու, երբ կմտածեմ, որ արտադրելու գուցե ամենաուժեղ տարիներս է այս, որ այսպես կվատնվի: Հիմա ալ, որ Փարիզ կերթամ, գեղարվեստի ծոցը, առաջուց գիտեմ, որ ներքին

հակասությունն ավելի պիտի սրվի, ավելի պիտի տանջե ու ավելի ալ պիտի խանգարե թե՛ տրամաներս և թե՛ առևտրական նամակներս: Է՛, ինչ գլուխդ ցավցնեմ, կընեմ, ինչ որ կրնամ, մնացածը գլուխը քարը, մարդ իր կաշվեն դուրս գալ չի կրնար: Ուղարկած «Վտակդ» իր ժամանակին ստացած եմ և մինչև հիմա կարդացի ամբողջ առաջին գրական մասը մասնագետի մը կատարյալ համբերությամբ: Եզրակացությունս կուզե՞ս. բոլոր վիպակները՝ մեծ ու փոքր «հավուր պատշաճի» սիրուն կամ տգեղ «հողվածներ» են, զեղարվեստական ու ապրելու ընդունակ ոչինչ. ամենեն զեղարվեստականը... երևակայե... չէ, չես կրնար, եթե չես կարդացեր և ապահով եմ, որ չես կարդացեր... Պռոշյանցի վիպակն է¹, սկիզբն ու վերջը, իհարկե, ավելորդ, քիչ մըն ալ գուցե անճարակ գրված, բայց մեջը կյանք կա, կռիվ՝ իդեալիզմի խորտակումը նաթյունալիզմի մեջ, ամենայն տեղ նույնը, այդ հինգերորդ գինեգիժը գիժ է հենց սկզբեն, որովհետև իդեալի մարդն է, տարբերը, բացառիկը, մաքուրը: Իդեալիստն է, որ կյանքի խնջույքին, եթե պատահի, որ մասնակցի, ամենեն շուտ կը հարբի, և եթե անգամ մը հարբեցավ, ալ վերջացավ: Ավետիքի երգը² տեղ-տեղ խորն է ու գաղափարը սիրուն, ամանն է անշնորհք ու հինցած: Փափագյանի երգի³ գաղափարն ալ հետաքրքիր է և նոր մեր գրականության համար, միակ թյուրիմացությունը վերնագրին մեջն է, հող երգ չի կա և ըմբոստ ըլլալու համար, հարկ չի կա, իհարկե, կոպիտ ու խառնակ ըլլալու: Կը գրես, թե մեր բոլոր լրագիրները շուտով իրենց խմբագիրները փոխեն պիտի, ինչպե՞ս թե, բազկաթոռներու ծածկոց խոն չեն այդ խմբագիրները, որ բոլորը միասին փոխել կարողանանք ու լվալ տանք, թեև եթե կարողանայինք, հիանալի բան կ'ըլլար, որովհետև սաստիկ են թոզոտած ու կեղտոտած: Յոգիդ սիրես, երբ բան մը կը գրես, մարդավարի գրե, որ բան հասկնամ, գրածներուդ միշտ պոջը կա, գլուխը չի կա: Այդպես ալ մինչև հիմա դեռ չեմ հասկցեր թատրոնական ընկերությունը կազմվեցա՞վ, չէ՞, ինչպե՞ս, Թիֆլիսի ներկայացումները ընկերությունն է, որ կու տա, չէ՞ որ դուն անդամ էիր մասնաժողովին: Ինձի պատմելիք ոչինչ չունի՞ս: Գալով իմ տրամայիս, մինչև որ ինձի համար իր վերջնական կաղապարը չառնե, ձեզի խրկել չեմ կրնար, ըսենք՝ այդ բոլորը այդպես քանի մը տեղ արտագրելու ժամանակ ալ չունիմ հիմա, ձեր նկատողությունները վերջն ալ կրնաք ներկայացներ, իսկ սրբագրելու համար երբեք ուշ չէ, ես կրկին ու կրկին պատրաստ եմ մշակելու՝ օգտվելով նկատողություններեն: Դեռ

¹ Խոսքը Պ. Պռոշյանի «Յինգերորդ գինեգիժը» ազգագրական պատկերի մասին է («Վտակ», 1901, էջ 122-144):

² Խոսքը Ավ. Իսահակյանի «Սիրո երգը» արձակ բանաստեղծության մասին է:

³ Նկատի ունի Վրթ. Փափագյանի «Ըմբոստ երգերը»:

պետք է փոխադրել ալ, ուրիշ ցավ մըն ալ առ է. գրած են արևմտյան լեզվով, բայց այդպես բեմ հանել կարելի չէ՝ վերին աստիճանի անբնական պիտի հնչե կովկասյան ականջներու, պետք է թարգմանել: Իսկ հիմա գլուխս բռնված է հաջորդ տրամայովս... Երևի անունը կը դնեն «Սրտի մարդիկ»¹: Բուռն անձնական սիրու աղջիկ մը և ուժեղ հասարակական սիրու տղա մը, ինկած իր պարտականության զգացումին ու աղջկան մեջ ու հողկե վարանքն ու մաքառումը: Կը կարծեն, որ հաջող բան պիտի դուրս գա, կարծելը, կարծեն, մեղք չէ և վերջապես, ո՞ր գոռոը, այդ մեղքեն զերծ է: Իսկ դո՞ւն ինչ կընես, կը գրե՞ս, շատ ես լուռ, կը կասկածիմ, որ անակնկալ մը կը պատրաստիս ինձի: Մեր մյուս վերնատունականներն ի՞նչ կընին, բան գրած ունի՞մ, հող եղողներդ հավաքումներ ունի՞ք, թե՞ բոլորովին «անունը կա, ամանումը չի կա»: Գրած ես, թե նոր անդամ մըն² եք գտեր մեր Վերնատան, այդ ինչ աներևակայելի գյուտ, մենք որ Դիոգենեսի լապտերով ամբողջ երկու տարի կը փնտրտեինք. ընտրելիդ ես ամենևին չեմ ճանչնար «իբրև մարդ», իսկ «իբրև գրագետ» շատ քիչ, այնպես որ իմ ձայնս կը դնեն բացարձակորեն քու տրամադրությանդ տակ: Եթե մյուս ընկերներու ձայնն ալ շահի, մկրտեցեք, միայն լավ աչքի առաջ ունեցեք «մարդը», միայն «գրագետը» հերիք չէ, միայն համենայն դեպս քու քանդիդատը լավ վկայականով կներկայանա. ով որ կոնտորա, բանկ և առևտրական վարժարան մտնելեն վերջը նորեն Պառնասի փեշերեն ի վեր կը մազլցի՞՜ վստահելի է, զոնե գրական տեսակետեն: Դերենը, ուրեմն, Մոսկվա: Ինձի ուղարկե իր հասցեն, առանց մոռնալու: Իսկ Նիկոլին ու Ավետիքին իմ սրտագին բարևներս: Տարին չի լրացած գուցե հավաքվենք նորեն մեր Վերնատունը, որ երևի մինչև այն ատեն ավելի ընդարձակված ալ կըլլա... զոնե իբրև շենք: Ես երկու օրեն կը մեկնիմ հոսկե, հաջորդ լուրս Փարիզեն կստանաս: Միայն, Յանես ջան, քիչ մը քիչ ծուլություն ըրե, կը տեսնաս ինչքան համեստ եմ, չեմ ըսեր ծուլություն մի ըներ, անպատճառ չեքերուն մի սպասեր ինձի մեկ-երկու երես բան գրելու համար: Դեհ, կնոջդ տուր բարևներս և ընդունե իմ ջերմ, ջերմ, սրտանց համբույրս:

Լ.Լուճի

Մարտի 20, 1902, Փարիզից Թիֆլիս

Թանկագին հիվանդս, ներե ինձի, որ դեռ կուշացնեմ քու համբավավոր քերթվածիդ³ պատասխանը, այնքան գործ ու աշխատանք

¹ Դավանաբար խոսքը «Եսի մարդը» դրամայի մասին է:

² «Վերնատան» նոր անդամի մասին մեզ չհաջողվեց որևէ բան իմանալ:

³ Խոսքը «Պոետն ու Մուսան» պոեմի մասին է, որը տպագրվել է «Վտակում» (1901, էջ 64-80):

ունիմ, որ գլուխս իմս չէ, միայն այս մեկ-երկու օրը կաշխատեմ, որ անպատճառ կերպ մը գլուխս իմս դարձնեմ ու քեզի գրեմ երկար: Եթե գիտնաս որչա՛փ, որչա՛փ կարոտեր եմ քեզի: Համբերություն, ուրեմն, ու առայժմ համբույրներս:

ԼԼոՆԴ

Ապրիլի 7, 1902, Փարիզից Թիֆլիս

Իմ անգին Հանես, նոր վերադարձա նվագահանդեսեն: Պերլիոզի «Ֆաուստը» իր աշխույժ երաժշտությամբը դեռ ականջիս մեջն է, գրական բնագոյներս արթընցած, ամենեն սիրուն ժամս գուցե քեզի գրելու: Կը վառեմ ճրագս ու կառանձնանամ յոթներորդ հարկի սենյակս: Եթե յոթներորդ չէ, վեցերորդ կը լինի անպատճառ, դեռ լավ չեմ համրած, թեև օրը քանի մը անգամ կիջնեմ ու կ'ելնեմ: Համենայն դեպս այնքան բարձր եմ, որ շարունակ տրամադրությանս տակն են Փարիզի գեր, միհար, կզկված ու շիք, դեմոկրատ ու արիստոկրատ... ծխնելույզները. այնքան բարձր, որ ճակատս բաց կրնամ ներկայանար մեր Վերնատունը. վե՛ր, միշտ վե՛ր, այդ չէ՞ մեր Վերնատան աղվոր դևիզը: Օ՛, ես շատ վերերն եմ հիմա: Վերերը ու միայնակ: Այդ երկուքը անբաժան են իրարմե: Ծով Փարիզը իր տենդոտ ու կրքոտ աղմուկովը, շուրջիս եռուզեռունը ու իմ սեփական ամենօրյա աշխատություններս, դպրոցս, հաշիվներն ու գրքերս բոլորը միասին առած սրտիս օտար ու խառնակ մթնոլորտ մըն է միգոտ, ուր հոգիս կը հածի տեսակ մը շվարած ու անծանոթի մը կարոտով ու միայնակ, բոլորովին միայնակ: Ու չի կարծես տրտունջ են այս տողերս, ամենևին. ով վերերը կը տենչա, պետք է տորվի վերի միայնությամը: Չգիտեմ, գուցե անմիտ ու սնամեջ բառեր են միայն այս բոլոր ըսածներս, բառեր, դարտակ հնչյուն միայն: Ներե, կարելի է նվագահանդեսի հնչյուններուն ազդեցությամը տակն եմ դեռ: Ուրիշ անգամ մը ավելի դրական կը լինիմ:

Ի՞նչ պատմեմ քեզի իմ կյանքես ու ուրկե՞ սկսիմ, ջրիեղեղե՞ն: Հունվարի առջի օրերը իրիկուն մը ճեպընթացս իր բոլոր ուժովը շոգեպիմը եկավ ու խրեցավ Փարիզ: Ամբողջովին գրագետ էի այդ օրերը, վաճառականը քաշվեր, կծկվեր էր ներսս անկյուն մը, տեսնելով, օր իրեն շատ երես տվող չի կա: Մուսայիս հետ թև-թևի ընկեր էի փողոցներն ու թատրոնները, տեսակ մը հոսանքեն տարված, տեսակ մը գրգռված ու տեսակ մը անհանգիստ՝ անորոշ ու տարտամ վիճակես: Պետք էր վերջ դնել, պետք էր դրական դառնալ, պետք էր «լուրջ մտածել» և դուն գիտես արդեն թե ի՞նչ ըսել է մեզի նմաններուն համար «լուրջ մտածելը»: Օ՛, այդ սարսափելի «լուրջը»... Եվ սկսա լուրջ մտածել: Ընկա աջ ու ձախ:

Գտա արդի դպրոցս, հավնեցա, մտա ու սկսեցի աշխատելու, առանց ուշք դարձնելու մուսայիս բարձրացուցած սոսկալի փոթորիկներուն: Ալ դավաճան, ալ անհավատարիմ, ալ վատ, ալ ինչ ըսես չնետեց երեսիս: Ինձի Անվերսեն հեռացնելէն վերջը, խեղճը ալ համոզված էր, որ վերջացավ, որ ինքը հաղթանակած էր վերջնականապէս, խեղճ մուսաս. լաց, աղմուկ, իրար մեղադրել երկու կողմէն: Ես բացի «Վտակը» ու թու մուսայիդ կռիվը դրի իր առջևը, բայց որո՞ւ կըսես, ի՞նչ երկարեմ, խնդիրը հասավ ապահարզանի... գրեթէ: Կովեցանք ու բաժնվեցանք: Այս երեք ամիս է գատված ենք իրարմե ու մնացի միայնակ, բոլորովին միայնակ: Անկէ ի վեր մեկ-երկու անգամ միայն թատրոնը հանդիպեցանք իրարու, բայց ան ալ, ես ալ իրար չի տեսնել կը ձևացնենք, թեև քանի գաղտուկ աչքս կը բարձրացընեն, իր մելամաղծոտ, կիզիչ ու անժաժ հայացքին կը հանդըպիմ, որ իզուր փախցնել կը ջանա: Ո՞ւ, այդ վայրկյաններուն եթէ գիտնաս ի՞նչ սոսկալի խայթ կըզգամ մեջս: Խայթ ու անոթ ու ստորնացում: Ինձի կը թվի, թէ իրավ որ դավաճան մըն եմ, թեթևամիտ մը, որ իզուր ու օտար աշխատության մեջ կը վատնիմ ուժերս ու երիտասարդությունս, մեկ կողմ դրած կոչումս ու մուսայիս ներշնչումները: Հիմա ալ անով ինձի կը խաբիմ, որ շատը գնաց, քիչը մնաց: Արդեն գիտես, որ հոկտեմբերին, գուցէ մուսիսկ քիչ մը ավելի շուտ, կը լինիմ հող, մեր Վերմատունը, ուր պատիվ կունենամ վավերացման ներկայացնելու երկրորդ տրամա: Եթէ գիտնաս ի՞նչպէս սիրտս դեպի ետ կը ցանկա, դեպի... տուն պիտի ըսեի, որ գրիչս կանգ առավ: Տո՛ւն... ու կը ժպտիմ տեսալ մը ինձի հեզմելու, կարծես, կատակելու համար, բայց լեղի է այդ ժպիտը ու կը նախանձիմ անոնց, որոնք «տուն» մը ունին, ուր կրնան դառնար: Վերջապէս, ինչպէս կը տեսնեն, այսօր սաստիկ սանտիմենթալ եմ տրամադրված: Պետք է թոնը փոխել: Սակայն այսքանը ճիշտ է, որ կարոտով կը հիշեն մեր կյանքը, մեր շրջապատը, մեր տեղերը, մեր բնությունը, մեր ժողովուրդը: Հիմա սկսեր եմ, միչնչև անգամ, ազգային դառնալու: Սիրելու համար պետք է հեռանալ, երևի: Նիկոլի ականջը խոսի: Գալով արդի կյանքիս՝ մեկ բառով ամեն բան կրնամ ըսեր՝ չփ-չոր: Բելժիկ ընտանիքի մեջ էի միշտ, հիմա այն ալ չունիմ: Կապրեմ հյուրանոցը, կուտեմ ըստտորանը, ֆրանսացիներու հետ կապեր չի կան, հայերու ու ռսներու հետ ես գլուխ չունիմ և արդեն շարունակ կաշխատիմ, տեսակ մը լարված աշխատանքով չանդրադառնալու, չի մտածելու ու հնար եղածին չափ շուտ ժամանակը սպանելու համար: Քու երագունդ տեսած ու նամակիդ մեջ վերստեղծած «փափուկ» ու «ճերմակներեն» իրավ, որ դեմս ու կողքս շատ կան, միայն ո՞չ հետս: Շատ-շատ ուրիշ բաներու հետ (յաղագս, քսան ու չորս պատճառաճանց) պետք է երկու բան՝ փող և ժամանակ, որ իսկապէս ըսած միևնույն բանն են: Փարիզ զվարճության քաղաք է

ըսեր են, միայն պետք չէ մոռնալ ավելցնելու՝ փողավորներու համար: Փարիզ ամենասիրուն սալոններու և ընկերական ամենասքանչելի շրջանակներու քաղաքն ալ է, միայն... Նորեն փողավորներու համար, իսկ անփողներուն բաց է միայն փողոցը՝ իր վարի խավի հաճույքներով: Իսկ ես, հոգիս, եթէ վերինը ունենալ չեմ կրնար, վարինով ալ գոհաման չեմ կրնար և կը կարծիմ, որ ինծի նմաններու ամենամեծ դժբախտությունն ալ հող է արդեն: Վերցուր, ինչ որ կա ձեռքիդ տակը, ատոնք են խելացին, իսկ թե մենք իսկապես ապուշ ենք, այդ նորություն չէ կարծեմ, ապուշ չեղողը, ան ալ մեզի պես ժողովրդի մեջ, գրագե՞տ կը դառնա: Կեցցե՛ք Վերնատունը:

Վերնատունը, ուրեմն, նորեն սկսեր է կենդանանալ, ինչպես որ կը գրես, ուրախ եմ, երևի այդ ալ մեր Վերնատան ճակատագիրն է, միշտ երեք-երեք, սիրուն թիվ է, համենայն դեպս: Նիկոլին ու Ավետին ջերմ համբույրներս, ի՞նչ կընեք, ինչի՞ մասին կը խոսեք, ի՞նչ կը ծրագրեք: Նիկոլը աշխատանք ունի՞՞ գոնե: Ավետին մասին գիտեմ որ հարցնելն ալ ավելորդ է. ամառը ջրաղաց, ձմեռը հողմաղաց: Անոր ջրաղացը հիմա դուն ալ եղար ուրեմն, այնպես որ միակ չմկրտած հեթանոսը ես եմ այժմ, վերադարձիս՝ առաջին պարտքս: Իսկ դո՞ւն, դուն ինքդ... Քու բանաստեղծական նամակդ իր երազային ու հուզյալ թոնին հակառակ շատ ծանր տպավորություն ըրավ վրաս: Ուրեմն դուն նորեն հիվանդ ես, կամ էիր և այդպես երկար: Ի՞նչ է տկարությունը, մի՞թե ամառը չօգնեց: Այնքան անշնորհք ես, որ ոչինչ չես գրած դեռ: Եվ նյութականդ ի՞նչ օրի է: Ե, ի՞նչ հիմար հարց, կարծես չգիտեմ: Գուցե ամենն աղեկն է խնդրի այդ հիվանդոտ կողմը չի շոշափեմ: Ուրեմն դառնամ նորեն գրականին: Ի՞նչ նորություններ կան հրապարակին վրա որևէ ուշադրության արժանի: Դուն ատենոք-ժամանակոք խմբագրական մեծ փոփոխություններու մասին գրելու ինծի սպառնացեր էիր: Ե, սիրելիս, մեր խմբագիրները բոլորն էլ անդամալույծ են, այնպես հեշտությամբ տեղերուն չեն շարժվիր: Գարակյոզյանի սիրուն դոն-քիշոտությունը, լսած եմ, բայց անոր «Տարագի» մեջ գրածները¹ չեմ կարդացած: Եթե երբեմն-երբեմն «Տարագի» հետաքրքիր թիվերեն մեկ-մեկ ուղարկես, շատ ուրախ կը լինեմ: Լսած եմ, որ Աղայանի հոբելյանին կը պատրաստվեն²: Մոտեն ոչինչ չգիտեմ, իհարկե, կը գրես: Դերենիկի հետ կապ ունե՞ք հող, ես բացարձակապես ոչ մեկ լուր չունեմ, հասցեն ալ չգիտեմ, որ գոնե մեկ-երկու տող փոխանակեմ, հետաքրքիր է՝ գո՞հ է իր նոր վիճակեն, բան դուրս գալո՞ւ է, թե ոչ:

¹ Գ. Մելիք-Կարաղյոզյանի «Իմ պատասխանը «Մշակի» խմբագրությանը և «Բաց նամակ «Աղ. Քալանթար և ընկ.» տե ս «Տարագ», 1902, թիվ 8, էջ 59-60, թիվ 10, էջ 76:

² Գ. Աղայանի գրական և մանկավարժական գործունեության 40-ամյա հոբելյանը տոնվել է 1902թ. մայիսին:

Դե՛, հոգիս, ուշ գիշեր է արդեն, վաղ առտու կանուխ ելնելու եմ աշխատելու ու նամակիս թուղթն ալ հասեր է իր ծայրին, պետք է վերջ դնել: Տուր հատուկ բարևս կնոջդ: Շուտով պատասխանե ինձի, նորեն ամիսներով սպասցնել մի տար և վերցուր ջերմ ու պինդ համբույրներս:

Լևոնդ

Հունիսի 23, 1902, Փարիզից Թիֆլիս

Իմ անգին Հանես, երևի զարմացած ես լուրջանս: Պարզապես ծուլություն, այս երեք շաբաթ է պարապ-սարապ կը թափառիմ Փարիզ: Ո՛չ կը կարդամ, ո՛չ կ'ըզբաղիմ, ո՛չ ալ նամակ: Քեզի ամեն օր գրել կուզեմ ու ամեն օր ետ կը մնա: Սակայն չեմ ուզեր Փարիզեն հեռանամ, առանց նամակիդ պատասխանը գրելու: Կիրակի գիշեր է հիմա, Փարիզի վերջին կիրակիս: Առանձնացեր եմ սենյակս ու կը կարդամ անգամ մը ևս քու զույգ նամակներդ՝ պատասխանելես առաջ, կը կարդամ ու կը մտածեմ: Չի զարմանաս, եթե ըսեմ, որ մտածումս տխուր չէ, թեև նամակներուդ մեջ տխրեցնող տարրերը չեն, որ կը պակսին: Չգիտեմ, իմ տրամադրություն՞ են է, քու նամակիդ թո՞ւր, թե ի՞նչ, բայց ես ակամա կը խնդամ: Կըզգամ շատ խոր, որ ծնեռը խիստ դառն վայրկյաններ ես անցուցեր: Նրբազգաց մարդու համար անտանելի տանջանք մըն է, քու նկարագրած մանրամասնություններդ, գիտեմ, բայց ամեն առավելություն իր հետ իր տանջանքը ունի, հո՛գիս: Քեզի նման, կյանքին շատ բարձրեն նայող, հպարտ, մաքուր ու նրբազգաց հոգին բացառիկ է: Ու ճիշտ իր բացառիկ ըլլալուն համար ալ պիտի տուժե: Սովորական մարդիկը ամեն բան կը ներեն, բայց իրերցմե տարբերվիլը, իրերցմե բարձր թռչիլը չեն ներեր: Ու ամեն կերպ կը ջանան, ըլլա գիտակից, թե բնազդաբար, իրենց վրեժը լուծելու... տանջելով: Իրավունք չունիս սպասելու, որ անոնք քեզի հասկնան: Դուն պետք է, որ անոնց հոգին հասկնաս, եթե հասկնաս՝ կը ներես և հող ալ կը գտնիս, գուցե, անոնց քեզի պատճառած «կյանքիդ թունավորման» հակաթույնը: Կը տեսնի՞ս, չեմ ըսեր, որ չի տանջվիս շրջապատիդ պզտիկ խայթոցներեն, որովհետև նրբազգաց մարդու համար ատիկա անկարելի է: Չեմ ալ ըսեր, որ արհամարիես անոնց ծաղրն ու կոպտությունը. կոպիտ սրտերու բաժինն է, իրոք, արհամարիել կարողանալը: Խղճա, եթե կուզես, բայց համենայն դեպս հանձնված եղիր, որ քու տանջվելուդ իսկական աղբյուրը քու մեջդ է, քու առավելություններդ: Եվ եթե բնական օրենքով մը դուն ալ կուզես

¹ Գիշտակված նամակները Թումանյանի 1902թ. մայիս-հունիս ամիսներին գրած նամակներն են, որոնց ճակատագիրն անհայտ է:

քո վրեժդ լուծես անոնցմե, ավելի որոշ ու ավելի խոր դարձուր քու ու անոնց մեջ եղած գանազանությունը: Այս բարոյական դատողություններն գատ, գիտեմ ես նաև ուրիշ բան մը, որ կրնաս քու հոգուդ առջևը վահան բռնել, անթափանց վահան մը, որուն զարմվելիս բուրդ գծուծ նետերը գետին կը թափին: Գրե՛, գրե՛, և այն ժամանակ դուն կը բարձրանաս քու աչքիդ ու այնքան քեզի վերը կը զգաս, որ այդ մանր ցավիկները ծիծաղելի կը դառնան: Գրե՛ ու ատով լիովին փոխանակած կըլլաս քու փոքրաթիվ ճշմարիտ բարեկամներուդ թե՛ գոհողությունը, թե՛ ակնկալությունը: Ինծի կը թվի, որ ատոնք են քու պարտատերերեդ ամենեն գլխավորները, որոնց հաշիվը ամենեն առաջ պիտի մաքրվի, եթե քու բարեկամներուդ մոտ գլուխդ բարձր պահիլ կուզիս: Գրե, հող է քու վրեժդ ալ, քու պարտքերուդ վճարումն ալ, քու կյանքիդ խորհուրդն ալ, ու, եթե կուզես, քու երջանկությունն ալ: Շատ լավ գիտեմ, որ նորություններ չեն քեզի գրածներս, գիտեմ նաև քու բուրդ առարկություններդ, որոնց մեծագույն մասը բացարձակապես իրավացի են: Գիտեմ, բայց կը պնդիմ իմ ըսածս: Եվ ավելի մեծ անակնկալ, ավելի մեծ ուրախություն չես կրնար պատճառել ինծի, իմ վերադարձիս, քան եթե արժեքավոր տրցակ մը թուղթ դնես առաջիս քու գրած-ջնջած խոշոր տողերովդ: Իսկ իմ վերադարձիս հազիվ երեք-չորս ամիս է մնացել, պետք է շտապել: Եվ, ինչպես դուրսավ կրնաս ենթադրել, այս տողերս ու կոչս միայն քեզի չէ, որ կուղղեմ, այլև ինքս ինծի: Ես ալ կուզեմ նոր բան մը բերեմ հետս, բացի հիմեն, որու մասին արդեն քանի-քանի հեղ գրե՞ր եմ քեզի: Լոզամ երթալուս գլխավոր պատճառն ալ այդ է. հանգիստ, սիրուն քաղաք մը, բնության մեջ: Յուս ունեմ տրամադրվեմ ու գրեմ, տեսնենք: Իմ հաշվովս դուն ալ հիմա արդեն ամառանոցը պետք է ըլլաս: Սաստիկ կը հետաքրքրվեմ, թե ի՞նչ կընես, ի՞նչ հալի ես, «Ա՛խ, Վարյադ» ի՞նչ հալի է. սքանչելի կատակ: Վիպակիդ շարունակությամբ՝ կպասիմ արդեն այս քանի ատեն է, որ չի գար, հակառակ տված խոստումիդ: Փիս թերթոն ռոմանիստի պես ինչո՞ւ կեսին լռեցիր, գրե շուտով: Կրնաս երևակայել, որ հետաքրքիր եմ հետևանքն իմանալու, այսինքն հանգույցն ու լուծումը, գրականորեն խոսելով: Այնքան անշնորհք ես, որ Աղայանի հոբելյանի համար անգամ տող մը չի գրեցիր ինծի: Միակ շնորհալիությունդ, միակ ճշտապահությունդ «Ակնա հնությունքն» էին, որը ստացած վայրկյանիս կատարելապես ապշեցա, այն աստիճան վստահ էի, որ ստանալիք չունիմ և գրած էի քեզի միայն պարտքս կատարած ըլլալու համար՝ խնդրողին ալ այս ամենը նախապես հայտնելես հետո, այնպես որ անոր առջևն ալ ինծի ամոթով ձգեցիր: «Վա՛հ, ասկե ավելի ճիշտ ու շնորհքով տղա»,

¹Նկատի ունի Վարյա Խանդամիրյանի և Թումանյանի մտերմիկ հարաբերությունները:

բացականչեց, երբ գիրքը ձեռքը դրի: Բայց, իհարկե, դուն կերևակայես իմ կասկածոտ ու բազմախորհուրդ գլխու շարժումս: Ես այդ գրքի փոխարեն անկե ուրիշ գրքեր ստացա, այնպես որ քեզի կը մնա բավականանալ իմ... շնորհակալությամբս: Ի՞նչ վիճակի է վերնատունը, վերնականներն ու իրենց վերնահարկերը: Մի՞թե ձմեռը ոչ մի աշխատություն, հավաքում և այլն չունեցաք: Իսկ ես հոս արդեն հող կը պատրաստիմ ուրիշներու առջև, հող պատկառանքի դեպի մեր վերնատունը: Թե՞ «ամուսնը կա, ամանունը չկա», խայտառակներ:

Ես այսօր կ'երթամ *chambra*-ի միստին՝ ներկա ըլլալու, արդեն ատոր համար է, որ այս քանի մը օրը հոս ուշացա, իսկ վաղը՝ մնաս բարով Փարիզ, այնպես որ հաջորդ նամակս՝ Լիմանի «գեղազվարճ ավերեն»: Միայն, եթե կուզես, որ նամակս ալ Լիմանի մնան գեղազվարճ ըլլա, պետք է նախապես ինձի մարդավարի պատասխանես: Կը տեսնա՞ս, հասեր եմ վերջին միջոցիս, պետք է սպառնամ՝ քեզմէ լուր մը ստանալու համար: Դե՛, քեզի տեսնեմ, ամառանոցեդ ինձի այս անգամ ալ ամոթահար ձգե «Յնությունքի» մնան, այդ պայմանով ես միշտ սիրով պատրաստ եմ ամոթահար ըլլալու: Յարվածներ կան, որ քաղցր է ստանալը, քնքուշ թաթիկներն նետված վարդի ապտակիկներու նման: Ու քանի որ այսպես աննկատելի կերպով «քնքուշ թաթիկներու» ու «վարդերու» սահմանեն ներս եմ մտեր, պասթա, հոս ալ կանգ կառնեմ: Իսկ իմ անթիվ համբույրներս ուղարկած եմ քեզի «օ՛, Վարյայի» հասցեով, ստացիր անկե:

ԼԼՈՆ

Սեպտեմբերի 6, 1902, Լոզանից Թիֆլիս

Յանե՛ս ջան,

Երևի այս վերջին նամակն է, որ կը գրեմ քեզի արտասահմանեն, հավանորեն ամսե մը ճամփա կելնեմ, ուրեմն նամակիս ձեռքդ հասնելեն ամիս մը վերջը կը հասնեմ և ես: Չես կրնար երևակայեր, թե ինչպես անհամբեր ու բոլոր սրտովս շուտ ետ դառնալ կը տենչամ. «ընչի՞» պիտի հարցնես քու սիրուն ընչիովդ, «ընչի՞ կըշտապես»: Ինչուն ես ինքս ալ չգիտեմ, միայն սաստիկ - սաստիկ կարոտեր եմ մեր օդը, մեր կյանքը, մեր շրջանը: Յոս ես մարդ մըն եմ միայն, թիվ մը, հող ես ուժ մըն եմ, գործոն մը: Յոս ես օտար մըն եմ, օտար մը ինչքան ալ որ ապրեմ, հող ես իմ տանս եմ, տուն մը որ չունիմ, բայց որ իմս է: Եվ այլն, շարունակությունը բերանացի: Իսկ առայժմ քանի մը տող իմ արդի կյանքիս մասին, այսինքն՝ աշխատանքիս, որովհետև իմ կյանքս

՝ Գրասենյակի միստին:

աշխատանք է միայն, մինչև հիմա այդպես է եղեր և երևի միշտ ալ այդպես է ըլլալու, և այլն, ատոր շարունակութունն ալ բերանացի: Գալով արդի աշխատանքիս՝ այնքան էլ գոհ չեմ: Քեզի գրեր էի ամառվան ծրագիրներուս մասին և երևի բերնիդ ջուրերը վագեցին, երբ կարդացիր, որ երկու ամսվան մեջ բոլոր տրամաները իրար եմ խառնելու, է՛, սիրելիս, մի՛ վախճար, բոլոր տրամաներն ալ ձեռքբերես ազատված քնած են հանգիստ: Արդեն գրվածները սնդուկիս խորքը, իսկ դեռ չի գրվածները ուղեղիս խորքը: Միակ բացառութունը նորեն անցած տարվան գրած անտերն է, որ դուրս հանեցի քիչ մը կարգի բերելու, քիչ մը ուզեցի վերջնական ձևին բերեմ ու ճշմարիտ որ բոլորովին «իրար խառնեցի»: Ժամանակ չունիմ, հոգի՛ս, մարդավարի աշխատելու, իսկ հապճեպ աշխատանքով շնորհքով գործ տեսնելու հնար չի կա: Միայն կըսկսիս գրածդ քննադատելու, ջնջելու, իսկ ուղղել, ավելացնել չես կրնար ու վախենալով, որ ունքը շինելու տեղ աչքն ալ չի հանեմ, նորեն փաթեցի ու դրի իր տեղը: Իսկ պետք է ավարտել, որ կարելի ըլլա մարդու երես հանել, ամենեն առաջ մեր Վերնատան, վերջը՝ ընկերության: Պետք է, այո՛, բայց... բայց և պետք է շատ մը ուրիշ առևտրա-թղթակցական աշխատանքներ: Գիտեմ, որ այս փրոզայիկ բառը շատ անհարկի ներս սպրդեցավ վերի գրական տողերուս մեջը, բայց ի՞նչ ընեմ, քանի որ մենք ինքներս այսպես անհարկի ներս ենք սպրդեր անգամ մը առևտրի աշխարհը: Որպեսզի այս հռետորական երկարաբանությունես բան մը հասկընալ կարողանաս, շտապիմ քեզի հայտնելու, որ կարծես թե արդեն պաշտոն մը ունիմ գրեթե: Իհարկե, վերջին նախադասությանս երկու ծայրի կարատավոյները քեզի պիտի խրտնեցնեն քիչիկ մը: Վնաս չունի, սիրող պինդ պահե: Խնդիրն այն է, որ ասկե երկու ամիս առաջ Կովկաս հանքային արտածությամբ զբաղվող առևտրական տունն մը (որոց երկու եղբայրները արտասահման հանդիպելու առիթը ունեցած են) ստացա շատ սիրալիք առաջարկ մը՝ իրենց տան մեջ արտասահմանյան թղթագրի պաշտոնը ընդունելու: Օրական մեկ կամ երկու ժամ աշխատանք, կըրնաս հասկընար, թե ինչ աստիճան մուզայիս կու գա, խնդրի բայցը միայն հոն է, որ գրեր էին շուտով վերադառնամ: Իսկույն պատասխանեցի, թե իսկույն դառնալ չեմ կրնար, պարզապես փողի պատճառով: Ես ձեռքս փող պիտի ունենամ միայն սեպտեմբերի վերջերը և ահա ամիս ու կես է, որ իզուր պատասխանի կըսպասեմ, և ահա քեզի բանալին այդ վերին գրեթեներուն: Միայն այսքանը ավելցնեմ, որ ես մեծ հույս ունիմ գործի հաջողելուն, և այլն, ասոր մնացածն ալ բերանացի: Միայն այս պատմության անմիջական արդյունքը այն եղավ, որ իմ ծրագրիս հակառակ, այս ամառն ալ ստիպվեցա առևտրական աշխատանքի գոհելու, մոտակա պաշտոնս բնականաբար իր պահանջները ունի: Այնպես որ, ուրեմն, ինձի սպասե, համբերությամբ

կամ անհամբեր, թողնում եմ քու ընտրությանդ, իսկ ինչ կը վերաբերի տրամաներուս սպասելուդ, առաջվն քեզի նախագգուշացնեմ, որ համբերությանդ պաշարին տուպրակը մեծ տեսակեն ընտրես: Իմ այս գրական-առևտրական գոտեմարտությանը ներկա եղած միջոցիս, դուն ալ հողկե կը գրես, թե դուն ալ ոչինչ չես արտադրեր, չգիտեմ ինչու, ինձի, կարծես, չափ մը ավելի ցավ կը պատճառե: Ափսոս, ճշմարիտ, ափսոս ինձի ալ, քեզի ալ, ափսոս և ամոթ ինձի ալ, քեզի ալ: Եվ այլն, մնացածը բերանացի: Հանձնարարեր էիր, որ շատ գրեմ ու շատ հարցնեմ քու Վարյայիդ մասին: Բայց ես մինչև հիմա շնորհքով բան չի կրցա հասկնամ քու այդ ունի վարդիդ պատմությունեն, որ ինչպես կերևի, շատ փշոտ տեսակեն է ըլլալու: Ինչո՞ւ Իսակի «դեղատոմսովը» չես գործը սկսեր. «Վարդ մի՛ սիրե, փուշ ունի»: Ա՛յ օրինակ՝ մանիշակ մը, շուշան մը, նունուֆար մը, կամ այդ կարգի անվնաս բան մը ընտրելիր: Ըսենք ինքը շուշաններեն շատ խեր չի տեսավ, բայց գոնե մանուշակի ու նունուֆարի մասին դեռ ոչ ոք վատ խոսած չունի, մինչև անգամ բանաստեղծները, ո՛չ: Ի դեպ. ո՞ւր է Ավետիքը հիմա և ի՞նչ բանի է: Հույս ունիմ, որ առաջիկա ձմեռ գոնե բոլորս միասին կըլլանք և մեր Վերնատունը հավիտենապես դատապարտված չի մնար միշտ Հայր-Որդի... Հոգին սուրբե մը բաղկացած ըլլալու: Շատ-շատ կը ցանկայի, որ հավաքվեինք, սեղմվեինք իրար, իրար սիրող, իրար հասկցող մեր խումբը ու քիչիկ մը կենդանացնեինք, տաքցնեինք Վերնատունը: Նիկողը գիտեմ, որ հող է, իսկ Դերենի, ինչպես կերևի, ջութակը օրդերուն է դիպեր¹: Ինձի գրեր էին, որ վերադարձեր է արդեն Կովկաս և որ օրդերը քիչ մը գրգռված են: Չմեռն ան ալ հավանորեն Թիֆլիս կը լինի, գուցե մեկ-երկու նորերն ալ բռնացրինք, արդեն նորընծայացու մեկ թե՞ երկու հատ ունիմ աչքիս տակ, բայց և այլն, մնացածն ալ բերանացի: Ինձի մայե, ես այնպես ծուլություն-մուլություն բան չեմ հասկնար, ոչ այլ այնպես հիմար տողեր «թե ես ծոված, խանգարված մարդ եմ», չգիտեմ ինչ: Կուզես ծովի, կուզես շտկվի, ես վերադարձիս քեզմե նյութ կուզեմ, մեր Վերնատանը արժեք ունեցող բան մը պիտի ներկայացնես, անպատճառ: Նախ գրե՛, վերջը ատեն որչափ կուզես խանգարված մարդ եղիր, մեկը մյուսին չի խանգարեր, իսկական խանգարված կամ խանգարվող մարդ կը դառնա միայն այն ժամանակ, երբ մեր Վերնատան ընթերցանության նյութերդ ցամաքեցնես: Գիտես որ ամեն բանեն առաջ և ամեն բանեն մեծը մեր Վերնատան ընթերցումներն են, ուրեմն, երեսդ խաչ հանե և շուտ ըրե, վերջացուր ինչ որ սկսեր ես: Վա՛հ, այսպես էլ խայտառակություն. ես հյուսիսեն հարավ, արևելքեն արևմուտք

¹ Դ. Դեմիրճյանը 1903թ. ջութակի դասեր առնելու նպատակով մեկնել է Մոսկվա, սակայն վատառողջության պատճառով շուտով ստիպված է եղել ընդհատել պարապմունքները (տես՝ Գր. Մուրադյան, Դերենիի Դեմիրճյան, Երևան, 1961, էջ 25):

Եվրոպան չափչփեմ ու ամեն տեղ «է ջան» կարդամ, թե՛ բանաստեղծ ու բանաստեղծ դու ես, որ միայն կաս և թե՛ շուտով օժտելու ես մեր գրականությունը անմեծ փոեմով մը, թե՛ այս, թե՛ այն, թե՛ չգիտեմ ինչ և ահա ամենախայտառակորեն կը նստես ինծի գրելու, որ խանգարվեր ես, որ... ես քեզի այնպես խանգարվել մը ցույց կու տամ, որ ճշմարիտ, որ կը խանգարվես: Դարտակ բառերը գլուխս չի մտներ, նստե աշխատե: Ընտանիք, ծանրություն, զոքանչեք, պարտքեր, երեխաների ճգլթոց, այդ բոլորը շատ լավ, հասկցա, բայց ի՞նչ, կը կարծես միայն դո՞ւն ես այդպես: Գրողներու կեսեն ավելին քեզի պես են եղած, և վերջապես՝ քու քաջությունդ ալ հոն պիտի ըլլա, որ այդ փրոզաներուն մեջեն կարողանաս «փոեզի լույսը ծագեցնես»: Դուն փոխանակ քու խանգարվելուդ մասին մտածելու ու գրելու, քիչ մըն ալ քու խանգարված փոեմիդ մասին մտածե ու գրե, դուն կուզես տակառներով արդարացում դիր մեջտեղը և կողովներով դժվարություններ, ոչ ոքի համոզել չես կրնար, որ քեզմե չի պահանջեն, և իրավունք ունեն, իհարկե, պահանջելու, որովհետև քու մեջդ շնորհք կա: Իսկ ես, իբրև պահանջող՝ ամենեն առաջ, որովհետև ամենքեն ավելի խոր կը հասկնամ քեզի, կը ճանչնամ հոգիդ, ընդունակություններդ, դժվարություններդ ու արգելքներդ: Եղիր հիվանդ, եղիր ծուլ, եղիր խանգարված, եղիր տանտեր և փեսա, վերջապես եղիր ինչ որ սիրտդ կուզե կամ չուզե, միայն մեջեմեջ գոնե, գոնե երբեմն, այնպես, սխալմամբ եղիր և այն, ինչ որ քու մեջը տեսնել կուզեն քեզի սրտանց սիրողները: Նու, սիրելիս, այս ահագին ճառես վերջը, կարծեմ իրավունք ունիմ այլևս քիչ մը հանգստանալու, մանավանդ որ կես-գիշերը իր լեն-լեն փեշերը արդեն փռեր է չորսդիս, դե, գիշեր բարի:

Եթե այս նամակս առնելուդ պես, անմիջապես ինծի պատասխանես, հոսկե մեկնելու օրերս քեզմե թարմ լուր մը առնելու մեծ հաճույքը կը պատճառիս ինծի: Իսկ իմ մասին քեզի լուրեր կու տամ միշտ, թե հոսկե և թե տեղես շարժվելես ալ վերջը: Աղայանին բարևներս, բարևներս և տիկնոջդ: Քանի մը օր առաջ գրած եմ նամակ մը Ֆիլիպին, վատահ եմ, որ արդեն ստացած ըլլալու է: Երևի, արդեն վերադարձած ես Թիֆլիս, տուր ուրեմն բարևս իրեն: Բարևե և մեր տղայքը, ով որ հոգ կա, և դուն ինքդ ալ առ պինդ ու ջերմ համբույր մը քու Լևոնեդ:

Յ.Գ. Եթե ինծի նամակ գրես, հասցեի հակառակ կողմը գրե և քու հասցեդ: Բան է, եթե քիչ ավելի շուտ մեկնեցա, նամակդ ետ կը դառնա քեզի:

Հոկտեմբերի 10, 1902, Թիֆլիսից Աբասթուման

Հանեն՝ ջան, գիտե՞ս ուր տեղից կը գրեմ քեզ այս տողերս, մեր

համբավավոր Վերնատունեն, ուր սակայն միայն անունն է մնացել կապտած ու կողոպտված իր մուզաներեն, իր բանաստեղծներեն, իր շենք ու շնորհքեն: Սա Վերնատունն է այլևս, այլ իմ բնակարանս. ախր ես հիմա քու կնոջդ *нахлебник*-ն եմ¹: Հասկանո՞ւմ ես, այսպես թե այնպես, գրավեր եմ հիմա տունդ ու տեղդ²: Առաջ քիչ մը դժվարացա այս քայլը ընելու, այնպես ավելորդ սկրյուբյուլ³ գուցե, միայն հիմա ճշմարիտը շատ ուրախ եմ, ինձ բոլորովին իմ տանս եմ զգում, ցավն էն է, որ դուն այստեղ չես: Վերջապես, ուզեր էիր հասցես, կարծեմ այլևս հասցեի կարիք չունիս: Գրե շուտով, տեսնեմ ի՞նչ հալի ես, ի՞նչ բանի: Իսկ ես, ահա երկու խոսքով՝ առաջինը, որ «անգործ» եմ, իմ պաշտոնը ջուրը ընկավ, և չգիտեմ դեռ մինչև երբ շարունակվելու է այսպես: Հավանորեն երկար, և քեզի բան մը խոստովանեմ՝ իմ այս ամբողջ տարվան մը պաշտոնավարությունես չգիտեմ ինչես վերջը, հիմա, գուցե իբրև հակազդեցություն, բնավ սիրտ չունիմ առևտրի մեջ մտնելու: Դեռ իհարկե հետամուտ եմ, կուզեի պաշտոն մը ունենամ, մանավանդ գիտեմ, որ անհրաժեշտ է, միայն... միայն ամենևին տրամադրություն չունիմ, ուրիշ խոսքով տարիս դարձավ ու եկա նորեն այն կետին, ուր որ էի հոսկե մեկնելիս: Դե, հիմա եթե կուզես խնդրա վրաս: Միայն չեզրակացնես, թե զղջացած եմ գնալուս, ամենևին, ուրիշ շատ պատճառներեն դուրս բավական է միայն հիշեմ տրամաս և... և մանավանդ՝ թոմասս՝ ո՛չ գրած, այլ ապրած: Սրտիս մեջ ջերմ սեր, գլխիս մեջ հիանալի հիշատակներ, պայուսակիս մեջ տրամա մը և հեռո՞ւն-հեռո՞ւն աղջիկ մը, որ ինձնով կապրի: Զի՞չ է, մի՞թե այսքանը չարժեր, որ մարդ տարի մը եվրոպայի քունջ ու պուճախը չափչփեր: Քու գրած վերջին քարտիկ ստացեր է գնչուհիս ու պահեր է իրեն: Արդեն այդ քարտը նրան շատ էր դուր եկած: Դուն ինձի հատ մը ալ ես դրկած, կը հիշե՞ս: Նամակ չանցներ, որ քու մասին չի հիշե: Դուն հիմա անոր ալ այնքան սիրելի ես, որքան և ինձի: Կը տեսնե՞ս, անշնորհք, ինչպես քեզի սիրողներուն թիվը ավելցնելու հետևն եմ: Հոգիս դուրս եկավ եվրոպայի բոլոր ծայրերը քեզի համար փրոփակակնդ ընելեն և ահա, ո՛վ ապերախություն, կելնեմ կու գամ քեզի, իսկ դուն տունդ, տեղդ թողեր ես ու փախեր, քաշվեր ես սարերը ճգնելու, ո՛վ դու սուրբ Օհան անապատական: Իսկ ինձի հոս արդեն բոլորովին տրամատուրգ եք հռչակեր, խայտառակներ՝ Որու որ հանդպիմ, իսկույն տրամայիցս կը բռնացնեն: Եկ ու տես, որ տրամաս էլ դեռ բռնվելիք գատ չէ, որ տեղից որ բռնես թերթը ձեռքդ կը մնա: Այս առտու սկսա «մշակումը»

¹ *Нахлебник* - կենվոր:

² *Լևոն Շանթն այդ ժամանակ ապրում էր Թումանյանի տանը, իսկ Թումանյանը բուժվում էր Աբասթուանում:*

³ *Սկրյուբյուլ (ֆր.) - նրբանկատություն:*

տեխնիկ բառով՝ գուցե մինչև ամիս մը շնորհքի բերեմ: Տրամադիր եմ կանոնավոր աշխատելու, մանավանդ այս վերնատան մեջ: Վերջապես ինչ էլ որ լինի, զգալի է կրկին, որ մուզաները այս տեղով անց ու դարձ են արեր: Փիլիպն էլ հիմա շատ զոռ «մշակելու» վրա է իր վողվիլը: Ախր, հիմա միայն ես չեմ, որ թատրերգությամբ եմ զբաղված: Շիրվանի խաղը անցած գիշեր ներկայացրին¹, ես դժգոհ չեմ, թեև քննադատելի կողմեր շատ կան, իհարկե: Բայց «խալխին» դուր չեկավ, իսկ որ գրվածքը անտարակույս գեղարվեստական արժանիք ունի, ոչ մեկ կասկած չի վերցներ և ըսածիս ապացույցն էլ այն, որ «Մշակը» սկսավ հայիոյելու²: Վերջացում եմ՝ շտապելու համար իշխանուհու մոտ, ուր ժողով է այս իրիկուն: Ինձ է հատկացված քու վականդ թողած աթոռը:

Համբույրս Լևոնդ
Հոկտեմբերի 16-18, 1902, Թիֆլիսից Աբասուման

Հանե՛ս ջան, մի փոքրիկ թյուրիմացություն կա մեր մեջ, այսինքն՝ ժողովի ու քու: Դու նորեմ բռնել ես քու հին երգը: «Սպասեցեք մինչև նոր և ավարտած գործ ունենամ հրապարակ հանելու»: Մինչդեռ հիմա խնդիրը քու արդեն իսկ ունեցած ու ամենամեծ մասով արդեն իսկ հրատարակած երկրորդ ամփոփ ու վերստին տպագրության մասին է, մեկ կողմեն՝ ավելի լայն շրջանի մեջ քեզ ծանոթացնելու և երկրորդ ու մանավանդ, այդ առիթով քեզ մի որևէ նյութական ապահովագրություն ձեռք բերելու համար: Կից նամակը քեզ խնդիրը երևի ավելի կը պարզե: Թե՛ այդ կերպով և թե՛ իշխանուհու և այլ մեկ-երկու միջամտությամբ գրեթե հաստատ հույս կա, որ այդ անուճով՝ «գրքերուդ հրապարակության ի նպաստ»՝ մի բավական խոշոր գումար գոյանա: Մի 2-3 ամսից, և հավանորեն դեռ ավելի, հազիվ բաժանորդների թիվը հայտնի լինի, ուրեմն դեռ առնվազն երեք ամիս ունիս մինչև հրատարակության սկսիլը: Ինքը հրատարակությունն ալ նորեն մեկ-երկու ամիս, այնպես որ դեռ տրամադրության տակ 6 ամիս ժամանակ կա: Այլևս ինչ բժախնդրություն է դա՝ «նախ պատրաստ լինի, վերջը կը հրատարակենք», իհարկե, պատրաստ չեղած բանը չի հրատարակվի: Առայժմ միայն գործի արտաքին՝ առևտրական մասն է, որ սկսիլ կուզենք

¹ Խոսքը վերաբերում է Ալ. Շիրվանզադեի «Ունե՞ր իրավունք» դրամային, որը բեմ է հանվել Թիֆլիսում, 1902թ. հոկտեմբերի 7-ին:

² Պիետի մասին «Մշակում» Գ.Առաքելյանը հանդես է եկել թատերախոսակամով, որի մեջ երկը համարվում է գեղարվեստական որևէ արժեք չներկայացնող, բարոյական հիմունքներից և հասարակական իդեալներից զուրկ ստեղծագործություն («Մշակ» 1902, թիվ 223, հոկտեմբերի 9):

և դրա համար է, որ քու վստահելի բարեկամներուդ ցանկը խնդրած էինք քեզնից և խնդրում ենք հիմա էլ, ուղարկե շուտով: Թե՞ կարծում ես, որ 5-6 ամսվան մեջ էլ պիտի կրնաս արդեն հրատարակած երկերդ կարգի բերես և անտիպներդ էլ վերջնական ձևի: Կը կրկնեմ, նույնիսկ իբրև գրագետ, որ հիմ ոտանավորները շատ ջնջել ու ջնջոտելը անարժեք բան է: Բռեմների խնդիրը, իհարկե, այլ է, բայց նրանք էլ միևնույն է, երբեք չի կարելի ավարտած համարել քու այդ աշխատելու եղանակը աչքի առաջ ունենալով: Տասն անգամ էլ, որ տավի, դու նորից ջնջես ու ջնջոտես պիտի, «Սաքող» ու «Անուշը» քեզի օրինակ: Դեռ անաբար երկրորդ, թե երրորդ վարիանտդ է մտնելու այս հավաքածուին մեջ, բոլորովին նույնն է: Եվ վերջապես նորությամբ տալու քո սկրյուբյուլն¹ էլ ավելորդ է: Մեկ-երկու բռեմ գրեթե բոլորովին փոխած ես և իմ գիտցածովս երեք թե չորս էլ նորը ունես, մինչև անգամ, ինչպես ըսին, սկսեր ես նոր մանր ոտանավորներ էլ գրելու: Այս անգամվան համար հերիք է: Ավելի երկար աշխատանք պահանջող գործերդ թող մնա ուրիշ անգամի: Բոլոր խալմաղալը էն է, որ շուտով գործը գլուխ գա, քիչ ձեռքդ փող անցնի, քիչ քեզ ավելի անկախ ու ապահով զգաս, մտածես քու վերջնական ապաքինմանդ մասին ու հանգիստ քու աշխատանքդ շարունակելու: Դա՛, ապաքինում ասի, միտս եկավ: Իշխանուհին նեղացել է քեզնից և ուղղակի պահանջում է, որ Շխյանների մոտ այլևս ել ու մուտ չանես: Ախր, այդ աստիճանի էլ հիմար կարելի՞ է լինել, տղա՛: Գիտես, որ կուրծքդ նեղ է ու թոքերիդ վերին մասերը բոլորովին թույլ: Ուրիշ խոսքով պատրաստ հող պացիլների հյուրընկալության: Քու բոլոր ջանքդ լինելու է սնունդով, հանգիստով ու մաքուր օդով ավելացնես ու թարմացնես կենսական ուժերդ՝ առողջությունդ վերջնապես ապահովվելու համար: Իսկ դուն գնում ես այն տեսակ տներ, ուր ամբողջ ընտանիքը հիվանդ է, նրանց հետ նստում ես սեղան, ուտում ես այն գդալով ու այն բաժակից, որ երեկ ով գիտե որոշ շրթունքին էր, ախր, մարդ ուղղակի անխելք պիտի լինի: Եվ դեռ անցած օր երկար-բարակ քարոզներ էիր գրել Ֆիլիպի նամակին մեջ երեխաներիդ կարոտի ու սիրո մասին, դարտակ բառեր են: Եթե դու իրոք կը սիրես քու երեխաները, մի քիչ ավելի կը մտածեիր քու սեփական առողջությանդ մասին: Փոխանակ չեղած տեղից քեզ հոգ ու մտածմունք ավելացնելու, գիշերը անքուն անցնելու ու չգիտեմ ուրիշ ինչ հիմարություններ անելու, նայե որ ուտես, քնես ու կազդուրվես շատ չափավոր աշխատանքով: Դոգ ու մտածմունքի բնավ կարիք չկա: Դիմա, փառք աստծու, քու տանդ են: Երեխաներդ բոլորն էլ բողկի պես: Տանդ պակաս չի կա: Կինդ էլ չի երևում, որ խիստ դժգոհ լինի, մի դիմջացիր էլի:

¹ Երբանկատություն:

Նու, հիմա որ հայիոյեցի պրծա ու սիրտս քիչ հանգստացավ, հիմա համբուրում եմ քեզ ու սպասում նամակիդ: Ես ինձ շատ լավ եմ զգում քու տանը, դու հեջ դարդ մի արա: Աշխատում եմ տրամայիս վրա, որ այս տարի երևի բեմի լամպերու լույսին կարծանանա: Նյութական առայժմ բանաստեղծավարի, բայց հույս ունիմ շուտով առևտրական ոտքիս վրա անցնելու: Իսկ գնչուհուս մասին ինչ գրեմ քեզ, հոգիս, գրելու ոչինչ չունիմ, բայց պատմելու շատ, շատ-շատ: Իշտահո պահե մեր հանդիպումին: Ամեն նամակին մեջ քու մասին կը հարցնե, իհարկե, թեև անծամբ քեզ չի ճանչնար, ինչպես որ արդեն գրած եմ կարծեմ: Պատասխանդ մի՛ ուշացներ, նմանապես ցուցակը, որ հաջորդ ժողովին ներկայացնեմ: Ահա և այն նամակի օրինակը, որ ցրվելու ենք «մոտիկ» մարդոց.

«Հարգելի պարոն, Մե՛նք, Գ.Թ. գրական տաղանդը զնահատողներս, ձեռնարկում ենք նրա տպված ու դեռ անտիպ երկերի հրատարակությանը, հուսալով, որ արդյունքովը կարողանանք մի քիչ ապահովել ահագին ընտանիքով ծանրաբեռնված, այժմ էլ հիվանդ մեր համակրելի գրագետի ապրուստը և միջոց տալու նրան, որ կարողանա արտադրել ու աշխատել իր կյանքի այս ամենահասուն տարիների մեջ: Թե՛ մեր հայ գրականության, թե՛ բանաստեղծի և թե՛ նրա համակրողների տեսակետից մենք շատ ավելի խելացի ու բնական ենք համարում այժմ, նրա ուժերի հասուն ու թարմ ժամանակը, նրան ձեռք տալու ու միջոց, քան սպասելու, որ նրա ծերության և այլևս արտադրելու ապարդյուն օրերի մեջ միայն հասարակությունը գա իր համակրանքն ու օգնությունը մատուցանելու:

Մենք մեր այս ձեռնարկին մեջ մեր հույսը, բնականաբար, դրած ենք Գ.Թ. հարգողների ու բարեկամների վրա, որոնց թիվը, ինչպես մենք վստահ ենք, փոքր չէ: Ձեզ էլ, հարգելի պարոն, համարելով մեր բանաստեղծով մասնավորապես հետաքրքրվողների թվում, ահա դիմում ենք Ձեզ, խնդրելով՝ ամեն կերպ աշխատեք հնար եղածին չափ բաժանորդների թիվը ավելացնելու: Աչքի առաջ ունեցեք, որ «հրատարակության ի նպաստ» կարող ենք նաև բացից նվերներ ընդունել: Այդ նվերները որքան խոշոր լինին և որքան շատ, այնքան մեծ կը լինի, բնականաբար, և՛ հեղինակին հասանելիք զուտ արդյունքը: Այս երկրորդ կետը մենք մասնավորապես հանձնարարում ենք ձեր ուշադրությանը: Գիտեք անշուշտ, որ այս տեսակ դեպքերում ինչ մեծ դեր ունի մոտիկ մարդոց մասնավոր ջանքն ու տակտը և ճիշտ դրա համար է, որ մենք դիմում ենք ձեզ, վստահ լինելով, որ չեք զլանա ձեր աջակցությունը ամեն կերպ նվիրելու այս գործին, որ մենք ձեր սրտին այնչափ մոտ ենք կարծում, որչափ և մեր:

Ամեն տեսակ թյուրիմացության առաջն առնելու համար

ավելացնենք, որ հրատարակիչները ոչ մի դրամական շահ չունեն գործին մեջ: Հրատարակության ամմիջական ծախսերից դուրս, բոլոր մնացած գումարը հեղինակի սեփականությունն է:

Գրվածները կը հրատարակվի բոլորը միասին ամփոփված մեկ հատորի մեջ, որու բաժանորդագինն է՝ գեղեցիկ թղթի վրա ու փառակազմ՝ տասը ռուբլի: Սա կը լինի շատ սակավաթիվ և ամեն օրինակը թվագրված: Իսկ անկազմ ու լավ թղթի վրա՝ բաժանորդագինը երեք ռուբլի:

Թե՛ տպագրության և թե՛ արտաքինին մասնավոր խնամք կը տարվի:

Տպագրությունը կսկսի երկու-երեք ամսից, դա կախված է, թե երբ հայտնի կը լինի բաժանորդների (մոտավոր) թիվը: Եվ հենց դրա համար էլ կրկնակի խնդրում ենք ձեզ, շարժեք որքան կարելի է շուտ և ուղարկեք մեզ ձեր ջանքերի արդյունքն ու հաշիվները որքան կարելի է շուտ: Ընդունեցեք և այլն...»:

Լ և ո ճ

Նոյեմբեր, 1902, Թիֆլիսից Աբասթուան

Հանեն ջան, երբեք պատահե՞լ է քեզ, որ սիրած աղջիկդ կամ կինդ մի խոշոր հիմնարություն կատարած լինի և երբ դու քու դժկամությունդ արտահայտելու պատրաստվելու վրա լինես, ունքերդ կիտած, պատահե՞լ է քեզ, որ հանկարծ չարածճի կատակ մը շրթունքին նետվել է նա քու վիզդ անփոփոխ, ազատ և ո՛րախ և դու հանկարծ նկատել ես, որ քու շրթունքներդ իրենց գայլի քարոզները բոլորովին մոռացած, բոլորովին տարբեր մի գործով են զբաղված արդեն: Ահա, նույն հոգեկան զգացումն ունեցա, երբ վերջին զվարթ նամակդ առի: Նու, վերջապես, մի քանի պայծառ տող գրեցիր ինձի: Քեֆդ նայե, սիրելիս, բոլորը դարտակ բաներ է, կը կարգադրվի ամեն բան իր կարգովը: Քու «գործերիդ» մասին կը խոսենք մանրամասն, երբ դուն գաս, եթե շուտով գալու ես, իսկ եթե ավելի երկար մնաս հող, որ ես սաստիկ կը ցանկամ, այն ատեն հավանորեն մեկ-երկու օրով ես կու գամ քեզ: Նամակով իրար բան հասկըցնելը շատ է դժվար, կամ ծուռ է հասկացվում, կամ շատ տրամփիկ: Իսկ հիմա ապրե քու քեֆիդ, ոչ մի բանի մասին մի մտածիր, բացի քու կազդուրումդ: Քիչից-միչից աշխատե, եթե ախորժ ունիս, ուրիշ ոչինչ: Որ մուսադ սկսել է քեզ հաճախել, իհարկե, անչափ ուրախ եմ, մաղթում եմ ավելի հաճախակի վիզիտներ: Իսկ ես քու տանդ թագավորում եմ հիմա: Ամբողջ Վերնատունը իմ գայիստնիս տակն է, մուսաներն էլ ծակերից ու ծուկերից երբեմն ներս են նայում: Բայց որովհետև քամիներն էլ մուսաներից ոչ պակաս աներես են, կնոջդ հետ այսօր բոլոր ծակերն ու ծուկերը բամբակ կոխեցինք և երկի այդ է պատճառը, որ խեղճ մուսաներս այսօր չեն կարողանում ներս գալ:

Որչափ ուզեցի աշխատեն, բան դուրս չեկավ: Բայց ընդհանրապես դժգոհ չեմ աշխատանքես, աշխատում եմ ավարտեմ տրամաս, խաթա-բալա դարձավ: Արդեն ամեն կողմ չավ եմ արել, մարդու հետ չեմ կարող հանդիպել, իսկույն տրամայիցս եմ հարցնում, ու զահլաս տանում եմ, կանգնիր ու ամեն մեկի տափակ դատողությունները լսիր: Ես երևակայում եմ թե դեռ ինչ սքանչելիքներ եմ լսելու, երբ խեղճ գրվածքս «Բեմի լույսերում» ներկայանալու արժանանա: Մեկ խոսքով շատ զոռ տեսակից ինձ տրամատուրգ եմ շինել արդեն, թեև ոչ ոք ոչ կարդացած է, ոչ տեսած: Տեսնո՞ւմ ես, ինչ հեշտ բան է հայոց ազգի տրամատուրգ դառնալը: Երբեմն մտածում եմ մի լավ օյին խաղամ խալխի գլխին, իմ սրբագրությունը դառնա անվերջ, բան չունեն, թող սպասեն: Ինձնից ոչ պակաս տքնում է և Ֆիլիպը իր վողվիլի վերա: Ամեն չորեքշաբթի մեզ ներկայացնում է մի նոր վարիանտ և դեռ ոչինչով չի կարելի ապահովված համարել, որ հասած ենք վերջին վարիանտին: Մեր չորեքշաբթիի «նիստերին», չգիտեմ զգում ես թե ոչ, բայց միշտ ներկա ես և դու: Ամեն մեկը բերում է քեզնից ստացած նամակները և կարդում է խորին լռության մեջ, խորին երկյուղածությամբ և քիչ է մնացեր «հոտնկայս»: Կարդում ենք նաև դրսից ուղարկած տրամաները: Ամեն չեշիտը կա՞ գավառից, քաղքից a la Շեքսպիր, a la Իբսեն և a la ոչինչ: Ամեն բան կա մեջը ու ամեն տեսակը, միայն մեկ բան չի կա, զեթ մի քանի կոպեկի գրական արժանիք: Խեղճ բրիկաշիկներ ու չգիտեմ ուրիշ ինչեր, որոնք հաջորդ օրը ով գիտե ինչ սրտի տրոփումներով գալիս եմ իշխանուհու մոտ իրենց «դատավճիռը» լսելու, ակամա մարդու ծիծաղն է գալիս, բայց մի ծիծաղ, որի տակ դառնություն կա պահ մտած, և երբ մտածում եմ, թե ինչքան-ինչքան մարդիկ կան, որոնք կաշվից դուրս եմ գալիս, որ գրագետ դառնան, կամ դերասան, կամ երաժիշտ ու այս մտածումը մի տեսակ եսական հաճույք է պատճառում ինձ: Ուրեմն միայն փողն ու հանգիստը չէ, որ քաշում է մարդոց, նույնիսկ շատ «խելացի» համարված մարդոց, ուրեմն մենք էլ մեր բոլոր տանջանքների հետ նախանձելի ենք դեռ շատ շատերի համար: Դա էլ վերջապես մի բան է, թեև իհարկե վայրկյաններ եմ գալիս, որ բոլոր սրտովս կը ցանկայի, որ փոխանակ նախանձելի, գրպանս լի լիներ: Նու, կարծեմ, սրա վրա էլ կարելի է վերջակետը դնել:

Ձերն համբույրներով՝ Լևոնդ

Հանե՛ս ջան, շատ եմ ցավում հիվանդանալուդ: Գալիս զգույշ եղիր և եթե ինձ կը լսես, Ախալցխա կամ մի ուրիշ տեղ մի՛ մնա, եկ ուղղակի և զգույշ եղիր՝ չը մրսես: Ինչ վերաբերում է իմ քու տանդ մնալուս, դու ամենևին փույթ մի արա, սիրելիս, մախ՝ ես ինձ շատ լավ եմ զգում և ոչ մի բանի էլ պակաս չունեմ: Երկրորդ, իհարկե, որ ես իմ մոտիկ ընկերոջս մոտն եմ, ոչ թե օտարի: Ես չհասկացա այդ բոլորը ինչ առթիվ ես գրած, համենայն դեպս դարտակ բան է, կը գաս, կը խոսենք: Նույնը և սենյակների մասին: Տո՛, ո՞վ է այդ բոլորի մասին դարդ անում, է՛, և վերջապես քեզ ո՞վ ասավ, թե ես տեղավորված չեմ: Ես քու մասին եմ միայն մտածում, վախենում եմ քեզ ու ձերոնց նեղվածք դառնա: Համենայն դեպս կը գաս, կը խոսենք ու կը տեսնենք: Երկրորդական բաներ են: Էականն է, որ գաս և որ առողջ լինես: Շահագիզի պատմությունը ես գիտեի, դա էլ է դարտակ բան¹: Մի խոսքով ամեն բան դարտակ բան է: Լիքը միայն էն է, որ քեզ կարոտել եմ, ուզում եմ գաս: Համբուրում եմ քեզ պինդ-պինդ, շուտ արա, առողջացիր ու եկ:

Քու Լևոնդ

Դեկտեմբեր, 1902, Թիֆլիսից Արասթուման

Հանե՛ս ջան, ուրեմն վերադառնում ես, բարով գաս, անչափ կարոտով անհամբեր սպասում եմ ժամանելուդ: Գրիր մախօրոք որոշ կերպով հասնելուդ օրը: Ես անկեղծորեն խնդրում եմ, որ առանց քաշվելու ուղղակի մեզ մոտ շնորհ բերես: Ես մեր տանը քեզ համար հատկացնել կը տամ մի սենյակ: Կը լինես ինչպես քու սեփական տանդ մեջ, բնավ դարդ մի արա:

Ներփակ ուղարկում եմ քեզի Նիկոլի նամակը: Ա՛յ տղա, տեսնում ես մարդը ինչքան ցանկեր է շինում², զարմանում եմ և հիանում: Ես մի օր անգամ չեմ կարող ինձ երևակայել այդչափ ցանկերի մեջ նստած: Մարդ կարգին կը ցանկապատվի, բայց դոչաղ տղա է ու աշխատասեր: Ա՛յ, այդ տեսակ մարդիկ կյանքի մեջ գործ կը տեսնեն ու արդյունք կը տան:

¹Ըստ երևույթին ակնարկում է այն, որ Յու. Վեսելովսկուն գրած նամակում Թումանյանը Շահագիզին համարել է ինչ-որ չափով հայ իրականությունից օտարացած գրող և նամակն ուղարկելուց հետո մտածել, որ այդ բանն իմանալով Շահագիզը կարող է իրենից նեղանալ (տե՛ս Յ. Վեսելովսկուն հասցեագրած Թումանյանի նամակը, 1902, հոկտեմբեր 5, էջ 232):

²Նկատի ունի «Պայ նոր գրականության պատմության» համար Ն.Աղբալյանի կազմած ցանկերը: Սրանց մասին Աղբալյանը Թումանյանին գրել է 1902թ. նոյեմբերի 20-ի նամակում (ԳԱԹ, ԹՖ թիվ 236/2):

Իսկ մենք... փառավորեսցուք... և այլն: Արդեն միտքս էլ չի գալիս, ինչպե՞ս է դրա հանգամանակի վերջը:

Գնչուհիս պինդ-պինդ քո մասին է հարցնում և երբ իմանա, որ շուտով վերադառնալու ես, ինձնից ավելի նա պիտի ուրախանա: Իսկ քու ռոմաններդ թե՛ հին, թե՛ նոր, թե՛ վերջին ֆրանսուհին և թե՛ ТЯЧКИН-ի Դեզդեմոնան¹, ըստ երևույթին բնավ կնոջդ ճաշակովը չէ: Այստեղ պուլ քու մասին խոսում ենք կնոջդ հետ, պատմել եմ տալիս ու ծիծաղում վրադ: Եվ լրջորեն մտածում ենք արդեն այն միջոցների վրա, որով պիտի կարողանանք քու բազմաթիվ ու բազմազան հյուրերիդ առջևը առնենք, որ սխալ հասցեով «իմ» սենյակս չի մտնեն:

Ա՛յ, մի շո՛ւտ արա, է՛, շատ օյինբազ բան է լինելու մեր միասին ապրելը: Արդեն կինդ վճռել է, որ մի շաբաթ «անճախ» «հալա» մի քիչ խոսանք իրար հետ: Իսկ ես պնդում եմ, որ սխալվում է, որ դռանս վրա ընդունելության որոշ ժամեր եմ նշանակելու, նրանից դուրս «մի քիչ խոսալ» կարելի չէ: Ինչ սոսկալի թերահավատն է կինդ, չի հավատում, հալա ծիծաղում էլ է վրաս:

Հա՛, մեկ էլ այդտեղ լավ առատ ներս ծծիր դուրսի մաքուր օդը: Այստեղ քեզ երեք ամիս սենյակից դուրս թողնելու չեմ, որ «նստես ու գրես»՝ բարեկամներիդ ասելովը, որ «սամդուղքները չէլնիս ու չիջնիս»՝ բժշկի խոսքերով, որ «հօգուտ ազգի ամեն տեսակ դատարկ ժողովներով ու ծրի աշխատություններով ուժերդ չի վատնես»՝ ընդհանուրի կարծիքով:

Համբույրներս՝ Լևոնդ

Սեպտեմբեր, 1908, Երևանից Թիֆլիս

Հանեն՝ ջան.

Եկա թե չէ, խրվեցի: Օրական չորս ժամ դաս ունիմ, պատմություն ու գրականություն, բոլոր ուժս խլում է: Տեսուչն է Տիգրան Աղամալյան, գուցե ճանաչես, վրաս շատ լավ տպավորություն է անում: Ուսուցիչների մեջ թարմ ուժեր շատ կան, այնպես որ կազմը ընդհանուր առումով վատ չէ: Ինքը դպրոցը՝ բոլորովին նույն Ներսիսյան դպրոցը, թե՛ նիստ ու կաց, թե՛ աշակերտ, թե՛ մթնոլորտ, թե՛ շենք և թե՛ ուսուցչական մարմին:

Երևանը մի խեղճ գավառական քաղաք, շատ անհարմարություններով ու կիսավեր, մանավանդ Լոզանից անմիջապես հետո: Բայց այսպես էլ երևակայում էի ու մեծ հիասթափություններ չունեմ, ինչ որ

¹Աբասթունանում Թումանյանն ապրել է Տյաչկին ազգանունով մի պաշտոնաթող գնդապետի տանը: Տյաչկինի Դեզդեմոնա ասելով Շանթը նկատի ունի տանտիրուհուն, որին խիստ խանդել է ամուսինը:

սակայն չէի երևակայում՝ կյանքի թանկությունն է, գրեթե ճիշտ թիֆլիսի նման:

Դեռ ապրում եմ հյուրանոցում, ո՛չ տուն ունեմ, ո՛չ տեղ: Ես մի երկու օրը երևի կը կարգադրեմ: Ամեն բան նորից պետք է առնեմ ու սարքեմ, մի խոսքով գլխացավանք բան: Դու իսկույն հանձնի մեկին, ինչպես որ Օլյան ասում էր, որ զնա վերցնի տիկին Չայկանուշի մոտից մի սնդուկը, իսկ տիկին Մանանդյանի մոտից էլ մյուս սնդուկը, այլև էն մի սեղանն ու աթոռները, բոլորն էլ կապի ինչպես հարկն է, տանի կայարանն ու հանձնի երկաթուղուն իմ անունովս մինչև Երևանի կայարանը: Էդ մարդու արած ծախքերը դու տուր, Ջավոն¹, որ թիֆլիս գա, կը վճարի: Իսկ նակլադնոյի թուղթը ինքդ ուղարկի ինձ ապա-հովված նամակով. հասցես՝ Леон Сербосян, гостиница “Ориант”:

Իսկ դո՞ւ ինչ բանի ես: Փոխեցի՞ր բնակարանդ, թե՞ վճռեցիր մնաս: Ես համենայն դեպս Ստեփանի² հասցեով եմ ուղարկում նամակս, որ հաստատ լինի և վերջապես չէ՞ որ նրան էլ տալու ես, որ կարդա:

Ստեփան, քո փողը չուղարկեցի, որովհետև դպրոցից դեռ ամսականները չեն տվել, ստանալուն պես կուղարկեմ, համենայն դեպս զոնե կեսը: Կեսն եմ ասում, քանի որ այս ամիս շատ կողմնակի ծախքեր ունեմ ու ձեռքիս փողը քիչ է գալիս: Եթե դու էլ անհրաժեշտ կարիք ունես, գրի, կուղարկեմ բոլորը ինչպես որ լինի: Ներսեսյանից ստացա՞ր, ինչքա՞ն էղավ:

«Լուսաբերով»³ դեռ իհարկե բնավ չեմ զբաղվել, բայց հույս ունեմ մինչև մեկ-երկու շաբաթ աշխատանքս կարգի գցեմ ու կսկսեմ գործի: Ինձ համար խիստ պարզ է և դուք էլ չմոռանաք, որ այս տարի 4 գիրքն էլ պետք է, որ ավարտենք, ինչ էլ որ լինի:

Դե, սիրելիս, բարևներս երկուսիդ էլ, ձեր օղլուշաղին էլ (եստեղի ո՞՞ն է):

Համբուրում եմ քեզ և հիշեցնում մեր նամակագրության պայմանը: Ծուլություն չանես, Հանես ջան, և չթողնես, որ նամակս գրասեղանիդ ձախ բաժնունը փոշոտի:

Լ Լ ո ճ

Փետրվարի 10, 1910, Լոզանից Թիֆլիս

Սիրելի Հանես, մեր վաղեմի սովորությամբ նորեն նամակի կսպասիմ քեզմե և անշուշտ իզուր: Ինքս կուզեի գրեմ քեզի երկար և երևի կը

¹ Լևոն Շանթի կինը՝ Ջավահիր Ներսիսյան:

² Խոսքը Ստեփան Լիսիցյանի մասին է:

³ «Լուսաբեր» դասագիրքը կազմել ու հրատարակել են Հովի. Թումանյանը, Լ. Շանթը և Ստ. Լիսիցյանը: Լույս է տեսել 1907-1920 թվականներին:

գրեմ ալ, բայց այսօր սիրտ չունիմ և ինձի գրիչ վերցնել տվող Դերենիկի վատ վիճակն է: Վերջերս թեթև հիվանդացեր էր և բարեկամ բժիշկ մը նայեր էր ու ըսեր, որ արդեն առաջացած թոքախտ ունի: Կրնաս երևակայեր թե ինչ տպավորություն ըրավ մեր վրա: Իսկույն գնաց երկու հայտնի բժիշկներու և բարեբախտաբար հայտնվեցավ, որ թոքախտ չկա առայժմ, բայց ուժերու սպառում: Պատվիրեր են առատ սնունդ ու հոգեկան հանգիստ: Դերենիկը վերջին տարիները անցուցեր է կես անոթի, կես կուշտ, իսկ այս քանի ամիս է ապրուստի ոչ մի միջոց չէ ունեցեր: Տեսնելուս պես ըսի, որ ինչքան հնար է շուտ թողնե ու վերադառնա Կովկաս, մտածելով, որ կերպ մը կը կառավարվի մինչև սեպտեմբեր, իսկ սեպտեմբերին իրեն պաշտոն կը գտնե դպրոցներուն մեջ: Ինքն ալ համակարծիք էր. աշնանը արդեն ուզեր է գալ, խոստացեր են ընկերները պաշտոն, բայց եկեր են Կովկաս ու մոռացեր: Սա ալ անոնց վրա հույսը դրած սպասեր է և մնացեր բացը: Անցած տարի հոս համալսարանը ինչ որ քննություն է տվեր և ստացեր է մանկավարժական վկայական մը: Եվ ճշմարտությունը սա է, որ ուսուցչությունն դուրս ուրիշ ոչինչ ընելու ոչ հակում ունի, ո՛չ կարողություն: Բայց հիմա բժիշկներու այս հայտարարության վրա քիչ մը ուրիշ կերպ կը մտածիմ՝ եթե հիմա անմիջապես վերադառնա Կովկաս ոչ թե պիտի հանգստանա ու կարգին սնվի, այս քանի մը ամիսը՝ մինչև նոր աշուն, այլ ամենն հիմար դրության մեջ է իյնալու: Փող չունի, տուն չունի (իր տունը իրմ է, որ կակնկալի) և հող գալեն վերջը անոր համար կերպ մը փող ճարելն ալ կը դառնա ավելի դժվար, եթե ոչ անկարելի: Լավ կըլլար, եթե 4-5 ամիս մըն ալ հոս մնալ կարողանար, բայց անշուշտ քիչ մը ավելի տանելի պայմաններու մեջ, որ կարգին սնունդ ունենա ու հոգեկան հանգիստ: Ամսական 30-35 ռուբլու պատմություն է, 4-5 ամիս մը, ուրեմն՝ ընդամենը 120-150 ռուբլու հարց է սա, որը սակայն տղու համար կենսական հարց է այժմ: Քիչ մը կազդուրվի, հանգստանա ու ամառը գա իրեն համար տեղ մը ճարե: Թե չէ վերադառնա ուժասպառ, մտնե դպրոց ուժասպառ, ի՞նչ է ըլլալու վերջը: Ժնկի ուսանողությունը տվավ 75 ռուբլի, որով հիմա կապրի և մինչև ամիս մը կրնա իրեն խնամեր, բայց անկե անտեն բաց է: Մի՞թե անհնար էր հող կերպ մը այդ 150 ռուբլին ալ ճարել կարողանայիր: Ես գիտեմ քու պայմաններդ, բայց ուրիշ որո՞ւն գրեմ, որ սրտին մոտ առնե ու բան մը ընե: Նորեն դուն գուցե կարող ըլլաս, ասդին-անդին դիմելով, բան մը գուլիս բերես: Բաքու Քաջագունին Դերենիկի մասնավոր հարգողներն է, ան ալ կրնար գուցե օգնություն մը հասցներ: Կը գրեի ինքս անոր ալ, բայց մտածեցի, որ քու խոսքդ կրնա ավելի ազդեցություն ըներ վրան: Անոր ալ գրե: Այսպես է, սիրելիս, մինչև վտանգը մեր սեմին չնստի, չենք մտածեր: Ինչևէ, ըրե ինչ որ կրնաս և շուտով ալ ինձի տեղեկություն տուր: Այդ գումարը ան կրնա գուցե և մաս-մաս վերադարձներ, չէ՞ որ սեպտեմբե-

րին պաշտոնի է ըլլալու: Դե՛, հաջողութուն: Միայն շուտ, ինչ որ կրնաս ըրն շուտ և անմիջապէս գրն ինձի:

Կը համբուրենք քեզի ջերմ կարոտով, կը բարևեն ձերոնց: Ինչպէս ըսի, շուտով կը գրենք քեզի նորեն, որովհետև սիրտս կուզն անգամ մը քեզի հետ ըլլալ նորեն: Կրկին համբուրնրով՝

Լ և ո Ն

Յոկտեմբերի 8, 1913, Լոզանից Թիֆլիս

Դանեն՝ ջան, չէ, մեր բոլոր վերնատնական բարքերուն ու ավանդութիւններուն հակառակ այս անգամ չը գրել չեմ կրնար: Երբ երեկ իրիկուն հանկարծ, բոլորովին անակնկալ կերպով Աշխենը մտավ դռնէս ներս, երբ գրկվեցանք ու սկսանք խոսիլ, մեկէն այնպէս տաք, այնպէս հարազատ, այնպէս անուշ զգացում մը անցավ մեջես, որ, չէ՛, այս անգամ լռել չեմ կրնար: Սրտագին կարոտով ես ալ, Ջավոն ալ կը համբուրենք քեզի, Օլյան, մանչերդ, աղջիկներդ: Այնպէս կենդանի աչքիս դեմն ես դուն հիմա քու ճիժ ու բիժով, քու տուն ու տեղով: Աշխենը բոլորը պատմեց երեկ իրիկուն ու դեռ պատմելու վրա է: Լրագիրներու մեջ կը հետևեի քու հողվածներուդ, ժողովներուդ, նախագահութիւններուդ, վեճերուդ, մեկ խոսքով դուրսի Օհաննեսը: Աշխենդ ինձի բերավ ներսի Օհաննեսը, Էնտիմը, իմ Օհաննեսս, որուն խորապէս կարոտեր են:

Պատմեց նույնպէս, որ հարութիւն եք տվեր մեր Վերնատանը, շատ ուրախ են, առիկա ինձի անչափ ավելի կը հետաքրքրն, քան գրական ընկերության ձեր խայտաբղետ նիստերը: Իմ ջերմ ողջույններս չը մոռնաս մատուցանելու մեր Վերնատանը: Քիչ է մնացեր, որ Վերնատան մեկ ֆիլիալը բանանք հոս ես ու Ավոն Լիմանի հանդիպակաց ավերեն:

Շատ կը ցավիմ, որ ինչպէս բանեն կերևա, անցած տարի օգոստոսին Թիֆլիս դրկած «Յին աստվածներես»¹ ոչ մեկը իր հասցեին չէ եկեր, ո՛չ քուկիդ, ո՛չ Դերենիկինը, ո՛չ Ֆիլիպինը, ո՛չ իշխանուհունը, ո՛չ Ստեփանինը:

Իշխանուհուն հայտնն հարգանքս ու սրտագին բարևներս, Ֆիլիպին տուր համբուրս, իսկ Դերենիկին ըսն, որ հոս նամակարանը գողեր չը կան, այնպէս որ վստահորեն կրնա դրկեր իմ հասցեիս իր բանաստեղծութիւններու նոր ժողովածունը²: Այս կետը դուն ալ կրնաս աչքի առաջ ունենալ, որովհետև քու հատորդ գրքերուս մեջեն անհայտացած է, չը գիտն ով է տարեր: Դրկն ինձի ամենեն լիակատար հրատարակութիւնդ որը որ է: Պահանջ կզգամ մեջեմեջ թղթատելու:

Դեռ Դերենիկին շնորհավորանքներ ալ ունիմ ընելիք, որոնք իր այրությանն ու հայրությանը հետ մոտիկ առնչութիւն ունեն, բայց ատոնք

¹Նկատի ունի «Յին աստվածներ» դրամայի 1912թ. Պոլսի հրատարակութիւնը:

²Նկատի ունի Դ. Դեմիրճյանի «Բանաստեղծութիւններ» ժողովածուն (Թիֆլիս, 1913):

կը վերապահեն իրեն գրվելիք նամակի մը: Ընդհանրապես Աշխենը շատ անակնկալ նորություններ ուներ ինձի համար իր պայուսակներուն մէջ:

Հիմա, որ նամակիս վերջն են հասեր, չը կարծես թե քեզնե պատասխան մը ստանալու միանտությունը կը սնուցանեմ մեջս, չէ՛, գիտեմ, որ Աշխենի վերադառնալեն ետքը քեզնե նոր լուրեր առնելու համար պետք է սպասեմ Նվարդի ամուսնանալուն ու եվրոպա ճամփորդության մը ելնելուն: Այս կերպով տասը սուրհանդակ ունիս տրամադրելի, որը կարծեմ հերիք կու գա մեր ամբողջ կյանքին:

Այս աղվոր ծրագրովը հուսալից, կը գրկեմ քեզի պինդ-պինդ ու կը համբուրեմ շրթունքներդ:

Լևոն

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Նոյեմբեր 20, 1902, Պետերբուրգից Թիֆլիս

Սիրելի Օհանես,

Այս երրորդ նամակս են գրում, առաջին երկուսը պատռել են: Երեք նամակս էլ երեք տարբեր բնակարանից: Իմ նոր հասցեն՝ ցնոր տնօրինությունն այսպես է.¹ Ս. Ս. Ս. Загородный просп. д. N 10, кв. 11”:

Լավ միտդ պահիր, որ անպատվաբեր շփոթությունների տեղիք չտաս: Նամակդ ամսի 3-ին են ստացել: Առաջին պատասխանս գրել են 4-ին, երկրորդը՝ 8-ին, երրորդն՝ այսօր: Հենց այսօր նամակ ստացանք ես ու Վ. Փափազյանի եղբայրը¹, որի հետ ապրում են, մեր Ավ. Իսահակյանից, որ պատմում է քո նամակից... Միտք ունի բանաստեղծությունները նորից տպել տալ, այն էլ այստեղ: Ինչպես երևում է միտքը ծուռն է, ուզում է այս կողմերը գալ: Դերեմիկից մի նամակ ունեմ՝ բաց: Գրում է, որ պարտապում է, բայց, ավա՜ղ, գրքեր չունի: Դասական հեղինակներ է ուզում, ինչու քեզ տամ, ոնց որ կասեն, ո՞ր է: Կարող ես այդպիսի մի բան անել, մի տարվա մեջ նա կորցրածը ձեռք կարող է բերել: Նա ուղտի նման բան է, միանգամից կուտի ու հետո կարող է բավական ժամանակ անուտել մնալ: Թառայանցի Շիլլերի մասին լսած կլինես²: Արժե տարածել այդ գիրքը: Իր շքեղությամբ նա նմանը չունեցող հրատարակություն է Կովկասում, լավ պատկերներ կան, թուղթը լավ, բնագիրը նույնպես, կարծում են: Բավական հանդիպում ենք իրար, համարյա ամեն օր: Լավ մարդ է: Կա նրա մեջ՝ «ոգի կենդանի» կամ թե ունի «պատկեր Աստուծո», կրոնական, առանց նախապաշարումների, բողոքական՝ գործելու եղանակներով: Նա գնահատելի և օգտակար ուժ է մեզանում և թվում է, թե ուր մտնում է, կենդանություն է մտցնում: Բարոյական հավատարմությունը և հասարակական արթնությունը սթափեցնող ազդեցություն է անում ամենքի վրա: Այստեղ ձեռնարկում են մի «գիտական գրադարան» հրատարակել, «պատմական և գրական» գլխավորապես: Այսպիսի շարքով. Եգիպտոս, Փյունիկե, Ասորեստան, Բաբելաստան, Հու-

Տպագրվում է «Թումանյան. ուսումնասիրություններ և հրապարակումներ» հատորաշարի 5-րդ գրքից (ԳԳԱ «Գիտություն» հրատ., 1998): Դրապարակում և ծանոթագրում Զ. Ավետյանի:

¹Վրթ. Փափազյանի եղբայրը Վահան Փափազյանն է:

²Սեդրակ Թառայանցի «Բանաստեղծ-իդեալիստ Շիլլեր» աշխատությունը լույս է տեսել երկու գրքով 1903թ. Ս. Պետերբուրգում:

նաստան, Իրան, Չոնոմ, Բյուզանդիա: Նրանց պատմությունը, գրականությունը, գեղարվեստը, կրոնը: Իհարկե, թարգմանական, բայց լավ ընտրությամբ, պատկերազարդ և պարզ լեզվով: Ամեն մեկը մի հատոր 100-300 էրես: Աստված եմ կանչելու շուտով ու գործի կպչելու: Մի ուրիշ, շատ ավելի հսկայական և մեծ աշխատանք, որ արդեն ձեռնարկել եմ, այս է. 1) կազմել մեր բոլոր գրքերի ցուցակը, մինչև 19-րդ դարի վերջը, 2) կազմել բոլոր թերթերի նյութերի ցանկը, 3) կազմել բոլոր հատուկ ամունների ցանկը մեր նոր գրականության մեջ և այն բոլոր տեղեկությունները, որ կան նրանց մասին: Այս բոլորը նախապատրաստական աշխատանք է (որ կտևի, ըստ իս, 7-10 տարի), որ անհրաժեշտ է հայոց նոր գրականության պատմությունը գրելու համար: Սրա համար սենյակ ու հաց է հարկավոր, այսինքն տարեկան 200ռ., ինքս էլ փող կաշխատեմ ու մի կերպ կապրեմ: Չույս ունեմ, որ չեմ գտնի: Այն ժամանակ... այդ մասին մի այլ անգամ: Սպասում եմ նամակիդ:

Համբույրս՝ քո Նիկոլ

Դերենիկի 40ռ. մասին ես վաղուց բացատրություն եմ գրել, Մոսկվայից կարծեմ: Յո. ունի հետ ստանալու: 34(ռ) պարտքի է տրված:

Մի ոտանավոր էի գրել, Աբասովման որ հասներ նամակս, միտք կունենար, հիմի չունի: Բայց արտագրում եմ՝ ձեզ զրկած չլինելու համար մի բավականությունից.

*Ու երբ հավաքվեք Աբասովմանում,
Դուք չմոռանաք, որ այսպեղ մենակ
Խեղճ վերնականը փխրում է, փրփում,
Որպես բնիցը հեռու մի թռչնակ:*

Բարևս Նահապետին ու ձերոնց: Իմ սիրելի Շանթին համբուրիր և պատկերս տուր: Հիշեցեք և ինձ յօր ժամ բազմեք ի «Վերնատուն»:
Շանթի մասին մի քիչ բան գրի, շատ եմ կարոտել:

Դեկտեմբեր 26, 1902, Պետերբուրգից Թիֆլիս

Սիրելի Օհանես,

Այցետոմս չունենալու համար բաց նամակով եմ Նոր տարվա շնորհավորություններս ուղարկում Վերնատան սիրելի անդամներիդ և հարգելի Նահապետին: Յորժամ կազմես զընթրիս խթման, յիշեա և գիս զբազմամեղա: Սիրելի Շանթին ասա, որ նամակը ստացել եմ և շնորհակալ եմ: Կպատասխանեմ, ինչպես և քեզ նամակ կգրեմ, երբ որ գլուխս ձեռս ընկնի: Նոր տարին շնորհավորիր տիկնոջն ու ճուտերիդ: Գրեք որևէ բան Դերենիկի մասին, եթե գիտեք: Ուրիշ ի՞նչ

կարելի է գրել մի տոնական ու բաց նամակում: Բարևներ Վահան Փափազյանից:

Համբույրս՝ քո Նիկոլ

Մարտի 1, 1903, Պետերբուրգից Թիֆլիս

Սիրելի Օհանես,

Ով գիտես, այնպիսի դրության մեջ ես, որ նամակ գրելն իսկի միտոյ չի գալիս, եթե ծուլությունը մի կողմը դնենք: Ես էլ նամակ չէի գրի, որովհետև շատ խառնված եմ և նամակ գրելու գլուխ չունեմ, եթե չկարդայի Մուրճի 4-րդ N-ը և քո ու Ավետիքի գրածները¹: Մի անգամ եմ կարդացել և ինձ դուր եկավ գրածոյ, և այնքան դուր եկավ, որ ահա նստել, նամակ եմ գրում: Չգիտեմ, արդոյոք ինչպես եմ նայում քո գրածների վրա այդ տեղերի, «գրական շրջաններ» ասած տեղերում, արդոյո՞ք հասկանում եմ դրանց մեծ նշանակությունը ազգային գրականության համար, թե չէ, բայց ինչ վերաբերում է ինձ, ես ամեն անգամ, երբ այդպիսի բան եմ կարդում, ասում եմ՝ երանի նոր սերունդին, որ մեծանում է այդ տեսակ բաներ կարդալով, որի հիշողության մեջ այդ տեսակ հարազատ պատկերներ ու ավանդություններ են լինելու փոքրուց: Ես մեծացել եմ Աստուածաշունչով ու «Սոս և Վարդիթերով», նաև ժամագիրք ու «Պղնձե քաղաք», և թեև դրանք շատ հզոր գեներ են մի երեխայի գլուխ կազմավորելու համար, բայց գրաբարը շատ բան է փչացրել: Հիմի երեխաները մեծանում են քո և Ավետիքի գրածները կարդալով կամ կարդալու: Այդ ազգային շունչը, այդ հին լեգենդները նոր իմաստով, այդ տարրական գծերը ֆաբուլայի և քիչ, բայց գորեղ գույները մշակելու ժամանակ առած, այնպիսի թանկագին բաներ են, որոնց գինը հասկանալու համար պիտի հեռաստանի (պերսպեկտիվի) զգացում ունենալ, այսինքն՝ «Պետք է մարդ կարողանա մտքով շարունակել ու ժամանակի, ապագայի խորքը տանել այն, ինչ որ կաներկայունս: Այդպես եմ նայում, որ քո գրածները ստանում են մեծ նշանակություն, որքան էլ գեղարվեստական այս ու այն պակասությունն ունենան: Ամենամեծ երկերը ամբողջ աշխարհի գրականության մեջ նրանք են, որոնք լեգենդների ու հեքիաթների անհատակ գանձարանից են առած: Ի՞նչ է մի «Համլետ», մի «Լիր», մի «Ֆաուստ»: Եվ մեծագույն գրվածքները իրական գրականությունից նրանք են, որոնք ամենից շատ մոտենում են հեքիաթի, այսինքն՝ պարզ

¹Սկստի ունի հովի. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի Ա մասը («Մուրճ», 1903, N 2, 3, 4, 5): «Մուրճ» 1903, N 4-ում Ավետիք Իսահակյանը որևէ նյութ չի տպագրել: «Եվ վաղո՞ւց, վաղո՞ւց խոր քուն է մըտած...» բանաստեղծությունը տպագրվել է «Մուրճ» N 5-ում:

են կազմութեամբ, որոշ՝ իրանց գծերով և խորը՝ իմաստով: Անառակ որդու առակի վրա կարելի է միլիոնավոր վեպեր ու վիպակներ հյուսել, նրա վրա կարող են հանճարներ աշխատել, առանց, սակայն, նրա բովանդակութունը սպառելու... Սակայն ես ուզում էի մի քիչ ազգային գրականութեան մասին խոսել: Մեր գրողները, դու ինքդ շատ լավ գիտես, ոչ մի լուրջ պատրաստութուն ու զարգացում չունեն, ինչ որ կա, Աստուծո տվածն է: Հասարակութունը չի ապրում մեծ կամ թեկուզ հենց փոքր գաղափարներով, իդեալներ չունի, բացի իր գոյութունը պաշտպանելը իբր զանգված, մսակույտ և ոչ իբր պատկեր Աստուծո, այդ բանը սպանում է մեր հոգի ունեցող գրողներին, և նրանցից ամեն մեկը իր ուժերի վրա է հույսը դնում, և ինչի կարողանում է հասնել ինքը, այն էլ կարող է տալ մեզ: Իսկ շա՞տ բանի կարելի է հասնել մեր հասարակութեան մեջ, որտեղ զարթուն հոգի չկա, և զարթուններն էլ ննջում են, հոգնած մեմակ պահապան մնալուց... Մեմակութունը համարձակ է դարձնում մարդուն, բայց և շատ է սպառում ուժերը: Աշխարհը խորապես հասկանալու համար նույնպես ընկերություն-հասարակություն է հարկավոր, ինչպես և, առհասարակ, քաղաքակրթութեան առաջ գալու համար այդ անհրաժեշտ պայման էր: Ասելս այն է, որ «ազգային գրականություն» ասած բանը շատ քչերն են հասկանում, կամ թե՛ իսկի չեն հասկանում, թե և ամենքն էլ, ավել կամ պակաս, լսել են նրա մասին, իմացել են, կարդացել են, սովորել են: Այդ բանը խորապես հասկանալու համար պետք է մարդ մի կողմից ամուր կպած լինի իր ազգի բունին, մյուս կողմից սրտով ապրած լինի օտար ոլորտներում, օտար գրականություններում. ո՛չ մեկը չունի այն հոտը, ինչ որ իր ազգայինը, ո՛չ մեկը այն համը, այն ընտանեությունը, այն հարազատությունը չունի: Եվ, ինչպես ծուկը ջրից դուրս մահվան ձեռքին գալարվում է, և կենդանին ածխաթթվուտի մեջ սատկում, այնպես է, համարյա, սեփական գրականություն չունեցողի հալը: Ինչպես մարմնավոր գոյութեան համար սեփական հող, սեփական տուն, մի խոսքով՝ հայրենիք է հարկավոր, այնպես էլ մարդու հոգու համար հարկավոր է մի հատուկ, նրան հարմար հոգեկան մթնոլորտ, օդ, որ շնչասպառ չլինի: Խնդիրը այստեղ լեզվական չէ, այդ այբուբեն է, խնդիրը ավելի բարդ է, ավելի նշանավոր է և կարևոր: Ես «Ֆաուստի» մեջ կարող եմ մտնել այնպես, ինչպես գնում եմ ամառանոց, ես «Համլետը» կարող եմ երբ ուզում եմ իմ տանից, հայ մթնոլորտից զբոսանքի դուրս գալ, բարձր սարեր բարձրանալ, զով անտառներում շրջել, վեհ ու վեհ ժայռերը հասնել մագլցելով ու կանգնած գլխին՝ լայն ու ընդարձակ հորիզոններ դիտել, երկնքի ամհուն կապույտի կամ խավարի միստիկ աչքերը սուզել, պատրաստ եմ ոգևորված ասելու՝ Տեր, շինենք այստեղ

երեք վրան, մեկը քեզ, մեկը Մովսեսին և մեկը Եղիային, բայց իջնել հարկավոր է խաչվելու և հարություն առնելու համար առ որդիս Իսրայելի, այս դեպքում՝ առ որդիս Թորգոմա, ահա այդ մթնոլորտը պետք է ստեղծել. իմոնցով, իմ ազգի ոգիներով պիտի բարձրանամ տիեզերական ոգիները հասկանալու, իմ ազգի իմաստասերներից պիտի սկսեմ Կանտին հասնելու համար, իմ ազգի գիտությունից՝ համաշխարհային գիտությունը ըմբռնելու համար... Մենք թափառում ենք այս աշխարհի անապատում և չունենք մի խորան, ինչպես հրեաները, մի ուխտի տապանակ, մի Սինա՝ մարգարեների համար, և մի Ավետյաց երկիր՝ գնալու համար, ահա թե ինչ պիտի ստեղծել, և ահա թե ի՞նչ բանի են ծառայում քո գրածները, որոնց համար, իբրև հայ և իբրև մարդ շնորհակալ եմ քեզանից, որովհետև մարդասիրությունից դրդված պիտի ամեն արարածի օդ տալ շնչելու և ծուկին օդ չտալ ու թռչունին ջրում ապրել ստիպել: «Մուրճը» այդ ուղղության չի ծառայում և չի էլ կարող ծառայել. նրա բոլոր ղեկավարները ցավում են թե ախ, ինչու հայը եվրոպացի չէ և նայած ով որտեղ է կրթվել, մեկը ցավում է, որ զվեցերացի չէ, մեկը՝ որ գերմանացի չէ, մյուսը՝ որ ռուս չէ, և այլն: «Մշակը» նույնպես... Ոչ ոք չի մտածում, որ հայը պիտի հայ մնա և ցույց տա իրան աշխարհին ոչ իբրև եվրոպացի, այլ իբրև հայ, նա պիտի իր ազգին սնուցանի Նարեկացով ու միջնադարյան երգերով և կլանելով այն, ինչ տվել է ամբողջ մարդկությունը՝ ճշմարտություն, գեղեցկություն և բարին աշխարհում, ասի աշխարհին, թե ինչպես է ինքը հասկանում այդ երրորդությունը:

Տիկնոջն ու երեխաներին բարև: Սիրելի Շանթին, որի առաջ ավելի քան մեղավոր եմ նամակ չգրելու համար, համբուրիր և իմ մի համբույր ցրվե ի բաց նրա նեղությանը, եթե կա: Խառնված եմ, խառնված:

Հունիսի 11, 1907, Փարիզից Թիֆլիս

Սիրելի Օհանես,

Մի չորս օր առաջ եմ ստացել նամակդ, ինժեներ հատիսյանի նամակի հետ: Նրան անմիջապես գրեցի: Անորոշ նամակ էր, առանց հրատարակչի և խմբագրի հարաբերությունները որոշելու: Նամակներն ուշ ձեռքս անցան, որովհետև ամիսուկես է Փարիզ եմ: Երեք շաբաթից ետ եմ դառնում Ջվիցերիա, այնտեղից Կովկաս, քանզի ցամաքեցան աղբյուրը դրամաց: Ի՞նչ գրեմ. լավ քաղաք է, բայց լավն այն է, որ գամ ու պատմեմ: Շիրվանզադեին երկու անգամ տեսա, նույնն է, այսքանը բավական է, կարծեմ: Ուրիշ ոչ ոքի չեմ տեսել և չեմ ուզում տեսնել,

սիրտ չկա: «Հայրենիք»¹ խմբագիր հրավիրեցին Ամերիկա, եկան, որ տանեն, չհամաձայնեցի: Եթե մյուս տարի մի հնար չգտա, որ գամ, կիսատ ուսումն շարունակեն, որ հետո էլ քննություն տամ ու «մարդ» դառնամ, գնալու եմ Ամերիկա: Նրանից լավը չկար: Երկու տարի կմնամ, հետո Աստված ողորմած է: Իսկ թե այստեղ մի հարմար գործ գտնեն, կմնամ. ասում ես՝ գործը կա, շատ լավ, գալը ինձանից:

Խմբագրական գործը պետք է, որ դժվար լինի հը², ամեն օր թեթե հասցնելը մի անտանելի բան է: Մարդ գլուխը կկորցնի, թեև *ко всему человеку привыкает*². այս որ ասում եմ, իմ օրն եմ լալիս. խամ եզան պես քանի տարի է ժուռ եմ գալիս սար ու ձոր, շուտով լծկան կդառնամ: Ֆրանսական գրականություն և պատմություն, ահա՛ իմ պարապմունքը: Մինչև այսօր խավարի մեջ էինք. ինչ երևելի գրականություն ունեն, որ իմանաս: Մենք շարունակ ռուս ու գերման գրականության ազդեցության տակ ենք եղել: Իսկապես ռուս գրականություն. գերմանականից Շիլլեր, Գյոթե, Յեյնե, անգլիականից էլ Շեքսպիր, Բայրոն, իսկ ֆրանսականից ոչ ոք, այսպիսի մի գրականություն անծանոթ թողնել և անգետ մնալ նրա գաղափարներին ու գրածներին՝ հանցանք է: Հուսով եմ, որ այդ պակասը լրացնել կարողանամ: Ֆրանսերեն հասկանում եմ բավական: Գրել, խոսել Աստված տա: Ինչքան լավ-լավ գրքեր են ծախսում և որքան աժան, մարդ փող չունի, թե առնի, ի՞նչ պատկերներ, քարտեր: Դու որ այստեղ լինեիր, ամիսը 1000ռ. քեզ բավական չէր լինի: Տեսածդ կառնեիր, որքան քու աչքի ու սրտի՝ բան կա, լավն այն է այստեղ չես, թե չէ տասներորդի բանը վատ կլիներ³: Շանթն Իբսեն *ch bien*⁴. Թո՛ղ այդպես լինի, Վերնատան բառարանը փոխեցեք: Ուրախ եմ հաջողության համար, ո՞նց է, լա՞վ է, և մանկունս քանի՞, երկուս, Ջավոյին բարևներ: Իր Լոզանը շատ լավ տեղ է ճշմարիտ: Երանի նրան, ով իր 18-27 տարին այն երկրում է ապրել: Մենք եկանք և ամեն ինչ թոշնած տեսանք: Ամենաժանտ միտքը, որ գլուխս է գալիս միշտ, այն է, թե կան բաներ, որ այլևս ետ չեն գա, կանչես՝ չեն դառնա...: Մեր Նահապետն ինչպե՞ս է, այդ ժխտրի մեջ, երևի, այնպես է զգում, ինչպես մեկը Խոջի բաղնաում. իր պարզ խելքով նայում ու զարմանում է, թե ի՞նչ են իրար միս գզում, գրազ կզամ, որ դաշնակցական չէ և ամեն օր հետդ վիճում է. իմ սրտագին բարևները և որդիական հարգանքս:

¹Նկատի ունի «Հայրենիք», Բոստոն (1899-1930 շաբաթաթերթը, հետագայում երկօրյա, ապա՝ օրաթերթ):

²Մարդն ամեն ինչի ընտելանում է:

³Ակնարկը վերաբերում է բանաստեղծի տասներորդ երեխային՝ Թամար Թումանյանին (1907-1989):

⁴Ղե լավ:

Գուցե մի բան գրեմ. այն էլ ասում են թերթը դադարեցրել են¹: Մամուլի ազատություն չի տեսնի Ռուսաստանը. նրա համար օտար է, կարծես, ազատությունը. շատ են խոսում ազատության մասին, ուրեմն՝ չունեն: Սուտ է, ոչ մի երկիր այնպես ազատ չէ, ինչպես Անգլիան: Ամիսուկես է քաղաքն են ման գալիս. թանգարանները իմ դայդի. գիտես էլի, ծանր, մանրամասն, ամեն ծակ ու ծուկ, կոտրած աման ու քար նայելով: Քարտեզն առած մտնում են բոլոր փողոցները: Նայում խանութները, արձաններն ու շենքերը, այգիները, քաղաքի շուրջն ու ներսը, միայն թատրոնների ներսը չեն տեսնում <ձեռագրի այս թերթի ստորին ծախանկյունը պատռված է, այդ պատճառով 5-6 տող չկան>... որ հռչակ է ստանում (հոգեբան, փիլիսոփա, արվեստաբան էսթետիկոս): Մի քանի ուրիշներ էլ լսեցի, բայց ոչ տևական: Այս քաղաքում պարապել դժվար է, աղմուկ շատ կա, թեև մարդ կարող է վարժվել: Ուրիշ ի՞նչ գրեմ այս անկապ նամակս վերջացնելու համար: Լիպարիտ Նազարյանին² իմ բարևները. ո՞նց է, ո՞նց, կնոջդ չմոռանաս բարևել. հա՛, Վարդազարյանցի³ հետ էի մարտ և ապրիլ ամիսները Լոզան: Հիմա Լոզանից մի քիչ հեռացել են, ինչի՞ մի նամակ չես գրում մարդուն, հո գիտես, որ կուրախանա: Քույրն⁴ էլ հետն է:

Մայիսի 17, 1912, Թեհրանից Թիֆլիս

Սիրելի Օհանես,

Կինս գրել էր, որ արդեն Թիֆլիս ես եկել: Ուրախ եմ, որ ազատվեցիր անհիմն դատապարտությունից,⁵ և գրականությունը նորից քեզ ունի իր մոտ: Ես լիովին համոզված էի, որ դու արդարացած դուրս կգաս՝ նկատի ունենալով, որ քո գործերը հայտնի են երկրի փոքր ու մեծ կառավարիչներին և ընդդեմ չէին նրանց:

¹ Դժվար է ասել, թե որ թերթի մասին է խոսքը: Ըստ երևույթին, 1907թ. Թիֆլիսում կարճ ժամանակով հրատարակված և կառավարության կողմից իրենց «վնասակար ուղղության» համար դադարեցված «ժամանակ», «Փայլակ», «Ժայռ», «Խարիխ», «Արոր» և մի քանի այլ թերթերից որևէ մեկի:

² Գրող, գրականագետ:

³ Խոսքը վերաբերում է Փիլիպոս Վարդազարյանին:

⁴ Մարուսյա Վարդազարյան:

⁵ Այսպես կոչված «Դաշնակցության գործով» Թումանյանը որդու՝ Մուշեղի հետ առաջին անգամ ձերբակալվել է 1908թ. դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը: Մուշեղը ազատ է արձակվել ավելի վաղ, իսկ Թումանյանը բանտից երաշխավորությամբ ազատվել է 1909թ. հունիսի 13-ին:

Երկրորդ անգամ բանաստեղծը նույն գործով ձերբակալվել է 1911թ. հոկտեմբերի 31-ին և տեղափոխվել Պետերբուրգ: Դատավարությունը տեղի է ունեցել Պետերբուրգի կառավարական սենատի հատուկ ատյանում, որտեղ 1912թ. մարտի 20-ին անպարտ է ճանաչվել:

Ինչևէ: Երկար լռությունն խզելու երկրորդ պատճառն այն է, որ ուզում եմ թողնել Թեհրանը, ուր ես ինձ լիովին մենակ եմ զգում: Կինս երեխայիս հետ արդեն մի տարի է եկել է Կովկաս՝ Բաքու, և ոչ մի պայմանով համաձայն չէ դառնալ Թեհրան: Ինքս, թեև մի որոշ դիրք ունեմ այստեղ և բավարար ռոճիկ, բայց մտավորական շրջաններից ու գրականությունից հեռու մնալը այլևս անտանելի է դարձել ինձ համար: Ես ուզում եմ հաստատվել Թիֆլիս: Ինձ հարկավոր է ոտքի մի կռվան, որ հետո կարողանամ իմ անելիքը որոշել: Այստեղ ես ոչ մի խնայողություն չեմ արել և անկարելի է անել: Իմ միտքս այն էր, որ, գոնե, կես տարվա ապրուստ ապահովեի, որ հանգիստ կարողանայի նոր գործ որոնել: Բայց հաշիվներս սխալ դուրս եկան: Թիֆլիս հասնելով՝ ես մնալու եմ անապահով ու անգործ: Քեզ դիմելուս միտքն այն է, որ ինձ շուտափույթ մի նամակ գրի, թե կարո՞ղ եմ որևէ պաշտոն հուսալ Ներսիսյան և Յովնանյան դպրոցում կամ այնպիսի մի գործի հույս ունենալ, որ մոտ է գրականությանը: Խմբագրատուն, նոր թերթ, հրատարակչական և այլն: Կրկնում եմ, ինձ հարկավոր է մի կռվան, մնացածը, հուսով եմ, կգա ինքն իրան:

Խնդրում եմ, հանուն մեր երկարամյա բարեկամության... տեսնես Ներսիսյան կամ Յովնանյան դպրոցում որևէ տեղ կա՞ ինձ համար կամ որևէ ուրիշ գործ, որ կարողանամ հանձն առնել սեպտեմբերից: Այս ամենը պետք է մի քիչ շուտ անես: Խոսիլու նաև Դերեմիլին (կարող եմ ուսուցանել հայոց լեզու՝ հին ու նոր) և ինձ մի շուտափույթ պատասխան գրիր: Ես այստեղ եմ մինչև հունիս 6-7-ը. նամակը գալիս է Թիֆլիսից 7 օրում: Ես չեմ կարող ընտանիքից հեռու ապրել: Այս տարին արդեն ինձ դաս եղավ: Թեև իմ դիրքն այստեղ շատ պատվավոր է և շատ ամուր, բայց ընտանեկան և հոգեկան պատճառներով ես ստիպված եմ թողնելու տեղս:

Վստահ, որ չես թերանա այս ընկերական աջակցության գործում, սպասում եմ քո նամակին: Բարևներ ձերոնց:

Համբույր՝ քո Նիկոլ

Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՔԱՁ ՆԱԶԱՐԸ»

Հովի. Թումանյանի այս նոր գրքույկը նույնքան շնորհալի և հրահանգիչ գործ է, որքան այն բոլոր մանկական գրվածքները, որ

*Հեքիաթ, Թիֆլիս, Տպ. և. Աղանյանի, 1912, 16 էջ, հրատ. իշխ. Մ. Թումանյանի և ընկ.:
Հողվածք տպագրվում է հետևյալ գրքից: Նիկոլ Աղբալյան, Ամբողջական
երկեր, հատոր 1-ին, Պրակամ-քննադատական երկեր, Բեյրութ, 1959, էջ 182-191:*

դուրս են եկել նրա գրչի տակից: Հրատարակությունն ևս կատարված է սովորական խնամքով և զարդարված 6 գունավոր պատկերներով, որ նկարել է Ռոտտեր, միակ շնորհալի նկարիչը, որ օտարազգի լինելով՝ կարողանում է գույնի ու գծի շնորհիվ հաջողապես արտահայտել Կովկասի գրողների հղացումները:

Հեղինակն այս գրվածքի մեջ ևս օգտագործում է մեր ժողովրդական անգիր բանահյուսության անհատնում շտեմարանը, իր ընտրած նյութը մշակելով հայ ժողովրդի ոգով ու ոճով:

«Քաջ Նազարի» նյութը իր էությամբ միջազգային է, բայց նա ստացել է իր հատուկ երանգը, մշակությունն ու մեկնությունը մեր ժողովրդի բերանում և Հովի. Թումանյանի գրչի տակ:

Այս նյութի եվրոպական տարբերակն է «Անվախ դերձակը», որ տարիներ առաջ հրատարակված է հայերեն, նույնպես գունավոր պատկերներով և թարգմանված է հռչակավոր Գրիմ եղբայրների մշակած օրինակից: Նույն հեքիաթի տարբերակները կան նաև վրացերեն, թուրքերեն և քրդերեն:

«Քաջ Նազարի» նյութը խորապես հոգեբանական է և իմաստասիրական. նա ցուցադրում է մի ամբողջ աշխարհայացք՝ հանդուգն ու տրտում: Մի Սերվանտես նրանից կարող էր կերտել մի նոր Դոն-Քիշոտ: Հովի. Թումանյանի ձգտումները այդքան խիզախ չեն. նրա նպատակը պարզ է. նա աշխատում է այդ նյութը տալ իր ազգային կերպարանքի մեջ, նույնքան խոշոր ու հիմնական գծերով, ինչպես մշակելով ստեղծել է հայ ժողովուրդը:

Ժողովրդական ստեղծագործությունը, սակայն, հաճախ ունենում է բազմաթիվ շեղումներ. նրա վրա նկատվում են մի քանի շերտեր, որոնք ժամանակի ընթացքում եկել նստել են բուն նյութի վրա և երբեմն ձևափոխել, բայց հաճախ կերպարամափոխել են նախնական հղացումը: Այդ շեղումներն ու շերտերը հիմա շատ դժվար է իրարից ջոկել և միմիայն երկարամյա և ուշադիր քննությունը կարող է պարզել ու որոշել մի կողմից նյութի հիմնական ընթացքը և նրա շեղումները, մյուս կողմից նրա նախնական կերպարանքն ու հետագա շերտերը և սրանց նստելու ժամանակները:

Շատ է պատահում, որ մի որևէ սկզբնական նյութի հիմնական մոտիվը ժամանակի ընթացքում անտես է արվում. դրա պատճառը լինում են հոգեկան-բարոյական հեղաշրջումները. մինչդեռ մի որևէ երկրորդական արկած՝ ինչպես մի կորիզ՝ ընկնելով ժողովրդի երևակայության պարարտ հողի մեջ՝ աճում ու զարգանում է իբր անկախ մի ծառ. այնինչ ստեղծագործական բունը, որից անջատվել է նոր ծառի կորիզը, ինքն արդեն փտում է անհետ կամ թե փշրվել է արդեն ու դարձել մանրիկ առակներ, առածներ կամ առակածն խոսքեր:

Այս է պատճառը, որ ժողովրդի բանահյուսության մեջ գտնված մի նյութ շատ հաճախ չի հանդիսանում մի ամբողջություն՝ իբր մարմնացում մի հիմնական գաղափարի, այլ երևում է մեզ իբր գաղափարների և ըմբռնումների մի խառնուրդ, որոնց պետք է իրարից զատել և հատվածները լրացնել մասից գուշակելով ամբողջը։ Ճիշտ այնպես, ինչպես վարվում է փորձված ու հմուտ կենդանաբանը, երբ նախապատմական որևէ այրում գտնելով երկրաբանական հին շրջաններում ապրող կենդանիների ոսկերտոսիք՝ խառնված իրար ու մասամբ փոշիացած՝ մի ծնոտից կամ գանգոսկրից կարողանում է մտովին վերաստեղծել ամբողջ կենդանին և մինչև իսկ բնորոշել նրա բնույթն ու կենցաղը։

Արանից կարելի է տեսնել որ ժողովրդական բանահյուսության ամեն արգասիք ենթակա է բազմադիմի մեկնության։

Եվ երբ այդ նյութին ձեռք է զարկում մի բանաստեղծ մշակելու դիտումով, ապա նրա տված մեկնությունը կախված է իր ըմբռնումից, ճաշակից և ազգային ոգու խորքը թափանցելու կարողությունից։ Նյութի ըմբռնումն օգնում է նրան հմտորեն վերլուծել մի խառնուրդ, ջոկջկատել մասերը և մերժել ինչ որ ավելորդ է՝ մեկնելով մի որոշ իդեալից որ նա կարծում է թե դրված է իր ընտրած նյութի հիմքում։ Ազգային ոգու մեջ թափանցելու կարողությունը նպաստում է նրան մի քանի հնարավոր մեկնություններից ընտրել այն, որ ամենից լավ է հարմարում իր ժողովրդի մտայնության, աշխարհայացքին և պատմական փորձին։ Իսկ ճաշակը թելադրում է նրան գեղարվեստական ամբողջություն կառուցանել այն հատվածներից, որ նա գտնում է հում նյութի մեջ և նրան տալ ազգային ոգուն մտերիմ մի ձև։

Մենք ոչ ժամանակ, ոչ էլ հարաբերություն ունենք համեմատելու բանաստեղծի մշակումը և հում նյութը՝ իր բոլոր հայ ու օտար տարբերակներով։ Այդ պետք է թողնել ուրիշ օրերի. գուցե և ապագայի բանասերներին, որոնք անշուշտ մի ժամանակ մասնակի հետազոտության նյութ կդարձնեն մեր մեծանուն բանաստեղծի ամեն մի քերթվածը, որ մեզ այսօր ներկայանում է իբր մի պարզ գործ և որն իրոք խտացումն ու կարգավորումն է բազմաթիվ ապրումների և հայ ու օտար տարբերակների։

Այստեղ մենք այնքանը միայն կարող ենք ասել (օգտվելով իր բերանացի բացատրությունից), որ Հովհ. Թումանյանը այս հեքիաթի մշակության ժամանակ մտցրել է մի քանի մանրամասեր հարսանիքի տեսարանում։ Բացի այդ՝ բուն նյութը նա զարդարել է երեք սիրուն երգերով, որոնցից մեկը ժողովրդական՝ միայն մի փոքրիկ հարմարացումով և մի սրամիտ բառախաղի հավելումով (Նազարը և իր Նազ-եարը)։

Կարող ենք վկայել, որ իր ավելցրած մանրամասները չեն հակասում մեր ժողովրդի այդ ստեղծագործության բնույթին և հարազատության, ընդհակառակն նրանք լրացնում են այն ազգային իմաստությունը, որով տոգորված է Քաջ Նազարի բազմաբովանդակ նյութը:

Բանաստեղծի հավելվածը մենք նկատում ենք մի տաղանդավոր անհատի մեկնություն մի դարավոր առեղծվածի. մի իմաստալից պատասխան՝ մի դարավոր հարցի:

Չկա այդտեղ ոչինչ անբնական և հակագեղարվեստական: Ուրիշ տաղանդավոր անհատներ՝ ժողովրդական պատմիչներ՝ նույնպես ծաղկեցրել են որևէ նոր արկածով կամ մանրամասնությամբ ժողովրդական այս կամ այն նյութը, իրենց ժամանակի հայացքով մեկնաբանելով նրան ու լրացնելով թերի համարվածը: Երբ ասում են թե ժողովրդական բանահյուսությունը հավաքական ստեղծագործության արդյունք է՝ այդ մտքով պետք է հասկանալ:

Քաջ Նազարի պատմությունը շատ պարզ է. վախկոտի մեկը, որ առանց կնոջ իրենց շենքն իսկ չէր կարող դուրս գալ գիշերով, մի քանի նպաստավոր արկածներից հետո, որտեղ իր մասնակցությունը լիովին կրավորական է, հասնում է փառքի և մեծության ու դառնում թագավոր: Յոթ հսկաներ ծառայում են նրան, հսկաների սիրուն քույրը նրա կինն է, ժողովուրդը նրա գովքն է երգում և աշխարհը նրա բռան մեջն է:

«Ասում են մինչև էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է Քաջ Նազարը: Ու, երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում՝ ծիծաղում է, ասում է.

– Ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունե՞ս – քեփ արա:

Եվ ասում են մինչև էսօր էլ քեփ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում աշխարհի վրա» (էջ 16):

Նազարը, որին կինը տանից դուրս էր արել, հարևանի իշին նստած մտնում է անտառ. նա գոռում է վախից, իսկ դիմացից եկող գյուղացին կարծելով թե ավազակի է հանդիպել, ձին թողնում է ու փախչում: Նազարը դառնում է մի ձիու տեր:

Ընկնում է մի հարսանքատուն: Քահանան կարդալով Նազարի դրոշակի վերատառությունը, թե նա մի զարկով ջարդում է հազար՝ Նազարենց գյուղի քահանայի ծաղրը հալած յուրի տեղ է ընդունում և ահա վախկոտ Նազարը հասնում է պատվի և հռչակի:

Յոթ հսկաներ տեսնելով Նազարին իրենց ամրոցի տակ պառկած մեն-մենակ և լսած լինելով նրա հռչակը՝ նրա ահից դողալը համարում են բարկության նշան և ահա Նազարն ունի յոթ հսկա ծառա և նրանց սիրուն քրոջն իբր նշանած:

Հսկաների աշխարհում մի վագր է լույս ընկել: Նազարը սարսափած

ծառն է բարձրացել ու պատահումըով վայր ընկել վագրի մեջքին: Վագրը վազում է խելահեղ, Նազարը հազիվ է իրան պահում վագրի մեջքին, իսկ ժողովուրդը կարծում է թե նա վագրին ձի է շինել ու վրան նստել: Եվ ահա Նազարի անօրինակ քաջության գովքն են երգում ամեն տեղ, նա դառնում է հսկաների քրոջ ամուսինը:

Հարևան թագավորը կռվի է գալիս հսկաների վրա, որ մերժել են իրենց քրոջը տալ նրան: Նազարն իր ամեհի ձին պահել չի կարող. նա ձեռքը ձգում է մի ծառի ճյուղի, փտած ճյուղը մնում է ձեռքին: Չին վազում է դեպի թշնամին և նրանք կարծում են թե Նազարը հարձակվում է ծառերն արմատահան անելով: Եվ ահա Նազարը հաղթական ու թագավոր մի ամբողջ աշխարհի:

Այս է հեքիաթի բովանդակությունը: Բանաստեղծն իր կողմից տալիս է հետևյալ մանրամասերը: Երբ հարսանքատանը իմանում են թե իրենց անակնկալ հյուրը Քաջ Նազարն է, մարդիկ են գտնվում, որոնք ներկայանում են իբր հին ծանոթներ, պատմում են նրա քաջություններից, բացատրում են նրա ծառա չունենալն ու ժանգոտ սուր կապելը, խորհրդավոր մեկնություն են տալիս նրա ամենապարզ շարժումներին և ամենուրեք տարածում են նրա հռչակը:

Այս հեքիաթը մեծ առնչություն ունի Անդերսենի այն հեքիաթի հետ, ուր մի թագավոր հանդիսավոր թափորով անցնում է քաղաքի փողոցներով բոլորովին մերկ, իսկ ժողովուրդն ու պալատականները սքանչանում են նրա անտեսանելի և նուրբ հագուստի վրա, մինչև մի մանուկ իր անմեղության մեջ բացականչում է. «Բայց նա բոլորովին մերկ է»:

Երկու հեքիաթում էլ մի մտավոր կուրություն, որ արդյունք է ինքնաներշնչման՝ իշխում է ամենքին: Ո՛չ թագավորի հպատակներն են տեսնում նրա մերկությունը, ո՛չ Նազարի շրջապատը՝ նրա ոչնչությունը:

Բայց եվրոպական հեքիաթում կա մի մանուկ, որ տեսնում է ճշմարտությունը, իսկ ասիական հեքիաթում միայն ձին է հասկանում թե ի՞նչ անպետքի մեկն է նստած իր վրա:

Ավելի հեռուն չէր կարող գնալ մեր ժողովրդի սարկազմը. անբան անասունն ավելի իմաստուն է, քան բանական մարդը, որ չգիտե լավը վատից ջոկել, կեղծ ու իսկականը տարբերել և ստրկանալով իր իսկ ինքնաներշնչումին՝ դառնում է Նազարների հյու հպատակը:

Եվրոպական հեքիաթում ամեն նոր սերունդ ճանաչում է հնի մերկությունը և այսպես կեղևում է մի պատրանքը մյուսի ետևից. ասիական հեքիաթում իշխում է անմխիթար անշարժությունը մի անգամ տիրապետած պատրանքների դեմ:

Բայց մեր «Քաջ Նազարի» համար սա մի շեղ իդեա է. բուն նյութը

ապրում ու զարգանում է ուրիշ գաղափարով – բախտի իդեայով: Հեքիաթն ասում է, որ աշխարհում քաջությունը, խելքն ու հանճարը ոչինչ են – բախտն է գլխավորը:

Արդ՝ ի՞նչ է բախտը մեր ժողովրդի այս հղացումին նայելով: Բախտն այլ բան չէ, քան հանգամանքների հաջող դասավորությունն և աննպաստի նպաստավոր մեկնություն: Շրջելով այս որոշումը կարելի է ասել, որ անբախտությունը այլ բան չէ, քան հանգամանքների անհաջող դասավորություն և նպաստավորի աննպաստ մեկնություն:

Ճշտենք այս որոշումը հեքիաթի վրա:

Ահա մի շարք հանգամանքների հաջող դասավորություն. Լազարենց գյուղի քահանան մի սրամիտ մարդ է. ծաղրի համար նրա ձեռքն է տալիս մի դրոշակ, վրան գրած՝

Անհաղթ հերոս քաջն Լազար

Որ մին զարկի ջարդի հազար:

Քահանան ակնարկում է Լազարի սպանած ճանճերին, բայց այդ դրոշակը դառնում է Լազարի բախտի բանալին:

Լազարը մտնում է անտառ և այդ ժամանակ մի վախկոտ գյուղացի է անցնում ծիով: Լազարն ընկնում է հարսանիք և գտնվում են սնափառ մարդիկ, որ աչքի ընկնելու համար հնարում են չեղած սխրագործություններ ու կապում Լազարի անվան: Լազարի հռչակը իրանից առաջ հասած է լինում յոթ հսկաներին, որով Լազարի բանը հաջող է գնում: Վագրը գալիս է Ճիշտ Լազարի ելած ծառի տակն է պառկում. լեղապատառ Լազարը ճիշտ վագրի մեջքին է ընկնում և հաջողում է կպած մնալ առանց վայր ընկնելու: Կռվի ժամանակ ծառի ճյուղը փտած է դուրս գալիս...

Ահա և աննպաստի նպաստավոր մեկնությունները: Լազարը ոչ ծառա ունի, ոչ կարգին զենք՝ այդ նրանից է, որ ամբողջ աշխարհը նրա ծառան է և կարգին զենքով ամեն հասարակ մարդ էլ կարող է քաջություն անել: Լազարն իր ահից գոռում է. – ճամփորդ գյուղացին կարծում է ավազակներ են գալիս՝ թողնում է ձին ու փախչում: Հսկաների առաջ նա դողում է սարսափից. – նրանք կարծում են բարկացել է և ուր որ է յոթին մի զարկով կվերջացնի: Վագրի մասին լսելիս դուրս է պրծնում, որ ետ փախչի իրենց տուն. – կարծում են անմիջապես ուզում է գնա սպանի, այն էլ առանց զենքի: Նույն մեկնությունը տալիս են նրա փախչելու փորձին, երբ լսում է թե հարևան թագավորը գալիս է իր դեմ կռվի...

Եվ այսպես՝ մեր Լազարը առանց որևէ մասնակցության իր կողմից՝ իրերի բնական ընթացքով, հանգամանքների հաջող դասավորության և աննպաստի նպաստավոր մեկնության շնորհիվ դառնում է թագավոր և աշխարհը իր բուռն հավաքում: Ահա թե ինչպես է գործում բախտը և

չնչինը դարձնում մեծ ու ոչինչը՝ ինչ:

Կա՞ արդյոք մի հիմք բուն իսկ մարդու մեջ, որ նպաստավոր հող է դառնում այս համաշխարհային և ապշեցնող երևույթի: Այո՛, կա. ասում է ժողովրդի դարավոր իմաստությունը: Կա՛. կցում է բանաստեղծը իր հավելումով:

Ժողովուրդը մատնանշում է մարդու հավիտենական հակումը դեպի պատրանքը և ինքնաներշնչումը կամ նախապաշարումը: Այստեղ ժողովուրդների դարավոր իմաստությունը ձեռք է մեկնում հզորագույն իմաստասերի իմաստությամբ. ես խոսում եմ Կանտի մասին: Մեկը մերկացնում է պատրանքի հակումը գործնական աշխարհում, իսկ մյուսը՝ իմացական աշխարհում:

Բանաստեղծն իր հերթին մատնանշում է երկու ուրիշ հավերժական գծեր մարդկային բնույթի. դրանք են սնափառությունը և ուժին փարելու անբուժելի հակումը:

Կան իսկական հսկաներ – հավատում է ժողովուրդը. բայց կան նաև կեղծ ու պատիր հսկաներ. այդպես են յոթ հսկաներն ու Նազարը: Բայց նախապաշարումն ու ինքնաներշնչումը այնպես է կուրացնում ամենքի մտքի աչքերը, որ մինչև անգամ իսկական հսկաները կեղծին գերադասում են իրենցից ու դրանով Վախկոտ Նազարին դարձնում են Քաջ Նազար և դառնում նրա ծառան, հլու գործիքը:

Դրան նպաստում է սնափառությունը, ասում է բանաստեղծը. ցանկանալով գերադաս լինել իրարից՝ մարդիկ չեղածը եղած են հռչակում, որ վայելեն ուժի հովանին և դրանով ստեղծում են ուժեղի պատրանքը ու ստրկանում իրենց իսկ ստեղծած հեղինակության:

Այսպես՝ ինքնաներշնչումն ու նախապաշարումն իբրև պայման և սնափառությունն ու ուժին փարելու հակումն իբրև մղիչ՝ ստեղծում են Քաջ Նազարներ ու բազմեցնում գահերին: Անասունն ավելի բանական է քան մարդը, դառնությամբ նկատում է ժողովրդի իմաստությունը. նրա բնագղն ավելի անսխալական է արժեքները գնահատելու գործում, քան մարդու համբավված բանականությունը, որ մի բնական հակում ունի միշտ պատրանքներ ստեղծելու:

Նոր սերունդները նկատում են թագավորների մերկությունը, մխիթարում է մեզ բարի Անդերսենը: Նկատում են, այո՛. բայց և ստեղծում են նոր մերկություններ, որ նկատում են ուրիշ մանուկ սերունդներ, ստեղծելով իրենց հերթին նոր փառապանծ մերկություն:

Մի՞թե հնար չկա բուժելու թշվառ մարդկությունը այս ահավոր արատից: Կա՛, հուսադրում է Քյոնիգսբերգի իմաստունը. բանականության քննությունն է այդ. նա միայն կարող է մեզ հեռու պահել ամեն տեսակ նախապաշարումներից. պետք է քննել այն մեքենան, որ արտադրում է ամեն տեսակ պատրանքներ, պետք է զգուշությամբ

վարել այդ մեքենան և մարդիկ եթե չբուժվեն լիովին, առնվազն շատ քիչ կվնասվին, որովհետև պատրանքի հակումը նա ևս բնածին է համարում և կցորդ մեր գոյության:

Այսպիսով այս օրհասական ու համամարդկային այստի բուժումը ոչ թե բնազդի մեջ է, ինչպես հրահանգում է մեր ժողովրդի իմաստությունը և սկսել են տարփողել մեր դարի քայքայվող դասերի իմաստունները, այլ բանականության խելացի գործադրության մեջ, որ միակ ընդունակն է լուսավորելու մեր միգապատ ուղին տիեզերական անսահմանության այն փոշու վրա, որ կոչվում է երկիր: Բայց եթե մեզ տան մի երկընտրանք. բնա՞զդ թե պատրանք. մենք կուսակից ենք բնազդին և դրանով մենք մեզ զգում ենք համամարդկային և ազգային իմաստության ուլորտում: Իսկ այս խնդրի իդեալական լուծումը մեր կարծիքով հետևյալն է. բնազդը՝ պայծառացած քննական մտքի աշխատանքով: Պատրանքի վիճակն անցողական է. և ամեն խելացի մարդ, որ տենչում է հասնել ինքնագիտակցության բարձունքին, պետք է արագ անցնե այդ միգապատ մթնոլորտից՝ ողջունելու հոգեկան ազատության պայծառ արևը...

«Քաջ Նազարը» մեզ տալիս է մարդկային փոխհարաբերությանց վերլուծությունը, որքան այդ փոխհարաբերությունները կարող ենք նկատել իբր հոգեբանական-բարոյական երևույթ: Եվ մարդ փորձվում է հարցնելու. իսկ ի՞նչ վերաբերում ցույց կտար ժողովուրդը եթե պատմեր յոթ հսկաների արկածները: Նրա հզոր անդամատիչ դանակի տակ այդ հսկաներն ևս չէի՞ն դուրս գալ մի-մի Քաջ Նազար:

Ժողովուրդներն ընդունել և մինչև այսօր էլ ընդունում են հսկաների գոյությունը և Հովի. Թունանյանը այս հեքիաթը տալով ժողովրդի հղացումի համեմատ, ոչ միայն հավատարիմ է մնացել մեր ժողովրդի իմաստության, այլև հագուրդ է տվել իր իսկ բնույթի պահանջներին, որովհետև նա ինքը ընդունում է բարոյական ու մտավոր հսկաների գոյությունը աշխարհում:

Բայց մի հոռետես բանաստեղծի համար Քաջ Նազարը շատ հարուստ նյութ է, եթե նրան մշակե Գոգոլի «Մեռած հոգիների», Դանտեի «Աստվածային կատակերգության» կամ Սերվանտեսի «Դոն-Քիշոտի» նման, այսինքն ճանփորդել տալով Քաջ Նազարին ու հանդիպեցնելով ուրիշ Նազարների, որոնցից ամեն մեկը Քաջ է իր շրջանում՝ մինչև ետին ռամիկը, որ Քաջ Նազար է առնվազն իր կնոջ ու երեխաների աչքում: Դա կլիներ պատրանքի հսկայական ջախջախում...

Իսկական արվեստի ամեն մի արգասիք մի պատուհան է՝ բացված տիեզերքի և մարդկության վրա: Նայեցեք այժմ ժողովրդական այս

հանճարեղ ու համարձակ հղացումի միջից ձեր շուրջն ու ձեզ վրա և տեսեք թե որքան երևույթներ ու դիտողություններ գալիս խտանում են այս հանճարեղ ձևի մեջ և որպիսի պայծառ լույս է ընկնում այնտեղից մարդկային պատմության և առօրյա կյանքի վրա...

Այո՛, մինչև այսօր էլ թագավորում է Քաջ Նազարը և իրավունք ունի ծիծաղելու այս հիմար աշխարհի վրա: Նա ապրում է ամեն տեղ և հսկաներն ու ժողովուրդները ծառայում են նրան, քծնում են առաջը և տարածում են նրա հռչակը, գորացնելով նրա հմայքը:

Քաջ Նազար են ոչ միայն մարդիկ, այլև գաղափարներ, տեսություններ, հիմնարկություններ, որոնք սնամեջ են, ոչինչ, անարժեք և սակայն աշխարհն առել են իրենց բռի մեջ և ծիծաղում են նրա վրա: Ու քանի կա մարդկային սնափառությունն ու վեհերոտությունը և ինքնաներշնչումի ու նախապաշարման անիծյալ հակումը՝ դեռ մարդկությունը շատ կտեսնի Վախկոտ Նազարների Քաջ Նազար դարձած:

Մենք չենք կարող սպառել այն բոլոր երևույթները, որոնց խտացումն ու մեկնությունն է մեր ժողովրդի այս հանճարեղ հղացումը: Մշակված մի մեծ տաղանդի ձեռքով՝ նա կա և կմնա մեր գրականության լավագույն արտադրություններից մեկը, որ ունի բոլոր մեծ ստեղծագործությանց անկասկածելի կնիքը – լինել մատչելի և թելադրական մանուկին ու մեծին և ազգի բոլոր խավերին:

Հովի. Թումանյանը գնում է մի ճամփով, ուր վաստակել, և մանավանդ թե՛ վաստակելու է անանց փառք մեր գրականության մեջ: Այդ ճանապարհն է. տոգորվել մեր ժողովրդի զգացումով ու մտածումով, ըմբռնել նրա հանճարը և գուշակել նրա իդեալը գեղեցկի աշխարհում, և իր անհատական մտքերն ու զգացումները ապրել նրա ստեղծած հավերժապես գեղեցիկ, հզոր ու հոյակապ կառուցումների մեջ:

Սրանով բարձրանում է ինքը և բարձրացնում մեր ժողովրդին, որովհետև արվեստի ամեն մի գործ մեկնությամբ ու վերապրումով է մեծանում:

Ավելորդ են համարում խոսել Հովի. Թումանյանի լեզվի մասին, թեկուզ և ունենայի ինչ-ինչ մանր դիտողություններ: Նա ինքը հայ լեզվի ստեղծողներից մեկն է. նա բանաստեղծ է «ոտից մինչև գլուխ»՝ ինչպես Լիրը՝ թագավոր, այսինքն նա ստեղծում՝ է մեր ազգային բանը, որ խոսք և իմաստ է նշանակում միանգամայն: Իսկ ուր խոսում է բանաստեղծը՝ քերականը լռում է:

ՀՈՐԻԶՈՆ, 1912, N 232-233

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՆԱՂԱՇ
ՀՈՎՆԱԹԱՆ ԵՎ ՆՐԱ, ԲՈՒՉԱԿ ՆԱՅԱՊԵՏԻ
ՈՒ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՍԵՐԸ»

Ա.Չոպանյանը 1910թ. Փարիզում հրատարակեց Նաղաշ Հովնաթանի տաղերը: Հետևյալ տարին Հովի. Թումանյանը այդ գրքի առիթով գրեց մի գրադատական, որ այժմ լույս է ընծայում առանձին տետրակով¹: Հիմա, որ Վ.Բրյուսովի դասախոսության հետևանքով մի լայն հետաքրքրություն արթնացավ մեզանում դեպի մեր միջնադարյան երգիչները, շատ ժամանակին է լույս տեսնում այս հոդվածաշարը:

Այստեղ՝ ցուցադրելով իբր ֆոն արևելքի մտայնության մի քանի բնորոշ կողմերը, որոնց ամմասն չենք նաև հայերս, այդ ֆոնի վրա իր «խոսքերով պատմելու փոխարեն»՝ հեղինակը «իրենց խոսքերով, իրենց ոճով, իրենց հանգով ու երանգով իրար կողքի է դնում մեր հին բանաստեղծներից երեքի սերը»: Իրար բերելով հմտությամբ ընտրած տողեր ու տներ նրանց երկերից՝ Հովի. Թումանյանը մեզ նկարում է նրանց սիրուհիներին և վերապրել տալիս մեծ երգիչների զգացումը: Գրքույկի մեջ շողում է բանաստեղծի տաղանդը՝ գրավիչ նյութին տալով հաճելի կերպարանք և որոշակի առաջադրելով երեք երգիչների տարբեր վիճակն ու վերաբերումը սիրած կանանց նկատմամբ:

Ամեն հայ, որ հավակնություն ունի մտավորական հաշվելու իրեն պարտավոր է առնվազն այնքան բան գիտենալ մեր երեք նշանավոր երգիչների մասին, որքան տալիս է Հովի. Թումանյանն իր փոքրիկ տետրակով: Վստահ ենք, որ այս գրքույկը լայնորեն կտարածվի մեր ընթերցող շրջանակներում:

Վ.Բրյուսովի դասախոսության առիթով ամեն տեղից վեր կացող գրեց ու հրատարակեց, թե մենք չենք ճանաչում մեր բանաստեղծությունը, չենք գնահատում նրա արժեքը: Բայց ո՞վ ենք «մենք»: Հխոսելով Հ.Ղ.Ալիշանի և Ա.Չոպանյանի մասին՝ ահա մեր մեծանուն բանաստեղծը, որ սրանից հինգ տարի առաջ գրում էր. «Ամեն մի ժողովուրդ պետք է սիրի ու պարծենա Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի նման բանաստեղծներով» (հիշյալ գրքույկը, էջ 26): Բայց... «Ասողին լսող պիտի» և «Հետո՝ «Տանու տերտերին «Օրինյա տեր» չկա...»: Մեր մտքի անզորությունը, որ ազգային տրորված արժանապատվության հետևանք է, պետք է տևի այսպես, մինչև մեզանում ևս առաջ գա

Տպագրվում է Նիկոլ Աղբալյանի «Ամբողջական երկերի» 2-րդ հատորից (էջ 209-211):

¹Թումանյանի գրքույկը լույս է տեսել Թիֆլիսում, 1916թ.:

հասարակություն, որի խելքն իր գլխունը լինի և ընդունակ անկախ
մտածության ու դատաստանի...

Օգտվում ենք առիթից երկու դիտողություն անելու: Նախ՝ Սայաթ-
Նովան երկու երգ ունի (ԺԱ և ԺԹ), որ գրված են սիրուհու բերանից:
Շատերը, որոնց հետ նաև Գ.Հախվերդյանն ու Յովի. Թումանյանն այդ
հանգամանքը նկատի չառնելով, Սայաթ-Նովայի բերանն են դնում այն
խոսքերը, որ սիրուհու ասածը պիտի նկատվի: Այդպես է Գ.Հախվերդյանի
մեջ բերած նշանավոր տողը.

Թեկուզ աննահություն ուզիս՝ սիրով կու ճարիմ քեզ ամա

Եվ Յովի. Թումանյանի բերածը.

Թաք ես մորես չէի ծնի. վայ՛ էն օրին՝ ես քեզ տեսա

Երկրորդ՝ Քուչակ Նահապետը մի քառյակ ունի (ԺԴ. էջ 45):

Սուրաթ ու ճրագ դրիք. զիս ի քո յուսըդ ձենեցիր.

Ձևդ ի քո ծովուդ եկի, յոք զարկիր ճրագն անցուցիր.

Ա՛յր էր քո ամեն ումէտն, ա՛յ հոգեկ, որ ինձ կու տայիր.

Ճրագդ, ան՛, ալ ի՛նչ վառած՝ երբ բազկիս ուժն հարուցիր:

Այս քառյակն ակնարկ է անում Աղթամարի ավանդությանը, որ
այնքան տաղանդով վերստեղծել է Յովի. Թումանյանը: Երգիչն իր
ապրումը հասկանալի դարձնելու համար՝ գոհանում է հարմարեցնելով
ավանդությունն իր վիճակին, որ նշանակում է թե Աղթամարի գրույցը
դեռ ժՁ դարում հանրածանոթ էր շինականին, ինչպես այսօր Ոստանի
քրդերին: Մեր դիտողությունը կարող է պետք գալ մեր լեզենդները
հետազոտողին, ինչպես նաև Քուչակ Նահապետի հայրենիքը
որոշողներին – Վա՞ն թե Ակն:

1916

Յ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՂԱՎՆՈՒ ՎԱՆՔԸ»

Պիտի գա ժամանակ, երբ հմուտներն աշխատեն գտնել
Յ.Թումանյանի ստեղծագործության աղբյուրները: Այդ հմուտներին

Հողվածը տպագրվում է հետևյալ գրքից՝ Նիկոլ Աղբալյան, Ամբողջական երկեր,
հատոր 1-ին: Գրական-քննադատական երկեր, Բեյրութ, 1959, էջ 192-204:

օժանդակելու համար են գրած հետագա մի քանի էջերը:

Յ.Թումանյանը սիրում էր ազգային ավանդությունները վերստեղծել: Այսպիսի մի ավանդություն է «Աղավնու վանքը»: Ո՞ւր լսած է այս ավանդությունը. և հետո՞ լսած է թե կարդացած: Լռովա շրջանում, ուր ծնած է Յ. Թումանյանը և ուր անցած է նրա մանկությունը, որքան գիտեմ ժողովուրդն այդ տեսակ ավանդություն չունի: Ժողովրդական նյութերի հավաքածուների մեջ ես չեմ հանդիպած այդ ավանդության: Կարծում եմ «Աղավնու վանքի» աղբյուրը գրավոր է: Յ.Թումանյանն իր գրադարանի մեջ ուներ Յ.Մ.Չամչյանի Չայոց Պատմությունը, որ երբեմն սիրում էր թղթատել: Արդ՝ այս պատմության երրորդ հատորի մեջ կարդում ենք (էջ 800-801):

«Գտաք ուրեք յանժանօթ գիրս ինչ հայոց գնորալուր պատմութիւն գրեալ աւանդութեամբ ռամկաց վասն գործոց Լանկթամուրայ, ուր առաջի դնի նախ հրաշք ինչ ի վերայ սրբոյ խաչին եւ ապա այլ իմն ինքնաստեղծ պատմութիւն, զոր եւ պատշաճ դատեցաք դնել աստ զի լիցի օրինակ թէ սմին նման աւանդութիւնք կան եւ առ այլս վասն գործոց, որ եղեն առ ժամանակօք Լանկթամուրայ: Արդ՝ ասի անդ, թէ եկեալ Լանկթամուրայ յերկիրն Սիւնեաց, բանակեցաւ առ զետովն եւ գերեաց զբազումս ի բնակչաց այնր աշխարհի, ընդ որս գերեալ եղեւ եւ եպիսկոպոս ոմն Յովհաննէս անուն: Սա կամելով փախչել ի ձեռաց գերչաց՝ կապեաց յուս իւր զխաչ մի հրաշագործ եւ էարկ զինքն ի գետ եւ զօրութեամբ սուրբ նշանին ընթանայր ի վերայ ջրոյ, իբրեւ ի ցամաքի: Ջայն տեսեալ զօրացն Լանկթամուրայ՝ ապշեցան եւ սասանեցան եւ աղաղակ բարձեալ ծայնէին առ նա երդմամբ զի դարձցի յետս եւ մեք ասեն ինչ ոչ վնասեմք քեզ: Եւ ի դառնալ եպիսկոպոսին առ նոսա՝ տարան զնա առաջի Լանկթամուրայ, որ եւ եհարց ցեպիսկոպոսն թէ ո՞վ ես դու եւ զիա՞րդ գործեցեր զայդ սքանչելիս: Եւ եպիսկոպոսն ասէ. ոչ իմ են այդ գործք սքանչելեաց, այլ սրբոյ նշանիս: Յայնժամ հիացեալ Լանկթամուրայ եւ հաճեալ ընդ եպիսկոպոսն ասէ ցնա. Խնդրեա յինէն զոր ինչ եւ կամիս եւ եղիցի քեզ: Եւ եպիսկոպոսն ցուցեալ զմատուռն, որ կայր ի հանդիպոյ՝ ասէ՛. Շնորհեսցես ինձ այնչափ գերիս, որչափ մարդիկ տանի մատուռն այն. եւ Լանկթամուր հրամայեաց առնել ըստ բանի նրա: Եւ յորժամ սկսան գերեալքն գնալ հետզհետէ ի մատուռն, առաջիկքն որ ի ներքո մտանէին՝ անդէն թեւս առեալ Աղաւնոյ՝ թռանէին ընդ պատուհանն. նոյնպէս եւ որք մտանէին զկնի նոցա ըստ նմին օրինակի հանգոյն աղաւնոյ թռուցեալ ի բաց գնային եւ այնպէս ոչ երբեք լնոյր մատուռն այն, մինչեւ սպառեցան ամենայն գերիք, որ էին բազում յոյժ: Իսկ

գործը Լանկթամուրայ շուարեալ ընդ այն ասէին. զի ա՞րդ զայսչափ բազմութիւն մարդկան տարաւ փոքրիկ մատուռն այն եւ ընթացեալ ի ներքո ի մատուռն, ոչ զոր գտին ի նմա եւ մինչդեռ այսր անոր որոնէին՝ տեսին զգերեալսն յանկոյս գետոյն ի տափարակ տեղոջ եւ եկեալ պատմեցին Լանկթամուրայ: Եւ նորա զահի հուրեալ ետ զօրացն չուել ի տեղոջէ անտի, զի մի այլ եւս սքանչելեօք վտանգ ինչ հասցէ իւրեանց: - Յաւելու ապա գորդն թէ վասն այսօր գործոց անուանեցաւ խաչն այն սուրբ նշան մարդ աղանեսաց: Դ. Չամչեանն իր կողմից նկատում է: Այլ այս առասպելք չունին պէտս քննութեան եւ թէ կայցէ խաչ այդպիսի անուամբ՝ մի ոմն ի գրողաց յօրինեալ է զայսպիսի անհեթեթ պատճառ՝ վասն յարմարելոյ զնշանակութիւն անուանակոչութեան նորին: Այլ այն է զարմանալի, զի Ջահկեցին յերես 672 և 673 իբրև ստույգ ինչ ի մէջ բերէ զայս. բայց թուի թէ ոչ ինքն եւ ոչ միւս պատմողն հաւատան այնմ զոր գրենք»:

Մի տեղ հայոց ինչ որ անծանոթ գրքի մեջ գտանք նորալուր պատմութիւնն գրված ռամիկների ավանդությամբ Լանկթամուրի գործերի մասին, ուր նախ պատմվում է ինչ որ հրաշք սուրբ խաչի մասին և հետո մի ինչ որ ուրիշ ինքնաստեղծ պատմութիւն, որ և պատշաճ դատեցինք դնել այստեղ, որ օրինակ լինի թե սրա նման ավանդութիւններ կան և ուրիշների մոտ՝ Լանկթամուրի ժամանակներն եղած գործերի մասին: Արդ՝ այնտեղ ասվում է, թէ «Լանկթամուր գալով Սյունյաց երկիրը, բանակեցավ գետի մոտ և շատերին գերեց այն աշխարհի բնակիչներից, որոնց հետ գերվեցավ և Դովհաննես անունով մի եպիսկոպոս: Սա կամեւով փախչել գերիների ձեռքից՝ իր ուսին կապեց մի հրաշագործ խաչ և ինքն իրան գետը ձգեց և սուրբ նշանի զորությամբ գնում էր ջրի վրա ինչպես ցամաքի: Այն տեսնելով Լանկթամուրի զորքերը ապշեցին և սասանեցին և աղաղակ բարձրացնելով ձայն էին տալիս նրան երդումով, որ ետ դառնա և մենք, ասում են, քեզ ոչ մեկ վնաս պիտի տանք: Եվ եպիսկոպոսը երբ դարձավ նրանց մոտ՝ տարան նրան Լանկթամուրի առաջ, որ և հարցրեց եպիսկոպոսին թե ո՞վ ես դու և ի՞նչպես գործեցիր այդ սքանչելիքը: Իսկ եպիսկոպոսն ասում է. այդ սքանչելի գործքն իմ (արածը) չէ, այլ սուրբ նշանի: Այն ժամանակ Լանկթամուրը զարմանալով և հավնելով եպիսկոպոսին, ասում է նրան. Խնդրիր ինձնից ինչ որ կամենաս և պիտի լինի քեզ: Եվ եպիսկոպոսը ցույց տալով այն մատուռը, որ կար (նրանց) հանդէպ՝ ասում է. շնորհիր ինձ այնչափ գերի, որչափ մարդ տանում է այն մատուռը և Լանկթամուր հրամայեց անել նրա խոսքի համեմատ: Եվ երբ սկսան գերածները գնալ իրար ետևից մատուռը, առաջինները, որ ներս էին մտնում, իսկույն աղավճու թևեր առած՝ թռչում էին պատուհանից. նույնպես

նաև նրանք, որ մտնում էին նրանց ետևից նույն ձևով աղավճու նման թռչելով գնում էին հեռու և այսպես այն մատուռը երբեք չէր լցվում, մինչև սպառվեցան բոլոր գերիները, որ խիստ շատ էին: Իսկ Լանկթամուրի զորքերը շվարած այս դեպքի դիմաց՝ ասում էին, այն փոքրիկ մատուռը ի՞նչպես տարավ այնչափ մարդկանց բազմություն և զնալով ու մատուռ մտնելով՝ ոչ ոք գտան այնտեղ և մինչդեռ այս ու այն կողմ էին որոնում՝ տեսան գերիներին գետի մյուս ափին տափարակ տեղ և գալով պատմեցին Լանկթամուրին: Եվ նա զարհուրած՝ հրաման տվեց զորքերին չվել այնտեղից, որ մի ուրիշ սքանչելիքով վտանգ չհասնի իրենց: Ապա գրողն ավելացնում է թե այս գործի համար այն խաչն անվանվեցավ Մարդաղավնյաց Սուրբ Նշան:

Այլ այս առասպելները քննության կարիք չունին և եթե լինի այդպիսի անունով մի խաչ՝ գրողներից մեկը հորինած է այսպիսի անհեթեթ պատճառ՝ հարմարքներու համար այդ խաչի անվանակոչության նշանակությունը: Այլ այն է զարմանալի, որ Ջահկեցին 672 և 673 էջերի վրա իբր մի ստույգ բան է մեջ բերում այս, բայց թվում է թե ոչ ինքը և ոչ մյուս պատմողը հավատում են այն բանին, որ գրում են»:

Ջահկեցու գիրքը չեն տեսած և ոչ այն «անծանոթ գիրքը» գիտեն, ուր այս պատմությունը գտած է Յ.Մ.Չամչյան, ուստի չեն կարող ասել, թե որքան հավատարմությամբ է փոխանցում այս ավանդությունը Յ.Մ.Չամչյանը: Բացերը, որ նկատվում են այս գրավոր ավանդության մեջ՝ չգիտեն բնագրի՞ն վերագրեն թե Յ.Մ.Չամչյանին, որ համառոտում է պատումը: Այս խնդիրները թողնում են անլուծ: Կարծում են վերի ավանդությունն է Աղավճու վանքի աղբյուրը:

Մենք կարող ենք մերծուստ հետևել Յ.Թումանյանի ստեղծագործական աշխատանքին:

Մեծ աղետները խախտում են ժողովրդի հավատքը: Մեր Ֆրիկի հոյակապ ըմբոստացումը երկնքի դեմ արդյունք է թաթարական անողոք արշավների: Նույն արդյունքն ունեցավ և լայնատարած տարագրությունը այս դարի սկզբին: Մարդաղավնյաց խաչի ավանդությունը մի հակազդեցություն է, որ հորինված է կղերական միջավայրի մեջ՝ անվտանգ պահելու համար ժողովրդի հավատքը հանդեպ հոգևոր դասի և ազգային սրբությանց: Թեև եպիսկոպոսը խաչի զորության է վերագրում ջրի վրա քայլելու հրաշքը, և գրույցն այդ իմաստով է հորինված, բայց ինքնին պարզ է թե ամբարիշտ և մեղսական մի մարդ չէր կարող այն հավատքն ունենալ, որ խաչն իր ուսին կապեր և համարձակ մտներ գետը և ոչ խաչը պիտի հրաշագործեր այդպիսի մեկի ուսին: Առածն ասում է. «խաչը տե՛րը զորավոր կանի», այսինքն՝ խաչի զորությունը կախված է տիրոջ զորությունից՝ թույլ մեկի ձեռքին խաչն իսկ անգոր է: Այս ավանդության

մեջ եպիսկոպոսի հավատքն է, որ պսակված է խաչի զորությամբ: Կոտորակված և տեղահան ժողովրդի համար, որ հաճախ ապաստանում էր լեռ ու ձոր և հազարներով բռնում գերության ճամփան՝ մխիթարական էր մտածել թե ինքն ունի սուրբ խաչը, որ հզոր է քան ամեն Լանկթամուր և կարող է սոսկում ու սարսափ ազդել ամեն Լանկթամուրի: Բայց եթե նա չի ազատում իր ժողովուրդը անօրենի ձեռքից, դրա պատճառը մեր մեղաց բազմությունն է: Աստված մեզ պատուհասում է Թիմուրների ձեռքով... Այս մտածումով թեթևանում էր տառապանքը. պատժված էր հայը, բայց չէր լքված «զոր սիրե տեր, խրատե՛»: Սիրածին պատժում էր Տէրը: Պատիժն իսկ նշան էր սիրո:

Գրավոր ավանդության նայելով՝ եպիսկոպոսը կամեցած է փախչել գերիչների ձեռքից և ուրեմն իր հոտը թողնել անհովիվ: Նույնաման հանգամանքների մեջ, չորրորդ դարում, երբ Շապուհը տարագրում էր հայ քաղաքների ազգաբնակչությունը, Չվիթ անունով երիտասարդ քահանայն, որ ազատ էր, կամովին խառնվում էր գերիներին իր հոտից անբաժան մնալու համար: Մարդաղավնյաց խաչի ավանդության հնարողը ԺԳ-ԺԴ դարի մարդ է. իսկ Փավստոսը, որ պատմում է Չվիթի մասին՝ չորրորդ դարի մարդ: Այս դարը մեր քրիստոնեության խանդավառ շրջանն էր. իսկ ԺԳ-ԺԴ դարերում եկեղեցին դարձած էր ծիսական հաստատություն, ուստի Չվիթ ապավինած իր հավատքին՝ մտնում է գերիների շարքը, որ նրանց անմխիթար չթողնի, իսկ եպիսկոպոսը խաչին ապավինում է գերիներից հեռանալու համար: Չի կարելի ասել, թե հոգևոր դասը լիովին անջատում էր իր ճակատագիրը ժողովրդից: Նույն եպիսկոպոսն է, որ մի մատուռաչափ ժողովուրդ է խնդրում բռնավորից և ոչ թե գանձ ու գահ: Ավանդությունը հորինողի գիտակցության մեջ եպիսկոպոսի փախուստը արատ չի բերում նրա վարկին և ոչ խաչն է դատապարտում, քանի որ մնում է նրա ուսին և տալիս է զորություն ջրի վրա գնալու: Հորինողի գիտակցության մեջ խաչն ազատելը գերությունից՝ ինքնին սուրբ գործ է. խաչն ինքը նույն կարծիքին է, քանի որ օգնում է փախստականին անցնելու գետն անվտանգ: Հոգևոր դասը խաչապաշտ է դարձած: Եպիսկոպոսը ոչ մեկ հնար ուներ իր ժողովուրդն ազատելու բռնավորի ձեռքից, ուստի գերադասեց գոնե իր անձն ու հրաշագործ խաչն ազատել. բայց երբ ներկայացավ առիթ ժողովրդին ազատելու՝ նա անվարան օգտագործեց առիթը: Ավանդությունը թերատ է այնուհետև, ո՞վ է ազատում գերիներին՝ դարձնելով աղավնի: Դատելով «մարդ-աղավնյաց» անունից, պետք է կարծել, որ խաչն է ազատարարը, բայց ի՞նչպես – որոշ չէ պատումն այս կետում: Գիտե՞ր եպիսկոպոսը, որ երբ գերին մատուռի մեջ մտնի՝ պիտի դառնա աղավնի և որ այսպիսով բոլոր գերիները պիտի ազատվեն: Անորոշ է նաև այս կետը: Գուցե

«անժանոթ» գրքի մեջ ավանդությունը շատ ավելի լրիվ էր, քան երբ անցավ Յ.Մ.Չամչյանի գրչի տակ...

Թաթարական զարհուրելի արշավների պակուցանող սուսկումների տակ հղացված է այս ավանդությունը, որ ուրիշ հնար չի տեսնում թաթարի ձեռքից փրկվելու քան հրաշքով դառնալ աղավնի և թռչելով հեռուներ, այս ու այն մթին անտառի կամ վիճական խոռոչի մեջ բուն դնել ու ծագ հանել ապա թե ոչ, մարդկային կերպարանքով որևէ արարած կարող չէր ազատվել թաթարի ձեռքից: Այդ ժամանակի մի գրիչ 1325 թվին ասում է. «Ահ ու փախը մեզ հետ էր. ամեն պահ մեռնում էինք, ահ ու դողը պատում էր ինձ և ձեռքս դողում էր թղթի վրա»: Մի հիսուն տարի հետո մի ուրիշը գրում է. «Ո՛հ, ո՛հ, այս դառն ժամանակին, որ ամեն կողմ ավերք եղավ և մահ տարածան»: 1303 թվին մեկը գրում է թե «տառապում է թաթարի գնալ գալուց և որ վայրերի ավերածության հետևանքով դարձած է թափառական»: Նույն վիճակն է հարյուր տարի հետո. 1420 թվին մի գրիչ գանգատում է թուրքման ազգից, «որ այս աշխարհը սովով և գերությամբ մաղեց. ոչ մի տեղից մխիթարություն չունեինք, բայց միայն Քրիստոս և նրա անսուտ խոստմունքը»: Ահա այս զարհուրելի միջավայրում է ստեղծված մեր ավանդությունը. փախուստի, գաղթի և գերության ճամփաներում կորաքամակ հայությունը մի վայրկյան շունչ էր քաշում և մեջքը շտկում, երբ լսում էր երկյուղածությամբ թե հայու հաչը մի տեղ, հեռավոր Սյունիքում փրկած է մի եպիսկոպոս և բովանդակ գերի բազմությունը, որ դարձած է աղավնի... լսում և այնքան ավելի հավատում էր խորապես, որքան լավ գիտեր թե ուրիշ հնար չունեն հայերը թաթարի ձեռքից ճողոպրելու:

Արժվի այն սուր աչքը, որ ուներ Յ.Թումանյան, գնահատած է հին գրքի մեջ կորած այս գանձը և ներշնչումով վերստեղծած է ավանդությունը: Գրքի տվածը նա համախմբած է տարբեր ձևով. մի քանի գիծ հապաված է, մի երկու կետ պարզած, թերի թողածին տված է լրիվ կերպարանք և վերափոխած է ոգին, առանց հիմնական գաղափարին ձեռք տալու: Այդ գաղափարը հակադրությունն է ոգեպաշտ հայի և աշխարհավեր թաթարի. ոգու զորությունն ընդդեմ զինու զորության, որից մարդկորեն ազատում չկա: Իր վերանշակմանը բանաստեղծը տված է վիպական քերթվածի ձև և ռամկական կերպարանք: Քերթվածի մուտքը գործն է արհավիրքի.

Լենկթեմուրն եկավ, հուրն ու սուրն եկավ,

Լնօրենն եկավ, եկավ՛ ու եկավ՛.

Նավաքեց կիսրեց մեր ազգը հայոց,

Փայթաթեց, պայրեց, ինչպես վիշապ օձ,

Կանգնեց Սևանա ափին հովասուն,

Էնպրեղ, ուր ուշքը ու միտքն Լսարծուն,

*Անհունն է խորհում, մենեն՝ իր գորքին
Օհաննա վանքը ծովի եզերքին:*

Ավանդությունն ասում է թե դեպքը պատահած է Սյունյաց աշխարհում. բանաստեղծն այդ կետը թողնում է անփոփոխ. բայց մինչդեռ ավանդությունը խոսում է ինչ որ գետի մասին, բանաստեղծը դեպքը բերում է բուն իսկ այն վանքի մոտ, որի հետ կապված է ավանդությունը և որ գտնվում է Սևանա լճի ափին: Առաջին հակադրություն. մինչդեռ հայոց վանքը խաղաղ լճի ափին և լեռների բարձունքին անհունն է խորհում երկյուղած՝ արյուն ու ավեր սփռելով եկած է թաթարը տափաստաններից և հասած է վանքի մոտերքը, տեղահան արած արդարագույն շինականին և գերած մայր ու մանուկ: Վանքը անհունն էր խորհում, իսկ վանակա՞նը. —

*Էն վանքում, հայոց ազգին պահապան,
Աղոթք էր անում ձերուկ հայր Օհան,
Աղոթք էր անում իր հոգու համար,
Իր ազգի համար. աշխարհի համար:*

Նոր հակադրություն. թաթար ազգի պահապանն էր Լենկթեմուր, ապավինած իր զենքին ու գորքին. հայոց ազգի պահապանն է մի ծերունի վանական, որի զենքն է աղոթք առ Աստված: Բանաստեղծը պահած է հոգևորի ամուրը, բայց մինչդեռ ավանդության մեջ նա մի եպիսկոպոս է, վերամշակման մեջ նա դարձած է մի ծեր վանական: Մեկը եկեղեցու իշխանությունն է, վարչական հոգսերով և աշխարհատես, մյուսը մեկուսացած ոգին է հավատացյալ հայության, որ ստացած է աղոթավորի կերպարանք: Իր աղոթքի մեջ նա հիշում է իր ազգն ու բովանդակ աշխարհը և նրանց փրկության համար է մտահոգ: Մի երրորդ հակադրություն. մինչդեռ Լենկթեմուր ուր հասնում է՝ սփռում է մահ ու ավեր և հավաքում է ավար ու գերի, հայր Օհան աղոթում է նաև այդ չարագործ բազմության համար, որ աշխարհի մի մասն է կազմում: Մինչդեռ մեկը մտածում է թե որին սպանեն և որին գերեն, մյուսն այն է հոգում, որ ամենքին փրկե աղոթքով: Փոխված են ոչ միայն անձերը, այլև կացությունները. մինչդեռ եպիսկոպոսը գերիների մեջ է, հայր Օհանն ազատ է և աղոթում է իր վանքում: Եպիսկոպոսը մտածում է փախուստի մասին, իսկ հայր Օհանը խռովվում է հոգով անօրեն թաթարի անօրեն գործը տեսնելով: Իր խռովքի մեծությունը երևում է աղոթքի ընդհատումից.

*Երբ քեռավ խաղաղ վանքիցը իրեն,
Անօրեն մարդու էս գործն անօրեն՝
Խրոշովեց արդար ձերունու հոգին.
Ճերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,
Դառնացած, դրժգոն մարդուց ու կյանքից,*

*Աղոթքը կիսապր՛դուրս եկավ վանքից,
Իջավ Սևանա երեսը կապույտ,
Եվ բըրթմընջալուվ, միամիտ, անփուլթ,
Էն վեր-վեր ծրփուն ջրերի վըրա
Յամաք ուրներով գընում է ահա:*

Երկու հրաշք կա ավանդության մեջ. երկուսն ևս պահած է Յ.Թումանյան, բայց ոչ այնպես, ինչպես ավանդությունը: Այնտեղ եպիսկոպոսն ապավինում է խաչին և կապելով ուսին՝ մտնում է գետը: Այստեղ խաչի մասին խոսք չկա. հայր Օհանի ընթացքը ջրերի վրա նույնքան վստահ է, որքան էր անշուշտ Յիսուսի ընթացքը իր հայրենի լճի վրա: Խիզախ երևակայության այս թռիչքը, որ ունեցած է ավանդության միջնադարյան հորինողը՝ ոմանց կարող է սրբապիղծ երևալ. բայց այս խիզախությունը հատուկ է հայ ոգուն. Կորյունը չէ՞ որ մեր գրականության սկզբին մեծ Մովսեսի հետ է համեմատում Ս.Մեսրոպին և մեր գրերը զուգադրում տասնաբանյա պատվիրանին և մեր ազգը գերադասում հորթապաշտ հրեաներին: Եվ Յիսուս չէ՞ր, որ ասաց թե մանանեխի հատիկի չափի հավատքը լեռներ կարող է տեղահան անել: Այնքան հավատք և ավելին ունեցած է ավանդության հորինողը դեպի հայոց խաչը, որ իր կրողին անվտանգ քայլել շնորհած է ջրերի վրա: Յ.Թումանյան՝ նույն այդ խիզախ ոգու ժառանգորդը, այդ շնորհը խաչերի չէ վերագրում, այլ նկատում է աստվածային պարզ և ճգնակյաց սրբության: Եպիսկոպոսը փախչում է խաչին ապավինած. հայր Օհանը փախուստի պետք չունի. ճգնավորն ու սուրբը մահից չեն սարսում: Նա դժգոհ է, որ մարդիկ անօրեն գործեր են կատարում այս լայն աշխարհում, արևի տակին և խանգարում են մարդոց աղոթքը, որ ձգտում է աշխարհի փրկության... Անօրեն գործը խռովում է արդար ծերունուն, բայց սա ո՛չ բողոք ունի, ո՛չ զայրույթ: Նա չի հավատում թե բողոք ու զայրույթ կարող են անօրենին օրինասեր դարձնել: Այս մտածումով է, որ տոկացած է հայը աշխարհասասան բռնությանց և պահած է իր գոյությունը աշխարհավեր թոհ ու բռիերի մեջ: Նույն ոգին է, որ ցուցադրած է Յ.Թումանյան այն հոյակապ քերթվածի՝ մեջ, որ գրած է մեր դարասկզբի հանուր տեղահանության և կոտորածի առիթով, ո՛չ զայրույթ, ո՛չ բողոք. « – Յանգե՛ք, իմ որբեր..., – ասում է նա, – իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ... Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...»: Յայության մեծ թևն այսպես է մտածած, զգացած ու գործած և Յ.Թումանյանը գնում է մեծ թևի հետ, ինչպես և ավանդության եպիսկոպոսը, որ ոչ թե ըմբոստության է մղում գերինների,

¹ *խոսքը վերաբերում է 1915-ին գրված «Յոզեփանգիստ» բանաստեղծությանը:*

այլ հայրենի սուրբ խաչն առած՝ հնարում է փախչել՝ հայոց ազգի մնացորդը համախմբելու խաչի շուրջը և հայ ժխաններից ծուխը անպակաս անելու: – Մենք տեսնում ենք մի նոր հակադրություն. թաթարական մեծագործություն – գերի բազմություն և լեռնակույտ ավար. աշխարհական ուժի ցուցադրություն – բայց ահա և հայի մեծագործությունը. հավատքի հզոր ուժ, որով մարդ քայլում է ջրերի վրա: Եվ հայ ու թաթար ոգու մարմնացումները կանգնում են իրար դիմաց:

*Տեսավ հրրաշքը Լենկթեմուրն ափից,
Տեսավ, սասանեց տեղը սարսափից:
Կանչեց, աղաչեց իշխանը թաթար,
– Ե՛ր արի, սասավ, ե՛ր արի, արդար,
Ե՛ր արի, սասավ, ո՛վ դու Լստի՞ն մարդ.
Ե՛ր եկավ մեր հայր Օհանը հանդարտ,
Իր ցուպը ձեռին. ջրերի վրորով.
Եվ առաջն ելավ թաթարը սիրով:*

Գրավոր ավանդության մեջ թաթար զորականներն են, որ տեսնում են հրաշքը և երդումով ետ բերում եպիսկոպոսին: Այստեղ ինքը՝ Լենկթեմուրն է տեսնում հրաշքը և ետ կանչում Օհանին: Այսպիսով շեշտվում է այն հակադրությունը, որ ավանդության կառույցի հիմքն է կազմում: Մեծ աշխարհակալը, որից սարսափած էր արևելքը Խորեզմից մինչև Փոքր Ասիա, իսկ ինքը չէր ընկրկած որևէ ուժի առջև, տեսնելով մի գործ, որ վեր էր իր կարողության սահմանից՝ սարսափում է իր հերթին և սասանում: Աչքերն արյունակալած այս ցուլի նախնական միտքը անկարող է տեսածն ըմբռնել, բայց իբր փորձ մարդ՝ աշխատում է իր կողմը թեքել այս անսովոր կարողության տեր մարդուն: Ու թեև գիտե, թե իր տեսածը մի «արդար մարդ» մի «Լստծու մարդ» կարող է լինել – ուրիշ ո՞վ կարող էր այդ հրաշքը կատարել, – բայց նրան հրապուրում է այն բարիքներով, որ ինքն ու աշխարհը համարում են տեսչալի: Նա հարցնում է.

*– Ի՞նչ ես ուզում դու, ո՛վ սուրբ ավետր,
Գա՛նձ, իշխանություն, թե կյանք փառավոր...*

Եվ հայի Սուրբը պատասխանում է.

*– Զու փառքն ու զանձը հարկավոր չեն ինձ,
Իմ ժողովուրդն եմ ուզում ես քեզնից:
Ուզում եմ թողնես՝ զընան ուր կուզեն,
Ու ազատ իրենց կյանքի ձենն աձեն,
Էս լեն աշխարհքում, արևի տակին...
Ասավ սուրբ մարդը մե՞ծ ավագակին:*

Մի նոր հակադրություն. ի՞նչ ավելի ցանկալի բան քան «զանձ»,

իշխանություն և կյանք փառավոր», բայց սուրբ մարդը ուրիշների ազատությունն է ուզում. նկատենք՝ «ուզում» և ոչ թե խնդրում: Այս լայն աշխարհում, արևի տակ ամեն ոք իրավունք ունի ապրելու, իր կյանքի ծայրը հնչեցնելու: Ահավասիկ սուրբ մարդու տենչը բռնավորի հանդեպ: – Այս հատվածի մեջ մի տող կա, որ խանգարում է հորինվածքի վեհությունը: Բանաստեղծն այդ տողով վար է մնում իր նյութից. «Ասաց սուրբ մարդը մեծ ավազակին»: Այս որակումը հեղինակին է. «սուրբ մարդը» այնքան վեր է աշխարհից, որ նրա համար Լենկթեմուրը մի որոմ է չարի ձեռքով ցանված աշխարհում: Հայտնի է պատվերը. պետք չէ որոմը քաղհանել. գուցե ցորենը միասին հանենք: Միշտ զարմացած եմ թե ինչպե՞ս Յ.Թումանյանը վրիպած է այստեղ. նա որ այնքան գիտեր չափերը պահել և վերից նայել մարդուն ու կյանքին...:

Բռնավորը մեծահոգի լինել չի կարող. նրա համար սուրբը մի աղքատ է, որին պետք է ողորմություն տալ. նա չի կարող ըմբռնել այն ոգին, որ ապրում է սուրբի մեջ և որն ուզում է գերիներն արծակվեն ամենքն անխտիր:

– Ժողովուրդ կուզես... լավ, լինի էդպես:

Էս վանքովը մին ժողովուրդ փամ քեզ,

Գընա ինձ համար աղոթք արա, ծնր:

Գրավոր ավանդության մեջ եպիսկոպոսն է որոշում ազատվելիք գերիների քանակը, ցույց տալով դիմացի մատուռը: Այստեղ հակադրաբար ցուցադրված են մեկի լայն սիրտը և մյուսի կծծի ոգին: Հրաշքը ցնցեց բռնավորին, բայց չփոխեց: Վանքովը մին ժողովուրդ տալով՝ նա իրեն ապահոված համարեց սուրբի անհայտ զորության դեմ:

Գրավոր ավանդության մեջ հայտնի չէ թե ո՞վ է աղավնի դարձնում գերիներին: Յ.Թումանյանը լուծում է այդ խնդիրը, որով վերանում է հորինվածքի թերին:

Ասավ Լենկթեմուրն ու տրվավ պարվեր,

Որ գերի Հայոց ազգը մի թևից

Էն վանքը մըտնի սուրբի երևից.

Ինչքան ժողովուրդ մըտնի էն վանքը,

Նրան է բաշխում էնքանի կյանքը:

Որով հայր Օհանը մտնում է իր վանքը, ուր և աղոթում է գերիների փրկության համար: Հարյուր հազարով մտնում են վանքը.

Անցնում է գերին, անցնում շարեշար,

Էլ մարդ չըմնաց, զընաց ինչ որ կար,

Դարարկ է սակայն վանքը փակավին...

Նոր զարհուրանք, նոր սուկում, նոր զարմանք.

– Զարթո՞ւն եմ արդյոք, թե՞ երազ րեսա...
Տայրնեցեք ինձ շո՞ւր, ի՞նչ հրաշք է սա...

ասում է բռնավորը և մարդիկ ուղարկում, որ տեսնեն ի՞նչ հրաշք է սա: Գնում տեսնում են՝

*Մեր հայր Օհանը՝ աղոթքի չորած,
Աչքերն երկընթին, միրուքն արցունքոյ,
Ով որ հայ ազգից մըրել է իր մոյր,
Իր սուրբ աղոթքով, կամքով Վերինի,
Փոխել է իսկույն դարձրել աղավնի,
Բաց պարուհանից թողել ամենքին,
Թըռցրել դեպ իրենց լեռները կըրկին,
Ու հիմի վանքում էլ չկա ոչ ոք,
Ինքն է աղոթում մենակ, ծընկաչոք:*

Գրավոր ավանդության մեջ խաչի՞ թե մատուռի զորությունն է, որ հրաշք է գործում՝ որոշ չէ: Գ.Թումանյանի վերաստեղծումի մեջ ամեն ինչ պարզ է: Հայր Օհանը, որ չկարողացավ բովանդակ գերությունն ազատել իր խոսքով՝ ապավինում է իր ջերմեռանդ և արտոսրալից աղոթքին և Վերինը, որ ամենագոր, ողորմած ու գթած հայր է՝ թողնում է, որ հրաշքը կատարվի և գերիներն աղավնի դառնան և իրենց լեռները թռչին և ոչ թե դիմացի դաշտի վրա հավաքվին մարդ դարձած, ինչպես ասում է գրավոր ավանդությունը: Հապավելով ավանդության այս մասը, Գ.Թումանյան զորեղապես շեշտած է ավանդության հիմնական գաղափարը: Լենկթեմուրի ձեռքից միմիայն թև առնելով կարելի էր ազատվել և ուրեմն անմտություն կլիներ մարդկային կերպարանք առնելուց հետո՝ կանգ առնել այդ ահարկու բռնավորի դեմ:

Մեր բանաստեղծը անորոշ է թողնում նաև այն կետը թե աղավնիները նորից մա՞րդ դարձան: Եվ կարևոր չէ. աղավնիների խուռներամ թռիչքը Սևանի կապույտ ջրերի վրայով դեպի Սյունյաց կապույտ լեռներն այնքա՞ն գեղեցիկ տեսարան է և այնպե՛ս գեղեցկորեն հարմարում է հրաշքին, որ ավանդության վեհությունն ու գեղեցկությունը կխանգարվեր, եթե աղավնիները մարդիկ դառնային: Նույն նկատումով՝ գեղարվեստական ճշմարիտ ըմբռնում պետք է համարել այն հանգամանքը, որ բանաստեղծը ոչինչ չի խոսում Լենկթեմուրի մասին թե ի՞նչ եղավ նա, թեև ավանդությունը, որ կուզե խաչի զորությունն ընդգծել, ասում է թե՛ վախենալով, որ մի նոր հրաշքով փորձության չհանդիպի, Լենկթեմուրն այնտեղից քաշվեց իր զորքով:

Այն ոգին, որով վերստեղծված է այս ավանդությունը՝ իր կից ծայներն ունի Գ.Թումանյանի ստեղծագործական համանվագի մեջ, բայց ես այդ համանվագի մասին չուզեցա խոսել: Այդ ոգին, որ ազգային

է և ոչ եկեղեցական, քայքայած է կղերի հղացումը, որ իր հանրային մեծ դերը խաղացած է արդեն, և նրա տարերքը նորապես համախմբած է՝ քանդելով ավելորդ ուստերը այն հնավանդ ծառի: Նորից հակադրված են իրար հայն ու թաթարը, բայց ոչ մեկն իր հրաշագործ խաչով և մյուսն իր արյունվա սրով – այլ իբր երկու ոգի և մտայնություն. մեկը, որ սլանում է վեր և մարդուն քաշում է դեպի կատարելություն, մյուսը, որ բորենու պես լիզում է արյուն և ուր անցնում է իր ոհմակներով, խոտ չի թողնում, որ բուսնի գետնին:

Այս գիտակցությունը նույնքան կարող է վեր պահել հայության ոգին նոր դարերում, որքան հին ավանդությունը պահում էր հին ժամանակ:

1947թ.

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՅԱԿՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Հոկտեմբերի 21, 1900, Ցյուրիխից Թիֆլիս

Սիրելի Հովհաննես,

Եվրոպա հասնելուց մի քանի օր հետո ես քեզ մի բաց նամակ գրեցի – տանդ հասցեով, որ այն ժամանակ հիշում էի թիվը, տունը, – բայց պատասխան չստացա. Դերենիկին մի քանի նամակ ևս գրել եմ, նույնպես պատասխան չունիմ:

Հիմա խնդրում եմ, որ նամակս ստանալուն պես, ինձ պատասխանես:

Ինչպե՞ս է քեֆդ, ի՞նչ ես անում. ի՞նչ է անում Շանթը. ո՞ր է Դերենիկը. (Աղբայրանին նամակ գրել եմ Մոսկվա). ի՞նչ հալի մեջ է Վերնատունը: Ո՞նց է ընտանիքդ, բալեքդ... Մինչև այժմ մի բան չհրատարակեցիր – «Դեպի անհունը», «Սինամ թագավորը»: Ե՞րբ է հրատարակվելու «Մուրճը». իսկ «Տարագը» ի՞նչ է անում:

Թե իմ մասին կհարցնես, – քեֆս վատ է, տրամադրությունս միշտ մռայլ. հույս, ոգևորություն, եռանդ-բան՝ չկան մեջս, – բայց քաշեքաշ ապրում եմ, քաշե-քաշ պարապում: Եղբայր, գերմարդիկ չենք, որ այսքան հարվածներ, տանջանքներ ուտելուց հետո՝ էլի զվարթ, աշխույժ լինենք... Բաներս բո՛շ է...

Ղ.Աղայանը, կանթեմ, հիմա Բաքվումն է, իսկ Դերենիկը ինչո՞վ է ապրում:

Սիրելի՛ս, գրի՛ր, գրի՛ր, տեսնենք ի՞նչ դուրս կուգա. ուզում եմ «Աղբյուր-Տարագին» բան դրկել, բայց հավաս չկա. ծերացա՛նք, դեռ չապրած... Կարո՞ղ ես ինձ հայտնել, թե Ե.Թոփչյանը Թիֆլիզո՞ւմն է հիմա, ի՞նչ է անում: Արշակ Ղազարյանի մասին կարո՞ղ ես գրել. ի սեր աստժու, ում նամակ եմ գրում՝ պատասխանում չեն. խո չե՞ն խռովել ինձնից, բայց խռովելու ի՞նչ տեղիք կա արդյոք. այսր ինչո՞ւ Դերենիկը չի գրում ինձ...

Էլ ի՞նչ գրեմ, – գրելու շա՛տ բան կա, բայց նամակագրության թելը պիտի պահել, որ մարդ սկսի բացվել, և գրել, գրել:

Ապաստում եմ նամակիս պատասխանին:

Մնամ համբույրներով,
քո՝ Ավետիք Իսահակյան
Բարևներ բոլորին:

Տպագրվում է Ավետիք Իսահակյանի «Երկերի ժողովածուի» 6-րդ հատորից (Երևան, 1979):

Սեպտեմբերի 12, 1901, Ղազարապատից Թիֆլիս

Սիրելի Օհաննես.

Քու գնալուց հետո ես էլ եկա գյուղ և մինչև օրս այստեղ եմ. մի քանի օրից հետո կերթամ քաղաք, հետո էլի գյուղ, հետո քաղաք և դեպի Թիֆլիս:

Աղբալից նամակ չստացա, չգիտեմ ինչո՞ւ, հո էդտեղից չէ՞ հեռացել:

Դերենիկից խաբար չունի՞ս, ի՞նչ է, դեռ չէ՞ եկել այդտեղ: Իսկ Շանթից ի՞նչ ունես գրելու: Ես որ գամ, տեսնենք Վերնատան հալը ի՞նչ է լինելու. երևի առանց դրան մեր օրը սև կանցնի:

Ի՞նչ եղավ, ո՞ւր մնաց «Վտակը»¹. հո չէ ցամաքել. ձենը, քչքչոցը հասավ, բայց ինքը չկա. երևի մի լուրջ բան պատահած կլինի հետը. վախենում եմ, որ արգելեն ծախել, թե չէ մինչև օրս վերջացած կլիներ. խնդրում եմ, այս մասին ինձ մի հաստատ բան գրիր:

Մեկ էլ աչք պտըտցու՞ գուցե ինձ համար մի երկու դասեր գտնես՝ հայերեն, պատմություն, գերմաներեն, և այլն, որ գամ Թիֆլիս, քաղցած չմնամ:

Կոստանյանից խաբար չունիմ քեզ տալու, ես նրանից ավելի շուտ եմ բաժանվել, քան թե դու:

Ի՞նչ հալի եմ մեր պատկերները. ի՞նչ են խոսում դես-դեն, գրական աշխարհում:

Էլ ի՞նչ գրեմ, բարևներ մերոնցից, համբույրներ,

քո՝ Ավետիք Իսահակյան

Անպատճառ նամակիս պատասխանես, գոնե «Վտակի» մասին:

Հուլիսի 21, 1902, Ղազարապատից Թիֆլիս

(Նամակի սկիզբը պակասում է)

(...) «Սասունցի Դավթիդ» մասին. – նորից կարդացի. – միակ պակասությունը նրանում է, որ բնության նկարագրեր չկան, որոնք քեզ շատ կհաջողվեին՝ իբրև եպիկի, բայց որ Սասունը չես տեսել, ի՞նչ նկարագրես. իսկ այն ևս ճշմարիտ է, որ ամբողջ պոեմը, կարծես, լրջորեն, խորը մտածած չես գրել, հավատարիմ ես մնացել նախկին որոշմունքիդ-մանուկների համար. բայց ավելի լուրջ և ծանրախոհ կարելի էր գրել, ինչպես Ֆիդդուսու Շահնամեն, Յորդանի Նիբելունգը և Ջերդերի Սիդը, որտեղ, բացի բուն նյութից կա և անհատական

¹ Գրական-բանասիրական ժողովածու, խմբագիր՝ Վ. Փափազյան:

ստեղծագործություն. քոնը ուղղակի՝ նյութի ոտանավոր, մի փոքր մշակած վերածունն է:

Ինձ ամենից շատ գրավում են ժողովրդական ոճերն ու դարձվածքները, որոնցով չափազանց հարուստ է, և մանավանդ էպիկական պատմելու ձևը – հանգիստ, վեհորեն հանգիստ, և հունորը. հույս ունեն, որ Խանդութի սերը հաջող դուրս կբերես, բայց նախօրոք զգում եմ Միերի անհաջողությունը, – Միերը կիսատ, ջարդված հերոս է, լիքը հակասություններով, երևի պետք է նորանոր վարիանտներ գտնել՝ լրացնելու այդ պակասը. ժողովուրդը Դավթին է սիրել ու սիրում, ու նրան հարստացրել է (...):

Մեծ սպասելիք ունեն Սինամ թագավորիցդ, քանի որ նրա մեջ կա քո անձնական ստեղծագործությունդ, կա սիմբոլ և գեղեցիկ պատկերներ, անհամբեր սպասում եմ գրքիդ լույս տեսնելուն՝ կարդալու համար «Անուշը»... Բայց ինչ էլ որ լինին քո պոեմներդ՝ մեր գրականության մեջ դարաշրջան են կազմելու: Ապրիր և ստեղծագործիր – ահա քո ուղին. մեզ թող կռվի դաշտը, ինչ կուզես թող լինի. – «Թող կործանվի աշխարհը, և ես կընկնիմ նրա ավերակների տակ». սա Զորացիոս բանաստեղծի խոսքերն են, որ իմ վերջին տրամադրության լոզունգն է, նշանաբանը:

Համբույրներով՝ Ավետիք

Հոկտեմբերի 4, 1902, Բաքվից Թիֆլիս

Սիրելի Հովհաննես.

Շատ ուրախացա, որ տեղդ իմացա. Թիֆլիզից անցնելիս ասացին, որ էդտեղ ես, բայց առողջությանդ մասին՝ բացասական. ես միայն մի օր մնացի Թիֆլիզ. եկա այստեղ, գնացի Շուշի, և միշտ մտածում էի վերադ, քեզ անձամբ ճանաչողներին միշտ հարցնում էի. հիմա որ լավ ես, ավելի՛ լավ:

Ես առաջժմ մնում եմ այստեղ դասերով. պիտի մի փոքր պարապվեմ, նոր բաներ ունեն, նստեմ գրեմ. մտադիր եմ ոտանավորներիս ժողովածու տալ. բայց ի՞նչ տալ...

Իհարկե գիտես Մոսկվայի տղոց ձեռնարկը. բան է, էլի, եթե մեզ չխայտառակեն ռուս քննադատության առաջ. յաման ասովա՛ծ:

Սիրելիս, դուն ի՞նչ ես անում. «Անուշը» ո՞ր մնաց. շարունակ նրա մասին եմ երազում. ծնե՞րը, որ կարդացիր՝ համը բերանս մնաց. շո՛ւտ

արա, տպի՛ր, տեսնենք, լիուլի վայելենք:

Իսկ ժողովածո՞ւդ, սրբագրված... Ո՞ւր մնաց:

Ի՞նչ է անում Աղայանը. առողջությունը ո՞նց է. Դերենիկից լուր ունե՞ս. օգոստոսին մի երկու-երեք օր մոտս էր. շա՛տ էր խեղճ ու ընկճված. ցամաք գրել էմ, բայց պատասխան չկա:

Նիկոլը իրեն Պետերբուրգ է գցել. Բիլոն Բիլոնիդեսը, կես-կուշտ, կես-սոված՝ կապրի:

Շանթը, ասում են, վերադարձել է. ե՞րբ է բեմը կամ բիրժեն շանթելու. սպասում եմ նրա երևալուն օրե-օր:

Գրիր քու մասին, մանրամասն. երեխաներիդ, քեֆիդ. ի՞նչ ես գրել. ո՞նց եղավ... սե՛րդ ...

Համբույրներով, քո՝ Ավո

Դեկտեմբերի 11, 1902, Բաքվից Թիֆլիս

Սիրելի Օհաննես.

Նամակդ ստացել եմ, բայց ոչ թե ծուլանում էի պատասխանել, այլ դրությունս վատ է՝ անորոշ, և չգիտեմ ի՞նչ գրեմ. մինչև ե՞րբ պիտի հոգիներս բերաններս առած քաշ գանք մեր կեդրոնական, նվիրական, մեր հոգու իսկական պահանջներից հեռո՞ւ. ծերանում ենք՝ ոչինչ չարած: Մոսկվայում տպվում է մեր բանաստեղծությունների թարգմանաբար ժողովածուն. տեսնենք ի՞նչ է լինելու. ես հույս չունիմ, որ հաջող բան դուրս գա. կոլորիտը, ինքնուրույնությունը չի կարող պահպանված լինել՝ մանավանդ երկուսիս գրվածքների: Գրի՛ր առողջությամդ մասին, և՛ մինչև ե՞րբ ես մնալու այդտեղ. երևի ես կգամ Թիֆլիզ. սկսինք մեր ոտանավորների ժողովածուն տպել, և անցնել լուրջ բաների. մեր վրա հույսեր կան դրված, բայց մենք մի քանի ծուտի-պռտի բաներով խաբում ենք մարդկանց:

Համբույրներով, քո՝ Ավո

Հունիսի 20, 1908, Ղազարապատից Թիֆլիս

Սիրելի Օհաննես,

Վաղուց է՛ ուզում էի քեզ գրել, բայց քանի որ դու չես պատասխանում, իմ ձեռքն էլ թուլանում է:

Սա գրում եմ իմանալու համար, թե ո՞ւր պիտի գնաս ամառս, և ձեռոնք ո՞ւր գնացին: Մուշեղն ու Աշխենը խոստացան ինձ գրել Դսե-

դից, որ գան ինձ հյուր՝ տանեն Անի: Նունիկը, Արտիկը և Համլիկը – այսքանը բավական է, բայց նրանցից էլ նամակ չունեն:

Ես արդեն տասը օր է գյուղումն եմ. սուտուփուս, պոչս քաշած պարպում եմ- կարդում եմ, քան թե գրում. տրամադրությունս, ինչպես միշտ, հիմա էլ վատ է. անիրավ հեղեղն էլ թե շատ վնասեց մեր քաղաքին և թե տրամադրությանս վրա վատ ազդեց, թեև դա ցույց չեն տալիս:

Տեսնում եմ, որ եթե այս գյուղական անկյունն էլ չունենայի՝ մի գազազած գազան պիտի դառնայի, զոնե այստեղ ամեն բանից հեռու-լրագրություն, հայկական հիմար իրականություն, դաշնակցական ընկերներ, և այլն, և այլն՝ նրանցից հեռու ապրում ես քո բոժոժի մեջ և տեսնում ես, թե շուրջդ որքան դատարկ է, կեղծիք է, և մարդ, իսկապես, մենակ է...

Ուզեցա ես էլ ձայնակցել քո առաջարկած գրական ֆոնդին, բայց այս օրերս այնպես եմ ատում հայություն, հայ ժողովուրդ, հայկական ապագա, – որ սիրտս խառնում է դրանց մասին մտածելը: Ես ապրում եմ հիմա բացառապես անցյալով (ոչ թե անմիտ անցյալով), այլ հին ազգերի՝ *История Ассирии, Индии, Халдеи, Мидии* – շա՛տ եմ խորասուզվել *Ջորաստրի* և *Բուդդայի* վարդապետության և կյանքի մեջ:

Էլ ի՞նչ գրեմ. արդյոք բան-ման եղավ գրական ֆոնդի հարցերի շուրջը:

Շանթը տեղ հասա՞վ:

Աղբալը ո՞նց է զգում իրեն պաշտոնում:

Դերենիկից նամակ կա՞:

Ինչպե՞ս է Աղայանի քեֆը. այդ ի՞նչ Քյոռ-օղլի է լույս բերել:

Գիրքդ տպվեց-վերջացա՞վ Բաքվում:

Ո՞նց է Լեոյի քեֆը. վերջապես որքա՞ն հավաքվեց, Ալեքսանդրապոլը անպատճառ մի բան կանե – ներկայացում, դես-դեն. միայն հեղեղը խանգարեց. մեկ էլ ձեռնարկողները շա՛տ ծույլ, փնթի մարդիկ էին – երևակայիր խզմալյանի պես համր ու հիմար մարդը:

Ավետիսը գնա՞ց արտասահման... և այլն հարցեր, որոնց մեծ մասը երևի քեզ էլ չի հետաքրքրում, համենայն դեպս՝ կարող ես՝ պատասխանիր, այսինքն՝ եթե ուզում ես:

Վերջացնում եմ. բարի գիշեր:

Համբույրներ և բարևներ՝

Քո՝ Ավետիք

Բարևիր՝ ձերոնց, եթե այդտեղ են. Աղայանին, Լեոյին, Ավետիսին, Նիկոլին և այլն:

Սիրելի Օհաննես.

Սրանից մի 10օր առաջ քեզ մի ապահովված մամակ էի գրել «Հորիզոնի» հասցեով: Սոֆիկը գրել էր, որ գնամ Վիեննա, ես կգամ, ամեն բան վերջացած է. – ես պատրաստվում էի գնալ, երբ մամակ ստացա, թե՛ Օհաննեսը ասում է, որ սպասեմ, տեսնենք ի՞նչ կլինի:

Ես բնավ հույս չունեմ, թե հաջողվի արտասահման գնալս. ես հավատ չունեմ իմ աստղին և իմ բարեկամների վրա, չնեղանաս, եթե ասեմ, թե չեմ հավատում և ընկերներին, տա Աստված, որ սխալ լինեմ:

Խեղճը – Սոֆիկը, մեռավ սրան-նրան դիմելով և խելջին խաբեցին խոստումներով՝ է՛լ Մեսրոպ եպիսկոպոս, է՛լ Հով.Ամիրխանյան և ուրիշներ. սակայն այդ խոստումները վերջը ինձ քաղցի դուռը բերին. ես մտադիր եմ գնալ հայկական գավառները վարժապետության, ուրիշ հնար չունեմ – դիմեմ սրան-նրան փող ուզելու – եթե դիմեմ էլ չեմ տա, իսկ քաղցած մնալ էլ չի կարելի. ուսուցչության գոնե ամսական 40 կամ 50ռ. կտան, մի կերպ կապրիմ, թեև գավառը վտանգավոր է, բայց ճարս ի՞նչ:

Այս մամակը գրում եմ քեզ՝ քար սեղմելով սրտիս վրա, գրում եմ և հագիվ թե հույս ունիմ դրական խոսքի վրա, որովհետև դրա համար ես բավական փորձված եմ. սակայն իմացած եղիր բառացի իմաստով, որ քաղցած եմ... գրում եմ, որ հետո չասեք, թե ինչո՞ւ չգրեց, չգիտեիրք...

Այստեղ բոլորովին մենակ եմ և ընկերներ չունեմ, դաշնակցական խմբակից հեռացած եմ և համարյա բոլոր կապերս խզել եմ. մնում է, որ հրապարակավ հայտնեմ և փեշերս թափ տամ դաշնակցական կոչված սրիկաներից...

Ես չունեմ ոչ Ահարոնյանի երեսը և ոչ էլ նրա բարեկամները. (...) ես ի՞նչ եմ որ... Եթե ես արժեք ունենայի ժողովրդի կամ ընկերների աչքին, այս դրության չէի մնալ. նզոված լինի հայ կյանքն ու նրա գրականությունը և նրա ամեն ինչը... ծծեցին հյութերս և ձգեցին փողոց:

Ես ոչ ոքին չեմ կարող խնդրել, եթե կարող ես մի բան անել, արա, եթե ոչ – Աստված հետդ: Աստված քեզ էլ բարի տա, բոլոր մարդկանց էլ:

«Մշակը», լսել եմ, որ արտատպել է ամերիկական մի հնչակյան թերթից մի նամակ, ուր ինձ մեղադրում են բանագողության մեջ (ճիշտ քո հարցը Դրամբյանի հետ)¹. Ես պահանջել եմ, որ գրածս լեզենդան

¹ Խոսքը վերաբերում է Ռ.Դրամբյանի «Գրական մեծությունները բանագող» հոդվածին («Մշակ», 1909, 28 հունիսի), որին Թումանյանը պատասխանել է «Ոչ-գրական ոչնչությունները քննադատ» («Մշակ», 1909, 5-6 օգոստոսի), ապա նաև «Հայոց դրամբյանիզմն ու ես» («Հորիզոն», 1913, 12 հունիսի) փայլուն հոդվածներով:

Բուդդիայի կյանքից կողք-կողք տպեն Լազըրլըֆի Լեգենդայի հետ համեմատելու համար. կուղարկեմ թերթի մեջ տպած իմ նամակն ու երկու Լեգենդները (դեռ չէ հրատարակված, սպասում եմ այսօր-էգուց) և խնդրում եմ «Յորիզոնի» մեջ հարց բարձրացնեք անաչառորեն, համեմատեք երկուսիս գրած Լեգենդները: Այնքան հիմար եմ մարդիկ և չարամիտ, որ կարծում եմ, թե միայն մի մարդ կարող է օգտվել համաշխարհային Լեգենդներից, և «Մշակն» էլ այնքան լիրք է, որ առիթ բաց չի թողնում ինձ հարվածելու. նույնիսկ կարող եք իմ և Լազըրլըֆի գրածները միասին տպել «Յորիզոնում» և հարցը դնել հրապարակավ «Մշակի» դեմ: Ս.Լազըրլըֆի Լեգենդան տպված կա Универсальная библиотека (изд. “Польза”, Антика, Москва). 275 թվի մեջ “Легенда о Гнезде” (Լեգենդա բնի մասին) գրածն է, իսկ իմը կուղարկեմ, ականջի ետև մի՛ ձգիր. կամ տուր տղերքը անեն: Ես մեծ աղմուկ եմ հանել այստեղ դրա շուրջը: Սարսափելի մարդիկ են այս հնչակյանները, սակայն անիծած և՛ դաշնակցականների հերը:

Սպասում եմ նամակիդ:
Համբույրներով բոլորիդ՝
թո՛ւ Ավետիք:

Ես չեմ կարող իմ անունով դուրս գալ Կովկասի թերթերի մեջ. ձեր պարտքն է հանդես գալ, հանուն գրականության պաշտպանել մի գրողի դատը, որը անպաշտպան է: Ձեր համար էլ լավ է մի անգամ ևս բռնել այդ լրբերի – «Մշակի» – օձիքը:

Հ.Գ. Սոֆիկը գրել էր, որ Մոսկվա որոշել են իբրև թե ինձ ամսական 25ռ. տալու, սակայն դրա մասին ինձ ոչ միայն բան չեն գրել, այլև աշխատում են որոշած հոնորարիս գինը կրճատել, նվազեցնել:

Առհասարակ վերջերս ապրուստիս բոլոր միջոցները ցամաքեցին. թերթերը չեն վճարում, կամ ամիսը մի անգամ կարող եմ տեղ տալ՝ դրամ չունենալու պատճառով:

Թարգմանության համար միայն մի բան կա ձեռքս՝ Հրատարակչականի (Թիֆլիզի) հանձնարարած «Պան» վեպը¹, որը ավանս չի տալիս: Ինչո՞վ ապրել: Թուրքիա միայն ձրի կարելի է գրել. ամեն օր երեսիցս կախ եմ ընկնում ձրի բան խնդրելու:

Ավ. Իս.

¹Կնուտ Չամսունի «Պան» վեպն Իսահակյանի թարգմանությամբ լույս է տեսել Թիֆլիսում, 1913-ին: Վերահրատարակվել է Երևանում 1971-ին:

Հուլիսի 3, 1919, Ժնևից Թիֆլիս

Սիրելի Օհաննես և Դերենիկ ջան և բոլոր սիրելիներս, կարոտյալներս.

Ստացա Նվարդի և Դերենիկի սիրալիր տողերը, և շա՛տ ու շա՛տ ուրախացա: Անսահման տխուր եմ, որ հեռու եմ հայրենիքից և բոլոր հին, ազիզ ընկերներից...

Սիրելիք, առայժմ ոչ մի հնարավորություն չունեմ վերադառնալու. ճամփու ծախս չկա, և, հակառակի պես, ոչ մի տեղից հիմիկուհիմակ հնար չկա փող ստանալու. Կովկասից փող չի գա, կուրսը ընկած է, և ինձ էլ բավական փող է պետք՝ տեղիցս շարժվելու համար. հույս ունեմ, որ մի երկու ամսվա ընթացքում հայկական դժբախտ ճակատագիրը որոշվի, դրությունը մի քիչ կարգավորվի, հաղորդակցություն սկսվի, գուցե հնարավորություն ունենամ գործերս շիտկել:

Չափազանց ծանծրացել եմ Եվրոպայից, համը վաղուց ելել է այստեղ մնալու. վերջին տարիներն էլ գերության վիճակ էր, ասես, մի խոսքով՝ հոգիներս ելավ:

Հույս ունեմ, որ հակառակ բոլոր ձեր կրած դառնություններին ու գրկանքներին, հիմա լավ էք, և լավագույնի հույսերով՝ ուրախ ու ոգևորված. բարով արժանանանք իրար տեսության, գոնե մի-երկու տարի լավ ապրելու միասին: Ամե՛ն: Շտապում եմ վերջացնել այս երկու տողս, և գրկելով ձեզ ամենքիդ, կարոտով համբուրում եմ ձեզ բոլորիդ:

Ձեր՝ Ավետիք

Հուլիսի 1, 1921, Վենետիկից Թիֆլիս

Սիրելի Օհաննես.

Շտապում եմ մի քանի տող գրել, որ հանձնեմ գրաբերիս՝ հ. Դիոնիսիոս վ. Կալատոզյանին, որ մեկնում է դեպի Թիֆլիք:

Ես երեք ամիս է Վենետիկ եմ ապրում, իբրև էժան երկիր, և մանավանդ Ս.Ղազարի գրադարանից օգտվելու, և հենց որ հարմար եղավ՝ Կովկաս դառնալու:

Ինձ թվում է, որ այժմ Կովկասի վիճակը ավելի լավ պիտի լինի, քան անցյալ տարի, մանավանդ թշվառ Հայաստանի. գոնե հիմա դրությունը կայուն է, այլևս կռիվ չկա զանազան ցեղերի մեջ, և թվում է, թե՛ արտաքին վտանգը անցած է. ռուսական ուժի ներկայությունը կսանձե թշնամու ախորժակները:

Ես ինքս ազգային բացարձակ անկախության ոչ կուսակից էի, ոչ

հավատացող, և ոչ էլ համոզված. մենք մեր ուժերով չէինք կարող անկախ լինել և պահել անկախությունը. եվրոպան ո՛չ միայն չի օգնի մեզ, այլև թշնամի է և հրճվում է հայկական բնաջնջումով. սրան համոզված եմ փաստերի վրա. ինձ համար Անգլիան և Ֆրանսիան այնքան դաժան գտնվեցան, ինչքան Գերմանիան. քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում. պետք է երես դարձնել այս ավազակներից, և մոտենալ Ռուսաստանին, ինչ ձևի տակ էլ որ նա ներկայանա. հայկական առածը այնքան ճիշտ է՝ լավ է փորձած սատանան, քան անփորձ քահանան, որքան ռուսական առածը՝ “Старый друг лучше новых двух”. Դու լավ ես հասկանում, թե ես ի՛նչ եմ ասում: Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել: Մնացածը հիմարությունից վեր մի բան է:

Մնում է հիմա, որ ռուսների և մեր միջև ծագած թյուրիմացությունները հարթել, և հայ ժողովրդի ապագան ապահովելու համար ընդլայնել նրա երկրի սահմանները, և ապա լծվել կուլտուրական աշխատանքի. ես սպասում եմ այդ ժամին. ես զենքի, կռվի մարդ չեմ, և ոչ էլ ջահել եմ դրա համար, ուստի խնդրում եմ ինձ հայտնես, եթե հարմար ժամանակ է, կանչի՞ր, ես կգամ, կվերադառնամ, իսկ եթե դեռ կռիվ, ատելություն, չարություն կա, ես չեմ վերադառնա:

Ձերմ համբույրներով ու կարոտներով քեզ, ընտանիքիդ և բոլոր մեր լավ բարեկամներին ու ընկերներին,

քո՝ Ավետիք

Հասցես՝ Ս.Ղազարի վանքը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԳԻՔՈՐԸ»

Հովհաննես Թումանյանի «Գիքորը» մի գեղարվեստական սիրուն պատմվածք է՝ պատանեկան հոգու տրագեդիա:

Երբ կարդում եք այս փոքրիկ պատմվածքը, ձեր սիրտը լցվում է մի թախիծով և երկար ժամանակ մնում եք կսկծեցուցիչ տպավորության տակ:

Մարդ զարմանում է, թե ինչպես այս նախկ պատմվածքը թաքցնում է իր մեջ այնքան լիրիզմ, այնքան անմիջական զգացմունք և այնքան իրական կյանք:

Տպագրվում է Ավետիք Իսահակյանի «Մեր գրի անմահ փառքը» գրքուկից (1969): Կազմել է Աբաս Իսահակյանը:

Ամենից շատ մեզ հիացնում է պատմվածքի լեզուն՝ այն բյուրեղային վճիտ ոճը, որ պակասում է մեր շատ գրողներին: Փակագծի մեջ ասենք, որ մեր գրողներից շատերը այն անգեղարվեստական ըմբռնումն ունեն, թե որքան ճապաղ, ձգձգված և ճռռոմ բառերով գրեն, և որքան խրթին լինի գրվածքը, այնքան նա բարձր արժանիքներ կունենա, այնինչ ոճի հստակությունը և պարզությունը՝ մտքի հստակությունն ու բյուրեղացումն է. պերճասանության դարն անցել է. նրանով կարելի է շշմեցնել անճաշակ ընթերցողներին միայն:

Հովհ. Թումանյանի լեզուն այնքան վճիտ է և, միևնույն ժամանակ, այնքան պատկերավոր՝ նման լեռնային վտակին, որի հատակում շողշողում են նախշուն ավազահատիկները: Ձեզ թվում է, որ դուք լսում եք խելոք երեխայի բերանից մի պատմվածք, որ անմիջապես, անպաճույճ բխում է նրա սրտից, բայց, ինչպես ֆրանսիացին ասում է, թե թռչունի քայլվածքից երևում է, որ նա թռչել գիտե՝ այս միամիտ գրվածքի տողերից էլ տեսնում եք, որ նրանց վրայից անցել է իսկական տաղանդի տիրական ձեռքը:

Ձենք ուզում պատմել բովանդակությունը. մենք ցանկանում ենք, որ ամենքը, հասակավոր թե մանուկ ընթերցողը (և իսկապես, այս պատմվածքը ունի և այն արժանիքը, որ նա թե՛ մեծերի և թե՛ փոքրերի համար է), ինքը կարդա և տեսնի, թե ինչպես խեղճ գյուղացի Համբոն իր երեխա Գիքորին բերում է անսիրտ քաղաքը, անվարձ հանձնում է մի խանութպանի, որ վերջինս «մարդ» դարձնե Գիքորին. տեսնի Գիքորի տառապանքն ու հյուժնումը. ինչպես անտեր մեռնում է այդ բնության զավակը, հազարավորներից մեկը, և ինչպես Համբոն թաղում է որդուն, դառնում է գյուղ և «կռան տակին տանում է Գիքորի շորերը, որ մերը լաց լինի վրեն»:

Այս փոքր պատմվածքը Հովհ. Թումանյանի լավագույն երկերի շարքն ենք դասում մենք վստահորեն:

Գրքույկը տպված է հարազատ միջավայրից վերցրած շատ սիրուն և հաջող նկարներով, գունատիպ: Այսպիսի գեղեցիկ հրատարակություն, եթե չեմ մեղանջում, առաջինն է մեր մանկական գրականության մեջ:

1910

ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՄԱՐՈՒՅՐՈՎ ՈՒ ԿԱՐՈՏՈՎ ՆՐԱ ԱՆՄԱՅ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հեղեղի պես իջավ նա առասպելական Լոռու վայրենի լեռներից, բերելով իր հետ մի ամբողջ բնություն, հուռթի և բազմատարր, մի ամբողջ հինավուրց ժողովուրդ, իր տոհմիկ երգով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ: Եվ ինչպես ստեղծող մեծ բնությունը՝ փռեց նա մեր առջև իսկական, անկեղծ բանաստեղծությունը:

Պղտոր էր սկզբում այս տարերային հեղեղը, բայց ժամանակի մեջ գտվելով ու մաքրվելով, բյուրեղացավ ու ոճավորվեց այն սքանչելի անմահ լեզուների և պոեմների մեջ, որ կազմում են մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը:

Հովհաննեսը ծնվեց պատմական բնագավառում, մի հին ընտանիքից, որի նախահայրերը եղել են գյուղի պետեր, կտրիճ մարդիկ՝ կռիվների մեջ եփված, Լոռվա ձորերի մեջ՝ քաջ որսորդներ ու ասպետներ:

Նա աչքը բացեց մի մթնոլորտի մեջ, որ վիպական է, դյուցազնական, ամեն մի խորշը՝ ավանդական, ամեն մի քարի կտոր՝ խոսող հերոսական անցյալից:

Եվ շուրջը նրա մարդիկ, պատկառելի ծերեր, որ կարդացել են թե՛ մեր երկաթագիր մագաղաթները և թե՛ գիտեն հազարավոր զրույցներ անցած ժամանակներից ու իրենց ապրած օրերից, որոնց մեջ իրենք ևս բաժին ունեն իրենց խիզախ արկածներով: Հեքիաթի նման է գեղեցիկ Լոռին, Տաշիրի աշխարհը՝ կախարդանքի, հոմերական երկիր. անտառն ունի իր ջահապետը, որ հսկում է եղնիկներին. այրերը լեցուն են դևերով ու չարքերով, գետերը՝ ջրի հարսներով, և այս ամենը բաց աչքով տեսել է լռեցիկ և, իբրև ականատես, պատմել է մանուկ Հովհաննեսին:

Խենթ ու խելառ Դեբեդ գետի կամուրջի վրա նստում են թափառական գուսանները և ուղևորներին պատմում են երգով ու հեգելով մարդկանց ու դևերի կռիվները, քաջ հովիվների և թագավորի աղջիկների սիրային վեպերը...

Այսպիսով, վիպերգական աշխարհում մեծացավ Հովհաննեսը, և հանդես ելավ հոգին՝ բռնկված հայրենի երկրի չքնաղ տեսիլներով ու

առասպելներով, և երևեցավ ինքը, որպես մարմնացած վիպերգություն՝ իր կյանքով ու էությանը, իր խորքով ու ձևով, որպես հին օրերի Գողթան գուսան, ոսկի բամբիռը ձեռին, նոր օրերի մեջ:

Եվ ինչպես հեքիաթական դարի ասպետ՝ իր ասպետական հասակով ու խոսքով կանգնեց հայության առջև, Կովկասի ժողովուրդների առջև:

Այլացել Կովկասն ու հայը ամբողջ իր բյուրեղ ձևերով կաղապարված էր նրա մեջ. նա ինքը կենդանի ոճն էր բանաստեղծական-հերոսական Կովկասի: Եվ մի՞թե կարելի է երևակայել Կովկասը առանց Յովհաննեսի:

Մեծ էր նրա հմայքը ողջ Կովկասի մեջ. ամենից սիրված մարդկանցից մեկն էր հայերիս մեջ, սիրված ու հարգված ռուսներից, վրացիներից, թուրքերից: Ազգերի եղբայրացման ոսկե օղակն էր նա կովկասյան ժողովուրդների միջև, և, որպես այդպիսին, անմահ պիտի մնա նրա հոյակապ պատկերը, որ պիտի ոգևորե սերունդները դեպի վերջնական անթերի համերաշխությունը:

Յովհաննեսին սիրող և ճանաչող հոգիների համար, լինի մտերիմ ընկեր, բարեկամ, թե ծանոթ, ամենից առաջ խորապես զգացվում է դառնությունը այս ահավոր կորստի, որպես կորուստը մի մարդու, անզուգական մարդու, որ բոլորի սրտի մեջ էր ապրում և ուր գնում էր, ուրախության արև էր իր հետ տանում. լույս ու կյանք տվող և ապա՝ կորուստը մեծագույն բանաստեղծի, որ համաշխարհային գրականության մեջ իսկ իր փղոսկրե գահն ունի:

Նրա հանճարեղ խոսքերն ու իրեն հատուկ ձևերը, նրա սրախոսություններն ու առակները ամենի բերանումն էին և թև առած թռչում էին ամեն քաղաք ու ավան:

Երբ նա երևում էր հասարակական ժողովներում, հանդեսներում և մեծ ու փոքր խնջույքներում, բոլորի ուրախությունը՝ բազմապատկվում էր, որովհետև նա պիտի լիներ նախագահն ու սեղանապետը, և հեղեղի պես թափվում էին նրա շողշողուն կատակներն ու սրամտությունները, որոնք իրենց նմանը երբեք չեն ունեցել, որոնք կրում էին իր հանճարի շնորհն ու գոհարը, իր անսպառ բանաստեղծության համն ու հոտը, հազար-հազար գույները:

Այդ հանդեսներն ու ժողովները դառնում էին ծափի ու բերկրանքի անմոռանալի քաղցր ժամեր: Եվ երջանիկ էին զգում իրենց մարդիկ, որ ներկա են եղել այդ խնջույքներին. ամեն դասակարգի հայ բախտ էր համարում տեսնել Յովհաննեսին, լսել նրան: Եվ լսում էին նրան ու չէին հագնում նրանից:

Այդպիսի դյուրական մարդ էր նա իր առօրյա կյանքում: Եվ առօրյա

Հովհաննեսը իր կյանքով, ոճով ու ձևով, իր խոսքով ու առակով դարեր պիտի ապրի Կովկասի հայ հիշողության մեջ, և պիտի անցնի առասպելական մարդկանց շարքը:

Մեծ է մեր կորուստը, հայության սրտին զարկված այս մեծ ցավը, որ անուն չունի: Ընկճվում, ոչնչանում են կույր ճակատագրի առջև, որ մի հարվածով փշրեց այս հսկա գեղեցկությունը իր հանճարի հորդ տարիների մեջը:

Անհուն կսկիծ, անհուն մորմոք. անհուն հուսահատությունը քայքայում է հոգիդ, երբ գիտակցում ես, թե նա այլևս... չկա: Չես կարող հավատալ, շրթներդ վրա չեն գա ասելու, թե նա մեռել է... Եթե նա չկա այլևս այս աշխարհում, ապա ուրեմն էլ ի՞նչ կա այս դատարկ, ամառի աշխարհում... Այնպես անիմաստ է թվում աշխարհը, այնպես ունայնանում է աչքիդ ամեն ինչ...

Բայց մի՞ թե իսկապես մահ կա Հովհաննեսի համար: Այն անկշռելի հարուստ ավանդը, որ թողեց, բավական է, որ նա հավերժացած լինի. նրա համար մահ և մոռացություն չկա: Եվ հավիտյան այս երկրիս վրա եկող ու գնացող հայ սերունդները պիտի կրկնեն նրա իմաստուն խոսքերը.

*Անց են կենում սեր ու խնդում,
Գեղեցկություն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք՝ մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ...:*

1923, Վենետիկ, 5-ը ապրիլի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

(«ԱՆՈՒՉ» օպերայի ներկայացման առթիվ)

Նոյեմբերի 1-ին, Փարիզում, պիտի ներկայացվի Հ.Թումանյանի «Անուշ» չքնաղ օպերան՝ ղեկավարությամբ ծանոթ դերասան Ս.Սուրբայանի, մասնակցությամբ՝ «Սիփան» երգչախմբի:

Երբ առիթ է հանդիսանում, շատ քաղցր է մեզ հիշել Հ.Թումանյանին, գգալ նրան մեր մեջ, մի պահ խոսել նրա հետ:

Սակայն այս նվիրական պահերին Հովհաննեսը թվում է ինձ այնքան հեռացած, հեռավոր: Դարերի մշուշներով պարուրված մի առասպել: Եվ իրոք, թեև նա նոր է մեկնել այս աշխարհից (1923 թվին, մարտ ամսին), բայց դարձել է արդեն առասպել-լեզենդ: Հավատալիս չի գալիս, թե ընկեր եմ եղել նրա հետ պատանեկան օրերից. միասին երազել, ոգևորվել, թափառել: Որովհետև այնքան անըմբռնելի, այնքան անհամատեղելի էր նրա հեքիաթային էությունն ու երևույթը ներկա իրականության մեջ:

Առասպելական էր նրա առօրյան, նրա ամեն մի խոհը, նրա ամեն մի արտահայտությունը:

Հովհաննեսը իր տարերային, իր կոսմիկային հոգով նախապատմական դարերի՝ քարե կամ բրոնզե դարերի, մի տեսիլ էր ներկա ժամանակների վրա:

Կանգնած երկնահուպ ժայռերի կատարին, մխրճված շառաչուն ու մթին անտառներում, շրջապատված դևերով ու հրաշքներով՝ Հովհաննեսը հոմերական աշխարհի մի Այեդ էր, Գողթան գուսան, որ հանգերգում էր բնության և բնազդային տարերքի հետ:

Հովհաննեսը դյուցազներգեց մեր օրերում այնպես, ինչպես պիտի դյուցազներգեր հսկաների ու հրեշների օրերում՝ վագրի մորթը ուսին, աղելար բամբիռը ձեռքին, իբրև թափառական գուսան Գուգարաց աշխարհից դեպի Սյունյաց աշխարհը, դեպի Այրարատ՝ վիպերգելով հերոսների և հսկաների հզոր սերն ու աննահանջ կռիվները:

Հովհաննեսի ահագին տաղանդը կերտեց, ամրցակից, մեր դյուցազնական վիպաշխարհը: Նրա կախարդական գրիչը ուր որ դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշք՝ լինի առակ թե քառյակ, հեքիաթ թե պատմվածք, հովվերգություն թե վիպերգություն:

Կենդանի լեզու, առողջ, հարազատ, արևի տակ աճած լեզու և ոճ:

Հովհաննեսի հրաշակերտները շատ են – Անիծած հարսը, Շունն ու կատուն, Անբախտ վաճառականները, Գիքորը, Փարվանան, Մի կաթիլ մեղրը, Լոռեցի Սաքոն, Մարոն, Թմկա բերդը, Անուշը, Սասունցի Դավիթը և այլն:

Երևակայել մի վայրկյան – ի՞նչ ահավոր բաց պիտի ունենար հայ գրականությունը, եթե չլիներին այդ հրաշակերտները:

Հովհաննեսով ամբողջացավ, լրացավ և զլխավորվեց մի աշխարհ՝ հին նահապետական աշխարհը՝ իրեն ավանդներով ու սովորույթներով, մշակույթով ու կենսահայացքով: Հին Հայաստանը նոր բարձրացող Հայաստանի շեմքին: Հովհաննեսի ետևից փակվեց ընդմիշտ այդ հին աշխարհը: Հովհաննեսը համադրությունը եղավ նահապետական Հայաստանի:

Նա եղավ մեզ համար այն, ինչ որ եղավ Պուշկինը ռուսների համար,

Միցկևիչը լեհերի համար:

Եվ անտարակույս, Գամառ-Քաթիպան չէ մեր ազգային բանաստեղծը, ինչպես սովորաբար ընդունվում է: Ազգի իրական կամ ենթադրական վշտերն ու տենչերը երգողը չէ ազգի բանաստեղծը, այլ նրա ոգու, նրա աշխարհըմբռնման և աշխարհզգացման արտահայտողն ու բյուրեղացնողը: Մեր ազգային իսկական բանաստեղծը Յովհաննեսն է: Նա մեր գրականության անմահ փառքն է:

Յովհ. Թումանյանը մեծ հմայք և մեծ ժողովրդականություն ունի Անդրկովկասի ժողովուրդների մեջ: Այսօր վեճ կա Չայաստանի և Վրաստանի միջև, թե որի՞ն է պատկանում Յովհաննեսը: Կովկասյան երեք հանրապետությունների մտավորականների հանդիպման պահերին հանդես չի ավարտվի առանց ոգեկոչելու Յովհաննեսին: Նա կովկասյան ժողովուրդների եղբայրությունը զոդող սիմվոլներից մեկն է:

Նա առաջիններից եղավ, որ քաջամարտիկ կանգնեց խորհրդային Չայաստանի կողքին: Պայքարեց նրա թշնամիների դեմ, խորապես համոզված լինելով, որ Չայաստանը խորհրդայնացումի փաստով դուրս եկավ արյունոտ վիրապից, ընկերացավ ռուս մեծ ժողովրդին և զինվորվեց մեծագույն գաղափարին՝ սոցիալիզմին:

Նա եղավ «Չայաստանի օգնության կոմիտեի» գաղափարի հղացողներից և իրականացնողներից մեկը: Բարձրացրեց իր հուժկու և ազդու ձայնը խորհրդային Չայաստանի պաշտպանության համար: Սակայն, դժբախտաբար, այնպես վաղահաս բաժանվեց նա մեզնից, և նրա տեղը թափուր է մինչև այսօր...

«Անուշ» օպերան, որ կիրակի օրը պիտի ներկայացվի, իրեն՝ Յովհաննեսի շատ սիրած լիրիկո-հովվերգական պոեման է: Իր հայրենի չքնաղ Լոռվա նահապետական ժողովրդի կենցաղը, ավանդությունները, և հողն ու ջուրը՝ երգված մեծագույն վարպետությամբ, ոգևորությամբ, տրամադրությամբ:

Գաղթահալության համար տեսնել «Անուշ» օպերան, կնշանակե, վերապրել մանկությունը, մեր հայրերի կյանքը, սրտաբուխ երգերը, կարոտն առնել մեր քաղցր և թանկագին հայրենիքի:

1931թ.

ՀՈՎՋԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՅՎԱՆ 15-ԱՄՅԱԿԻՆ

Թեև շատ վաղուց չէ, որ մեր նորագույն գրականության փառքը՝ Յ.Թումանյանը, թողել է մեզ, բայց արդեն դարձել է նա առասպել, լեգենդ: Որովհետև առասպելական էր նրա էությունը, նրա առօրյան, նրա ամեն մի խոսքը, նրա ամեն մի արտահայտությունը:

Որովհետև նա իր տարերային, իր կոսմիկային հոգով նախապատմական դարերի՝ քարե կամ բրոնզե դարաշրջանի, մի տեսիլ էր ներկա ժամանակների վրա: Եվ այսպիսով, հավատալս չի գալիս, թե մեզ հետ ապրել է նա, թե ընկեր են եղել նրան, պատանեկական իմ տարիներից սկսած, աղ ու հաց ենք կերել, թափառել ենք միասին, երազել, ոգևորվել: Յ.Թումանյանը ծնվեց չքմաղ Լոռվա մերշնչող լեռներում, մի հիմ նահապետական ընտանիքում, որի նախահայրերը եղել են ծորերի և ամտառների քաջ որսկաններ՝ կռիվների մեջ եփված իգիթ հովիվներ:

Նա մեծացավ մի մթնոլորտի մեջ, որ հոմերական է, դյուցազնական մի աշխարհում, ուր ամեն մի խորշը ավանդական է:

Լոռին՝ հեքիաթի աշխարհ, ուր անտառը ունի իր ջահապետը, որ հսկում է եղնիկներին, այրերը լիքն են դևերով ու չարքերով, գետերը՝ կախարդիչ ջրի-հարսներով, – և այս ամենը բաց աչքով «տեսել է» լռեցիկ, իբրև ականատես պատմել է մանուկ Հովհաննեսին:

Հորձանուտ Դեբեդ գետի հիմ կամուրջների վրա նստոտում են թափառական գուսանները և գեղջուկ ուղևորներին պատմում են ու սագերգում մարդկանց և դևերի միջև եղած կռիվները, քաջ հովիվների և թագավորի աղջիկների սիրային վեպերը, նաև ժողովրդի ծոցից պոռթկած կտրիճ ըմբոստների, Չոփուռի տղաների նոր կռիվները հարստահարող թագավորների դեմ, կառավարության բռնակալ և կեղեքիչ պաշտոնյաների դեմ:

Եվ այս բոլորը բոցավառեց Հովհ. Թումանյանի երևակայությունը: Եվ այս ամենը զգաց, ապրեց Հովհաննեսը, երգեց ու դյուցազներգեց մեր ժամանակում, ինչպես պիտի երգեր ու դյուցազներգեր հսկաների և դևերի ժամանակում, վագրի մորթը ուսին, աղելար բամբիռ ձեռքին, իբրև թափառական գուսան, վիպերգելով հերոսների և հսկաների հզոր սերն ու աննահանջ քաջությունները:

Նրա կախարդական գրիչը, ուր որ դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշքը՝ լինի առակ թե քառյակ, հեքիաթ թե պատմվածք, հովվերգություն թե վիպագրություն:

Կենդանի լեզու, ժողովրդի անսպառ, դարավոր գանձարանից

հանած, կարմիր արևի տակ աճած լեզու, – առողջ, հարազատ և մշակված, բյուրեղացած ժողովրդական ոճ ու ոճավորում:

Թումանյանով ամբողջացավ, լրացավ և գլխավորվեց մի աշխարհի, դյուցազնական, նահապետական հիմնադրված աշխարհը, մի հիմնավոր ժողովուրդ իր սովորություններով ու ավանդներով, իր մշակույթով ու կենսահայացքով, իր աշխարհնախադրումով և իր ցավերով, իր հույսերով և պայքարով: Թումանյանը համադրույթն եղավ, սինթեզը՝ նահապետական Հայաստանի: Նա եղավ մեզ համար այն, ինչ որ եղավ Պուշկինը ռուսների համար, Միցկևիչը լեհերի համար:

Մեծ է նաև կատարած նրա քաղաքական դերը:

Կովկասյան ժողովուրդների եղբայրացման ջատագովներից ամենից մեծն եղավ նա իր հզոր խոսքով և օրինակով: Եվ, որպես այդպիսին, անմոռանալի պիտի մնա նրա հոյակապ պատկերը:

Նաև նա առաջիններից եղավ, որ ողջունեց Կովկասի խորհրդայնացումը, և քաջամարտիկ կանգնեց խորհրդային Հայաստանի կողքին, պայքարեց նրա թշնամիների դեմ, խորապես համոզված լինելով, որ Հայաստանի խորհրդայնացման փաստով դուրս ելավ սպառվող Հայաստանը արյունոտ վիրապից և ընկերացավ ռուս մեծ ժողովրդին և Միության բոլոր ժողովուրդներին, զինվորագրվելով մեծագույն գաղափարին՝ սոցիալիզմին:

Եվ այսօր, նորից ու նորից, խորհրդային Հայաստանը, մեր բովանդակ հասարակությունը բերում է իր մշտավառ սերն ու երախտագիտական պրտաբուխ տուրքը մեր մեծագույն բանաստեղծի անմահ հիշատակին և հպարտ է ու խանդավառ նրա՝ մեզ թողած հավերժական ժառանգությամբ:

1938թ.

ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Գևորգյան ճեմարանում աշակերտ եղած ժամանակ՝ 1892 թվին, մի բարեկամ ուղարկել էր ինձ Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունների առաջին հատորից մի քանի օրինակ, որ վաճառեի ընկերներիս մեջ:

Նույն թվի աշնանը, երբ Թիֆլիս էի, գնացի Թումանյանի մոտ վճարելու գրքի գինը և այդ առիթով ծանոթանալու նրա հետ:

Ներկայացա նրան: Նա պաշտոն ուներ Կովկասի հայոց հրատարակչական ընկերության մեջ. ի՞նչ էր պաշտոնի անունը՝ չեմ հիշում, սակայն միշտ ընկերության գրասենյակում էր: Նա քաղցրությամբ ըն-

դունեց ինձ, հարցրեց, թե ի՞նչ տպավորություն է թողել գիրքը աշակերտների վրա:

Մեր ուսուցիչ-բանաստեղծ Յովհաննես Յովհաննիսյանի համեմատությամբ առաջին գիրքը մենք գտել էինք թույլ, բայց զգացել էինք տաղանդի շունչը:

- Մենք շատ սիրեցինք ձեր պոեզիայի ժողովրդային տարերքը,- պատասխանեցի ես և արտասանեցի, իբրև ապացույց, որ սիրում ենք, մի երկու ոտանավոր այդ ոճով գրածներից:

Թումանյանն ուրախ ժպտաց և իսկույն նվիրեց ինձ բանաստեղծությունների երկրորդ հատորը, որ նոր էր լույս տեսել:

Առաջին հանդիպումով շատ հաճելի տպավորություն ստացա Թումանյանից: Վարմունքը պարզ էր և ընկերական: Նրա դեմքը ողողված էր, կարծես, մի ներքին լույսով: Փարթամ մազերով, աչքերը խոր ու խոհուն: Ժպիտը միշտ ներկա էր դեմքի վրա: Հագիվ քսան և չորս տարեկան էր, ուրախ, զվարթ, երիտասարդ:

Հաջորդ այցելությանս արտասանեցի անգիր արած մի քանի ոտանավոր նոր հատորից:

- Վա՛հ, - բացականչեց նա, - ի՞նչ լավ հիշողություն ունեք: Ես իմ գրածներից ո՛չ մի տուն չեմ հիշում:

Հետագա հանդիպումներին սիրտ արեցի, հայտնեցի՝ թե ես էլ եմ ոտանավոր գրում:

- Զգում էի,- ասաց նա,- խնդրեմ մեկ բերեք տեսնեմ:

Ոտանավորներիցս ընտրեցի մի տասը-տասնհինգ հատ և հանձնեցի նրան: Օրեր անցան, սպասում էի, որ կարծիք հայտներ դրանց մասին, բայց նա լռում էր: Մտածեցի, որ չի հավանել և երբեք էլ չի տաքորվեցի: Թումանյանի մոտ ժանոթացա Ղազարոս Աղայանի հետ, որ գալիս էր հայրական գյուղից, ուր նա ապրում էր այդ ժամանակ: Հաստ պալտո հագած, վալենկաներով, կալոշներով, գյուղից՝ ուղղակի Օհաննեսի մոտ: Նրանք ջերմաջերմ գրկախառնվեցին, համբուրվեցին, կարծես երջանկացան իրար տեսնելով: Շատ մեծ էին նրանք իրար. երկուսն էլ միևնույն ատաղձից, հայ ժողովրդի նյութից կերտած և միևնույն ոճով ձևավորված: Նաև մեծ մտերմություն տեսա նրանց միջև, իսկ հետագա տարիներում համոզվեցի, որ ամբողջ աշխարհում նրանք իրար ամենամոտ մարդիկ են: Օհաննեսը նրան կոչում էր «Ասլան ապեր», նա էլ Օհաննեսին՝ «Ասլան բալասի». հետո, երկուսով ծիծաղելով, ասում էին. «Էլ ո՞վ կարող է մեզ հաղթել»:

1895 թվի ձմեռնամուտին Օհաննեսը երևաց Ալեքսանդրապոլում: Իջել էր հյուրանոց. ես տեղափոխեցի մեր տուն: Մի շաբաթ մնաց

Ալեքսանդրապոլում: Գալիս էր Թիֆլիսից Ախալցխայի և Ախալքալաքի վրայով, գնում էր Երևան, Էջմիածին: Ինչ-որ միսիայով էր շրջում նա: Հայ կյանքը ալեկոծված էր արևմտահայերի ջարդերի սարսափելի լուրերով և ջարդերին ականատես, փախած հայ գաղթականների սրտակեղեք պատմություններով: Ամեն գիտակից հայ ծանր մտահոգություններ ուներ արևմտահայերի և հայկական հարցի ճակատագրի նկատմամբ: Անշուշտ, Օհաննեսի ուղևորությունը կապված պիտի լիներ այդ դրության վերաբերյալ գործերի հետ: Այդ օրերից անցել է ավելի քան 50 տարի և մոռացել են, թե ի՞նչ էր Օհաննեսի դերը այդ գործերի մեջ, թեև նա անվերջ տեսակցությունների մեջ էր քաղաքի ինտելիգենցիայի և հասարակության ներկայացուցիչների հետ, հետաքրքրվում էր գաղթականների վիճակով և տեսրակներ էր լեցնում նրանց պատմածներով:

Այդ օրերից մնում է ինձ մոտ մի թանկագին հիշատակ, մի թղթի կտոր՝ Օհաննեսի ձեռագիրը՝ «Երկու սև ամպ» բանաստեղծությունը, որ նոր էր գրել:

Զմեռվա ցրտերին Օհաննեսին ճանապարհ դրինք Երևան:

1896 թվի գարնանը Թիֆլիսումն էի: Այդ ժամանակ նոր էի ծանոթացել Դերենիկ Դեմիրճյանի հետ, որ Ներսիսյան դպրոցի աշակերտ էր: Մի երեկո նրան տարա Թումանյանի մոտ. Օհաննեսն արդեն կարդացել էր «Մուրճ» ամսագրում տպված նրա բանաստեղծությունները և գովեստով արտահայտվեց դրանց մասին: Խոսեցինք գրական նյութերից, ապա Օհաննեսը կարդաց «Մծիրի»-ի իր նոր կատարած թարգմանությունը, որը մենք հավանեցինք՝ մեկ-մեկու նկատողություններ անելով:

Դերենիկը գնաց: Ես գիշերեցի Օհաննեսի մոտ: Տխուր շրջան էր. ցարական հայահալած քաղաքականությունը չարագին բնույթ էր ստացել, կառավարությունը փակել էր հայոց դպրոցները, իրար ետևից փակում էր հայ թերթերը, գրադարանները և կուլտուրական հիմնարկները. բանտերը լցվել էին արևմտահայերի ազատագրական շարժման համակրողներով. բանտարկված էին Ղ.Աղայանը, Շիրվանզադեն:

Ուշ գիշեր էր, երբ պատրաստվեցինք քնելու: Օհաննեսը լամպը ձեռքին կանգնել էր անկողնուս մոտ:

– Այ տղա, շատ մի՛ տխրիր, վերջը լավ կլինի: Հայ ժողովուրդը ավելի ծանր օրեր է տեսել: Մի՛ հուսահատվիր, էս էլ կանցնի:

Առհասարակ լավատեսությունը գերակշռում էր Օհաննեսի հոգում. ընկձվածությունը մի վայրկյան էր նրա մոտ: Հավատով էր մեր ճակատագրի հանդեպ և պայծառ հեռանկարներ էր տեսնում հայ

ժողովրդի առաջ:

Այդ հավատը վարակեց ինձ, ես թեթևացած կարողացա քնել:

1898 թվի սկզբներին, ցարական ժանդարմերիայի կարգադրությամբ, ես մի տարով աքսորվում էի Օդեսա քաղաքը: Աքսոր գնալիս, ճանապարհին կանգ առա թիֆլիս և անմիջապես գնացի Օհաննեսի մոտ: Արդեն օրենք էր դարձել, որ թիֆլիս գտնվելիս անպատճառ պիտի լինեի նրա մոտ, գրեթե ամեն օր:

Երեկոյան բավական հյուրեր եկան և մեկնեցին ուշ գիշերին. երբ մնացինք մենակ, Օհաննեսը կարդաց «Դեպի անհունը» պոեմը, որ վաղուց էր գրել: Հիմա վերամշակել էր, տակավին ոչ վերջնականապես: Ասում էր, որ պոեմի նյութը վավերական է, ճշգրիտ իրողություն: Անհանգիստ գիշեր ապրեցի: Երևակայությունս հուզված էր և անհեթեթ երազներ տեսա: Առավոտյան երազներս պատմեցի Օհաննեսին: Նա էլ թե՛ սա լավ նշան է, որ պոեմս ազդեցություն է թողնում, բայց իմ պոեզիայի ոճին չի բռնում: Խորթ զավակ է այս պոեմն ինձ համար, նյութն էլ, գրելածն էլ: Բայց թող լինի, իմանան, որ ֆուլկլորից դուրս էլ կարող եմ բան գրել:

Այս միամիտ բացատրությունը շատ զվարճացրեց ինձ:

1899 թվին աքսորից վերադարձիս մի քանի օրով մնացի թիֆլիսում, եղա Օհաննեսի մոտ: Օհաննեսին գտա շատ ընկճված, շատ տխուր: Նոր էր դարձել Դսեղ գյուղից, ուր գնացել էր հոր հուղարկավորությամբ: «Սիրելի հորս թաղեցի: Սրանից ավելի ի՞նչ մեծ վիշտ կա՝ սիրածին թաղել...», – խորին թախծությամբ ասաց նա:

Օհաննեսը շատ էր սիրում հորը և միշտ էլ մեծ հիացմունքով էր խոսում հոր մասին: Տարիներ հետո էլ առանց աչքերը արցունքով լցվելու չէր կարող խոսել նրա մասին:

Գիշերը մնացի մոտը, և մինչև ուշ գիշեր պատմում էր հանգուցյալ հոր բարությունից, ազնվությունից, առաքինությունից:

Օհաննեսը կենտրոնաձիգ անձնավորություն էր՝ հյուրասեր, մարդամոտ: Զրույցի համար հոգի էր տալիս: Օրվա որ ժամին գնայիր նրա մոտ, ձեռքի գործը կթողներ և, ժպիտը դեմքին, կնստեր զրույցի:

Ղ.Աղայանը, Դ.Դեմիրճյանը, ես և մեր մյուս ընկերները կանոնավոր կերպով շաբաթը մեկ-երկու անգամ հավաքվում էինք նրա մոտ, իրար տեսնելու և զրույց անելու: Այսպիսով, նրա տունը դարձել էր մեր

հավաքատեղին: Թեյ էինք խմում, ընթրում, խոսում: Չմեռը վառվռում բուխարիկի շուրջը նստած՝ կատակում էինք, անվերջ զրույց անում, խոսում, վիճում:

Առաջին խոսքը պատկանում էր Ղ.Աղայանին, որին Նահապետ էինք անվանում: Գրականության Նահապետ: Նրան հարգում էինք բոլորս և սիրում: Ուշադրությամբ էինք լսում նրա կարծիքները, դիտողությունները: Մեր երեկույթներին, զիջելով մեր թախանձանքներին, Աղայանը երգում էր սիրած Բյուրոլու ասպետական երգերը, իրեն՝ Աղայանի հայացրած թարգմանությամբ: Պարթև հասակով կանգնում էր նա, հուժկու ձեռքերը շարժելով, բամբ ձայնով կատարում էր Բյուրոլին:

Ընթերցում էինք մեր նոր գրած բաները, քննադատում, կարծիքներ փոխանակում: Խոսում էինք հայ, ռուս և օտար գրական նորությունների մասին, հաղորդում իրար մեր տպավորությունները:

Ի՞նչ նյութերի շուրջը ասես՝ չէր դառնում մեր զրույցը: Խոսում էինք հասարակական և քաղաքական երևույթների մասին: Խոսում էինք ազգերի պատմություններից, ժողովուրդների կյանքից, արվեստներից, փիլիսոփայությունից և մանավանդ գրականությունից: Կարդում էինք դասական հեղինակներից՝ արևմուտքի և արևելքի, նույնպես նոր հեղինակների գործերը: Մեզնից յուրաքանչյուրը իր սիրած հեղինակն ուներ, որ ի մի գումարած ընդգրկում էր վերջի և վերջո գրեթե բոլոր հանճարները: Կարդում էինք ժողովուրդների ֆոլկլորից և հիանում էինք ժողովուրդների անկեղծ ստեղծագործություններով՝ ռուսական բիլինաներով, սերբական պոեմներով, մեր Սասունցի Դավթով և շատ ուրիշներով: Մեր բոլորի սիրածն էր Սայաթ-Նովան, որին բարձրացրինք հանճարների դասին, ունեցանք պաշտամունք նրա հանդեպ, մեր բոլոր խնջույքներում երգում էինք նրա տաղերը, որոնք գրեթե մոռացված էին: Վստահ կարող ենք պարծենալ, որ մենք վերակենդանացրինք նրան, տարածեցինք նրա համբավը և արժարծեցինք նրա երգերը:

Ինքնաբերաբար մեր հավաքույթների առաջին շրջանում, լուրջ թե կատակով, փափագ զարթնեց մեր գրական խմբակին, մեր հավաքույթներին անուն տալ: Օհաննեսն ասաց, թե Գոնկուր եղբայրներն իրենց գրական խմբակն ունեին (որի անդամներն էին՝ Էմիլ Զոլա, Ալֆոնս Դոդե, Տուրգենև, Զյուսիմանս...), որ հավաքվում էր Գոնկուրների տան վերնահարկում, որին «Ամբար» անունն էին տալիս: Նույն նմանողությամբ, չեմ հիշում ում կողմից, առաջարկվեց «Վերնատուն» անունը. իսկույն հավանություն տվինք, գտնելով այն շատ պատշաճ և տեղին, որովհետև Օհաննեսի բնակարանը այն ժամանակ չորրորդ հարկում էր: Կնքեցինք «Վերնատուն» անունով

մեր հավաքույթների վայրը:

Այդ անունն այլևս ընդմիջտ կապվեց մեզ հետ և քաղաքացիություն ստացավ: Հասարակության մեջ պարզապես կիրառվում էր՝ «Վերնատան անդամները»:

«Վերնատունը» երբեմնակի հյուր էին գալիս գրողներ, արվեստագետներ, պատմաբաններ, լեզվաբաններ կամ գրականասեր մարդիկ՝ Պ.Պռոշյանը, Մուրացանը, Վ.Փափազյանը, Կոմիտասը, նկարիչներ՝ Գ.Բաշինջադյանը, Փ.Թերլեմեզյանը և շատերը:

Անմոռանալի գեղեցիկ ժամեր ենք անցրել «Վերնատանը», իմաստավորված, բովանդակալից, ներշնչող պահեր:

«Վերնատունը» ապրեց 7-8 տարի: Անդամների բացակայության և ցրվածության հետևանքով նա դադարեց գոյություն ունենալուց 1906-7 թվականներին:

«Վերնատանը» տեղի ունեցած զրույցներից հիշում եմ Օհաննեսի մի քանի խոսքերը գրականության մասին.

– Իզուր ջանք է՝ անտաղանդ մարդկանց օգնել՝ գրող դառնալու համար: Իր եղջյուրները պախրան ինքը պիտի շինե:

– Ո՛չ մի քննադատ չի կարող իմ լավ ոտանավորը վատացնել և վատ ոտանավորը՝ լավացնել:

– Բանաստեղծությունը չի գրվի հանգով ու վանկով, այլ սրտով և զգացմունքով:

– Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունն ունի:

1901 թվի սեպտեմբերին Օհաննեսը Ալեքսանդրապոլ եկավ Աբասթունանից, ուր նա բժշկվում էր: Ճանապարհին կանգ էր առել Ախալքալաքում, այցելել էր Փարվանա լիճը, որի հայտնի լեգենդի մասին վաղուց ի վեր մտորում էր: Լսել էր Թմկաբերդի լեգենդը: Չէր կարողացել գնալ բերդը տեսնելու, սակայն Աբուլ լեռան լանջերից դիտակով նայել էր բերդին, որի բուրգերը հեռվից աղոտ ուրվագծվում էին:

Խանդավառ խոսում էր Փարվանայի ու Թմկաբերդի լեգենդների մասին. Նրա երևակայության մեջ կամաց-կամաց կենսագործվում էին այդ չքնաղ պոեմները:

Հիշում եմ այսօրվա պես, որ նա «Թմկաբերդի» նախերգանքի առաջին փորձը արտասանեց՝ մեծ հիացմունք պատճառելով ինձ:

Ալեքսանդրապոլում, իրար ողջագուրելուց անմիջապես հետո, Օհաննեսն ասաց.

– Անիում դեռ չեմ եղել, շատ եմ ուզում տեսնել, անպատճառ գլուխ բեր էդ բանը, շատ եմ խնդրում:

– Աչքիս վրա, դրանից էլ հեշտ բան ի՞նչ կա:

Մի երկու օր անց բանաստեղծ Յովհաննես Կոստանյանի հետ, որն իմ մորաքրոջ որդին էր, ճանապարհ ընկանք դեպի ԱՄՆ: Կանգ առանք մեր տանը՝ Ղազարապատ գյուղում, հանգստանալու և մորս տեսնելու:

Օհաննեսը մեր ջրաղացի վարպետին և գյուղացիներին, որոնք հեքիաթներ և ժողովրդական երգեր գիտցողներ էին, հարցնում էր «Հազարան բլբուլի» մասին, գիտեի՞նք արդյոք, և ուրիշ ֆոլկլորի նյութերի մասին: Ժամերով զրույց էր անում նրանց հետ և լսածները գրում տետրակի մեջ:

Երկու գիշեր միայն կարողացանք մնալ մեր տանը: Օհաննեսը անհամբեր էր, ուզում էր շուտով տեսնել ԱՄՆին:

Մեր գյուղից մինչև ԱՄՆի հագիվ 25 կիլոմետր լիներ:

Այցելեցինք Յոհաննեսի նշանավոր վանքին, որի նախագավիթը սքանչելի է: Յովհ. Կոստանյանը մեզ նկարեց Աշոտ Ողորմած թագավորի դամբարանի աջ-ձախ կողմում կանգնած:

Մտնեմունք ենք ԱՄՆի հոյակապ պարիսպներին և բուրգերին. Օհաննեսը հուզված է, ոչինչ չի ասում, միայն արագացնում է քայլերը, հայացքը շարունակ պարիսպներին:

– Ի՞նչ ես շտապում, – ձայնում են ես, – Սմբատ թագավորը դեռ քո գալու մասին լուր չունի:

Օհաննեսը դառնում, խոժոռ նայում է ինձ և լայն քայլեր նետում:

Օհաննեսը մտածում էր մի դրամա գրել ԱՄՆի կյանքից. նյութը Յովհաննես-Սմբատ Բագրատունի «թանձրամիտ ու թանձրամարմին» թագավորն էր, որ իմաստունի համբավ ուներ:

Ես դրա մասին էի ակնարկում, որ Օհաննեսին տհաճություն պատճառեց:

Վերջապես ավագ դռան առաջն էինք...

Օհաննեսը կանգնեց և ուղղակի բեռովեց իր տեղում: Երկար, լռելյայն նայեց և, գլուխը շարժելով, դարձավ դեպի մեզ:

Արդեն մութն էր, որ հասանք վանահայր վարդապետի բնակարանը, որն այցելողների հյուրանոցն էր միաժամանակ: Մի սարսափելի ճիչի հետ մթության մեջ պայթեց հրացանը, որի գնդակն ուղղակի անցավ մեր երեքիս առաջով, եթե մի քայլ առաջ լինեինք, ով գիտե ինչ պիտի լիներ մեր վիճակը:

Պարզվեց, որ վանահայրը բացակա է, և ծառան վախենալով, թե եկողները ավազակներ են, դիմել է անտեղի ինքնապաշտպանության:

– Տո՛, – ասաց Օհաննեսը ծառային՝ բերդանկա հրացանը տեսնելով, – մի գյուղով երեք բանաստեղծ պիտի սպանեի՞ր:

– Լավ պրծաք, ըսել է՝ ձեր վերջը չէր եկել, – ամենայն անտարբերությամբ պատասխանեց ծառան:

Վաղ առավոտից սկսեցինք թափառել պանծալի ավերակների մեջ:

Օհաննեսը հիացնումնքով և ուշով դիտում էր ամեն մի բեկոր՝ արվեստի կնիք կրող: Լուռ, մտասուլյզ թափառում էր՝ անցյալի հետ ներքին խոսակցությամբ տարված. կանգնում էր հրաշակերտ շենքերի առաջ, հայացքը լարած նայում էր սյուներին, կամարներից, քանդակներին, ապա աչքերը գոցում ու ականջները լարում, կարծես մի երաժշտություն էր լսում՝ ո՛չ սովորական, ո՛չ այս աշխարհից:

Անին իր վեհասքանչ ճարտարապետությամբ շատ մեծ տպավորություն թողեց Օհաննեսի վրա: Երբ մեկնում էինք Անիից և պարիսպներից դուրս էինք արդեն, Օհաննեսը վերջին անգամ նայեց Անիին և ասաց.

– Ինչքա՛ն մարդ պիտի անբան-անասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա:

– Մի՞ թե այս գեղեցկությունը պիտի մեռնի առանց հետք թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա:

– Այսօր զարգացման ի՛նչ աստիճանի հասած կլինե՞ր մեր արվեստը, եթե թուրք, թաթար ցեղերը չբայքայեին մեր ժողովրդին:

1903-4-5 թվականները հայ ժողովրդի համար ծանր տարիներ էին: Ցարական հայահալած քաղաքականությունը ավելի խստացված շարունակվում էր: Փոխարքա իշխան Գալիցիոնը, հայերին ատելու մեջ ինքնամոռացության հասած՝ անվերջ չարիքներ էր նյութում հայ ժողովրդի դեմ:

Ցարն ու իր ռեակցիոն չինովնիկները հայկական դպրոցներն ու կուլտուրական հիմնարկները փակելուց չհագեցած, բռնի խլեցին հայ եկեղեցու բոլոր կալվածքները, որ դարերով նվիրված էին հայ ազգի կողմից էջմիածնի ու կաթողիկոսության պահպանման համար և հոգալու հայ ժողովրդի կրոնական ու կրթական կարիքները:

Հայ ժողովուրդը, ամենուրեք, զենքը ձեռքին դիմավորեց հափշտակիչներին և երկուստեք արյուն հոսեց: Բանտերը լցրին հազարավոր հայերով, և ձեռք զարկեցին մի դիվական գործի՝ թուրք մասսաները գրգռեցին և զինեցին հայերի դեմ... սկսվեցին հայ-թուրքական արյունոտ կռիվները... Օհաննեսը ամբողջ էությամբ կլանված էր մի կերպ վերջ դնելու այս անմիտ եղբայրասպանությանը, որ ծանայում էր միայն ցարերի բռնակալության հարատևման գործին: Այդ ժամանակներին էր, որ նա հայ զինված գյուղացիների գլուխն անցած, Լուռում, գնում է հարևան թուրքերի մոտ և հաշտության դաշն կնքում, որով այդ շրջանի խաղաղությունը պահպանվում է:

Այս տարիներին ես հաճախ հանդիպում էի Օհաննեսին Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում:

1906 թվին, ամռանը, հուլիսին, գնացի Դսեղ գյուղը՝ Թումանյանի մոտ հյուր: Նա ամբողջ ընտանիքով Դսեղումն էր: Ապրում էին պապենական հին տան մեջ, որի վրա նա փայտաշեն մի հարկ էր կառուցել:

Մեծ ընտանիքը կառավարում էր Օհաննեսի մայրը՝ պատկառելի Նանին, շերտեր ձեռքը, իբրև իշխանական գավազան, հրամայում էր մեծին ու պստիկին: Առավոտից մինչև ուշ երեկո ծուխ էր բարձրանում Օհաննեսի երդիկից. ամբողջ օրը թոնիրների ու օջախների մեջ կրակ կար, նրանց վրա եփվում էին կերակրի կաթսաները:

Լոռումն են. Սարոյի, Սաքոյի, Անուշի հայրենիքում. Օհաննեսի հետ, նրա հարկի տակ: Ի՛նչ կար ավելի քաղցր, քան այդ ժամերը: Օհաննեսի հետ շրջում ենք Դսեղ գյուղում, նրա շրջակայքը: Հին, հնադարյան գյուղ է Դսեղը, ամեն կողմ անցյալի բեկորներ: Գնում ենք գերեզմանատունը, այցելում ենք Օհաննեսի հոր շիրմին: Օհաննեսի աչքերն արցունքոտվում են. ութ տարի է անցել հոր մահից, բայց վիշտը չի անցել: Եվ նորից, նորից պատմում է նա ինձ իր սքանչելի հոր մասին: Ազնվական, բարի, սիրող սրտով մարդ, բանաստեղծական հոգով:

«Ինչ որ կա իմ մեջ լավ բան՝ հորիցս է», – ասում է նա:

Գնում ենք բարձրաքարշ Ս.Գրիգորի հոյակապ վանքը տեսնելու, մեր միջնադարյան ճարտարապետության մի փառավոր կոթող:

Գնում ենք լիճը տեսնելու, որ դսեղցիք, լոռեցուն հատուկ հիպերբոլով, ծով են կոչում: Բարձրանում ենք մի գառիվեր, որտեղից սկսվում են Մարցի չքնաղ անտառները:

Օհաննեսի մանկության և խաղերի վայրերն են սրանք:

Ամեն կողմից դեպի երկինք են մխրճվում լեռնագագաթները. լանջերը՝ անտառապատ, բարձր ժայռերի վրա հսկա ծառեր կան, ավելի բարձր՝ արծվի բները: Չորակներից ծուխ է բարձրանում. հովիվների բինաներն են, ուր ապրում են աժդահա սաքոները:

Օհաննեսը ցույց է տալիս լեռները. ահա Չաթինդաղը, որի գլխին մշտապես հավաքվում են մթին ամպեր, և ամեն օր որոտ ու կայծակ կա: Ահա՛ Քոչաքարա սարը, որ լիքն է եղնիկներով, որոնց ետևից մանուկ Օհաննեսը վազել է օրնիբուն:

Գյուղի շուրջը բազկատարած շառաչում են «կանաչ, վիթխարի ընկուզենիները». և արդյոք որի՞ տակ Օհաննեսն օրինություն ստացավ գյուղի մեծերից:

Չիեր նստած թափառում ենք Լոռվա գյուղերը: Գնացինք Օծուն, Սանահին, Հաղպատ և այլուր:

Շրջեցինք գրեթե Լոռվա մեծ մասը:

«Մի գրողի ճանաչելու համար պետք է լինել նրա հայրենիքում», –

այսպիսի մի միտք է հայտնել Գյոթեն:

Լոռին նահապետական մի ինքնամփոփ աշխարհ է. հեքիաթի, առասպելի մի վիպաշխարհ, դյուցազնական աշխարհ. նրա ամեն մի անկյունը՝ ավանդավեպ, ամեն մի քարը՝ խոսող հերոսական անցյալից:

Ահեղագոչ Դեբեդ (Դև-բեդ) գետի հին կամուրջի վրա ահա՛ նստել է մի գուսան՝ մի աշուղ և պատմում է ու սագերգում դևերի և մարդկանց միջև եղած հին կռիվների, նաև ժողովրդի ծոցից դուրս պոռթկած կտրիճ ըմբոստների նոր կռիվները հարստահարող թավաղների դեմ, կառավարության բռնակալ և կեղեքող պաշտոնյաների դեմ:

Օհաննեսը գուսանի բերանից առնում է խոսքը և ոգևորված պատմում է ինձ Չոփուռի տղոց պատմությունը: 80-ական թվականներին հարստահարող կալվածատերերի դեմ ըմբոստանում է Չոփուռենց տղոց մեծ եղբայրը՝ Սողոմոնը, սպանում է թավաղին և երեք եղբայրների հետ դաշաղ է ընկնում սարերը: Նրանց միանում են ուրիշ դժգոհներ, կտրիճներ: Տարիներով ցարի կառավարությունն իր ստրածնիկներով, կազակներով չի կարողանում նրանց բռնել:

Օհաննեսը պատանի հասակից տենչացել է գրել մի պոեմ՝ նրանց հերոսական կռիվների մասին. «Յառաչանք» պոեմի զարմանալի գեղեցիկ հատվածն այդ չիրականացված պոեմի թանկագին մնացորդն է:

Քաջությունը, իգիթությունը լռեցու հատկություններն են: Օհաննեսի նախահայր պապը Լոռվա ձորերի և անտառների նահապետ քաջ Յովակիմն է՝ Մեիրաբյան-Թումանյան Յովակիմը, որի մասին հոմերական ոճով գրում է Խաչատուր Աբովյանը:

Մի հսկա, ժայռեղեն տղամարդ, որը պաշտպանում է Լոռին անթիվ հաղթանակող կռիվների մեջ, լեզգիների և ղզլբաշների ավարառու, ավերող արշավախմբերից:

Ինքը՝ Օհաննեսը, քաջ մարդ էր, լավ հրացանածիգ, որսկան:

Երբ շրջում էինք գյուղերում, բոլոր գյուղացիք ճանաչում էին Օհաննեսին և խորին հարգանքով վերաբերվում դեպի նա: Օհաննեսը գրեթե ճանաչում էր բոլորին, մանավանդ տարեց լռեցիներին, զրույց էր անում նրանց հետ, կատակում Լոռվա համով-հոտով բարբառով:

Գիտեր նրանց շատերի կենսագրությունից դեպքեր, ծիծաղաշարժ անցքեր նրանց հովվական կյանքից, արջերի հետ ունեցած նրանց գոտենարտությունից:

Լոռում Օհաննեսն իր տարերքի մեջ էր: Այս հոյակապ բնության մեջ, այս՝ ավանդություններով, առասպելներով, հիշատակներով լի չքնաղ սարերում ու ձորերում նա բազմապատկվել էր կյանքով, ապրում էր ամեն մի քարն ու քուլը, ճանաչում էր ամեն մի խորշը, անտառը, աղբյուրը, որոնց հետ նվիրական հուշերով կապված էր իր մանկությունը

ու պատանեկությունը: Նա գիտեր նրանց մասին անթիվ զրույցներ, դեպքեր, դրվագներ և գիտեր բովանդակ Լոռվա հինավուրց և նոր պատմությունը բոլոր մանրամասներով:

Օհաննեսը ցույց տվեց բարձրագույն, վիթխարի ժայռերի մեջ այն քարայրերը, որտեղից վերջին տարիներս հայ հին ձեռագրեր հանցցին: Այդ ձեռագրերը մեր պապերը թուրքերի ավերումներից փրկելու համար թաքցրել էին անմատույց այրերի մեջ:

Դյուցազնական-մահապետական Լոռին իր շքեղ բնությունով, իր ավանդներով ու սովորույթներով, նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահայացքով, իր ցավերով, նաև իր պայքարով՝ ազատության և երջանկության համար, եղան Օհաննեսի ներշնչարանը: Այստեղից է հորդահոս գալիս Օհաննեսի ստեղծագործության աննախընթաց ժողովրդայնությունը:

Օհաննեսի լեզուն, ոճը, պայծառությունն այս չքնաղ երկրի անհուն, դարավոր ֆուկլորից է:

Օհաննեսը իր բոլոր հոգով, իր հոգու բոլոր կրքով ու կրակով սիրում էր Լոռին:

Այս հզոր սերը բոցավառեց, թևավորեց նրա երևակայությունը, գեղեցկացրեց նրա ստեղծագործությունները: Իր հրաշագեղ հայրենիքն իր աշխատող ու պայքարող ժողովրդով բանաստեղծորեն վերակառուցվեց նրա անմահ գործերի մեջ:

Ինչպես ասացի, Լոռին Օհաննեսի անհուն ներշնչարանն էր, ինչպես մեծահռչակ բանաստեղծ Միստրալի համար էր՝ խաղողի և ձիթենու այգիներով, հուռթի և հնազեղ հիշատակներով հարուստ իր Պրովանսը, որը նրա չքնաղ «Միրեյ» պոեմի մեջ, պրովանսական «Անուշի» մեջ մարմնացավ և անմահացավ:

Եվ միայն այս ճանապարհով է, ժողովրդային արվեստի ճանապարհով, որ անծուկ հայրենիքների և փոքր ժողովուրդների բուսահողից ծնված բանաստեղծները դառնում են համամարդկային մեծություններ, ինչպիսին են Միստրալը և Թումանյանը:

Եվ ինչպե՞ս Թումանյանը ներդաշնակվում էր Լոռվա պեյզաժին՝ բնանկարին, նրա մարմնից մարմին առած, նրա հոգուց հոգի առած: Կարծես Իրանի բանաստեղծ Հաֆեզն էր մտորում Շիրազի վարդաստաններում կամ Պուլկինն էր թափառում Ռուսաստանի բազմաշառաչ անտառների և ծավալուն գետերի եզերքներով:

Նա Լոռին սիրում էր այնպես, ինչպես սիրահար, ռոմանտիկ պատանին սիրում է իր երագների կույսին: Ո՛չ մի ձեռք չպիտի դիպչի նրան: Ո՛չ մի օտար շունչ, ոչի՛նչ չպիտի աղարտի նրա նվիրական կուսական գեղեցկությունը:

Եվ Օհաննեսը Ջոն Ռեոսկինի պես տխրում էր, որ երկաթուղի է

անցնում չքնադ ալպերի վրայով, Լոռվա ձորերով, կուսական անտառներով, որ տեխնիկան ոչնչացնում է նախակերտ բնությունը, ոչնչացնում է եղնիկներին, թռչուններին, հովվերգությունը, լուրությունը, խորհրդավորությունը...

Օհաննեսի մշտավառ երազն էր՝ Դսեղում կամ Լոռվա մի նկարչագեղ վայրում շինել մի վիլլա, գրադարանը տեղափոխել այնտեղ և բնական ու հոգեկան իր միջավայրում պարապել և ավարտել «Հազարան բլբուլը», «Սասունցի Դավթի» շարունակությունը:

Մենք թափառելիս կես-լուրջ, կես-կատակ, վիլլայի համար պատշաճ վայր էինք փնտրում:

Թումանյանի այս տենչը չիրականացավ քաղաքական հեղհեղուկ վիճակի և այլ պարագաների պատճառով:

1908 թվի դեկտեմբեր ամսին, ցարական ժանդարմերիան Օհաննեսին և ինձ ձերբակալեց և, զանազան հակապետական մեղադրանքով, վեց ամիս պահեց Թիֆլիսի Մետեխի բանտում: Կամերաներով դրացի էինք իրար: Բանտում լրացավ, փետրվար ամսին, Օհաննեսի 40-ամյակը: Այդ առիթով նա գրեց «Վայրէջք» գեղեցիկ բանաստեղծությունը: Մենք տխրության ու ուրախության խառն զգացմունքով տոնեցինք նրա տարեդարձը: Բանտում նա գրեց նաև հրաշալի «Մի կաթիլ մեղր» առակը:

1911 թվին, ամռանը ես ստիպված եղա փախչել արտասահման՝ ցարական հետապնդումներից ազատվելու համար: Թիֆլիսից դուրս եկա հունիսի վերջին, Ղազարոս Աղայանի թաղման օրը: Թաղումից հետո Թումանյանի հետ զնացինք իրենց մոտ:

Տխուր, սգավոր օր էր: Հավիտյան գրկվեցինք մեր սիրելի Նահապետից, ես էլ պիտի թողնեի հայրենիքս, և, թերևս, անդարձ: Աննկարագրելի են այդ հրաժեշտի ժանր վայրկյանները:

Արդեն ուշ գիշեր էր:

Վերջին անգամ մենք գրկեցինք իրար. երկուսս էլ լուռ էինք. ո՛չ մի խոսք:

Այս եղավ մեր վերջին տեսակցությունը...

Թումանյանը կյանքով բռնկված մարդ էր, մեծ տենպերամենտի տեր: Նրա էությունն ամբողջովին բաղձանք էր, տենչանք, ցանկություն: Նրա սիրտը անկուշտ էր և անհագ, ուզում էր ամեն բան ունենալ, ամեն բանի հասնել, ամեն տեղ լինել: Ուզում էր և գրել, և հասարակական ու քաղաքական գործիչ լինել, այն էլ, իհարկե, առաջին կարգի: Ամփոփվելու ժամեր չուներ, միշտ խճճված էր վեճերի, ժողովների,

քեֆերի մեջ: Հասարակությունը քաշում էր նրան դեպի իրեն, և ինքն էլ ձգտում էր դեպի նա, և բոլորվում էր նրա շուրջը: Հասարակության զարդն էր նա, խնջույքների, հրավերների հոգին, շողշողուն ջահը: Ամենուրեք թամադա էր նա՝ անգերազանցելի թամադա: Ամենից հարգված, ամենից սիրված էր նա: Ով որ նրան մի անգամ տեսներ, կուզեր շարունակ տեսնել: Նրա հետ լինելը, նրա զրույցները, կատակները, սրախոսությունները լսելը՝ գերագույն հաճույք էր: Ուր որ գնար, զվարճությունը հետն էր տանում. նրա հետ եղողը մոռանում էր, թե աշխարհում վիշտ ու ցավ գոյություն ունի:

Նա հարբեցնում էր խնջույքներին ո՛չ թե գինիով, այլ իր հունորով, իր կախարհիչ լեզվով, մտքի, խոսքի, ճաշակի հմայիչ գյուտերով: Թվում էր, թե Օհաննեսը իրեն բախտավոր պիտի զգար՝ ունենալով հասարակության հարգանքը, կանանց սերը, գրասեր երիտասարդության պաշտամունքը և փառք ու համբավ: Սակայն դժգոհ էր նա իրենից, իր վարած կյանքից: Նա ուզում էր գրել, ստեղծագործել էր ուզում նա: Ինչ որ տվել էր, համարում էր թույլ, թերի նախափորձ՝ ո՛չ իրեն հոգին բովանդակ արտահայտող: Ուզում էր գրել «Հազարան բլբուլ», ուր պիտի գեղեր իր էությունը: Արևելքի «Ֆաուստը» պետք է լիներ նա: Ուզում էր գրել «Արտավազդ» անունով մի դրամա՝ հայոց միֆական անցյալից, շեքսպիրյան համարժեքով: Ուզում էր գրել Սասնա ծռեր՝ ամբողջ էպոսը՝ Հոմերոսի կամ Ֆիրդուսու պես: Նա համոզված էր իր ուժերի կարողության մեջ: Բայց գրելու համար ժամանակ էր պետք, իսկ նա ժամանակ չուներ և, արդեն ժամանակի մասին գաղափար էլ չուներ: Ժամացույց չէր սիրում և չէր ուզում գործածել: Չէր սիրում չափված ժամանակով շարժվել: Երեխայի պես հավերժության ինքնազգացում ուներ և, ներկան միշտ ներկա, իսկ ինքը շռայլում էր թանկ ժամանակը և նրա հետ ավյո՛ւն, եռա՛նդ, թա՛փ ու կորո՛վ:

Ամենայն ճշտությամբ Հովհ.Թումանյանը կարող էր ասել Օսկար Ուալդի պես. «Ես իմ տաղանդը գործ դրի գրականության մեջ, իսկ հանճարս շռայլեցի կյանքի մեջ»:

Շատ տարիներ հետո, տասնվեց տարի անց, երբ արտասահմանից վերադարձա հայրենիք, ավա՛ղ, չկար Օհաննեսը: Հազար կյանքով ապրող այդ հոյակապ մարդու փոխարեն տեսա մի անշուք հողակույտ և մի մեծ լուրջություն...

1948թ.

Երեսուն տարի է անցել այն օրից, երբ մեր մեծ բանաստեղծ Չովհաննես Թումանյանը հեռացավ մեզանից:

Երեսուն տարվա ընթացքում նրա շքեղ և հումանիստ պոեզիայի հմայքը ոչ միայն չնվազեց չնչին մի չափով, այլ ընդհակառակը՝ աճեց, զարգացավ: Նրա պոեզիան դարձավ ազգային թանկագին սեփականություն, ելավ իր հայրենիքի սահմաններից դուրս, գրավեց հարևան և հեռավոր ժողովուրդների սերն ու հիացմունքը:

Մեծ մարդկանց մահով սկսվում է նրանց անմահությունը, նրանց հավերժական կյանքը: Նրանք անմահ են սերունդների հետ, նրանք անմահ են ժողովուրդների հետ, նրանք անմահ են մարդկության հետ:

Հ.Թումանյանը անմահ է, նա ապրում է մեզ հետ: Հայ ժողովուրդը կարդում է նրա չքնաղ պոեմները, նրա երկերը, լսում է նրա խոսքն ու խոհը, համակվում է նրա ջերմ սիրով դեպի հայրենիքը և հայ լեզուն, դեպի մարդն ու աշխարհը:

Հ.Թումանյանը դարավոր հայ գրականության առաջնակարգ ստեղծագործողներից է, և գերազանցապես առաջնակարգ իր ազգային ոգով ու ոճով, գույնով ու բույրով: Թումանյանը մեծ շնչով երգեց հայ ժողովրդի հերոսամարտը թշնամիների դեմ հայրենիքի ազատության ու բարօրության համար: Երգեց հայ ժողովրդի իղծերը լավագույն ապագայի համար և նրա նվիրական ավանդներն ու իդեալները:

Նա իր այս պոեմների մեջ գեղարվեստական խտացումով կերտեց դյուցազնական Հայաստանը, նահապետական և պատմական Հայաստանը:

Թումանյանի արձակը կրում է իր վրա նույն մեծ հեղինակի կախարդական ծեռքը – ճշմարտացի, գունեղ, կենդանի. «Գիջորը» անմրցելի գործ է, մաքուր գոհար:

Այսօր մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում Թումանյանին, որովհետև նա շատ մեծ երախտիք ունի հայ գրականության հանդեպ: Հասկանալու համար Հ.Թումանյանի ահագին տեղը հայ գրականության մեջ՝ երևակայեցեք մի պահ, որ չի եղել «Անուշը», չեն եղել «Թմկաբերդը», «Հառաչանքը», «Մարոն», «Մի կաթիլ մեղրը» և այլն, որոնք հայ ժողովրդին դաստիարակել են, բարձրացրել: Ի՞նչ դատարկություն կմնար նրանց տեղը. ի՞նչ թափուր, ի՞նչ աղբատություն...

Այո, Չովհ. Թումանյանը մեր ժողովրդի գանձն էր ու պարծանքը, մեր գրականության զարդն ու փառքը...

Հայաստանի սովետական կառավարությունը, հավերժացնելու համար Թումանյանի հիշատակը, կառուցեց նրա շքեղ տուն-թանգարանը, ուր տեղավորված են մեծ պոետի գրասենյակը, նրա ճոխ գրադարանը, նկարներ և նրա հետ կապված բազմաթիվ առարկաներ, որոնք թանկագին հիշատակներ են հայ ժողովրդի և հայ գրականության համար:

Մենք, գրողներս, հայտնում ենք մեր շնորհակալությունը մեր հոգատար կառավարությանը այս կուլտուրական գեղեցիկ ձեռնարկի համար:

1953թ.

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԾՈՅԱՏԵՏՐԵՐԻՑ

Ուղարկում են Հովհ. Թումանյանի բանաստեղծությունները քեզ նվեր և խնդրում են ընդունես, ես շատ եմ սիրում այդ բանաստեղծին...

(Մի օրիորդի գրած նամակից 1904թ.)

Օհաննեսը մի լուսավոր աստղ էր, հայության հանճարին դարերով պատիվ բերող, և սիրելի էր շա՛տ, և նրա թողած տեղը միշտ կմնա բաց, միշտ պետք է մորմոքեն մեր սրտերը:

Երբ երազում էի Կովկաս գնալ, առաջին կարոտս էր՝ տեսնել նրան, լսել նրան. մեծ հրապույր ուներ. մեծ մարդ էր:

1923թ.

Հովհաննեսը դժգոհ էր իր վարած կյանքից, քեֆերից, շրջանից, հարգանքներից, պատիվներից, այցելություններից:

Նա նախանձով ասում էր ինձ. երանի քեզ, որ կարող ես գնալ ձեր ջրաղացը, քո սենյակը, ուր դրել ես գրադարանդ և կարդում ես, մենակ ես...

Երազում էր՝ Լռում, Դսեղ թե այլուր, տուն շինել, գրադարանը տեղափոխել և պարապել. ե՞րբ, երբ որ աշխարհը, վրդովված մեր երկիրը խաղաղվի...

Գրքեր էր գնում ապագայում կարդալու համար. միշտ ապագա էր երազածը առանձնության մեջ:

Օհաննեսին դժվար կարելի էր հասկանալ. իր՝ հայ գյուղացու կեցվածքի (խոսքի) ձևի տակ թաքցված էր մի կոփի, հոգեբանական մի սփինքս:

Հովհաննեսի կորուստը քանի գնում ավելի խորն է ազդում վրաս. դա վշտի ամենեն գեշ տեսակն է:

1923թ.

Վերջ. աննոռանալի կորուստ է, վաղահաս մեռավ. մնաց կիսատ, անավարտ «Սասունցի Դավթի» շարունակությունը, «Հազարան բլբուլը», «Հառաչանքը»...

Ինձ մոտ կարդաց «Երկու սև ամպը» և մի օրինակ գրեց, տվեց ինձ, որը կորավ. սա 1895թ. դեկտեմբերն էր:

Արտասանեց «Թմկաբերդը» և նախաբանը 1901թ. Ղազարապատում:

Կարդաց «Դեպի անհունը», 1898թ. մարտին: Պատմեց, որ իրողություն է, պատահած փաստ:

«Հառաչանքը» չափազանց հավանեցի: Նա այնքան չէր գնահատում, ասում էր՝ կիսատ է:

1939թ.

Երբ շրջում էինք Օհաննեսի հետ Անիում, թվում էր, թե չէր ընդհատված մեծ կուլտուրա ունեցող Անիի կյանքը:

Օհաննեսը Անիի քաղաքացի է, նա իր ծննդավայր Անիում է գտնվում, և միայն այստեղ նա հանգիստ է, երջանիկ և հարազատ. մյուս բոլոր տեղերում՝ օտար է, պանդուխտ. այստեղ է գտնում նա իր հանգիստը՝ «Պանդուխտ եմ, քույրիկ». այստեղ նա գտել է յուրայիններին:

1943թ.

Օհաննեսը պիտի դարեր ապրեր, որ հասներ իր բոլոր բաղձանքներին, այնքան շատ էին նրա բաղձանքները:

Օհաննեսը ուզում էր հասարակական գործիչ լինել, ամբոխները վարող հերոս, ուզում էր մեծահարուստ լինել, ունենալ պալատներ, շռայլություն, խրախճանքներ. ուզում էր աշխարհի գեղեցկությունները իր մոտ լինեին՝ հմություններ, գոհարներ, զարդեր, արվեստի կոթողներ, ծիեր, գրադարաններ, թանգարաններ:

Ուզում էր իմաստուն լինել, ամենակարդացած մարդը, բոլոր գրքերն ունենալ և կարդալ, գրել. գրել ուսումնասիրություններ, դրամաներ. մանավանդ դրամաներ, թատերգություններ:

Ուզում էր ամեն տեղ հասնել, ամեն գործի մեջ լինել, ամեն քեֆի քամադան, ամեն ժողովում, ամեն հարցերի մեջ ընտրովի նախագահ, պատգամավոր անդամ, ձևակերպող: Ահա այսպես մի բարդ, անհագուրդ ֆաուստյան ոգի:

Օհաննեսը շռայլ էր ամեն բանի մեջ՝ սիրո, քեֆի, զավակներ ունենալու, առհասարակ ամեն բան անելու մեջ:

Գո՞հ էր կյանքից – ո՛չ: Կյանքը ժլատ էր նրա հանդեպ. ինչ որ տվել էր կյանքը՝ կի՛ն, երեխաներ բազմաթիվ, սերեր, բանաստեղծական հանճար – այդ բոլորը քիչ էր նրա համար:

Թումանյանը օժտված լինելով բնությունից առողջ և մեծ խելքով և ունենալով հզոր ինտուիցիա, հոտն էր առնում գալիքի և ընդառաջ գնում ծայր տվող ալիքին:

Թումանյանը, իբրև տարերային խոլական բանաստեղծ, չէր կարող սեղմվել ոչ մի դոզմայի մեջ:

Նրա էությունը հայկական էր, հայրենասիրական: Միշտ էլ նա եղավ հայ տառապանքի հետ, հայրենիքի հետ, եղավ միշտ այն հայը, որ ոգևորվում էր խնկաբույր Նարեկով և ուխտի էր գնում մեր մամռոտ սուրբ ավերակներին, միշտ վերածնության, ազատության հույսը հոգու մեջ:

Նա ինքը կենդանի վիպասանություն էր, ոճով մարդ. կենցաղը, գրույցը ոճ էր: Գյուղացու պես բնապաշտ էր, կենդանիներ սիրող, հողը սիրող, գրույց սիրող, հեքիաթարան:

Մի աղջիկ ասաց՝ Թումանյանը բնական գրող է, բնական է գրում, պարզ, հասարակ, առանց սեթևեթանքի:

Թումանյանի արծակ գրվածքները ֆիլիգրաֆիկ են:

Ես Հովհաննեսի աշխարհագրացումով եմ ուզում մեռնել՝ իջնել իմ սարիս ետևը:

Նա վերստեղծեց իր երկերի մեջ դյուցազնական Հայաստանը, նահապետական Հայաստանը, պատմական Հայաստանը և բովանդակ Հայաստանը հայացի ազգային ոճով, բույրով, գույնով:

Մշակելով հայկական հարուստ ֆոլկլորը՝ կառուցեց հրաշալի պոեմներ, նաև մանկական գեղեցիկ, հարազատ, մայրենի գրակա- նություն:

Հովի. Թումանյանը ամենահայկական, ամենաազգային գրողն է, խտացումը հայ ժողովրդի աշխարհայացքի, աշխարհագրացման, նրան

կարդում են Հայաստանում ծերերն ու մանուկները, մեծերն ու դպրոցականները: Օտար երկրներում հայ մարդը երկյուղածությամբ կարդում է նրան հաղորդվելու համար հեռավոր, քաղցր հայրենիքի հետ, տեսնելու մեր սեզ լեռները, պատմական կոթողները, շնչելու հայրենի դաշտերի բուրմունքը, հայրենիքի կարոտն առնելու:

Ջահել հասակում արծակ գրելը դժվար է: Կյանքի փորձն իր հերթին, բայց նստել պիտի կարողանաս, նստել: Կանանց համար դա, թերևս, դյուրին է: Կինը ինքնագոհողության ավելի կորով ունի, իսկ ահա, Շիրազին նստեցրու և ասա վեպ գրի, խելքը կթռցնե, խելքը... Հա, արծակի մասին: Գրիր, ուժերդ փորձիր: Ախր, գրողի հետ երբեմն այսպես է լինում. գրում է, գրում է ոտանավորներ, պոեմներ և մեկ էլ զարթնում ու տեսնում է, որ ինքը արծակագիր է: Օրինակ՝ Դերենիկը:

Քչերն են, որ երկու ժանրում էլ մեծ են լինում: Դա քչերին է տրված, ինչպես Պուշկինն է, Լերմոնտովը, մեր Թումանյանը:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Փետրվարի 6, 1902, Մոսկվայից Թիֆլիս

Սիրելի Օհաննես,

Քո նամակին չկարողացա պատասխանել և, առհասարակ, քեզ նամակ չեմ գրում ծուլությունից: Կարծում եմ, որ արդեն մոռացված էլ կլինեն. ես աշխատում եմ Թիֆլիսը մոռանալ և համարյա թե մոռացել եմ:

Դու այն ասա, թե ի՞նչ բանի ես կամ ինչպե՞ս ես ժամանակը մեռցնում, և արդյոք գրո՞ւմ ես, թե՞ չէ: Եթե իմս կհարցնես, շան օրի եմ գոյությունս պահելու մեջ: Այս քանի օրերս մտնելու եմ երաժշտական դպրոցը, որպեսզի այս կիսամյակը չկորցնեմ: Ջութակի կողմից բանս լավ է գնում, շնորհիվ ուսուցչիս¹: Այս ամառ չեմ գալ, և կարելի էլ չէ գալ, որովհետև առաջինը՝ այդտեղ դաշնամուր չեմ կարող գտնել (սարերում), և չեմ կարողանա վերադառնալ – ահագին ծախս է ուզում, դասերս էլ կկորցնեմ:

Տեսնո՞ւմ ես, ինչ հալի եմ: Փող հարկավոր է, դու ինձ գրիր, թե արդյոք «Մուրճը» իսկապե՞ս վարձատրում է, թե՞ այնպես գրում եմ, որովհետև ուզում եմ բան ուղարկել. իսկ եթե չեմ վարձատրում, չարժե՞ դրկելը, խնդրում եմ այդ գրիր ինձ և, առհասարակ, չէր խանգարիլ, եթե մի նամակ սլացնեիր դեպի այս կողմ:

Բարևիր բոլորին:

Համբույր՝ քո Դերենիկ

Հուլիսի 25, 1902, Թիֆլիսից Աբասթուման

Սիրելի Հենսլի,

Ի հարկե, նախ և առաջ՝ բարով տեսանք: Ոտս Կովկասու հողի վրա է, և անձս՝ Թիֆլիսում: Շատ դժվարությամբ կարողացա այնպես անել, որ այս տողերը գրելու հնարավորություն ունենամ:

Տպագրվում է Դերենիկ Դեմիրճյանի «Երկերի ժողովածուի» 14-րդ հատորից (1987):

¹Մոսկվայի կոնսերվատորիայում Դեմիրճյանի ջութակի ուսուցիչը եղել է հետազայում հռչակված դիրիժոր, պրոֆեսոր Կոնստանտին Սարաջևը (1877-1954): Նա 1902 թվականին, աշխատելով որպես Մոսկվայի «Բեմական արվեստի սիրողների խմբակի» սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի դիրիժոր, միևնույն ժամանակ վարել է Մոսկվայի կոնսերվատորիայի ջութակի մասնագիտական դասարանը: Ջերմորեն կապված էր Կովկասից եկած իր հայրենակից և հասակակից Դեմիրճյանի հետ:

Այստեղ տղերքը ցրվում են, որը Իրան, որը Թեհրան. ես էլ, շատ կարելի է, Թավրիզ գնամ երգեցողության ուսուցիչ, բայց նախ և առաջ աշխատելու եմ, որ նորից ընկնեմ Մոսկվա: Ներողություն, շտապում եմ, գնում եմ Ախթալա, մի երկու օրից կգամ: Խնդրում եմ այն փողը, որ դու դրկել ես Մոսկվա և հիմա հետ ստացած կլինես, դրկիր Թիֆլիս, Նիկոլին, ես՝ այստեղ իր նամակներով պարտատերերիս. այլապես ստիպված պիտի լինեմ Բաքու գնալու: Սիրտս վկայում էր, որ էստեղերքը մի բան կլինի հավաքված, ճանապարհին Բաքու չմտա:

Շատ ուրախ եմ Շանթի գալու համար: Եթե հիվանդությունս սեպտեմբերին բարեհաճի հյուր մնալու, ես էլ կմնամ Թիֆլիսում հյուր: Բանս բուրդ է: Իմացա, որ Աղայանցի հորեյանին իմ կողմից էլ էիր ողջունել նրա քառասնամյակը, որի համար չգիտես որքան է՛յ վալլա եմ ասել¹: Ուզում եմ իմ հանցանքը ուրիշ կերպ քավել: Թեպետ ինձ Մոսկվայում մոլորեցրին: Բանը այսպես էր. այնտեղ հավաքվել էին և պատրաստել ուղերձը, ամսի տասին դրկել, հետո ես իմացա, որ հորեյան կա: Ասի, որ ուշացել եմ, էլ իզուր է: Հանկարծ գալիս է «Մշակը», որտեղ գրված էր, թե լինելու է 19-ին: Ինձ հայտնեցին, որ դա տպագրական սխալ է, արդեն տոնվել պո՛ծել է: Վերջապես՝ խառնվեց, պո՛ծավ, ուշ էր: Առայժմ այս լեմկթեմուրական նամակը կարդա, մինչև գնամ տուն և մի լավ նամակ գրեմ, որ կստանաս: Հագիվ եմ կարողանում այսքանն էլ գրել, ջղերս շատ են անկարգացել:

Աղայանցին նախ և առաջ կմատուցանես իմ ողջույնը և հետո՝ տիկնոջդ և բալաներիդ: Համբույր:

Քո Դերենիկ

Հունիսի 21, 1911, Ախալցխայից Թիֆլիս

Հայտնիր իմ խորին ցավակցությունը մեր թանկագին Նահապետի² ընտանիքին և մխիթարիր, բայց ո՞վ և ինչպե՞ս կարող է մխիթարել մեզ: Մեր անտառում ընկավ կաղնին, և տիրեց տխուր և խորին լռություն:

Դերենիկ Դեմիրճյան

¹ Ղազարոս Աղայանի գործունեության 40-ամյակի հորեյանը կայացել է Թիֆլիսում, 1902թ. մայիսի 19-ին:


² Նահապետ պատվանունով Դեմիրճյանը կոչում է Ղազարոս Աղայանին, որ վախճանվել էր 1911թ. հունիսի 3-ին (նոր տոմարով):



*Թումանյանը Վերնատան առանձնասենյակում, Թիֆլիսի
Բեհրուբյան փողոցում գտնվող տանը (1901)*



*Թումանյանը Ջավախքում դիտում է Թմուկ բերդի
ավերակները (1901)*



*Թումանյանը և Իսահակյանն Անիում, Աշոտ ողորմած
բազավորի գերեզմանի մոտ (1901)*



*Աղայան և Թումանյան
(1902)*

177/18, 10 քր. 02

191
 Հանձնաժողովի քառյակ, 9 հոկտեմբեր 1918 թ. Կոստանյու
 այս քառյակը. որ Երևանում հրատարակելու,
 այս արձագանքը մասնաճիւղի Երևանի.
 հարկաւոր աւելցնելու եւ հարկաւոր,
 եւ Երևանի հարկաւոր, եւ շտաբի քառյակը.
 այս հրատարակելու չէր կարող, այս էր նպատակը
 դրան. արդեւ ինչ որ օրինակ հարկաւոր քառյակը
 քառյակ - 2. էր. Երևանում իր. արդեւ
 իր արդեւ 9 քառյակ էր օրինակ դրան աւելցնելու
 չէր. ասում էր ինչ որ արդեւ արդեւ արդեւ
 Երևան, արդեւ արդեւ արդեւ արդեւ արդեւ.
 Երբ օրինակ հարկաւոր քառյակ էր,
 եւ ինչ որ արդեւ էր դրան չէր արդեւ, չէր
 եւ էր, այս դրան արդեւ չէր: Երբ արդեւ
 արդեւ էր Երևան; հարկաւոր այս էր Երևան
 հարկաւոր դրան. 9 էր քառյակ, քառյակ էր
 Երևան էր, եւ ինչ որ: Դրան ինչ որ Երևան
 հարկաւոր. արդեւ, այս "արդեւ" էր. եւ
 արդեւ արդեւ քառյակ դրան. եւ շտաբի քառյակը
 էր արդեւ արդեւ եւ արդեւ. Երևանում

1903 թ. Հոկտեմբ. 1

Ա. Արքեպիսկոպոսին

Մտնի Օհուկոն,

Այ զորս արարտ արարտուս եւ եւ, որ
ամայ զորս եւս զորս չի զարգացել
հարցոյս որ ինչի տես: Եւ եւ ամայ
չի զորս, արարտուս զորս արարտուս եւ
եւ ամայ զորս զարգացել, ինչ
արարտուս արարտուս զորս եւ արարտուս
ի զարգացել: Ինչ արարտուս զարգացել
չի - եւ ինչ զորս եւս զարգացել, եւ
արարտուս զորս եւս, որ արարտուս արարտուս
եւ արարտուս: Զարգացել արարտուս զարգացել
արարտուս զարգացել զարգացել արարտուս
"զարգացել արարտուս" արարտուս արարտուս,
արարտուս արարտուս արարտուս ի զ
արարտուս արարտուս արարտուս արարտուս -
արարտուս արարտուս արարտուս. արարտուս արարտուս
արարտուս արարտուս, եւ արարտուս արարտուս
արարտուս արարտուս արարտուս արարտուս, արարտուս

Թումանյան, Պողոսյան,
Աղայան (1903)



Թումանյան և Լևոն Շանթ
(1904)



Թումանյան (1904)

*Իսահակյան,
բանահավաք, գրող
Սարգիս Զամայան,
Աղբալյան, Թումանյան
(ենթադրաբար՝ 1913)*



Պատմ. Բանասիր. Գրք.

Ըն ժամանակս Եր ԿԱԿ ԴՆ շրջանի Բանասիր-
ան, Զեպարի Բանասիր, Կրթական Բանասիր և
Կրթական Բանասիր Կրթական Բանասիր Կրթական:
Նշանակալիկ Կրթական Բանասիր Կրթական Կրթական
Կրթական Կրթական Կրթական Կրթական Կրթական
Կրթական:

Պատմության արևելահայկական, արևմտահայկական և
կենտրոնական հայ Երկրի պատմություն, պատմական
և կրթական Բանասիր Կրթական Կրթական Կրթական
Կրթական Կրթական Կրթական Կրթական Կրթական

1953 թ.

Հոգեւորական թանգարանը իւրաքանչեւ
 աշխարհիկ է՝ խորհուրդի և օրհնոց: Ան էլիմ
 կայրիւն և էր մի քանի տեղի՝ հայ տղամարտ
 կամ զանգեւորի: Քաղաքի և հողի էր Եփրատի
 քաղաք: Եւ թանգարանը հայ մի հրաշքային
 տեղի մէջ էր. իւրաքանչեւ և մեծ Եփրատի:
 Հայ էր և ասիական լայնութիւն: Թանգարանի
 մէջ ասիական կէտ հրաշքայինութիւն - իւր
 վարձարէն էր. և՛ քաղաքի և զանգեւորի, և
 իւրաքանչեւ Եփրատի անուրիշութիւն, և
 աշխարհային արժեք: Իւրաքանչեւ, իւրաքանչեւ, իւր
 տեղի - և Եւրոպական: Եւ իւրաքանչեւ
 էր իւր զանգեւորի ինքնակամայնութիւն, իւր
 հոգեւորական, իւր Եփրատի քաղաքի, իւր Եփրատի
 անուրիշութիւն Եփրատի քաղաքի: Իւր քաղաքի
 մէջ թանգարանը էր իւրաքանչեւ անուրիշութիւն
 էր իւրաքանչեւ էր ասիական իւրաքանչեւ քաղաքի
 քաղաքի, կայրիւն և իւրաքանչեւ էր մի քանի
 տեղի Եփրատի: Եփրատի քաղաքի թանգարանը
 և Եփրատի քաղաքի իւրաքանչեւ էր կայրիւն
 և քաղաքի իւրաքանչեւ էր կայրիւն և քաղաքի
 իւրաքանչեւ ասիական և քաղաքի էր իւր քաղաքի:

Պ. Ռ. Բեկոյան

Օհաննես ջան,

Երկար չեմ գրում, որովհետև շատ բան ունեմ գրելու: Քո լեն սրտիդ մեջ, գիտեմ, մի տեղ էլ ինձ համար կունենաս, ինչպես իմ նեղ սրտիս մեջ ամենամեծ տեղը դու ես բռնած եղել էսքան ժամանակ: Ե՞րբ պիտի Մոսկվայից գա քո թանկ նվերդ՝ ամենքին և ինձ, որ դու ապաքինվել ես: Եվ եթե քո ձեռքդ, որ սուրբ է ինձ համար, մի բառով թեթևացներ իմ անհուն տրտմությունս...

Ջերմագին համբուրում եմ էդ ձեռքդ և սպասում քեզ, իմ հին, իմ քաղցր Օհաննես:

Քո՝ Դերենիկ

Սիրելի Արեգ,¹

Երբ հայրիկը տրամադրություն կունենա, տուր կարդալու իմ երկտողը և բարի եղիր, մի երկտող էլ դու գրիր ինձ՝ նրա առողջության մասին:

Բարևներ Նվարդին և Աշխենին²:

Դերենիկ

¹Արեգը Դ.Թումանյանի որդին է, որ իր քույրերի հետ մեկնել էր Մոսկվա հիվանդ հորը խնամելու:

²Սույն նամակը Թումանյանին է հասել միայն մարտի 9-ին: Այդ առթիվ Նվարդ Թումանյանը իր հուշերում գրել է. «Հայրիկն այնքան թույլ էր, որ նամակի ընթերցումը լավ չլսեց» (Ն.Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 326):

ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Թումանյանին ես առաջին անգամ տեսա հեռվից, Սուլուակի Սերգեևսկայա փողոցում: Արագ, մեծ քայլերով գնում էր նա ուր-որ: Մուգ դեղնագույն վերարկու ուներ հագին, նույն կտորի հաստ հետնագոտիով, ահագին մի ձեռնափայտ առանց գլխի: Սև շլապան հովանի էր անում նրա կիսաժպտուն, երազալից դեմքին: Նա երիտասարդ էր, ապագան էր դիմացը, արդեն ճանաչված բանաստեղծ և հասարակության սիրով գուրգուրված: Առաջին տպավորություն այն էր, որ նա համարձակ ու մեծ քայլերն ուղղում էր դեպի մի ուրախ, երջանիկ ապագա: Նոր էի Թիֆլիս եկել էջմիածնի ճեմարանից, 1895-96 թիվն էր, աշակերտ էի Ներսիսյան դպրոցում, արդեն հանդես էի եկել իբրև բանաստեղծ, շտապում էի վայելել տաղանդավոր բանաստեղծի ծանոթությունը: Շատ շուտով եկավ այդ բաղձալի օրը-Ավետիք Իսահակյանը վերջապես ներկայացրեց ինձ Թումանյանին: Արդեն իսկ մի բան էր այդ 17 տարեկան աշակերտի համար...

Առաջին տպավորությունը նրա հետ ունեցած զրույցի, որի հրահրողը անհանգիստ, ռոմանտիկ Ավետիքն էր, <այն էր>, որ Թումանյանը հարատև ոգևորության մեջ է: Նրա ժպտուն աչքերում կարդացվում էր լայնորեն կյանք նետված և հաղթանակած բանաստեղծի գիտակցությունը: Մասնավորապես ինձ ոգեշնչեց նրա ուշադրությունը ինձ վրա որպես սկսնակի:

– Այո՛, այո՛, կարդացել եմ, շատ ուրախ եմ, – ասաց նա Ավետիքին՝ երբ սա ներկայացնելիս ինձ՝ հիշեցրեց նրան իմ բանաստեղծությունները «Մուրճ» ամսագրում:

Այն օրվանից ես զգացի, որ Թումանյանը նոր բանաստեղծության կենտրոնաձիգ և կենտրոնական ուժն է:

Թումանյանը շատ բնակարաններ փոխեց՝ նախքան անցնելը Բեիբուքյան փողոցի բարձր բնակարանը, ուր երկար մնաց: Այդ տարիներում ես շատ չէի հանդիպում նրան:

Այդ բախտը վայելում էր Ավետիք Իսահակյանը: Միայն մի բան գիտեի, որ Թումանյանի մոտ ընկերն ու սրտակիցը Ղազարոս Աղայանն էր: Նա էր «Մուրճում» լայն ճանապարհ հարթել Թումանյանի երկրորդ հատորի համար, վեր հանելով նրա «Անուշը»: Այդ հատորը, որ տպվել էր Մոսկվայում՝ վճռական դեր կատարեց Թումանյանի գրական բախտի մեջ, և Աղայանը բարենպաստ դիրք էր ընտրել Թումանյանի համար հաստատ ու արդարացի խոսք ասելու: Արդեն անցած կարելի

Տպագրվում է Դերենիկ Դեմիրճյանի «Թումանյանի հետ» գրքուկից (1969): Կազմել է Լուսիկ Կարապետյանը:

եր համարել այն շրջանը, երբ հայ ընթերցող հասարակության մի մասը՝ անշուշտ Արծրունու կծու քննադատականից ազդված՝ խեթ էր նայում Թումանյանին: Արծրունին չկար այլևս, «Մուրճը» նոր ուղի էր հարթել գրականության համար, Թումանյանը գրել էր իր «Անուշը» (ճիշտ է՝ առաջին վարիանտը), «Լուռեցի Սաքուն» և մյուս <պոեմները>: Եվ որովհետև նորագույն բանաստեղծության հայրը՝ Յովհ. Յովհաննիսյանը, չէր երևում ասպարեզում, Իսահակյանը դեռ չէր հրատարակել իր «Երգերն ու վերքերը»՝ ամենքի հայացքն ուղղվեց դեպի Թումանյանը: Այդ ժամանակներն էին, որ տեղի ունեցավ «Մուրճի» խմբագիր Ավ. Արասխանյանի և նույն ամսագրի հրատարակիչ Փիլ. Վարդազարյանի գծափոխումը, որի հետևանքով վերջինս հեռացավ «Մուրճից, իր հետ տանելով և Թումանյանին: Իհարկե, այդ գծափոխումը չէր կրում ոչ մի իդեական բնույթ. դա խմբագրի և հրատարակչի իրավասությունների խնդիրն էր, որի մեջ Ավ. Արասխանյանը տրամադիր չէր զիջելու և ոչ մի ստորակետ՝ հրատարակիչ Փիլ. Վարդազարյանին, որը , ի միջի այլոց, միայն հրատարակչական ֆունկցիայով հետաքրքրվող մարդ չէր, այլ նաև գրական խնդիրներով զբաղվող դրամատեր: Թումանյանը շատ մտերմացել էր սրա հետ և եթե ինքը ևս հետևեց սրան, հեռացավ «Մուրճից» և հետագայում շատ էր հեզոտրեն պատմում Արասխանյանի բռնակալական ձևերի մասին՝ իբրև խմբագրի, անշուշտ այնքան էլ իրավացի չէր: Եվ եթե նա բարվոք համարեց Վարդազարյանին հետևել՝ դա անշուշտ բարեկամական համերաշխության հետևանք էր: Եվ իրոք՝ վերջը Թումանյանը և Վարդազարյանը շատ մտերմացան, այն աստիճան, որ վերջինս դարձավ Թումանյանի լիրիկական զեղումների ֆիզիորաներից մեկը («Երկու սև ամպ»):

Այդ ժամանակներում նոր գրականությունը հետզհետե կերպարանավորվում էր և կուտակվում: «Մուրճում» հանդես եկավ Լ.Շամբը, հրատարակեց իր «Երգերն ու վերքերը» Ավ. Իսահակյանը, «Մուրճում» հաճախ տպվում էին Վ.Փափազյանի պատմվածքները, եռանդուն մասնակցում էր նույն ամսագրին Յակ. Յակոբյանը, ավելի եռանդով աշխատում էր Ալ. Ծատուրյանը, ակտիվ բանաստեղծներից էր Լ.Մանվելյանը:

900-ական թվերի սկիզբը նոր գրականության որոշ շերտավորման սկիզբն եղավ: Շատերը այդ չնկատեցին և չէին էլ կարող նկատել: Այդ շերտավորումը կատարվեց ոչ լայն հասարակական պայքարի նշանաբանով և ոչ բաց հրապարակով: Գրողները գնացին իրենց խմբագրությունների հետ, ոմանք առանձնացած կյանք էին վարում: Ճիշտ է՝ գոյություն չունեին գրական-իդեոլոգիական բախումներ բացահայտ ձևով, բայց ստեղծագործական խմբավորումներ եղան:

Թումանյանի բարձրադիր բնակարանում հետզհետե ավելի հաճախակի սկսեցինք հանդիպել Շանթը, Ավ.Իսահակյանը, Աղբալյանը, Ես. ինչ խոսք, որ մեզանից առաջ էլ այնտեղ միշտ լինում էր Ղազարոս Աղայանը, և ահա այդ հավաքույթները մեզ բերին մի գրական խմբակ ստեղծելու գաղափարին:

Խմբակը կազմվեց աննախընթաց եռանդով և վճռականությամբ: Այն երեկոն, երբ ուշ գիշերով, ընթրիքից հետո կազմվեց խմբակը՝ հիշում եմ, որ կարևոր համարվեց անմիջապես մի անուն ևս գտնելու խմբակի համար: Առաջարկվեց «Վերնատուն» անունը՝ իբրև Թումանյանի բարձրահարկ բնակարանին հարմար անուն: Այդ դուր եկավ մեզ: Դա հիշեցնում էր մի ուրիշ վերնատուն, ուր հավաքվեցին Քրիստոսի աշակերտները: Դրա մեջ ինչ-որ հոգեկան ներքին իմաստ կար...

Ղազարոս Աղայանը ընդունվեց այդ խմբակում իբրև «Նահապետ»: Նա պատվավոր անդամ էր «Վերնատան»: Թումանյանի ստեղծագործական և ընկերական կապը այնքան հարգելի էր մեզ համար, որ համաձայնվեցինք մեր գրական ժառանգորդական կապը անցյալ գրականության հետ հաշվել Աղայանի գծով: Եիշտ է, այնուհետև շատ էր խոսք լինում Յովհաննես Յովհաննիսյանի մասին, որ նա է նոր բանաստեղծության մեր նախորդը, բայց Աղայանի ստեղծագործության ժողովրդական ուղղությունը, նրա ռեալիզմը, նրա անձնավորությունը հաղթեցին, և մենք Աղայանին համարեցինք մեր «Վերնատան» հարազատը:

«Վերնատունը» կազմակերպվեց 1902 թվին¹: Խմբակի ակտիվ անդամներն էին Թումանյանը և Շանթը: Աղայանը հիշողություններ էր պատմում և գովում էր սիրած հեղինակներին և քննադատում էր հակառակորդներին: Ի՞նչ էր մեր գրական ուղղությունը: Դա ոչ մի տերմինով չէր արտահայտվում: Դա որոշվում էր համաշխարհային և ազգային գրողների հանդեպ ունեցած մեր վերաբերմունքով:

Պետք է որոշակի և վճռականապես ասեմ, որ մենք պաշտամունքի առարկա էինք դարձրել համաշխարհային կլասիկներին, ուսումնասիրում էինք նրանց և խոսում բացառապես նրանց մասին: Կլասիկները մեր առօրյա, գործնական զբաղմունքն էին: Մենք ձգտում էինք գնալ նրանց ուղիով: Եվ եթե հետագայում թե Թումանյանը և մասամբ էլ Ես որոշ շեղումներ արինք՝ դա տուրքն էր մեր գաղափարներին և գեղարվեստական հասկացողության տրամագծորեն հակառակ իրականությանը, որ համառորեն շարունակվեց մինչև 1921թ. և ճնշեց մեզ իբրև միջավայր:

¹ Դեմիրճյանը սխալվում է՝ 1899-ին (տե՛ս Ա. Ինժիկյան «Յովհաննես Թումանյան. կյանքն ու ստեղծագործության պատմությունը», 1969, էջ 414):

Մենք սկսեցինք մեր հավաքություններից դուրս մնա պարապել: Տանը պատրաստվում էինք և ամեն շաբաթ հավաքվում էինք «Վերնատանը», քննադատում էսքիլեսի, Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի, Շեքսպիրի, Բայրոնի և այլ կլասիկների երկերը: Ահա այս հեղինակների կապակցությամբ է, որ ես կուզեի առանձնացնել թունամյանի մասին իմ հիշողությունները...

Նա Շեքսպիրի մի քանի տրագեդիաներին լավ էր ծանոթ: Ուսումնասիրում էր առանձնապես «Համլետը», համեմատում էր ռուսերեն և հայերեն թարգմանությունները, նայում անգլերեն-ռուսերեն բառարանները, դրանց միջոցով ճշտում զանազան ֆրազներ: Սիրում էր երկար խոսել «Համլետի» մասին, պատմում էր Պ. Ադամյանի դերակատարության մասին, որ, ի միջի այլոց, մեծապես ազդել էր, ըստ երևույթի՝ նրա շեքսպիրասիրության վրա: Հունական տրագեդիայի ընթերցումներին և քննադատություններին մասնակցում էր մեծ սիրով, թեև նրանցով զբաղվելու դրդել էր Շանթը, որ սկսել էր հետքերը վել դրամատուրգիայով: Սիրում էր խոսել նաև Գյոթեի մասին, հատկապես սիրում էր Պուշկինին և Լերմոնտովին: Բայց ինչ կլասիկի մասին էլ խոսեր՝ վերջը կրկին գալիս էր իր առանձնապես սիրած «Համլետին»: Ի՞նչն էր պատճառը: Ոչ ոք հետագայում (եթե չեմ սխալվում) չէր անդրադառնում այս երևույթին: Բայց իմ հիշողության մեջ տպավորվել են մի շարք մտքերի հեռու և մոտիկ կապակցություններ, որ իրար բերելով ես կազմել էի մի կարծիք այդ խնդրի մասին: Այո՛, թունամյանը շատ ու շատ անգամ էր վերադառնում «Համլետին»: Նրան շարունակ զբաղեցնում էր Համլետի և նրա հոր ուրվականի պատկերը: Առանձնապես նա մշտում էր Համլետի խոսքերը իր հոր մասին՝ թե «Նա մի մարդ էր»: Համլետի խորին սերը, հարգանքը դեպի իր հայրը, նրա տանջանքները հոր ողբերգական մահվան պատճառով՝ այս ամենը թունամյանի մշտական հիացմունքի, մտազբաղության առարկան էր: Ես նկատում էի, որ նա հաճախ այդ նյութերից մի փոքր աննկատելի կերպով անցնում էր իր հոր հիշողություններին: Նույնպիսի գորովանքով, առանձին երանությամբ խոսում էր իր հոր մասին, հիշում նրա խոսքերը, վարմունքները: Նրա <պատմելով> հայրը սազ նվագող, ասող-խոսող, անհոգ, հյուրասեր մարդ է եղել: Սիրել է քեֆ անել, գլխին հավաքել գյուղի, գավառի ծանոթ-անծանոթին: Գովում էր հոր խելքը, փիլիսոփայությունը, բարի բնավորությունը: Հոր մասին զրույցը թունամյանի նվիրական նյութերից էր: Վերջում ինձ մի օր էլ նա հասկացրեց, որ «Դեպի Ամհունը» պոեմի մեռած կինը նրա համար արտաքին, հնարովի պատկեր է միայն, որ նա այդ կնոջ մեջ դրել է իր որդիական սերը դեպի հայրը:

Այնուհետև թունամյանը շատ էր ծրագրում ողբերգություն գրել

Արտաշես Բ-ի և նրա որդի Արտավազդի մասին: Ես ուշի-ուշով հետևում էի նրա մտքերի ընթացքին: Նկատում էի, որ այս նյութի մեջ նա զարգացնում էր այլևս ոչ միայն իր հոր մտապատկերը, որ Արտաշեսն էր, այլև այն ողբերգությունը, որ ըստ Թումանյանի թեմայի՝ ապրում էր Արտաշես-հայրը, որ հանդիմանում է և անհիծում իր որդի Արտավազդին սրա այն տրտունջի համար, թե «Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աներակացս ո՞ւմ թագաւորեմ»: Ես չէի հասկանում մի բան, թե ինչու էր Թումանյանը մշակում այդ նյութը, ուր նրա համար այդպիսի մի վեհ թագավոր-հոր պիտի հակադրեր նման մի չարախոս որդի: Իմ տարակուսանքները, սակայն, հետագայում ցրվեցին: Թումանյանին հետաքրքրում էր ոչ իր անձնական հակառակությունը իր հոր դեմ, այլ մի ուրիշ բան: Նա շատ էր պատմում իր համազրուղացիների մասին, որոնք խլել էին իրենց հողամասերը՝ ոտնատակ տալով այն բոլոր լավությունները, որ արել էր նրանց իր հայրը...

Արտաշես-Արտավազդի նյութից հետագայում Թումանյանը ձեռքառեց, որպեսզի անցնի ուրիշ նման թեմայի: Դա Անիի ինչ-որ թագավորի մասին էր... Համլետի «Նա մի մարդ էր» խոսքը այսպիսով զանազան մետամորֆոզներով զարգանում էր Թումանյանի մեջ, մղում նրան դրամատուրգիական ժանրի, որ երբեք չիրականացավ որևէ փորձով: Ի դեպ՝ պետք է ասեմ, որ Թումանյանը երկար ժամանակ կրկին և կրկին դառնում էր դրամատուրգիական ժանրին, հայտնում էր իր մտադրությունները, որ պետք է ողբերգություն գրի և միշտ էլ ասում էր, որ ինքը կոչված է դրամատուրգ լինելու: Նրա գրական գրույցներում ամենաշատ տեղը բռնում էին՝ որքան էլ դա տարօրինակ թվա՝ Տոլստոյը և Շեքսպիրը: Գիշտ է՝ նրա մեծարած բանաստեղծը Պուշկինն էր, նաև Գյոթեն, բայց երբ նա խոսում էր գրական բարձր որակի մասին (իսկ այդ մասին նա խոսում էր միշտ և հոյակապ բաներ էր ասում)՝ շարունակ օրինակ էր բերում Շեքսպիրը: Ինձ միշտ թվացել է, որ նա ստեղծագործության գաղտնիքները վերցնում էր Շեքսպիրից և գործադրում Պուշկինի նման:

Մեր «վերնատան» պարապմունքները շատ չտևեցին: Կազմակերպված աշխատանքը չբռնեց վերնատանցիներիս բնավորությամբ: Իհարկե, զուր չանցան կլասիկների ուսումնասիրության կանոնավոր երեկոները: Այդտեղ մենք ճանաչեցինք կլասիկների մեծությունը և... իրար: Այժմ կարելի էր շարունակել երեկոները պատահական նյութերի մասին զրույցներ կազմակերպելով: Այդպես էլ արինք: Դա ամենից ավելի հարմար էր զրուցասեր և կանոնավոր պարապմունքներից խրտոող Թումանյանին: Նա սիրում էր իրեն ազատ զգալ: Բայց և այնպես հարկ համարեցինք «վերնատանական» երեկոները մի փոքր

որոշել հասարակ երեկոներից: Որոշեցինք մեր գրվածքները կարդալ և քննության առնել: Որքան էլ նյութը սակավ լիներ, մի պոեմի հատված, մի ոտանավոր, միևնույն է, դա չէր խանգարում երեկոն նշանակել: Որովհետև թեպետ նյութը կարճ էր լինում, բայց քննադատություն-գրույցը տևում էր երբեմն մինչև գիշերվա ժամը 2-3-ը, երբեմն գիշերում էինք թունանյանի տանը:

Չիշում եմ, մի երեկո մի բանավեճ սկսվեց իմ և Աղայանի մեջ: Պատճառը ես էր, որ չգիտեմ մեր գրույցի ինչ մտքից՝ անցա գրական հին և նոր սերունդների հակամարտության խնդրին:

– Ո՛չ մի հակամարտություն էլ չկա այս ձեր սերունդի և մեր սերունդի մեջ, – ասաց հեղինակավոր ծայնով և առանձին շեշտով Աղայանը:

Ես պնդեցի, որ կա և ընդհանուր մտքերից անցա կոնկրետ բացատրությունների, օրինակ բերելով ուղղակի իրեմ՝ Աղայանին և մեր «Վերնատան» մյուս անդամներին:

Թունանյանը գոհունակ նայեց Շանթին և քթի տակ ժպտաց: Այնուհետև քանի գնաց՝ մեր վեճը տաքացավ:

Աղայանն սկսեց անհանգիստ նստել, վեր կենալ, հաղթ մարմինը վրա բերել, կայծակ և շանթ թափել ինձ վրա: Նա զարմացած էր իմ հանդգնության վրա, զայրանում էր, որ չեմ հանդգնում և այնպես էր անհանգիստ, կարծես ես կարող էի վտանգել նրա ամբողջ գրական գործունեությունը: Թունանյանը ժպտում էր շարունակ և չէր միջամտում: Ես զգացի, որ մի տեսակ կատարում եմ նրա և Շանթի պատվերը և խոսում եմ նաև նրանց կողմից: Վերջապես Թունանյանը մի կատակով ընդհատեց ինձ, ես լռեցի, Աղայանն սկսեց մշմշալ և գլուխը տանել-բերել:

– Դու բանի՞ մտիկ... սա ինչե՞ր է ասում...

Այնուհետև շատ անգամ Թունանյանը հիշեցնում էր ինձ և Շանթին իմ հանդգնությունը և ծիծաղելով կրկնում էր.

– Նա կարծում է, թե աշխարհքն էլի էն է:

Կարծեմ 1900 թվին էր, մի ճամփորդություն ձեռնարկեցինք դեպի Լոռի: Թունանյանն էր, Շանթը և ես: Քուլագերան կայարանից բարձրանալով Դսեղ թերակղզին՝ մենք զգացինք Թունանյանի «տան» շունչը: Մեզ համար մի դազա սարքեցինք Թունանյանենց տան առջև, ուր մենք գիշերն անց էինք կացնում: Թունանյանը ձեռանց շրջապատվեց իր հին ծանոթ գյուղացիներով, սկսեց «գրից» անել գյուղի ծերերի հետ, այնպես, կարծես թիֆլիսի կյանքը մի կարճատև պատահական ընդհատում էր եղել, և նա իսկույն վերադարձել է գյուղ՝ շարունակելու իր մշտական կյանքը այնտեղ: Դազան մեր առանձնասենյակն էր: Երբ վրա էր հասնում երեկոն, և գյուղացիները

քաշվում էին իրենց տները, թուճանյանն սկսում էր աղոտ լամպի լույսի տակ իր գրույցները Լոռու մասին:

Դսեղի խրճիթները կուչ էին գալիս մթնում, լռում էր ողջ գյուղը: Մեր դիմաց ճեղքվում էր Լոռու ձորը խավարով լի: Որտեղից էր՝ ծայն էր տալիս գիշերահավը: Քարափները «նոթերը կիտած» նայում էին մեզ: «Լոռեցի Սաքոն» կենդանանում էր մեր երևակայության մեջ:

Թուճանյանն իր «տանն» էր, իր թագավորության մեջ: Նա պատմում էր Լոռու մասին: Ձորը մի ժամանակ անտառով լիքն է եղել, անմարդաբնակ և վտանգավոր: Ձիով էին գնալիս եղել թիֆլիս, և այնտեղից էլ շատ հազվագյուտ մարդ կրճկներ Լոռի: Իսկական նահապետական կենցաղ:

Թուճանյանը միշտ Լոռու անցյալի մասին էր խոսում: Լոռու չորանները, Լոռու դագաները, ծերունիները, որ պատմելիս են եղել լեզգիների, պարսիկների, անգամ թաթարների արշավանքների մասին: Նոր գյուղը նրա համար արդեն խորթ էր որոշ չափով:

- Փչացավ ամեն բան, էլ ո՞ր են են հին աղաթները, հին մարդիկ:

Թուճանյանի ստեղծագործության աշխարհը այդ հին գյուղն էր մեծ մասամբ:

Ավելի ճիշտը՝ նրա ռոմանտիկան հին գյուղից էր: Անցնելով նոր գյուղին, որ վերջերում պատկերացնում էր նոր հարաբերությունները՝ Թուճանյանը զգայուն ռեալիստ էր:

Մեր ամբողջ շաբաթվա կյանքը Դսեղում բազմազանվեց նրա շրջակայքը դիտելով: Թուճանյանը տարավ մեզ ցույց տվեց Ս.Գրիգորի վանքը, Լոռու քարափների «աթոռիկները», «մտերի» գլխի խաչքարերը, աղբյուրները, այսինքն՝ «Լոռեցի Սաքոյի» և «Անուշի» թանգարանի բոլոր էքսպոնատները: Դսեղից անցանք Դարաքիլիսա, ուր մնացինք մի քանի օր:

Մեր «Վերնատան» հանդիպումները, այսինքն՝ այն երեկոն, որ նշանակված էր լինում իբրև գրական երեկո (որովհետև մենք հանդիպում էինք հաճախ և առանց որոշ գրական նպատակների), սկսեցինք բազմազանել: Մենք սկսեցինք քննադատական վերաբերմունք ցույց տալ մեզանից դուրս եղած գրականությանը և քննադատությանը: Ես զավեշտական թերթիկներ էի կազմում հատուկ այդ երեկոյի համար, ուր ծաղրանկարում էի զանազան անձնավորությունների: Մի անգամից ավելի Լեոն դառել է իմ նկարների հերոսը: Թուճանյանին դա շատ դուր էր գալիս: Հատկապես այդ շրջանում նա որոշակի սահմանագծված էր գրական-հասարակական կյանքում մյուս գրողներից և քննադատներից: Նա դեռ

չէր մոռացել «Մշակի» հալածանքը Արծրունու գրչի միջոցով, մի հալածանք, որ Մալումյանը շարունակում էր ամբողջ հայ բանաստեղծության դեմ ավելի ապերասան և ամբարտավան տոնով: Եվ ահա Լեոն, որ շարունակում էր նույն դիրքը բռնել գրականության հանդեպ՝ թումանյանին ստիպել էր լարված լինել և միշտ սպասել, որ այն կողմից կարող է հարվածվել գրականությունը: Թումանյանը մտահոգված էր այդ գրականության պաշտպանությամբ, նրա համար այդ գրականությունը որոշ կերպարանք էր առնում, և նա զգում էր, որ այդ նոր գրականությունը հակադրվում է հինին, ուրեմն՝ աշխատելը այդ նորի ստեղծման համար՝ ինքնին մի պայքար էր հնի դեմ:

Ես կամենում եմ լավ հիշել, թե ինչ պատկերացում ուներ թումանյանը այդ հին և նոր կոչված գրականության մասին: Ես չեմ կարող ասել, որ թումանյանը ժխտում էր, օրինակ՝ Գ.Քաթիպային: Բայց միաժամանակ չեմ կարող թումանյանին համարել Գ.Քաթիպային համակրող բանաստեղծ: Նա հիացմունքով էր խոսում Բաֆֆու մասին, Աբովյանը նրա մշտական զբաղմունքի առարկան էր: Պետք էր եզրակացնել այսպես, որ մի կողմ թողած հայ գրողների գրական-ստեղծագործական ուժն ու տաղանդը՝ թումանյանը հայ գրողների մեջ որոնում էր ազգային ժողովրդական տարրերը... Նա մեծապես ձգտում էր ազգային համերաշխության ուրիշ ազգերի վերաբերմամբ և հոգու խորքում ընդհանրապես հումանիստ էր շեքսպիրյան տիպի: Գրական ռեալիզմը, նրա ժողովրդական-դեմոկրատական ոգին մեծապես օգնեցին թումանյանին սթափ մնալու ազգայնական գրական ուղղությունից: Թումանյանը ամեն անգամ խորանում էր ժողովրդական ստեղծագործությունների լուսաբանության մեջ: Ժողովրդի կյանքը, ձգտումները, փիլիսոփայությունը, բանահյուսությունը, լեզուն՝ այս ամենը նրա ուղեցույց փարոսն էին: Ավելին: Թումանյանի քաղաքական-հասարակական տեսաբանության, ինչպես և նրա գործունեության մեջ կար մի ներքին ռեզուլյատոր, որ տնային հավատարիմ գործիքի պես պետք էր նրան: Դա ժողովրդական իմաստությունն էր, ժողովուրդը: Այդ ժողովուրդը, որ գրական խնդիրներում օգնում էր թումանյանին թեմաների, ձևերի, լեզվի, ոճի մշակման մեջ՝ ուղղություն էր տալիս նրա քաղաքական, հասարակական վարքագծին, որոշ պրոֆիլ էր տալիս նրա հայացքներին, ուժեղացնում նրա դեմոկրատիզմն ու հումանիզմը, որ թումանյանի ներքին, մշտական գիծն էր:

Թումանյանը շատ էր կարդում Կովկասի նվաճման պատմությունները: Ռուսական իմպերիալիզմի այդ դրվագը նրա մշտական զբաղումների առարկան էր: Նա վերապատմում էր կովկասյան լեռնցիներին, անդրկովկասյան խանությունների նվաճման, տաճկական պատե-

րազմների անվերջ շարանները: Նա շարունակ հիշատակում էր Պոտտոյի, ռուս և հայ զեներալների անունները:

Ի՞նչն էր նրան զբաղեցնում այս խնդրում:

Նրա մտահոգության առարկան հայ ժողովրդի պատմական վիճակն էր Անդրկովկասում: Ջուր չէր, որ թունանյանը մեծարում էր Աբովյանին, և այս մեծարանքը միայն «Վերքի» հեղինակի լուսավորչական, գրական-լեզվական բովանդակության հանդեպ չէր: Թունանյանը բաժանում էր Աբովյանի քաղաքական օրինետացիան՝ ռուսական օրինետացիան: Այս խնդիրը պետք է նրբացնել: Թունանյանը կողմնակից էր ոչ անպատճառ ցարական իշխանության, այլ ռուսական իշխանության, որ «հզոր պաշտպան է հայ ժողովրդին»: Կարելի է ավելի առաջ գնալ. – Թունանյանը ռուսասեր էր. նա ոչ-հայ ժողովուրդներից ամենից ավելի կապված էր ռուս ժողովրդի հետ՝ իբրև «հայ ժողովրդի բնական բարեկամի»: Սակայն անարդար կլիներ ասել, որ նա տածում էր խորթ զգացմունքներ դեպի Անդրկովկասի մնացյալ գլխավոր ժողովուրդները... Ջարմանալի նման էր Թունանյանը Աբովյանին՝ քաղաքական գաղափարով հարել էր ռուսական «հզոր» կառավարության, իսկ կենցաղային կերպով հարազատ էր զգում իրեն հարևան ժողովուրդներին և սիրում էր նրանց:

Ես հիշում եմ այդ տպավորությունը նրանից, հիշում եմ նրա պատկերացումները Անդրկովկասի մասին, հիշում եմ նաև ավելի ուշագրով մի բան, որ Թունանյանը դեռ շատ վաղ, քան հայ-թուրքական կոտորածներն էին, անհանգիստ էր և մտահոգ Անդրկովկասի քաղաքական վիճակի մասին: Դեռ այն ժամանակ, երբ հայ-թուրքական ընդհարումների մասին ոչ ոք չէր մտածում, անգամ չէր կասկածում Թունանյանը մտախռով հայացքը դարձնում էր դեպի այս խնդիրը: Նա ոչ մի տեսակի Անդրկովկաս չէր պատկերացնում առանց «ռուսների»: Այո՛, Թունանյանն Աբովյանի իսկական աշակերտն էր:

Ես կրկին առիթ կունենամ դառնալու այս խնդրին, երբ Անդրկովկասում արդեն ստեղծվեց «զեներալ Պոտտոյի իրականությունը»:

1903-ին ես գնացի Մոսկվա, այնտեղից վերադարձա Թիֆլիս, ուր «Վերնատան» աշխատանքները շարունակեցինք, մանավանդ, որ բավական նյութ կար: Վաղուց հրատարակվել էր «Երգերն ու վերքերը», ես գրել էի «Կյանքի տեսիլը», Շանթն սկսել էր հետաքրքրվել դրամատուրգիայով, իսկ որ ամենից գլխավորն է՝ Թունանյանը հրատարակում էր իր «Բանաստեղծությունների» ստվար հատորը:

Մեր գրական զրույցների նյութը մի փոքր փոխվել էր: Թունանյանը

օրավուր ավելի էր պնդում, որ պետք է մոտենալ ժողովրդին: Պետք է ունենալ իր սեփական ժողովրդի կապը: Ամենքս համաձայն էինք, բայց որ քննության էինք առնում, թե իրոք մեզանից ամեն մի՞նը կոնկրետ ի՞նչ կապով է կապված ժողովրդի հետ՝ դուրս էր գալիս ոչ այնքան ներդաշնակ պատկեր. Աղայանը «Գուգարաց աշխարհքից» էր, Թումանյանը թագավորում էր Լոռում, Ավետիք Իսահակյանն ուներ իր երկիրը՝ Շիրակը: Իսկ Շա՞մթը, ե՞ս...Որոշվեց, որ Շամթը երկիր չունի, իսկ ես կարծես թե կապված եմ «ճորոխի հովտի հետ»: Այս կատակների տակին կար անշուշտ ճշմարտություն, և էականն այն էր, որ Աղայանը, Թումանյանն ու Իսահակյանը մեծապես կապված էին իրենց գավառների հետ:

Այս ամենի իմաստը գրականության ուղղությունն էր, որ պիտի աղբյուր ընտրեր ժողովրդական ստեղծագործությունը: Աղայանն ու Թումանյանը այդ մոտիկությունը հասկանում էին աշխարհայացքի, թեմատիկայի տեսակետից ևս, նրանցից ետ չէր մնում Ավ.Իսահակյանը, որ առանձին եռանդով ուսումնասիրում էր ժողովուրդների էպոսը, նյութ պատրաստելով իր քաղաքական էպոսի համար սուլթան Աբդուլ Չամիդի և հայ ժողովրդի կռիվը պատկերելու:

Աղայանը դադարել էր գրելուց, Ավ.Իսահակյանը հետզհետե թողնում էր ժողովրդական լեզուն ժողովրդական նյութի հետ՝ անցնելով իր «մարգարեական», միջշեական նյութերին, Շամթը արդեն իսկ հեռու էր որևէ ժողովրդայնությունից, ինչպես և ես, որ ժողովրդայնությունը չէի հասկանում միայն թեմատիկայի և լեզվի արտաքին նշաններում: Այնպես որ Թումանյանը՝ միակ ակտիվը այդ ուղղության մեջ, մնաց մենակ: Մնալով մենակ, սակայն, Թումանյանը չթուլացրեց իր համակրանքը դեպի ժողովրդական ստեղծագործությունը: Արդեն իսկ նրա և՛ թեմատիկան, և՛ գաղափարախոսությունը, և՛ արտաքին ձևը ամբողջանում, զարգանում էր, դառնում շատ պատկառելի գրականություն: Թումանյանի ազդեցությունը մեծանում էր, դառնում տիրական: Եվ դա պատահական ու զարմանալի չէր: Թումանյանի ստեղծագործության բոլոր միջոցները ամենահասկանալի, ամենադյուրին հատկություններով էին օժտված: Ես ամենահանրամատչելի բանաստեղծն էր:

1905 թվին ես գնացի Շվեյցարիա, ուր մնացի մինչև 1910 թիվը: Թումանյանից լուրեր ստանում էի շատ հատ ու կենտ: Տեղի էր ունեցել մեծ պատմական դեպք՝ Ռուսաստանի առաջին հեղափոխությունը...

Երբ ես 1910 թվին վերադարձա Թիֆլիս՝ Թումանյանը ակտիվացել էր քաղաքական-հասարակական կյանքի մեջ: Նրա մոտով անցել էր հեղափոխության փոթորիկը, որին թեև չէր մասնակցել, բայց նրան վիճակվել էր դրական դեր կատարել հայ-թուրքական ընդհարումները

կանխելու գործում, ընդհարումներ, որ ցարական պրովոկացիայի արդյունք էին:

Ուշագրավ է թունանյանի սուբյեկտիվ վերաբերմունքը դեպի այդ պատմությունը, նրա դերը և ապրումները:

Թունանյանը լեռնցի էր և իբրև այդպիսին զուրկ չէր որոշ քաջասարտությունից: Նա հաճախ էր պատմում լեռնցիների հիշողությունների մասին, որի նյութը լեզգիների արշավանքներն էին: Լոռեցիների պատմելու սերը այն աստիճան է զարգացած եղել, որ նրանք ավանդաբար պահել են աղոտ հիշողություններ անգամ թաթարների արշավանքներից: Լեզգի հրոսակների դեմ մղած կռիվների նկարագրություններով թունանյանը պահում էր մեզ իր մոտ մինչև կեսգիշեր և ավելի: Այդ պատմությունների մեջ առանձին տեղ էր գրավում նրա պապ Օվակիմ Յուզբաշին, որի մասին հիշում է նաև Աբովյանը... Թունանյանն արտակարգ նշանածիզ էր ի միջի այլոց: Նա գնացել էր Լոռի՝ կազմակերպելու Լոռու ինքնապաշտպանությունը: Նա իբրև արիասիրտ լեռնցի ավելի զուսպ էր, զգուշավոր և դեմ էր ամեն տեսակ արյունահեղության՝ իբրև մարդ: Նրա մեջ զարթնել և խոսել էր լոռեցու հարևանական զգացմունքը թուրքերի հանդեպ: Ես հիշում եմ, որ երբ նա պատմում էր Լոռու ինքնապաշտպանության մասին, որ փառավորապես գլուխ էր եկել առանց արյունահեղության՝ մեզ կատարելապես համոզում էր, որ կարելի էր թուրք ժողովրդի հետ լեզու գտնել մի երրորդ ուժի ներկայությամբ: Թունանյանը գտավ այդ լեզուն և գտավ հատուկ թունանյանական «ոճով»... Լոռու և Բորչալուի փոխհարաբերությունները բարդվում էին այն հանգամանքով, որ բորչալուեցի թուրքերը ամառները բարձրանում են Լոռու լեռները: Այդ քոչը կարող էր ամեն տեսակ անակնկալի տեղիք տալ: Կարող էին թուրքերը իրենց ճանապարհը «մաքրել» անարգել սար բարձրանալու համար. կարող էին հայերը փակել նրանց ճանապարհը և անասունները կոտորել տալ չոր ու շոգ հարթավայրում կամ հարձակվել այդ հարթավայրերը և թուլացնել «թշնամուն»: Խնդիրն, ինչպես տեսնում եք, շատ էր բարդ: Թունանյանը պատմում էր, որ իր ձեռքի տակ այնքան ուժ կար, որ կարելի էր ոչ միայն պաշտպանվել, այլև թերևս հարձակվել: Լոռու լեռնային դիրքը, վրա հասնող ամառվա շոգը հարթավայրերում, այս ամենը նպաստավոր հանգամանքներ էին լոռեցիների համար: Թունանյանը նախ կազմակերպում է լոռեցիների խումբը, այնուհետև խմբի գլուխ անցած շրջում է գյուղերը՝ հասկացնում ժողովրդին, որ հարկավոր է խաղաղ մնալ թուրքերի հանդեպ և հաշտության համաձայնություն կնքել նրանց հետ: Թունանյանը պատմեց մի էպիզոդ իր այդ արշավանքից: Երբ մտնում են ձորը և մոտենում Ալավերդու հանքերին՝ նրանց հանդեպ է դուրս գալիս

մի սարսափած պարսիկ բանվոր և սփրթնած, ձեռները երկինք կարկառած վազում դեպի թումանյանը:

– Ալլահ վար... աստված կա'... – այդքանն է միայն կարողանում արտասանել մահի սպասող պարսիկը, կամենալով մի կերպ ողորել թումանյանի սիրտը:

– Ես ձեռս բարձրացրի, ասի, բա', իհարկե', աստված կա, իհարկե' ալլահ վար, բա ո'նց պտի ըլի, բա մարդկություն չկա°, խիղճ չկա°, վախիլ մի', դարդաշ...

Նա պատմում էր հաճախ և ամեն անգամ ինքը ևս գունատվում էր, դեմքն ընդունում էր նույն սարսափի արտահայտությունը, ծայրի մեջ դողում էր նույն ատելությունը հրեշավոր սպանությունների դիմաց և բողոքը, զգվանքը այն լայնածավալ, ժողովրդակրօժան պրովոկացիայի դեմ, որ հարուցել էր ցարական կառավարությունը, որին զոհ էին գնում երկու հարևան ժողովուրդները:

Թումանյանի խումբը գնում է Լոռու և Բորչալուի սահմանը, չեն հիշում որտեղ, և մոտենում թուրք խմբին: Թումանյանի խումբը սպիտակ դրոշակով կանգնում է իր դիրքերում, թուրքերն իրենց դիրքերում: Սկսվում են բանակցությունները: Թումանյանն առաջարկում է խաղաղություն և բարի դրացիական հարաբերություններ: Թուրքերն ընդունում են: Թումանյանը մի փոքր խմբով առաջ է շարժվում մոտենալու թուրքերին: Ստեղծվում է լարման մի մոմենտ, երբ ամենափոքր մի պրովոկացիա կարող էր բոլորովին հակառակ պատկեր ստեղծել:

Եվ իրոք, հենց որ Թումանյանի խումբը դիրքերից դուրս եկած և բաց հովիտն է հասած լինում՝ թուրքերը համազարկ են տալիս օդում՝ փորձելու համար հայ խմբի իսկական մտադրությունը: Վերջիններս չեն պատասխանում, որից հետո թուրքերը՝ միանգամայն վստահացած, թողնում են իրենց մոտենալու: Հայ և թուրք խմբերը մերձենում են իրար և խաղաղության համաձայնություն կնքում միմյանց հետ:

Ես միշտ հիշում էի «Սասունցի Դավթի» վերջաբանը, և ինձ համար միշտ պարզ էր Թումանյանի պատկերացրած ժողովուրդների համերաշխության յուրահատուկ մեթոդը:

Այո, թուրք ժողովրդի հարևանական կապերը Լոռու ժողովրդի հետ, տնտեսության յուրահատուկ ձևը՝ մի կողմից քոչվորությունը, մյուս կողմից բատրակությունը և այլ բազմաթիվ կենցաղային կապեր հիմք ծառայեցին, որ Թումանյանը կարողանար իրականացնել արդեն բավականին փոխադարձ անվստահության մատնված հայերի և թուրքերի անարյուն հանդիպումը Լոռու և Բորչալուի սահմանի վրա և հաստատ պահելու այդ բարեկամությունը մինչև վերջ:

Թումանյանը լեռնցի էր, ուստի և ռեալիստ՝ «ազգանական» խնդիրեն-

րում: Իսկ նրա խաղաղասեր մտայնությունը նրան միշտ թելադրում էր ավելի հեռուները նայել և տեսնել ժողովուրդների համերաշխության հնարավոր ապագան:

Թումանյանի կենցաղագետները շատ մեծ տեղ էին տալիս նրա կերուխումներին: Սա ճիշտ է, բայց արտաքնապես. Թումանյանին հաճախ կարելի էր տեսնել սեղանի շուրջ և նույնքան հաճախ իբրև թամադա: Նա էպիկուրյան էր մի փոքր: Սակայն ներքուստ նրան դուր էր գալիս ընկերական ասուլիսը, ուրախ ժամանցը: Եվ քանի որ սեղան մստել չէր կարելի 3, 4, 5 ժամ շարունակ, ուստի և ասուլիսը, «գրիցը» տևում էր ամբողջ օրը՝ առավոտյան ժամը 8-ից թեկուզ մինչև կեսգիշեր և անց:

– Ա՛յ տղա, դե գրից ենք անում, մստի՛ր, ո՞ւր ես գնում, – պահում էր նա հյուրին, որը առավոտից մինչև կեսգիշեր մստել էր նրա մոտ և գիշերը ժամը մեկին, երկուսին վեր էր կենում տուն գնալու:

Նրա մեջ խոսում էր լռեցու գրուցասիրությունը, որ զարգանում է արկածների հետ գործ ունեցող որսորդների, հովիվների մեջ, երբ ոչխարի հոտը հանգիստ բաց թողնելով, մստում են կրակի շուրջը և գրուցում:

Թումանյանը գյուղացի էր մինչև իր ոսկրի ծուծը: Հաճախ նրան նայելիս, երբ նա իր սւլացիկ, միհար, բարձրահասակ կազմի վրա կրում էր սև երկար սերթուկը, թվում էր, թե նա չուխա է հագել և պակասում է մեջքին թողավոր գոտին և խանչալը: Սակայն Թումանյանը գյուղացի էր և ներքուստ: Նա հյուրամուլ էր և չէր հանգստանում՝ մինչև մեկին չէր բերում տուն մստեցնելու իր սեղանի շուրջը: Աբովյանի գյուղացին, որ հյուրի համար կռիվ էր անում հարևանի հետ, որ իր տունը հյուրանոցի պես էր պահում՝ Թումանյանի նախատիպն է: Ասենք, նա այդ հատկությունը ժառանգել էր նաև իր հորից:

– Ա՛յ տղա, որտե՞ղ էիր ճաշին,– այս խոսքերով էր նա դիմավորում երեկոյան դեմ ներս մտնող հյուրին:

«Տղա» – դա ամենքի կոչանունն էր՝ բացի եպիսկոպոսներից և կանանցից:

Թումանյանը թովիչ հատկություն ուներ: Արդեն նրան տեսնելով դահլիճի մեջտեղ կամ առանձնասենյակի թիկնաթոռին կամ սեղանատանը սեղանի գլխին մստած՝ ներս մտնելիս հյուրը զգում էր, որ սենյակը լիքն է: Թումանյանը լցնում էր բնակարանը, մարդկանց հավաքությամբ: Նրա դահլիճը «մեջլիս» էր: Իսկ այդքան հյուրերի բազմությունը, հաճախությունը, հազար ու մի առիթներով գնալ-գալը, այդ հացկերությունը, աշխույժը նրա տունը դարձրել էին վանք, տոնախմբություն, շարունակական, հարատև տեսակցությունների վայր:

Եվ ովքե՞ր չէին լինում թունանյանի տանը:

Ես կարող եմ ասել, որ 90-ական թվականների երկրորդ կեսի և 900-ական թվականների ընթացքում մինչև 1922 թիվը Հովհաննես Թունանյանին այցելել, տեսակցել, հաճախ բնակվել են նրա տանը Թիֆլիսի և Անդրկովկասի քիչ թե շատ աչքի ընկնող մարդկանց զգալի մասը: Նրա տունը ժամադրավայր էր անգամ այն օրերին, երբ նա բացակա էր տանից կամ քաղաքից: Նրա հետ բարեկամական կամ այլ կապեր ունեին ժամանակի բոլոր քաղաքական, կուլտուրական, առևտրական, էլ չեն ասում արվեստի ու գրականության մարդիկ: Պակաս չէին և զինվորականները՝ վերջին տարիներին: Նրան էր դիմում զնդապետ թե գեներալ Կուլեբյակինը, որ Վանի ճակատում սկսել էր ծանոթանալ հայկական հնությունների և հայերի հետ, սկսել էր պոեմներ գրել Վանա կյանքից: Այցելուները հաճախ ի մի հավաքվելով, խորթ ու զարմացած իրար էին նայում՝ երբեք չերևակայելով, որ կարող էին իրար հանդիպել փողոցում կամ այլուր: Թունանյանին պետք է համարել թերևս առաջին գրողը, որի հետ ոչ միայն ծանոթ էին օտարազգի՝ ասենք վրացի, ռուս, թուրք գրողները, այլև կենցաղային կապ ունեին նրա հետ և նրա միջոցով ծանոթացան հայ գրողներից ոմանց հետ:

Այդ տարիներին էր, որ «գտնվեց» Սայաթ-Նովան: «Գտնողը» Աղբալյանն էր. նա երգում էր Սայաթ-Նովայի այն եղանակները, որ այժմ տարածված են ամենուրեք: Բայց այնուհետև Սայաթ-Նովային վեր հանեց և քաղաքացիական իրավունք նվաճեց Թունանյանը: Ձեկուցումներ, գրույցներ, հանդեսներ՝ այս բոլորը Թունանյանի զենքերն էին, որով ժողովրդականացնում էր նա Սայաթ-Նովային: Սայաթ-Նովան մտավ դպրոցների ծրագրի մեջ: Ամենքին հայտնի է այն շքեղ հանդեսը, որով Հայ գրողների ընկերության վարչության նախագահ Թունանյանը բաց արեց Սայաթ-Նովայի արծանը: Ժողովրդական բանաստեղծությունը, ժողովրդական շունչը մտավ գրականության մեջ: Սկսվեց հետաքրքրությունը դեպի ժողովրդական բանահյուսությունը:

Միքայելյան փողոցի այգիներից մեկում Թունանյանի նախածեռնությամբ մի ճաշկերույթ սարքվեց, ուր հայ ինտելիգենցիան պատվեց Սայաթ-Նովային: Հիշում եմ երկու երաժշտական խմբերի մրցումը իրար հետ. դուդուկչի Բագրատի և աշուղ Հագիրիի: Առաջինը նվագում էր «Թարաքյամա», երկրորդը՝ Սայաթ-Նովայից: Եվ երբ Բագրատը տեսավ, որ Հագիրին է դառնում խանդավառության առարկա՝ ինքն էլ շուռ տվեց Ծատուրյանի «Մի լար, բլբուլի» վրա, որը նույնպես խլացավ Սայաթ-Նովայի երգերի և ինտելիգենցիայի՝ սրան նվիրած ծափահարությունների մեջ:

Թուճանյանը հաղթական ժպիտով դիտում էր և հրճվում:

Տեղն է այժմ գրել Բրյուսովի նշանավոր այցելության մասին Թիֆլիս՝ «Բրյուսովյան օրերի» մասին: Կարծեմ դա 1916 թվին էր:

Թուճանյանը կենդանի հետաքրքրությամբ մասնակցեց Բրյուսովին Թիֆլիս հրավիրելուն և նրա գրական երեկոն կազմակերպելուն: Բրյուսովը Մոսկվայի հայկական կոմիտեի ձեռնարկությամբ և Պ.Մալինցյանի, Տերյանի և Կ.Միքայելյանի աջակցությամբ ձեռնարկել է ուսումնասիրելու հայ գրականությունը սկզբից մինչև <մեր> օրերը և հրատարակել մի ժողովածու ռուսերեն թարգմանությամբ: Որոշ նախապատրաստությունից հետո Բրյուսովը եկավ Թիֆլիս՝ կենդանի շփումն ունենալու համար հայ իրականության հետ և ծանոթացնելու իր ձեռնարկած գործին: Հայ ինտելիգենցիան, գրողները Թուճանյանի գլխավորությամբ շրջապատեցին նշանավոր ռուս բանաստեղծին: Թուճանյանը նախանձախնդիր կերպով միջամտեց հաջող կազմակերպելու Բրյուսովի ընդունելությունն ու ձեռնարկը: Դժվարություններ կային: Երևույթը նոր էր և ուշագրավ: Ճիշտ է, Բրյուսովը ուներ բավականին հմուտ խորհրդատուներ Մոսկվայում, ուր կազմված էր ժողովածուի բովանդակության ծրագիրը, բայց ժողովածուն ինքը կարող էր հանդիպել հայ մտավորականության որոշ մասի խեթ վերաբերմունքին: Թուճանյանը զգում էր այդ և նեղ շրջանում խոսում այդ մասին:

Թուճանյանը պնդում էր շեշտը դնելու հայ ժողովրդական բանահյուսության և միջնադարյան բանաստեղծության վրա: Մոսկվայում, ասենք, արդեն դրված էր նույն ուղեգիծը կամ նման ուղեգիծ, և Բրյուսովը ինքն էլ որոշ չափով ծանոթանալով իրեն հանձնված նյութերին՝ սկսել էր ինքնուրույն վերաբերմունք ցույց տալ խնդրին: Նա էլ մեծապես գնահատում էր հայ ժողովրդական բանահյուսությունը, կլասիկներին, միջնադարյաններին: Այնպես որ՝ բրյուսովյան ժողովածուն հայ միջնադարի վերհանումն եղավ գերազանցապես, որից հետո նվազ փայլով՝ նաև միջնադարյան երգիչների շառավիղ՝ Հովնաթան Նաղաշը, մանավանդ, Սայաթ-Նովան: Ինչ խոսք, որ դրանց հետևում էր նոր բանաստեղծության՝ Հովհ. Հովհաննիսյանի, Թուճանյանի, Իսահակյանի և Տերյանի մեծարունդ: Սակայն պետք է վերապահորեն ասեմ, որ արժանի տուրքը տրվելու էր և տրվեց էլ հայ գրականության մյուս բոլոր ներկայացուցիչներին, որոնցից ժողովածու մտան ամենից արժանի գործերը:

Թուճանյանը զուր չէր մտահոգվում Բրյուսովի երեկոյի և առհասարակ այդ նոր դեպքի բախտով... Ձեկուցման երեկոյին երկու լրագրերի դիրքերից էլ կարող էին արշավանք սկսել հայ գրականության դեմ՝ նրա հետ պատահած այդ աննախընթաց դեպքի առթիվ: Մինչև Բրյուսովի զեկուցման երեկոն Թուճանյանի տունը

հանդիսավոր տեսք էր ստացել: Բրյուսովը այնտեղ էր լինում համարյա ամբողջ օրեր, թունանյանը ծանոթացնում էր այցելուներին հյուրի հետ, ներկայացնում էր հայ գրողներին: Բրյուսովը, Ճիշտ է, կամենում էր իր ժողովածուի մեջ ընդգրկել ամբողջ հայ գրականությունը իր բովանդակ դարաշրջաններով, ուղղություններով և ներկայացուցիչներով, բայց թունանյանի հետ ունեցած գրույցներով պարզ արտահայտում էր իր անձնական վերաբերմունքը դեպի այլևայլ շրջաններն ու գրողները: Թունանյանի և Բրյուսովի տեսակետները բռնում էին շատ բաներում: Դրանք մեր «Վերնատան» տեսակետներն էին: Այն, որ մեր գրականության հարատև աստղերը կարող են լինել միայն այն գրողները, հնագույն կամ նորագույն, որոնք հեռու են եղել ազգայնական-տենդենցիոզ ուղղությունից, տվել են համամարդկային գաղափարներ և պայքարել են գրական բարձր որակի համար: Հայ կլասիկների և գեղարվեստական արժեքների վերհանման խնդիրն էր ծեծվում:

*Վերելոն տեղի> ունեցավ Արտիստական ընկերության թատրոնի համերգասրահում: Սրահը ծայրեծայր լեփ-լեցուն էր: Եկել էր մեծ բազմությամբ հայ մտավորականությունը՝ գրողներ, արվեստագետներ, ուսուցիչներ, մամուլի աշխատողներ, պակաս չէին և վրացի մտավորականությունից, ինչպես գրողներ, նույնպես և այլ շերտերից: Բայց ամենից զվարճալին այն էր, որ բարեհաճել էր շնորհ բերել նաև հայ բուրժուազիան, բուրժուական մտավորականությունը Սոլովակից: Կարծեմ առաջին անգամ պատմության մեջ այս երանելի դասակարգը երջանկացնում էր հայ կուլտուրայի ասպարեզը իր ներկայությամբ:

Ամբիոն բարձրացավ Բրյուսովը՝ թունանյանի նախագահությամբ: Նրա անկյունավոր կազմվածքը, մտախոհ, ինքնամփոփ դեմքը և թախծոտ ձայնը տարօրինակ ներդաշնակություն էր կազմում այն նյութի հետ, որի մասին զեկուցում և միաժամանակ արտասանում էր նա: Բրյուսովը կարդում էր իր զեկուցումը համոզված շեշտով, իբրև մի շատ վաղուց ընդունված, հաստատված ճշմարտության մասին: Նա, վեր հանելով հայ միջնադարը՝ Ֆրիկը, Աղթամարցին, Քուչակը, ապա և նոր դարերը՝ իր հովանաթանով և Սայաթ-Նովայով, չէր կամենում զարմացնել ոչ ոքի՝ ասելով, որ դրանք հոյակապ բանաստեղծներ են...

... Մինչ այս գրական աղմուկը վրդովում էր թիֆլիսի ներամփոփ գրական հասարակայնությանը՝ շուրջը և ամբողջ աշխարհում ջղաձգվում էր իմպերիալիստական պատերազմը: Ի՞նչն էր այս հակասական պատկերի իմաստը: Ինչպե՞ս էր կարողանում այս գրական հովվերգությունը ոչ թե միայն տեղի ունենալ, այլև հասկացվել մի այնպիսի զարհուրելի հրաբուխի վրա, որը ոչ թե պատրաստվում էր ժայթքելու, այլ ժայթքել էր: Այդ հովվերգության ամբողջ

**Բնագրում մի հատված պակաս է:*

հրեշավորությունը այժմ է հասկանալի ինձ համար: Սակայն թողնում եմ ինձ և անցնում թունամյանհին: Ինչով էր զբաղված այն ժամանակ թունամյանը:

Չեմ կարող մշտազբաղ թունամյանի այս տարիների հիշողություններիցս հեռացնել մի տխուր գիծ նրա կենսագրության մեջ: Դա նրա մեծ եղբոր՝ Ռոստոմի մասին պատմություններն էին: Ռոստոմը Մարցի կավածների կառավարիչ էր՝ նշանակված Էջմիածնի վանական կառավարության կողմից: Նա այնտեղ խստություններ էր գործադրում գյուղացիների դեմ: Վերջը նրան սպանեցին գյուղացիները: Ճիշտ է, սպանության անմիջական դրողողը ինքը ևս կարծեմ կալվածական վեճ ուներ թունամյանների, ճիշտը՝ Ռոստոմի հետ, բայց որ գյուղացիները գրգռված էին Ռոստոմի դեմ – դա ճիշտ է: Ռոստոմը կարողանում էր իր դիրքերում մնալ թունամյանի շնորհիվ: Չեմ կարող որոշակի ասել, թե արդյոք թունամյանն ի՞նքն էր աջակցում, որ իր եղբայրը մնա այդ պաշտոնում, թե՞ եղբայրը մնում էր պաշտոնում, որովհետև Էջմիածնի կառավարությունը թունամյանի անվան համար պահում էր այդ կառավարչին: Միաժամանակ չեմ կարող ասել, թե ո՞ր աստիճան ճիշտ են Ռոստոմի խստությունների մասին պատմածները, որովհետև ինձ հայտնի են բազմաթիվ նկարագրություններ, թե ինչպես էին Լոռում ոչնչացնում անտառները: Բայց շատ բաներ էին խոսում, և թունամյանը լռում էր:

Պատերազմի տարիները (1914-1918) փոթորկալից եղան թունամյանի համար թիֆլիսի իրականության մեջ: Թունամյանը ուրիշ կարծիք ուներ գրողի մասին հասարակական-պատմական շարժումների ժամանակ: Մինչ շատերը գրողներից կապված էին միմիայն իրենց գրասեղանների հետ և արտաքին աշխարհի անցուդարձերի սոսկական դիտողներն էին լինում՝ նա <մասնակցում էր>: Գրողը պետք է այնտեղ լինի, որտեղ իր ժողովուրդն է, գրողը պետք է իր ժողովրդի հետ կրի նրա նեղություններն ու վայելի նրա խնդությունները – այս էր թունամյանի միտքը, որ շարունակ արտահայտում էր նա: Սա նրա լուզուզն էր...

Հայ գրողների ընկերության վարչության նախագահությունը, ուրիշ բազմաթիվ պարտականությունների հետ, թունամյանին դարձրել էին բազմազբաղ մի մարդ, որ չէր իմանում որին հասնի, որին բավարարի: Խոսք չի կարող լինել, որ ամենքի համար աշխատող թունամյանը ամենքին էլ չէր կարող բավարարել: Նա հոգսում էր, ցրվում: Իհարկե, նա լավ շփվում էր իր շրջապատող հասարակության հետ, լավ ճանաչում էր իր ժամանակակիցներին, նա իր ժամանակի ամենահասարակական գրողն էր: Ճիշտ է, որ նրա ժամանակի հասարակությունն էլ նրան էր դիմում ամեն խնդրում: Ամենահակառակ

հոսանքների ներկայացուցիչները նրա հետ սերտ կապ ունեին և դիմում էին նրա օգնության իրենց գործերի համար:

Թումանյանը մեծ նշանակություն էր տալիս մարդկային անձնական շփման, անձնական ազդեցության: Նա սիրում էր մարդկանց բարեկամության շրջապատումը իր անձին: Եվ եթե մարդիկ, շրջապատելով նրան, նրանք էլ իրենց կողմից ունեին իրենց անձնական հաճույքը, շահերը և նպատակները՝ նույն հաճույքն ու նպատակներն ուներ նա Թումանյանը: Իհարկե, շատ բարդ է այս երևույթը ինքնին և միայն վերոհիշյալ դրդապատճառներով չի կարելի բացատրել այդ բարեկամությունը: Թումանյանը ի բնե հասարակական բնագոյնը ունեցող մարդ էր, սիրում էր աղմուկ, աշխույժ, սեր, բարեկամություն: Իրեն շրջապատող մարդկանցով նա ճշտում էր իր մտքերը, ստեղծագործությունները, տարածում էր իր գաղափարները, ընթացք էր տալիս մտքերին: Նա կարիք էր զգում ամենքին հայտնել, ամենքի ուշադրությունը գրավել իր որևէ գրական գործի մտադրության, կատարման կողմը...

Չեմ հիշում, 1916 թվին էր, թե 17-ին՝ Վանից Պարսկաստան փախած խմբերի հետ անհետացավ Թումանյանի որդին՝ Արտավազը:

Այդ դեպքը խոր խոցեց նրան: Առհասարակ արիասիրտ էր Թումանյանը, փիլիսոփա և դժբախտությունների մեջ՝ հասարակական թե անձնական՝ տղամարդ էր, բայց հենց այդ էր պատճառը, որ նա ավելի խորն էր տանջվում: Արտավազը հեզաբարո էր և համակրելի ձգտումներ ուներ, նկարչություն էր սովորում, և ես չեմ հիշում որևէ գծություն նրա և հոր մեջ: Արտիկին սիրում էին ամենքը: Եվ ահա բախտը հարվածեց Թումանյանին, այդպիսի մի զավակը Պարսկաստանի մի խորքում ով գիտե ինչ զազանությամբ սպանել տալով: Որքան հիշում եմ՝ Արտիկը Վան էր գնացել ոչ որպես կռվող, այլ թիկունքում ինչ-որ աշխատանք կատարելու:

Թումանյանը վաղուց էր սկսել իր քառյակները: Դա նրա պոեզիայի անձնական մատյանն էր: Հասարակական կյանքի եռուզեռի մեջ Թումանյանն ուներ, սակայն, իր ներանձնական մեկուսացումները: Նա սկսեց իր այդ քառյակներում ողբալ իր վիշտը:

– Գնա՛ց, հետ չեկավ, – ասում էր նա ինձ հաճախ և տխուր օրորվում էր ճոճաթռում:

Եվ ամեն անգամ առանձին ժամերին, երբ նա նստած իր ճոճաթռնին, զլխիկոր, լռում էր, ես սպասում էի, որ ահա զլուխը վեր կբարձրանա և աչքերիս կուղղվի Թումանյանի մշուշոտ հայացքը խորին, խորի՛ն տխրությամբ:

– Ախր ի՞նչ էլավ խեղճ քորփիս...

Թումանյանն անճանաչելի էր իր տխրության ժամերին: «Ժպտադեմ

պոետը», «մշտաժպիտ թունանյանը», «կենսուրախ բանաստեղծը» – այս են սովորաբար թունանյանին բնորոշող բառերը նրա մասին խոսող մարդկանց: Բայց թունանյանն ուներ իր ներքին, թաքուն աշխարհը, երբ նա խոսում էր իր անհատական ապրումների մասին՝ բոլորովին փոխվում էր: Լռում էին նրան շրջապատող բյուրոների, վարչությունների, այցելուների աղմուկները, կորչում էին առօրյա խնդիրները, և թունանյանը խոսում էր իր վշտերի ու մտքերի մասին:

Եվ «կենսուրախ» բանաստեղծը գանգատվում էր մարդկանցից: Գանգատվում էր ոչ վերացական մտքով, այլ կոնկրետ այն մարդկանցից, որոնցով շրջապատված էր...

Թունանյանը իմ ներկայությամբ խոսում էր ինքն իր հետ: Նա գոհ էր ոչ միայն իր շրջապատող շատ մարդկանցից, մանավանդ հարուստներից, նա գոհ էր նաև ինքն իրենից, իր վարած կյանքից: Նա շատ էր երազում Լոռու Իգատակ կալվածքում մի տան մասին, որ մտադիր էր կառուցել՝ հենց որ «ես դալմադալները վերջանան», – փոխադրել գրադարանն այնտեղ, ապրել բնության գրկում և ստեղծագործել: Նա հոգնած էր, հոգնած էր ոչ միայն մարմնով, այլև հոգով, այլև իրենից, իր բնավորությունից: Եթե իր շրջապատողները շատ էին խանգարել և խանգարում նրան՝ ինքն էլ պակաս էր օգնում նրանց այդ գործում: Եթե ամեն մարդ, կազմակերպություն նրան էր դիմում իր գործերին օժանդակելու՝ ինքն էլ պակաս էր վազում այդ գործերը գտնելու և խառնվելու դրանց:

Ոչ, թունանյանը ինքը ևս տանջում էր իրեն: Թունանյանը շատ բարդ մարդ էր: Նրան հասկանալը շատ դյուրին բան է: Շատերն են նրան բնորոշել և ընկել սխալների մեջ: Բնորոշել են նրան արտաքինից, միակողմանի և դուրս բերել «հաճելի», «կենսուրախ», «բարի» կամ «դիվանագետ»... Սխալ է այդ միակողմանիությունը: Թունանյանը բազմակողմանի գծերի մի կոնպլեքս էր...

Թունանյանը լավ էր ծանաչում մարդկանց, բայց էր ցույց տալիս այդ, ձևացնում էր, թե չի տեսնում: Դա միայն նրա համար էր, որ շոյի դիմացինին, այլև նրա համար, «որ վատը լավ տեսնի» նաև ինքը: Նա բռնի իդեալականացնում էր կյանքը, մարդկանց, ջանում էր նրանց բարձրացնել իր աչքում, ջանալով և իրեն բարձրացնել նրանց և իր աչքում...

Նա իդեալիստ էր և ձգտումներ ուներ բարձրանալու և բարձրացնելու: Նա պատկերացնում էր իր ժողովրդի համար մի բարձր կուլտուրական վիճակ: Որտեղի՞ց պետք է ձեռք բերվեր այդ վիճակը, ո՞վ պետք է ձեռք բերեր այդ: Դա մենակ թունանյանը էր, որ չգիտեր: Բայց թունանյանը մեկն էր նրանցից, որ երազում էին այդ կուլտուրան: Դա անշուշտ քաղաքական երազ էր... Եվ այսպիսով, թեև պարզ էր,

թե ի՞նչ քաղաքական վիճակում պիտի ստացվի այդ կուլտուրան, բայց հայ ինտելիգենցիայի մեջ թունանյաճը ևս մեկն էր, որ ձգտում էր դրան և ամենայն ուժով:

Թունանյանի իդեալիզմը զարգացել և ձևափոխվել էր ռոմանտիզմի: Նա ստեղծել էր մի գունագեղ, «մաքուր», «բարի», «իմաստուն» և հեռավոր աշխարհ, ուր «չարը» դադարում է գոյություն ունենալ, ուր իշխում են «բարին», «գեղեցիկը», «վեհը»: Սրանք հասարակ ցնորքներ չէին հոգեկան առանձնության ժամերին միտքը զբաղեցնելու համար: Այդ պատկերացումներն ու ձգտումները մտնում էին նրա ստեղծագործությունների մեջ: Ավելին: Նա ջանում էր այդ «գեղեցիկը», «իմաստունը» և «բարին» մտցնել իր առօրյա կենցաղի, իր շրջապատող հասարակության մեջ...

Մի փոքր առաջ ընկնելով պիտի նշեմ, որ թունանյանի այդ ռոմանտիզմը զարգացավ և փոխվեց նրա կյանքի վերջին շրջանում՝ միստիցիզմի, միստիկական հոգեխոսությունների...

Այս շրջանում նա կարիք էր զգում հավասարակշռությունը պահելու: Սիրած զավակի կորուստը, ներքին հիվանդությունը, ժողովրդական աղետներն ու հասարակական խնդիրների սխալ լուսաբանությունները և ներքին անտագոնիզմը իրեն շրջապատող հասարակության դեմ, այս ամենը նրան տարան հաշտության եզրը, մի ընդհանուր լեզու գտնելու մահվան ուրվականի հետ, որ կանգնած էր նրա ճանապարհին:

Թունանյանն ուներ հարուստ գրադարան: Չի կարելի ասել, թե նա հավաքում էր ամեն գիրք: Նրա գրքերը զարմանալի մեթոդով էին հավաքված: Թունանյանը հոտառություն ուներ պետքական գրքի: Կովկասագիտություն, պատմություն, արվեստներ, համաշխարհային գրականություն, հազվագյուտ գրքեր, ունիկոմներ՝ ամեն բան հավաքում էր: Կարդո՞ւմ էր նա: Ո՛չ շատ, ո՛չ ամեն բան լրիվ: Նա կարդում էր հատվածներ միայն, բայց զգում, գլխի էր ընկնում լրիվ բովանդակությունը: Ես, որ ներկա էի լինում նրա գրույցների իր կարդացած գրքերի մասին, և ներկա էի լինում շատ հաճախ, նա միևնույն ցիտատներն էր բերում: Նա թերթում էր գրքերը. այդքանը բավականացնում էր նրան: Բայց նա խորանում էր և ուսումնասիրում ժողովրդական բանահյուսությունը: Խնամքով հավաքում էր հեքիաթների վարիանտները, ուներ «Յագարան բլբուլի» բազմաթիվ վարիանտներ: Իր ստեղծագործությունների վերաբերյալ ընթերցանության խնդրում նա աչալուրջ էր. գիտեր իր գործը բարեխիղճ կատարել:

Թունանյանը հմայիչ էր իբրև ստեղծագործության «տեսաբան»: Պետք է նշել, որ նա իր ժամանակի գրողներից գրեթե միակն էր, որ գրում էր «հրապարակով»: Նա ոչ միայն կարդում էր պատրաստի

գրվածքները իր բարեկամների և մտերիմների մոտ, այլև խոսում էր ծրագրած և գրելիք նյութերի մասին: Խոսում էր Շեքսպիրի, Գյոթեի, Պուշկինի գրելու տեխնիկայի, նրանց «գաղտնիքների», ոճի, խոսքի, տեսության, պարզության մասին: Թումանյանը ժողովրդական բանաստեղծ էր, բայց չուներ ժողովրդական բանաստեղծների պաճուճապատանքներն ու բոժոժները: Նա կլասիկ էր, ժլատ, ժուժկալ, համառոտաբան: Մի բանում նա շեղվում էր. սիրում էր «հանդիսավոր սկիզբ» իր բոլոր գրվածքներում: Նրա կլասիցիզմը, սակայն, համաշխարհային կլասիկներից չէր վերցրած: Դա կլիներ կեղծ կլասիցիզմ: Նա օգտվում էր ժողովրդական պարզությունից, մի կողմ էր թողնում գռեհկաբանությունը և կլասիկների օրինակով մոտենում ժողովրդական ստեղծագործության արվեստին: Այստեղից էլ նրա գրվածքների կենդանությունը, հյութեղությունը, անմիջականությունը:

– Մարդ ինչքա՜ն թեթևություն է զգում, երբ ահագին կտորները ջնջում է և դուրս բերում մի սեղմ, կոկիկ երկտող, – ասում էր նա:

Եհշտ է, որ նա չգիտեր չարչարել իր գրվածքը Պուշկինի և Տոլստոյի պես: Նրա սևագրությունները ցույց են տալիս, որ գրվածքի վրա նա անցնում էր երկու կամ շատ-շատ երեք անգամ: Դա նրանից է, որ նա միանգամից և պարզ ձևակերպում էր իր միտքը: Թումանյանի ստեղծագործության մի առանձնահատկությունն էլ այն էր, որ օրնամենտներ չուներ և ունեցածն էլ ժողովրդական ձևեր էին, ուրեմն պատրաստ էին, ինչպես և պատրաստ էին ֆաբուլան, գաղափարը, իբրև ամբողջություն: Նա միայն գեղարվեստորեն մշակում էր, և նրա գրվածքներում գլխավորը ամբողջական պատկերի մեջ էր և ոչ թե մանր օրնամենտների մեջ:

Թումանյանը շատ դիպուկ կերպով նկատում էր ուրիշ գրողների թերությունները և քննադատում խոսում էր այդ մասին:

Միայն մի բան: Թումանյանը, ինքն իր ստեղծագործության նյութն ու լեզուն որոշած լինելով, կարծում էր, թե ամենքն էլ պետք է և կարող են գնալ այդ ուղղությամբ: Նա ուրբանիստ չէր և ժխտում էր ուրբանիզմը գրականության մեջ: Նա, որ տասնյակ տարիներ ապրում էր քաղաքում և ոչ մի քաղաքի տարր չմտցրեց իր գործերում և ապրեց միմիայն գյուղի կյանքի հիշողություններով, կարծում էր, թե այդ է ամենքի ուղին: Միաժամանակ նա, որ մշակեց իր լեզուն ժողովրդականի հիման վրա և աննկատելիորեն իր գրական լեզուն տանում էր դեպի բարբառները, կարծում էր, թե դա առաջադիմություն է:

Թումանյանը երազում էր գրականության նվիրվելու՝ որքան էլ սա տարօրինակ լինի ասելը: Նա քիչ գրեց և գրեց ի միջի այլոց կարծես: Նրան խանգարում էր բազմազբաղ կյանքը և նյութականի կազմակերպումը, որ չէր կարելի առանց այդ բազմազբաղության: Նա

երագում էր նյութական ապահով կյանք և առանձնություն Լոռու լեռներում: Երբեք նա չհաշտվեց այն մտքի հետ, թե կարելի էր այդ անել և Թիֆլիսում: Քաղաքում նա ապրում էր և զգում օտարության մեջ:

Եկավ հեղափոխությունը և թունանյանը կորցրեց իր հոգեկան անդորրությունը: Մենշևիկների, մուսավաթների ու դաշնակների աշխուժացումը նրա առջև գծում էին «գեներալ Պոտոտյի իրականությունը» Անդրկովկասում և Աբդուլ Յամիդինը՝ Թուրքիայում...

1918 թվականի գարնանը թունանյանը Ղարաքիլիսայումն էր: Գնացել էր տեսնելու, օգնելու... Տաճիկների մտնելը Ալեքսանդրապոլ և մոտենալը Ղարաքիլիսային ստիպել էր թունանյանին իր զավակների մի մասի հետ փախչել Դսեղ: Այստեղ էլ մնաց նա: Տաճիկները կանգ առան Ծաթերի և Դսեղի սահմանում: Տաճիկ հրամանատարը շատ հնարներ մտածեց իր մոտ կանչելով՝ որսալ թունանյանին՝ կարծելով, թե նա Դսեղի շրջանում խմբեր ունի կազմած և կարող է գլխացավանք պատճառել տաճիկ զորամասերին: Թունանյանը քիչ մնաց ընկներ ծուղակը: Բայց շուտով սահմանները «հաստատվեցին», և թունանյանը Թիֆլիս գնաց:

Թունանյանը շարունակում էր տրտնջալ: Նա զայրացած էր պատմական դեպքերից և ընթացող գործերից: Ջայրացած էր ոչ ուրիշների նման, որ հեռու էին դեպքերից ու դեմքերից... Անհնար էր հասկանալ, թե ինչպես էր պատկերացնում նա հայ ժողովրդի փրկությունը, ո՞ւմ ձեռքով, ի՞նչ միջոցներով: Դաշնակցության հետ չէր, հույս չուներ դաշնակից պետություններից, ռուս կառավարությունը չկար: Նա էլ էր պաշարված շատերի պես դրության անելանելիության երկյուղով...

Երբ Յայաստանը խորհրդայնացավ՝ նա սկսեց ուշի ուշով հետևել դեպքերին: Եվ երբ Յայաստանի խորհրդայնացմանը հետևեց Վրաստանի խորհրդայնացումը՝ թունանյանը կարծես արթնացավ մի ծանր քնից: Յիշում էմ նրա բուռն, զայրալից հարձակումները դաշնակցության հասցեին: Իր մոտ հավաքված վրացի գրողների առջև նա ժամերով լուսաբանում էր ստեղծված նոր դրությունը և դրդում էր, ուղղակի դրդում ընդունելու, որ սկսվեց ազգերի իսկական ազատագրումը Անդրկովկասում: Ես հավատում էի նրա անկեղծությանը և ունեի բազմաթիվ հիմքեր նրա օրինետացիան հասկանալու: Նա հայ ժողովրդի ազատագրումը, նրա հարևանների հետ հաշտ ու խաղաղ կյանքը, անդրկովկասյան ժողովուրդների վերածնությունը կապում էր ռուս ժողովրդի հետ: Իսկ հիմա այդ ժողովուրդը, ինքը ևս ազատագրված, ձեռք էր մեկնել և օգնել էր անդրկովկասյան ժողովուրդներին ազատագրվել:

Այո՛, թուճանյանը գտավ իր երազած վիճակը հայ ժողովրդի համար, գտավ նա ինքն իրեն: Այլևս կարիք չկար ճահիճներում որոնելու փրկությունը: Փրկությունը եկավ՝ լիովին, հաստատ ու վերջնականապես:

Հասկանալի է այն գայրույթը, որ թուճանյանին բռնեց փետրվարյան ավանտյուրայի ժամանակ: Նա չհամբերեց և իր սովորության համաձայն զնաց ճակատ՝ մտադրվելով անցնել Երևան և խելքի բերել դաշնակցականներին:

Չմռան ցրտին նա զնաց Ելենովկա, որ այնտեղից կտրի ճակատը և անցնի Երևան...

Երևան հասնելով՝ թուճանյանը փորձում է համոզել դաշնակցականներին՝ վերջ տալ ավանտյուրային: Հետևանքն այն է լինում, որ նրան ենթարկում են տնային բանտարկության: Բայց, ինչպես թուճանյանն էր ասում, նրա Երևանում հայտնվելը և մի քանի մարդկանց հետ խոսելն անգամ բավական էր, որ այնտեղ հասկանային ավանտյուրայի վախճանումը: Թուճանյանը պատմել էր, որ թիֆլիսում կատարյալ կարգապահություն է, «ոչ մի կոտորած չկա», որ ժողովուրդը խանդավառությամբ է ընդունել կարմիր բանակին և, որ գլխավորն է, այնտեղ ոչ մի ապստամբություն չի եղել Երևանի նման:

Թուճանյանը գտավ իր քաղաքական գիծը: Բոլոր նախկին տատանումները, քաղաքական խնդիրների մշուշը, խառնաշփոթությունները վերջացան: Խորհրդային իշխանությունը ոչ միայն փրկեց հայ աշխատավորությանը, այլև այն օրերում իսկ գծեց հայ կուլտուրայի ծաղկման ուղին: Թուճանյանի ժողովուրդը, ժողովրդայնությունը կուլտուրայի՝ մասնավորապես գրականության մեջ՝ ապահովված էին վերջապես: Նա ոգևորվեց և սկսեց ծրագրել նոր գրական գործունեություն:

1921-ի օգոստոսին Թուճանյանի գլխավորությամբ Երևան եկավ մի հանձնախումբ՝ կազմակերպելու ՀՕԿ-ը, որը կազմակերպվեց, բայց գլխավորը ուրիշ բան էր: Նիստերի ժամանակ Երևանում Թուճանյանը լսեց հայ կուլտուրայի խոսքը: Թուճանյանը ոգևորված ծավալում էր իր մտքերը այդ մասին:

– Ախպեր ջան, – ասում էր հետո, – կռիվն էլ վերջացավ, արյունը էլ. հիմի արդեն ժողովուրդ ենք, պետություն ենք հզոր ժողովուրդների հետ ամուր կապված. ա՛յ հիմի կարելի է գրականություն ստեղծել:

Թուճանյանի կյանքի վերջին տարիները, այն, որ ընդգրկում են խորհրդայնացման շրջանը, նրա համար ճակատագրական եղան: Նա հիվանդացավ, հիվանդացավ երկար ժամանակ և վերջնականապես:

Չեմ կամենում շարունակել այդ իրոք որ եղբերական շրջանի հիշողություններս: Կարծես ճակատագիրը սահմանել էր այնպես, որ

Թունանյանը չապրի այն ժամանակ, երբ նրա ժողովուրդը փրկված էր: Վերջացել էր «Չառաջանքը», այդ հոյակապ պոեմի տխուր իրականությունը: Եկել էր դարաշրջանը, ուր կենսուրախ Թունանյանը պիտի տար իր լավատես հոգու «հրճվանքը»:

Ասողներ կան, որ ստեղծագործող Թունանյանը չէր կարող գտնել իր ուղին նոր, պրոլետարական իրականության մեջ: Խորագույն սխալ: Նա, որ հոգեպես բեկվել էր և իր առողջ բնագղներով անցել էր նոր աշխարհին՝ իր ստեղծագործությունների մեջ իսկ պարզ ցույց էր տալիս, որ այս նոր իրականության համար ունի խոշոր թաքուցյալ ուժեր: Թունանյանը թե՛ քաղաքականապես և թե՛ ստեղծական կարողություններով կշարունակեր մնալ խոշոր բանաստեղծ նաև նոր իրականության մեջ, կգտներ իր նոր ուղիները:

1933-1935թթ.

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻ ԲՆՈՐՈՇ ԿՈՂՄԸ

Ավելի շուտ՝ հուշերի կարգով: Բնութագրություն: Մի բանաստեղծի, մեծ բանաստեղծի գործի մասին, որի քննադատությունը դեռ նոր է սկսվում, ախր մեր բոլոր գրողներն ու բանաստեղծները – ինչ էն ասում – մեր բոլոր արվեստագետներն ու արտիստները քննադատվել ու գնահատվել են բանավոր կերպով: Դուրյան, Պարոնյան, Թունանյան, Ադամյան, Սարյան և այլն, բոլորն իրենց աթոռներն ստացել են բերանացի գնահատությամբ ավելի, քան թե գրավոր քննադատությամբ:

Թողնենք այս տխուր պատմությունը:

Մեզ վիճակվեց շատ մոտ լինել նրա կյանքին և գործունեությանը: Մեզ հետ միասին նաև շատ շատերը: Այդ կյանքի և գործունեության մասին կգրվեն բազմաթիվ էջեր, որով կպատկերանա Թունանյանի էպոխան:

Բայց մենք վերցնենք նրա ստեղծագործության մի բնորոշ կետը: Ստեղծագործության և հոգեբանության: Չէ՛ որ ստեղծագործությունը հենց ինքը բանաստեղծն է: Իսկ բանաստեղծը երևան է գալիս նախ իր խղճի ձայնով, իր երգով և ապա իր սրտակից ժամերի գրույցներով:

Թունանյանի լայտմոտիվը այդ երկու դեպքերում պերմանենտ զանգատն էր իր հալածանքից: Նա պեսիմիստ չէր, թույլ էլ չէր դիմագրավելու կյանքի հարվածներին: Իբրև բանաստեղծ և հասարակական գործիչ նա «ճակատով» մարդ էր, գիտեր, ուներ որոշ տակտիկա և ուժ

պայքարի համար:

Բայց նա շարունակ գանգատվում էր կյանքից: Նրա մշտուրախ աչքերում, սակայն, թաքուն շողում էր մի հարատև թախիծ: Դա ներքին թունանյանն էր:

Թունանյանի երկվությունը ակնհայտնի է: Սա չի կարևորը: Այդ երկվությունը շատ է մեծ և ինքնատիպ: Սա հետաքրքրական է: Եվ հետաքրքրական է Թունանյանի սոցիալ-հոգեբանական ու ստեղծագործական վերլուծման համար:

Մի սյուժետ, մի պատմություն իբրև մի դոմինանտ անց է կենում Թունանյանի ամբողջ երկերի մեջ: Մի գլխավոր հերոս միշտ միևնույն վիճակով ձգտում է մի ապավենի: «Բախտահալած» մի փախստական: Անուշն ու Սարոն, ահա նահապետական գյուղի դաժան բարքերը հալածում են երկու մտերիմ էակների և նրանք փախչում են լեռները: Ահա մատաղահաս Մարոն, որ բռնի ամուսնու կենակցությունից և խստասիրտ ծնողներից հալածված փախչում է հանդերը և քարափից նետում է իրեն ձորը: Չարքերը հալածում են հովիվ Սաքոյին, փախչում է նաև այդ նախապաշարունների գոհը: Մի խումբ դաչաղներ գյուղի թավաղներից ու կուլակներից հալածական ընկել են ձորերը («Հառաչանք»): Մի ամբողջ ժողովուրդ Լենկթեմուրից հալածական աղավնի է դառնում ու թռչում օդը («Աղավնու վանքը») ազատվելու: Հալածական հոպոպ է դառնում խեղճ հարսը և փախստական թռչում հանդերում («Անիծած հարսը»): Նույն փախստականներն են Պողոս և Պետրոս եղբայրները: Նույնը՝ Գառնիկ ախպերը: Նույնը՝ «Աղջկա սիրտը»: Անգամ փոքրիկ բանաստեղծությունների մեջ – «գնում էին հալածական երկու սև ամպ»... Կամ՝ «Եվ ջերմ իղձերս բախտից հալածված՝ թռչում են ահա, որ ձեզ մոտ հանգչեն»:

Ահա և պոետը, որ տգետ հասարակության ծաղր ու ծանակին է ենթարկված ու հալածական կյանք է վարում («Պոետն ու մուսան»):

«...Ի՞նչ ես հալածում իմ անմեղին անիրավ մարդ, ի՞նչ ա արել քեզ», – ասում է որսկանին «Եղջերուի» տերը, կաղնու միջից դուրս գալով իբրև մի սիրուն հարս:

Այսպես էր ինքը.

... Էն սև ծովում փառապելով

Լող է փախիս իմ հոգին...

Այնպես էլ իր ժողովուրդը –

Ու մեր քարվանդ շփոթ, սոսկահար,

Թալանված, ջարդված,

Ու հարված-հարված

Տանում է իրեն վերքերն

Անհամար...

Այսպես է թուճանյանն ի՛ր երկերուն: Բայց ուշագրավն այն է, որ թարգմանական գործերի բնորոշ մասը կրում է նույն հալածանքի հերոսի կնիքը: «Շիլիոնի կալանավորը», «Մծիիր», «Դեցիմ Լաբերիոս», «Աքիլլես» և այլն, որոնց մեջ դժվար չի մի ընտրություն գտնել թուճանյանի ինքնուրույն երկերի հետ՝ տեսնելու համար օրգանական-ընկերաբանական սերտ կապը, զուգահեռը, – նախապաշարված Սաքոյին հալածում են չարքերը, նույնը Պուլչինի «Ջրահեղձում», երբ Ջրահեղձի ուրվականը հալածում է նախապաշարված տանտիրոջը՝ մուժիկին: – Անուշին հալածում է ճակատագիրը (դերվիշի անեծքը, ջան գյուլունի բախտը), նույնը Օլեգին, որին գուշակը ասել էր, որ իր նժույգից պիտի մահն ստանա և իրոք նժույգի գանգից դուրս ելած օձը խայթում է նրան: «Ահա թե ուր էր օրհասս պահած»: Աքիլլեսը տխուր, տրտում է իր ճակատագրի հարվածի մասին, որն անխուսափելի հասնելու է իրեն:

Եվ թուճանյանը փախչում է շարունակ: Ո՞ւր...

Լիներ հեռու մի անկյուն,

Լիներ մանկան արդար քուն,

Երագի մեջ երջանիկ

Նաչր ու խաղաղ մարդկություն:

Ու կրկին, կրկին երգում է մեր բանաստեղծը.

«Ա՛խ, թե նորից գտնեմ ճամփան դեպի էնտե՛ղ, դեպի տո՛ւն»:
Կրկին թարգմանում է Հայնեից. «Հեռո՛ւ, հեռու կըթռցնեմ քեզ իմ երգի թևերին»: Անգամ սիրո երջանկությունը հեռվում...

Կարծում ենք՝ այս «թեմատիկ ցանկը» համոզիչ պետք է լինի թուճանյանի լայնմտիվը կամ նշանակալից չափով՝ լայնմտիվը որոշված համարելու համար: Գակատագիր, հալածանք, զոհ-հերոս: Ահա կենտրոնական ֆիգուրաները:

Ինտիմ թուճանյանի հոգեկան աշխարհը մշտական հուզված էր մի հերոսի բախտով. դա Համլետն է: Ամբողջ Շեքսպիրը չէ, բայց նրա «Համլետը» թուճանյանի բանասիրական-քննադատական փորձերի առարկան էր: Հիշում ենք այն երկու խնդիրը, որի մասին հաճախ ու կրկին խոսում էր: Համլետը՝ սգապսակ այդ ասպետը և նրա իդեալը՝ հայրը, որին Համլետը մեծարում էր իր համար ամենավսեմ մի բառով. «Նա մի մարդ էր»: Այդ մարդը թուճանյանի իդեֆիքսն էր: Ի՞նչ էր որոնում նա այդ բառի մեջ կամ ինչ էր գտել: «Ա՛խ, երանի՛ ո՛վ մարդ կգա ու մարդ կերթա անարատ»: Ահա ընդհանուր ֆորմուլան, ինչո՞ւ են թուճանյանի հերոսները այդ խեղճ ու անարատ մարդիկ հալածված ոչնչանում, ինչո՞ւ են նրանց հալածում մարդիկ:

Այստեղ ահա տեղին է մեջ բերել թուճանյանի թեմատիկայի մյուս աչքի ընկնող ցանկը ևս: Հերոսներ, որոնք հալածանքի կամ ճնշման

ենթակա են, – բայց դիմադրում են. – Սասունցի Դավիթը ամենատիպիկը այդ շարքում: Նա կռվում է, հաղթում, բայց ինչի՞ է հանգում: Առաջարկվում է ազգերի խաղաղ կենակցություն:

Թումանյանն առաջարկում է դադարեցնել պայքարը՝ անձերի, հասարակությունների, ազգերի և ծխել «խաղաղության չիբուխը» («Հավաքի երգը»):

Պայքարն օգուտ չունի, պայքարը չի վճռի խնդիրը, մարդը դրանով չի երջանկանա: Մարդը պիտի ներքուստ ինքն իր մեջ փոխվի: Ի՞նչ հիմունքով: Ի՞նչ է այդ կատարելությունը:

*Ինչքան ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել, –
Վաղը՝ լավ եմ տեսել ես:*

Սա մի ելք է, միջոց է դեպի այդ կատարելությունը: Բավակա՞ն է այդքանը: Ո՛չ: Վատը, ցավը, դավը կան ու ինչպես լինելու է՝ լինելու են: Ահա մարդը.

*Բերանն արևոտ Մարդակերը էն անբան
Հագար դարում հագիվ դառավ Մարդասպան,
Ձեռքերն արևոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:*

Մարդը դեռ մարդ չէ և դեռ հեռու է մարդ դառնալուց:

Ո՞ր մնաց այլևս կոնկրետ իրականությունը, մարդկային հասարակության իրական ճանաչումը, դասակարգերը, գիտությունը: Այս ամենը դուրս է այդ ամենից: Թումանյանը իդեալիստ է: Նա չի գտնում իր իդեալը իր շրջապատող կյանքի մեջ: Նա ապրում է, գործում է իր միջավայրի մեջ հանուն այդ իդեալի, նա հուսահատվում է չգտնելով այդ իդեալի իրականացումը և ձգտում է հեռուն – Արևելքի եղեմների պայծառ իրիկունները, ուր հեքիաթական պալատներում սպասում են իր հոգուն: Նա ցեխերի, աղմուկների մեջ է և ճամփա է փնտրում դեպի տուն:

Այս երազները Թումանյանի համար ֆանտազիայի խաղեր չեն, այլ մի երկրորդ, թերևս ավելի ուժեղ իրականություն: Նա զգացվում է, կարեկցում է տիեզերքում հեռացող Սիրիուսին, նա լուրջ «աստվածային մի ճամփորդ է տիեզերքում»:

Ահա Թումանյանի թախիծը: Ահա նրա սուբյեկտիվ բացատրությունը: Թումանյանի հալածանքի ոգին ներսիցն է, ըստ նրա այդ սուբյեկտիվ բացատրության:

1933թ.

ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հովհաննես Թումանյանի կյանքի և գործունեության հետ կապված գերիշխող յուրահատկությունը, որ իբրև լայտմոտիվ հնչում է այն բոլոր բնորոշումներում, որ տվել են Թումանյանի պոեզիային, այն բոլորը, որ կազմում է նրա ստեղծագործությունների հիմքը, գաղտնիքներից մեկը և գլխավորը՝ դա նրա ժողովրդայնությունն է:

Ահա այս գաղափարին է, որ Թումանյանը մվիրեց իր ստեղծագործության սկզբունքն ու հավատարիմ մնաց մինչև վերջ: Ոչ մի զիզագ, ոչ մի տատանում, ոչ մի շեղում: Նա ստեղծագործում էր այդպես, քարոզում էր այդ, գործում էր այդ ուղղությամբ: Այնպես որ, ժողովրդայնությունը դարձավ Թումանյանի թեորիան և պրակտիկան:

Նրա երկերի մեծագույն մասի հերոսներին ինքը՝ բանաստեղծը, անձամբ էր ծանոթ եղել, պատմվածքը կամ անեկդոտը, դեպքը, թե այլ բաներ, այս անենը անձամբ էր լսել պատմողի բերանից, կոնկրետը, իրականը, անմիջականը՝ կազմում էին Թումանյանի ստեղծագործության կենդանի աղբյուրը: Անգամ ստեղծագործելիս նա կենդանի կապ ուներ ընթերցողի հետ: Իր բազմաթիվ այցելումներին, ընկերներին նա ինքը ցանկանում էր ոչ միայն կարդալ իր երկը, այլև պատմել, խոսել այդ երկում պատկերացրած դեպքի, նրա բուն աղբյուրի մասին: Կարելի է ասել՝ Թումանյանն ստեղծագործում էր հրապարակորեն, մի տեսակ կոլեկտիվ կերպով: Այդ կողմով նա իրոք որ ժողովրդական երգիչ էր, «աշուղ», որի ստեղծագործությունը բաց «մեջլիսի» համար է, հասարակական, անմիջական կապի համար է: Դա մի յուրահատուկ ռեալիզմ է:

Անգամ իր մանկական գրվածքները նա ստուգում էր մանկական շրջանում: Դեռ չկարդացած, չստուգած՝ նա հրատարակության չէր հանձնում:

Նրա խարակտերը, նրա ոճը կյանքի մեջ անմիջականն էր, կենդանին, կոլեկտիվականը: Նա շրջապատում էր իրեն լայն հասարակությամբ, չէր սիրում մենակությունը: Ջրույցը, հանդիսավորությունը, մարդկանց բազմությունը, ուրախությունը նրա սիրած կենցաղային երևույթներն էին: Եվ ահա այստեղից է գալիս այն գլխավորը, Թումանյանին բնորոշող առանձնահատկությունը, որ նա իր ստեղծագործության հետ կապում էր իր ժամանակի առօրյա, հասարակական, պատմական փոքր ու խոշոր անցքերի հետ, և չի եղել մի դեպք, անցան, թե հույժ կարևոր, որին նա մասնակցած չլիներ: Եիշտ է, որ նրա ժամանակակից հասարակությունը շրջապատեց նրան և նրա վրա

դրեց հասարակական գործերի բեռը: Նրա մեջ տեսնելով իր իղծերի, գաղափարների արտահայտիչը, հասարակությունն առաջ տարավ նրան պատմության ուղիներով: Եվ նա գնաց, ուր նրան մղում էր հասարակությունն ու իր անհատական կամքը:

Այսպիսով, եթե նա իր ժամանակի դեմոկրատական տրամադրությունների արտահայտիչը եղավ, ապա այդ հասարակության դեմոկրատ խավերն էլ նրան ճանաչում էին իբրև իրենց շարժիչ ուժը:

Պատմությունը թունանյանին հաճախ ստիպում էր գրիչը վար դնել և գնալ «դեպքի» վայրն անձամբ մասնակցելու:

1905 թվին, երբ ցարական կառավարությունը սարքեց հայ-թուրքական արյունալի ընդհարումները, երբ եղբայրասպան կոտորածը բռնկվել էր ամբողջ Անդրկովկասում՝ թունանյանին տեսնում ենք Լոռիում, գլուխ անցած Լոռու գյուղացիության՝ իբրև ղեկավար ամբողջ գավառի:

Բանաստեղծը գիտեր լեռնցիների «աղաթը», հոգեբանությունը, նա պրովոկացիայից չէր վախենում: Մոտենում են և թուրքերը, դիրքից դուրս թռչելով գալիս են, գրկախառնվում իրենց հարևանների հետ: «Խաղաղության չիբուխը» («Չայավաթի երգը») ծխում է երկու գավառների հայ և թուրք եղբայրակից ժողովուրդների մեջ: Սասունցի Դավիթը կնքում է հաշտության դաշինքը և անձոքներն ուղղվում են արյունարբու Մսրա-Մելիքի դեմ, որ նստած Պետերբուրգում, եղբայրակից ժողովուրդների արյան մեջ է ուզում խեղդել հեղափոխությունը:

Յրդեհվում է համաշխարհային եղբայրասպան պատերազմը, ժողովուրդները վեր են կացել ժողովուրդների դեմ ինպերիալիստական բուրժուազիայի պրովոկացիայով: Բանաստեղծն այստեղ անգոր է այլևս ազդելու դեպքերի վրա: Բայց հանգիստ չէ իր տանը: Գնում է ռազմաճակատ տեսնելու ժողովրդի վիճակը, այցելում է էջմիածնի փախստական ժողովրդին, որբերին, բարձրացնում է իր ծայնն ընդդեմ համաշխարհային ոճրագործների:

Բանաստեղծն իր բախտը կապեց ժողովրդի հետ, ստեղծագործության աղբյուր և միաժամանակ ստեղծագործության նպատակ ճանաչեց ժողովուրդը: Դա բախտավոր օրինետացիա եղավ մի բանաստեղծի համար, որ ապրել ու ստեղծագործել է նախախորհրդային շրջանում, որովհետև ժողովրդի օրինետացիան նրան առաջ տարավ և տեղ հասցրեց ճշմարիտ ճանապարհով: Թունանյանի ժողովրդայնությունը նրան օժտեց կենդանի առաջադիմական իդեոլոգիայով, նրան հասցրեց արվեստի բարձր դիրքերին, ապահովեց նրա հարատևությունը նոր իրավակարգի պատմության մեջ: Ժողովրդայնությունը թունանյանին դարձրեց նաև ինտերնացիոնալ:

այն ինչ որ ժողովրդային է մի երկրում, նա ժողովրդային է բոլոր երկրներում, և ահա այսպիսով թուժանյանը դուրս է գալիս իր երկրի սահմաններից և մտնում համաշխարհային գրականության լայն ասպարեզ:

Հովհաննես Թումանյանը դարագլուխ է մեր գրական կուլտուրայի մեջ: Նա բարձրացնում է մեր կուլտուրայի արժեքը, բարձրացնում է նրա տեսակարար կշիռը: Նա պատկանում է իր ժողովրդին, որին ծառայեց գրչով և խոսքով. և ահա խորհրդային ժողովուրդն իր կուսակցության և կառավարության գլխավորությամբ՝ նրան վեր է հանում այն բարձրության, որի մասին չէր կարելի երագել Թումանյանի ասպարած դարաշրջանում:

Մեծ բանաստեղծը ժողովրդին մատուցեց ժողովրդից վերցրածը, և այսօր նրան ժողովուրդը վերադարձնում է անթառամ ծաղիկների սիրո պսակ նրա անմոռաց շիրիմին:

1938թ.

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Թումանյանի ստեղծագործությունը իբրև արվեստ ուշագրավ է ի միջի այլոց այլ տեսակետների՝ մի, և եթե կուզեք, գլխավոր կողմով: Բացառիկ է դա իբրև կառուցվածք, ոճ և լեզու: Բացառիկ է հենց միայն այն հանգամանքով, որ Թումանյանն այդքան մոտ կանգնելով ժողովրդին, գեղարվեստորեն մշակելով ժողովրդական նյութերը, գլխովին տարբերվում է մեր ժողովրդական գրողներից, մեր գյուղագիրներից՝ իր կառուցվածքով, ոճով և լեզվով: Բացառություն է կազմում, թերևս, միմիայն Ղ.Աղայանը: Դե ասենք Թումանյանի հատուկ մտերմությունը Ղ.Աղայանի հետ միմիայն անձնական-ընկերական չէր. դա ստեղծագործական, գաղափարական ուղղության, արվեստի մտերմություն էր նախ և առաջ: Խ.Աբովյանը, Պռոշյանը և այլ գյուղագիրներ հետագայում, անգամ Թումանյանի էպոխան վերապրող բոլոր ժողովրդական (հին մտքով) գրողները էպպես տարբեր արվեստ ունեին Թումանյանի համեմատությամբ:

Ափերից դուրս լցված առատաբանությունը, հաճությամբ կատարված կրկնությունները, անձնական ու հասարակական դեպքի առիթով կատարած շեղումները, դիդակտիկական, խրատական, ժուռնալիստական նյութերի խառնուրդը, ժողովրդական ոճի և լեզվի ինքնանպատակ և ոչ միշտ անհրաժեշտ ցուցահանդեսը, բարքերի,

սովորույթների էտնոգրաֆիան, դիտավորյալ պարզունակությունը, երբեմն և ռամկականությունը, գռեհկաբանությունը, որ եղել են մեր ժողովրդական գրողների արվեստի հատկությունները ավել կամ պակաս և անկախ այն խոշոր առավելություններից, հրաշալի կողմերից, որ նրանք ունեին՝ բնորոշ չեն թումանյանի արվեստին, որը ժուժկալ է, պարզ և կառուցիկ: Նրան չի խանգարում այն հանգամանքը, որ մշակում է ուղղակի ժողովրդական նյութ («Պողոս-Պետրոս», «Անիծած հարսը», «Շունն ու Կատուն», «Անբախտ վաճառականներ», «Սասունցի Դավիթ» և այլն, և այլն): Ես կուզեմայի ասել՝ ոչ թե չի խանգարում, այլ ուղղակի նրան նպաստում է ժողովրդական նյութը և իսկույն կասեմ ինչու: Սակայն մեր ժողովրդական գրողները, որ ինչպես տեսանք վերևում՝ համարյա բացառապես գյուղագիրներ էին՝ ստեղծել էին գրելու արվեստի մի այնպիսի տրադիցիա, որ ժողովրդական գրականության արվեստի հետ սկանայից կապված էր լինում այն հատկություններով, որ վերևում հիշեցի: Արդյոք դա ժողովրդական արվեստի հատկություններն էին: Իհարկե, ոչ: Ժողովուրդը ստեղծել է հեքիաթներ, որ ինչքան էլ «երկար են», բայց երկարաբան չեն. ժողովուրդն ունի անթիվ, անվերջ առակներ, զրույցներ, բոլորը սեղմ ու կառուցիկ: Ժողովրդական առածները մի-մի կուռ դրամաներ են: Ժողովուրդը ոչ ժլատ, բայց գեղարվեստական չափի տնտես է, դեղագործական կշեռքով կշռում ու բաշխում է ամեն մի արտահայտություն, բառ: Ժողովուրդը բնության է նման. առատ, բայց տնտեսող, իմաստուն պահեստապետ, որ հազար ու մի բարիքը պահում է գործածելու միշտ իր տեղը և իր նպատակին: Եթե ժողովուրդն իր առօրյայում երկարաբան է, բայց նա իր ստեղծագործությունների մեջ ամենահամառոտաբանն է: Եվ ահա ժողովրդի ստեղծագործական արվեստին հավատարիմ թումանյանն իր գեղարվեստական մշակումներն ու ինքնուրույն նյութերը ենթարկում է իր մեծ ուսուցչի՝ ժողովրդի արվեստի սկզբունքներին և «կանոններին»: Հաճույքը կրճատելու, ամփոփվելու, ազատվելու ավելորդ բեռից՝ թումանյանն զգում էր միշտ, արտահայտում էր ամեն առիթի, և գործնականում երևում էր նրա այդ հատկությունը: Նրա պոեմների և բանաստեղծությունների մեծ մասը նախկին և հետագա հրատարակությունների մեջ ենթարկված է էական կրճատումների, իսկ եթե որոշ տեղերում էլ նկատում ենք ավելացումներ՝ դա հազեցումն է նյութի, լրացումը, զարգացումը և ոչ թե երկարաբանությունը:

Թումանյանը խիստ էր իր նյութի մշակման խնդրում: Նախ և առաջ նա ժողովրդական նյութի մեջ ընտրություն էր անում՝ բազմաթիվ վարիանտներից ջոկում ամենակատարյալը: Նա բնագղաբար զգում

էր, թե որ վարիանտն է ավելի մոտ իսկականին, որն է իսկականը, որն է աղավաղված, որն է նվազ արվեստով մշակված: Ապահովելով նյութի կլասիկ ամբողջականությունը՝ նա գտնում էր այդ հուն նյութի (գրական-գեղարվեստական մշակման համար հուն) կառուցման, ոճի, լեզվի այն գրական ձևերը, որոնք դառնալով գրական, չեն կորցնում ժողովրդական ձևերի հարազատությունը: Իհարկե, թունանյանի ժողովրդական նյութերի գրական մշակությունն իր որոշ աստիճանավորումն ունի գրական բարձր ձևերի (ինչպես նաև բովանդակության) վերելքի մեջ: Նրա հեքիաթներն ու ավանդությունները չէին ենթարկվում այնպիսի մի ստեղծագործական լայն «մշակման», ինչպես Գյոթեի «Ֆաուստն» է: Եվ դա՝ թունանյանի նպատակը չէր: «Ֆաուստը» ժողովրդական է իր խոր և հեռավոր արմատներով: «Ֆաուստի» հեղինակի նպատակադրումներն այլ են, քան «Անուշի» և «Անիծած հարսի» հեղինակինը: Եվ եթե տեղն է ու տեղին է համեմատություններ անելու, ապա թունանյանի ժողովրդական նյութերի գեղարվեստական մշակումը կարելի է համեմատել Պուշկինի մշակումների հետ («Ոսկե ձկնիկ», «Սալթան թագավոր», «Օլեգ»): Եվ այս կողմից թունանյանն իր մշակումները տանում է Պուշկինի, իր մյուս ուսուցչի գծով: Նրա նման համառոտաբան, կուռ, հյութեղ, հարազատ: Պուշկինյան մոտեցումը ժողովրդական նյութերի մշակման, պուշկինյան վերաբերմունքը դեպի նման նյութերի կառուցումը, ոճը և լեզուն, թունանյանի արվեստին հաղորդեց այն ուրույն հատկությունները, որ բարձրացնելով թունանյանին, բարձրացնում են նաև մեր պոեզիայի կուլտուրան:

Թունանյանի արվեստն, անշուշտ, ամենից շատ պետք է նպատակահարմար եղավ իրեն իսկ թունանյանի համար: Անուշի, Սաքոյի, Մարոյի, «Հառաչանքի» ծերունու իրականությունն ու կոլորիտը պահանջում էին այն ոճը, որ գործածում էր թունանյանը: Այս տեսակետից թունանյանն ամենից շատ նպաստեց իր իսկ պոեզիայի կուլտուրային և իր ժամանակակիցների ու հետնորդների. մանավանդ մեր ժամանակի պոեզիան (և առհասարակ գրականությունը) պահանջում էր և պահանջում է թունանյանի արվեստի, կուլտուրայի այլ բազմազանություններ, այլ մասշտաբի (քաղաքական-պետական) զարգացում: Սակայն այս բոլորի հիմքում կա մի խոշոր հիմնաքար, որ դրել է թունանյանը: Դա նրա ժողովրդայնությունն է ընդհանրապես, նրա հարազատությունն է գլխավորապես, նրա արվեստի մեջ կլասիկ կառուցիկությունն է, ժուժկալ, պարզ և խիստ ոճը:

Թունանյանի արվեստը չի ընդունում շքեղ ոճ: Թունանյանը դեմ է ամեն «գեղեցկացումների», «փարթամության»: Այս տեսակետից նա

«արևելյան» չէ, ինչպես ընդունված է կարծել, թե արևելյան ոճը փարթամ-
շքեղ է արևելյան պոեզիայում: Այդ կա, բայց ոչ իսկական-լիարժեք արևե-
լյան արվեստի մեջ: Արևելյան կլասիկների ոճը – Աստվածաշնչից սկ-
սած մինչև Ֆիրդուսի – վսեմորեն պարզ են, ուրիշ բան է, որ խորն են,
գունեղ, վառ: Թումանյանի ոճն ունի իր ժողովրդական ոճի վսեմ պար-
զությունը: Այդ ոճի հատկությունն է մանրաքանդակ օրնամենտին տալ
երկրորդական տեղ և ուժը գցել ամբողջի կառուցիկության, արխիտեկ-
տոնիկայի վրա: Ինչպես հայ ճարտարապետական ոճն է, իր կոնտրակ-
տիվ, պարզ ու վսեմ ամբողջությամբ և մանրաքանդակի երկրորդական
«փարթամությամբ»:

Թումանյանի այս հատկություններն ազդեցին և կազդեն մեր
պոեզիայի արվեստի վրա: Առավելապես այն պատճառով, որ մեր
խորհրդային պոեզիան գալիս է ժողովրդից կամ գնում է դեպի
ժողովուրդը և ժողովրդայնությունը դառել է նրա ուղղության
նպատակակետը: Խորհրդային արվեստն իր պերսպեկտիվում երկար
ճանապարհ ունի և մեծ նպատակներ: Նա պետք է ընկնի (և արդեն
սկսել է) շատ ավելի մեծ ու լայն ճանապարհ, քան թե թույլ կտար այդ
անել Թումանյանին նրա ծխական-եկեղեցական հայ միջավայրը և
ճնշված հայ գյուղն իր հեղափոխական պոտենցիալով: Գիտական-
քաղաքական համամիութենական մեծ կուլտուրայի հնարավորու-
թյուններն անհամեմատ խոշոր են նոր արվեստի համար: Սակայն
Թումանյանը դեռ մնում է մեր անցյալ արվեստի հսկաներից մինը, որ
դեռ երկար ժամանակ կգնա համաքայլ նոր սերնդին, նոր կուլտուրայի
ճանապարհով, իբրև մեծ ուսուցիչ և հեղինակություն:

1939թ.

ՀՈՎՅԱՆՆԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱ

Ազգային մեծատաղանդ բանաստեղծի պոեզիան, որքան էլ
գանազան թելերով կապված է իր նախորդների և ժամանակակիցների
գրական կուլտուրայի հետ, որքան էլ ունի իր «արեճակցական» և
«ազգակցական» «ընտանիքը»՝ այնուամենայնիվ ներկայացնում է
շատ բացառիկ և ինքնատիպ երևույթ մեր պոեզիայի պատմության
մեջ: Գիշտ է, որ մեր բանաստեղծի այդ պոեզիան սկզբնական շրջանում
դեռ մի առ ժամանակ արձագանքում էր իր նախորդներին, նրա երկերի
առաջին և երկրորդ հատորիկներում հաճախ նկատվում էին նախորդ
գրական շրջանի հատկանիշները, անգամ հասարակական տիրական

ուղղությունը, ճիշտ է նաև, որ բանաստեղծի ձեռքով հրատարակված հայտնի հիմնական ժողովածուի մեջ անգամ դրանց հետքերը մնացին, մինչև որ հետագայում դառնային նոր որակ, բայց այդ շահագիզյան թե նախանշանական մոտիվը մնում է թումանյանի սկզբնական պոեզիայի գծերից մեկը:

Ոչ մի բանաստեղծ բոլորովին նոր բան չի սկսում, թումանյանը նույնպես: Այնպիսի մի գրական կուլտուրա, ինչպես «Մանկության օրերն» են, «Ազատն աստվածը», «Ես լսեցի մի անուշ ձայնը», «Ծիծեռնակը», «Ճախարակը»՝ ժողովրդական պոեզիայի հետ միասին սկսնակ թումանյանին ցույց էին տվել այն արահետները, որով նա պիտի դուրս գար իր ապագա մեծ ու լայն ճանապարհը: Թողնենք միայն պոեզիան. այնպիսի մի երգախառն հերոսավեպ՝ ինչպիսին Աբովյանի «Վերքն» էր, մի այնպիսի սիրավեպ, նույնպես երգախառն, ինչպես Պռոշյանի «Սոսն ու Վարդիթերն» էր. Աղայանի պոեմների ու հեքիաթների հետ միասին կազմում են այն ստեղծագործական նախատիպերը, որոնք կարողացան աղբյուր հանդիսանալ թումանյանի գրական կուլտուրային:

Մենք չենք կամենում աչքաթող անել համաշխարհային կլասիկներին, մասնավորապես Շեքսպիրին, Գյոթեին, հատկապես Պոլշկինին, Լերմոնտովին, որոնք բանաստեղծի ողջ գրական կյանքում մատնացույց են արել նրան ստեղծագործության խորին գաղտնիքները:

Բայց մի բանաստեղծի երևան գալու և աճելու բուն լուսաբանությունը որոնել չի կարելի նրա կրած ազդեցությունների մեջ: Ազդեցություններն այն չափով նշանակություն ունեն, որքան զորեղ և ճիշտ ազդակներ են հանդիսանում, օգնում բանաստեղծին՝ գտնելու իր պոետեցիալ ինքնատիպությունը: Միևնույն գրական ժառանգության մեջ առաջացավ և աճեց թումանյանի տիպի մի այլ անվանի բանաստեղծ՝ Հովհաննես Հովհաննիսյանը, բայց նա գնաց ուրիշ արահետով և վերջացրեց իբրև տարբեր տիպի բանաստեղծ:

Այսպիսով ազդեցությունների այս երկրորդական, բայց ոչ աննշանակ դերը չենք մոռանա թումանյանի պոեզիան լուսաբանելիս՝ նրա ակունքներից մինչև վախճանը: Որքան հեռու և խորն են նրա պոեզիայի արմատները՝ թեկուզ իբրև ազդեցություն, որքան առողջ են և բարձր նրա գաղափարները, որքան մերձ են ժողովրդական ու համաշխարհային կուլտուրաներին, այնքան ավելի են բարձրացնում այդ պոեզիան և դարձնում հարատև:

Հովհաննես թումանյանը հանդես եկավ իբրև մի բանաստեղծ, որ իր նախորդների ստեղծագործությունների առողջ էլեմենտները միացրեց, խորացրեց, լայնացրեց և ստեղծեց նոր երևույթ, նոր

տիրական հոսանք, նոր բանաստեղծություն: Այդ նորությունը պետք է ցույց տալ ոչ միայն բանաստեղծի նոր լեզվի, նոր ոճի, արվեստի մեջ: Դա նրա թեմատիկայի և ուղղության մեջ էր: Թումանյանը ևս՝ հակառակ իր նախորդներից ոմանց և համաձայն նրանցից ոմանց, եկավ ժողովրդից: Ահա թե ինչու նա շուտ ու հեշտ գտավ իրեն:

Մխիթարյան ու Մոսկովյան դպրոցների ռոմանտիզմը մի որոշ չափով ազդելով թումանյանի պոեզիայի վրա՝ տեղի տվեց առողջ ռեալիզմին, և եթե հետագայում թումանյանը տուրք տվեց ռոմանտիզմին, դա ավելի ոճ էր, քան ուղղություն: Հիմնականում թումանյանը եղավ ռեալիստական պոեզիայի հաստատիչը հայ բանաստեղծության պատմության մեջ:

Թումանյանը չենթարկվեց ուրբանիստական կուլտուրային, առավել ևս հեռու մնաց սոցիալական պայքարից՝ քաղաքում:

Կյանքի մեծ մասն ապրեց քաղաքում, իբրև հոգեբանությամբ գյուղացի, և իբրև գյուղացի՝ ընդհարվում էր քաղաքի հետ («Գիքորը»), այնտեղ նա տեսնում էր կեղեքող խռշոր ու մանր բուրժուազիային, ծաղրում նրանց («Պոետն ու մուսան»):

Ժողովուրդը և ժողովրդական ստեղծագործությունը դառավ այսպիսով այն հիմնական հողը, որի մեջ թումանյանը մշակեց իր պոեզիան: Ժողովրդական ստեղծագործությունները բաց արին թումանյանի առջև ուղղության, թեմատիկայի, ոճի և լեզվի ճանապարհը: Ժողովրդի բախտն ու վիճակը, այդ դարերով կեղեքված, հալածված, տանջված, երբեմն զոհվող, երբեմն պայքարող և միշտ հուսացող ժողովրդի պատմությունը, նրա ուրախությունն ու վիշտը, նրա հանդիսավոր ու առօրյա կյանքը – այս ամենը նյութ դառան նրա պոեզիային:

Եվ ժողովրդի ստեղծագործությունները, լեզենդները, հեքիաթները, առակները, զրույցները՝ բանաստեղծին թելադրելով իրենց հատուկ ոճը, լեզուն, կառուցվածքը՝ նրա մեջ առաջ բերին նոր գրական արվեստ: Կամենալով ձևավորել ժողովրդին՝ ձև առավ նաև ինքը բանաստեղծը:

Թումանյանի խոր և լայն ընդգրկումը ժողովրդական նյութի՝ հնարավորություն է տալիս մեզ խոր և լայն ճանաչել ու բնութագրել թե բանաստեղծի ներկայացրած ժողովրդին և թե իրեն՝ բանաստեղծին: Բանաստեղծի – տվյալ դեպքում թումանյանի անհատականության և հասարակականության պրոբլեմը դառնում է շատ ուշագրավ, այն մտքով, որ մեր բանաստեղծի անհատական ու հասարակական կենսազգացումը շատ սերտորեն կապված են իրար: Թումանյան-անհատն ու այդ անհատական լիրիկան և թումանյան-հասարակությունն ու այդ հասարակական էպիկան կազմում են մի

արենակցական հարազատ ամբողջություն: Այստեղից էլ այն նմանությունը և համառորեն կրկնվող շեշտը թունամյանի լիրիկական և էպիկական ստեղծագործությունների մեջ:

Մենք շատ հեռուներում չենք որոնի բանաստեղծի ներքին աշխարհի լուսաբանությունը: Մեր առջև դրված են նրա երկերը – և դա գլխավորն է: Ի՞նչ թեմատիկա ունի թունամյանը: Ի՞նչն է նրան զբաղեցնում օր ու գիշեր, տարիներ, ամբողջ կյանքը: Ի՞նչ է նա պրպտում ժողովրդական ֆոլկլորում, ի՞նչ է ընտրում, հետո՝ ի՞նչ է թարգմանում: Մինչև անգամ ի՞նչ գրվածքներ է տալիս «հասարակական աշխատանքի գծով»՝ դասագրքերին, մանկական ընթերցանության հրատարակության... Չարմանալի երևույթ – թունամյանի մոտ շատ համառորեն կրկնվում է մի քանի այլ թեմաների մեջ մի լայտմոտիվ թեմա, մի էակ, մի պանդուխտ, մի ճամփորդ հալածված գնում է իր ճամփան՝ «դեպի տուն», «դեպի վայրերը իր անցած կյանքի», հայրենիքից էլ հալածված՝ «դեպ մի անհայտ երկիր», «դեպ արևելքն աստվածային – հայրենիքը իր հոգու»: Այս հալածվածության թախծով տոգորված է, ողողված թունամյանի լիրիկայից սկսած մինչև էպիկան և դա հնչում է բազմապիսի լարերի միջով: «Երկու սև ամպ... հողմի առաջ գնում էին հալածական», «...Ջերմ ըղծերը բախտից հալածված թռչում են լեռների մոտ... հախուռն երամով»: Նա «պանդուխտ է մանուկ օրերից... գնում է...» «հալածված բախտից հեռու», «իր հայրենի աշխարհում օտար... մենակ անցվորի մեծան»: «Ելած կյանքի ամեն ճամփից անհանգիստ թափառում է իր հոգին»: «Ինքն ու հին տարին անդարձ ճամփորդի մեծան»:

Անգամ բանաստեղծի ժողովուրդը հալածված գնում է. «Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր, ...գընում ենք դեպ վեր»:

Իսկ երբ բանաստեղծը չի գնում հալածված՝ մնում է իր տեղում, ապա ուրեմն միշտ «տանջվում է անքուն... գիշերը երկար»: Նա չի կարող երգել. «Նրա սիրտը բռնած է մութ հառաչանք, սև գիշեր»: Թախծ, հառաչանք, հալածանք, փախուստ:

Սակայն թունամյանի այս լայտմոտիվին զուգընթաց հնչում են ուրիշ ծայրեր ևս: Գիշերերգերի, թախծալի, անգամ հուսահատ էլեգիաների հետ հնչում են տենչանքների, սպասումների, հուսադրումների և ուրախ, «լայն սիրտ» փիլիսոփայության երգեր:

Իր հասակի «Վայրէջքի» հանդիսավոր, ամփոփող մոմենտին բանաստեղծը «իմաստուն ու բեռը թեթև, անհոգ ծիծաղով, երգով ու տաղով իջնում է զվարթ... իր լերան ետև»: Նրա՝ գայրույթը լիքն է սիրով, նրա «գիշերը լիքն աստղերով»: «Նրա հոգին ժպտում է չարին, բարուն, ամենքին»: Նա հույս ունի, որ պիտի գա արդարության հատուցման օրը:

Ինչո՞վ բացատրել այս՝ առաջին հայացքից հակասական երևույթը: Ձուտ ընտանեկան, անձնական կյանքի պայմաններով բացատրել բանաստեղծի ներքին աշխարհը՝ ուղիղ մեթոդ չէ: Իհարկե, կարելի է պրպտել և երևան բերել արտաքին հայտնի փաստեր և կռահել հալածվածության, շրջապատին հակադրվելու, կոնֆլիկտի մեջ մտնելու որոշ կենսագրական նյութեր, որքան էլ որ ճիշտ է, որ դրանք շատ էլ չեն և բանաստեղծն ապրեց շատ ավելի հաջող պայմանների մեջ, քան նրա ժամանակակիցները: Բանաստեղծի նեղ կենսագրական փաստերը չեն կարող հիմք դառնալ բացատրելու նրա թախիծի և հուսալքման և «ժպտացող հոգու, անհոգ ծիծաղի» և մանավանդ հույսի, հավատի հակասական այս արտաքին երևույթը: Թուճանյանի խոր թախիծի և զվարթության, լավ է ասենք իմաստուն օպտիմիզմի աղբյուրները շատ խորն են և հեռու, քան ընտանիքը, ընկերները, և նրա մերձ հասարակական խավը – ինտելիգենցիան: Թուճանյանի թախիծի և օպտիմիզմի աղբյուրները ժողովրդական մեծ հոգուց են գալիս, բանաստեղծի անհատական - հասարակական հոգեբանությունից: Հալածվածության անհատական մոտիվին համանչյուն լսվում է նաև բանաստեղծից դուրս արտաքին աշխարհի – նրա հերոսների հալածվածության մոտիվը: Թուճանյանի հերոսները հալածված են՝ երբեմն անգամ ֆիզիկապես: Հովիվ Սարոն հալածված է իր ընկերից, գյուղից, «Հառաչանք» պոեմի տղերքը հալածված են գյուղական իշխանավորներից, Մարոն հալածված է իր ծնողներից: Անիծված հարսը փախչում է իր սկեսուրից, Պողոս և Պետրոս որբերին հալածում է խորթ մայրը, «Ախթամարի» սիրահարները, Սաքոն հալածված են յուրովի: Անգամ բանաստեղծի ժողովուրդը հալածված է բռնակալի սրից («Աղավնու վանքը»): Եվ ահա այդ եակները, թե իբրև անհատ, թե կոլեկտիվ, եթե չեն փախչում հալածանքից, մնում են իրենց հալածողների միջավայրում, ապա նրանք ենթակա են տերության, քոյխվի, պարտատիրոջ, տերտերի հարստահարման, ճնշման, աշխատում են և չեն վայելում, «կռիվ են տալիս հազար ցավի հետ» և այնքան է մեծ այդ ճնշումը, որ մոտ են «ղաչաղ» (փախստական) դառնալու («Գութանի երգը», «Հառաչանք»): Ամենը որբը, գեղեցիկ անպաշտպանը, ազնիվ թույլը, չքավոր աշխատավորը ենթակա են միշտ հալածանքի, ոչնչացման, իսկ եթե վերապրում են՝ հազիվ շունչ քաշելու, ստրկական վիճակը տանելու համար:

Բանաստեղծի այս հիմնական թեման աչքի է ընկնում նաև նրա «ոչ կողմնակի պատվերով» կատարված թարգմանությունների մեջ, Օլեգին և Աբիլեսին հալածում է ճակատագիրը, Չայլդ Հարոլդին, Լաբերեսին, Շիլլոնի կալանավորին՝ բռնակալությունը, ազնվական բուրժուական

հասարակությունը, Մծիրիին՝ իր չքավոր, որբության վիճակը:

Սակայն այստեղ և՛ ինչպես բանաստեղծի անհատական թախծին, զուգահեռ գնում է զվարթ երգը՝ իրենից դուրս ապրող հերոսների հալածվածության կողքին մենք տեսնում ենք օպտիմիզմի, փիլիսոփայական հանգստության, հավատի, լավագույն օրերի սպասումի, ուժի և հաղթանակի ուրախ զգացումը:

Դրանք ժողովրդի անհատներն են, ժողովուրդն ինքն է իր կոլեկտիվ կյանքով: Ժողովուրդն անվերջանալի քանակության և կոլեկտիվ որակի՝ հետևապես բարդ սոցիալական-հոգեբանական երևույթ է: Ժողովուրդն իր հալածանքներից ելք գտնում է երբեմն Անիծած հարսի, Պողոս Պետրոսի, Աղավնու վանքի՝ ժողովրդի ձևափոխությամբ, մետամորֆոզով: Սա ըստ էության փախուստ է: Նույն ժողովուրդը ստեղծել է ճակատագրի անխուսափելիության գաղափարը («Անուշ»): Բայց եթե ճակատագիրը հարատևորեն անշարժ է մարդու ճակատին («Աքիլլես», «Օլեգ»), ապա և դրա հետ միաժամանակ աշխարհը փոփոխական է («Էսպես չի մնա»):

Եթե անխելքներն իրենց համար դարդ են հնարում ու իրենց գլխից անպակաս անում լաց ու կոծը («Մուկիկի մահը»), ապա և խելացի, հնարագետ մարդու համար կյանքը միշտ էլ ուրախ է («Քեֆ անողին քեֆ չի պակսիլ»):

Ազգային և սոցիալական կրկնակի ճնշման և հալածանքների ենթակա ժողովուրդը դիմացկուն է («Արծիվն ու կաղնին»):

Ժողովուրդն իր անհատների ու հատվածների ոչնչացման անվերջ շղթայում մի բան է տեսել միշտ, որ ինքը միշտ մնացել է, որ ինքը անմահ է: Շատ արգելքներ, փորձանքներ, վտանգներ կպատահեն այդ երկար ճանապարհին, չարը շատ կդիմադրի, բայց բարին, գեղեցիկը, արդարը վերջ ի վերջո կհաղթեն («Յազարան բլբուլ» և ժողովրդական հեքիաթների հիմնական իդեան): Անձնական ձեռներեցությունը, իր վիճակի տնօրինման համար մղելիք պայքարը խորթ չեն ժողովրդի համար: Նա շատ լավ է հասկանում իր դասակարգային հակամարտությունը («...Ու միշտ քանի որ կա շահ ու գերի, ըստրուկ ու տեր, չի լինելու երկրի վրա ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր...») – «Թագավորն ու չարչին»): Եվ ահա, եթե կան չարն ու բարին, տերն ու ստրուկը՝ ապա և կան չարին պատժող ու բարուն վարձատրող սաղմեր բարու և չարի իրենց իսկ սեփական բնույթի մեջ («Լեզուն կտրած ծիտիկը», «Չարի վերջը»): Այս ամենը ժողովրդի հայացքն է իր անհատների ու հատվածների ճնշման ու ոչնչացման, մասնակի փրկության, ելքի մասին: Բայց ժողովուրդն իր ողջ կոլեկտիվի կյանքի և մահվան, օրհասի խնդրում հերոսական է: Բողոքում է, կռվում

բռնակալության դեմ և հաղթում («Սասունցի Դավիթ»): Ապա վերջապես ժողովուրդը ժողովրդի դիմաց խաղաղասեր է, եղբայրական, հաշտության ձգտող («Հայավաթի երգը»): Ժողովուրդը հունամիստ է, օպտիմիստ, կենսուրախ, համբերատար, ճշմարտության սպասող և հավատացող:

Ահա որտեղից են գալիս թունանյանի թախիծը, վիշտը, հույսը, սպասումը, օպտիմիզմը, լայնասրտությունը, հունամիզմը:

Այսպիսով թունանյանի թախիծի և ուրախության աղբյուրները որքան էլ անհատական վիճակն է, բայց ավելին և գլխավորապես՝ նրա էպոխայի արծագանքներն են, որովհետև թունանյանի ներքին «կենսագրությունը» իր ժողովրդի կենսագրությունն է: Թունանյանի էպոխան՝ դա ցարական բուրժուական-կալվածատիրական, թավադական (թունանյանի համար բնորոշ) հասարակարգն էր, հայ կյանքի ծխական եկեղեցական նեղ շրջապատը, հայ գյուղացիության, հայ ժողովրդի ազգային և դասակարգային կրկնակի ճնշման իրականությունը, գրական հասարակական կուլտուրայի ցածր մակարդակը, մամուլի բիրտ բարքերը, որի մեջ ապրում, պայքարում, ստեղծագործում էր բանաստեղծը: Թունանյանը նախագուշակում էր իր ճնշված-հալածվածների փրկությունը: Կապիտալիստական կալվածատիրական Ռուսաստանը պատրաստվում էր սոցիալական մեծ ցնցումների: Թունանյանի էպոխան շարժվում էր: Եվ թունանյանն այդ իրականությունը սոսկ արծանագրող և նրա մասին սոսկ փիլիսոփայող բանաստեղծ չէր: Առանց վշտի, ցասումի, առանց բողոքի չէր պատկերում իր ապրած իրականությունը: Գիշտ է, այդ իրականության շարժումը, նրա շարժիչ ուժերի գոյությունը, նրան փոխելու գաղափարը գիտակցված ու կազմակերպված չէր թունանյանի մեջ, բայց այն վիշտն ու ցասումը, բողոքի զգացումը, որով տոգորված էր բանաստեղծը՝ դա ինքնին իր հերթին մի քննադատություն էր իրականության և կոչ՝ փոխելու այն: Գյուղի մռայլ իրականությունը փոխող շարժիչ ուժերը չկան թունանյանի պոեզիայում, բայց որքան էլ որ նա հրաշալի կերպով պատկերավորեց այդ իրականության հակամարտ տրամադրությունները, գյուղի իշխանավորների, չինովնիկների լծի տակ տնքացող, հառաչող և վերջը «ղաչաղ» (փախստական) դարձող չքավոր գյուղացիությանը՝ նա տվեց այն պոտենցիալը, որ ունեին այդ ճնշված-հալածվածները Ռուսաստանի առաջին և երկրորդ հեղափոխությունների նախօրյակին: Թունանյանի ռեալիզմը հենց այդ իրականության քննադատությունն էր:

Թունանյանը վերադարձավ «գյուղ», ընտրեց «Լոռին» և արտաքննապես ապրելով «քաղաքում» չդարձավ ուրբանիստ

բանաստեղծ: Սակայն «Լոռին», «գյուղը» չդարձավ նրա ստեղծագործության համար մի այնպիսի նեղ շրջանակ, որ նա մեզ ներկայացնար իբրև սոսկ ժողովրդական, արվեստական երգի բանաստեղծ: Սոսկ ժողովրդական երգի իմիտացիան թոււմանյանի ստեղծագործությունների մեջ բռնում է որոշ տեղ: Սակայն նա իր փոքրիկ գավառի սահմանից այնքան դուրս եկավ, որ մտավ ողջ հայ ժողովրդի կյանքի սահմանները և իր գավառով ներկայացրեց ողջ հայ ժողովուրդը: Թոււմանյանն օգտագործելով ժողովրդական ստեղծագործության հում նյութը՝ գնաց այդ նյութի մշակման այն ճանապարհով, ինչով որ Պուշկինը ժողովրդական նյութերի գեղարվեստական մշակման մեջ: Սա այն ուղին է, որ ավելի բարձր, ստեղծագործական լայն ու խոր մշակման ենթարկելով՝ Գյոթեն տվեց իր «հեքիաթը» – «Ֆաուստը»: Թոււմանյանը ձգտում էր այդ ուղիով տալ իր ստեղծագործության գլուխգործոցը, բայց դա մնաց կիսատ – «Հազարան բլբուլը»: Սակայն այն բոլորը, ինչ որ տվեց նա՝ լինի լիրիկական երգ թե բալլադ, պոեմ – բոլորը սոցիորված են ժողովրդականությանը, որ Թոււմանյանին դարձնում են ժողովրդական և ժողովրդային:

Թոււմանյանը իր ողջ գրական արվեստը մշակեց թեև ռուսական մեծ բանաստեղծների՝ Պուշկինի, Լերմոնտովի որոշ ազդեցությամբ, բայց շատ շուտով նա ստեղծեց ժողովրդական, ուրույն, ինքնատիպ արվեստ: Եթե այդ ազդեցությունը, որին ենթարկված էին Նալբանդյան, Շահազիզ, Գովհաննիսյան՝ Թոււմանյանին ևս դրոշեց սկզբնական շրջանում տալ «Ինձ մի խնդրիր», «Մի որոնիր» և մնան տիպի երգեր, և «Դեպի Անհունը» պոեմի մնան ոճեր, ապա հետագայում դրանց տեղը բռնեցին քառյակների, «Անուշի», «Թմկաբերդի» մնան «Արևելյան», այսինքն՝ հայ ժողովրդական ոճի ստեղծագործություններ:

Թոււմանյանի պոեզիան ինքնատիպ ոճի, արվեստի պոեզիա է, և եթե Թոււմանյանը արվեստական երգի ժողովրդական բանաստեղծ չէ, նույնպես և նրա արվեստը սոսկ ժողովրդական չէ: «Անուշը», «Թմկաբերդի առունը» գրական բարձր ձևեր են ժողովրդական էպիկայի ոճով գունավորված (մախերգները, միջներգերը, վերջերգերը, աշուղը, բայաթիները և այլն): «Հազարան բլբուլը» գրական-ժողովրդական ձև է, հեքիաթի հենքով: Իսկ այնտեղ, ուր պոեմի կառուցվածքը պուշկինյան, լերմոնտովյան պարզ պատմվածքն է, Թոււմանյանը տալիս է այնպիսի ուժեղ, անջինջ, տպավորվող մի լեզու, ոճ, որ հավիտյան չի մոռացվի («Հառաչանք»):

Թոււմանյանի կառուցվածքները կուռ են, սեղմ, պարզ՝ իրենց արխիտեկտոնիկայով, պարզ՝ իրենց օրնամենտով: Նա չունի «շքեղ» ոճ: Դա հայկական ոճի կոնստրուկտիվ, խիստ ու վսեմ պարզությունն է,

ուր օրնամենտը բռնում է երկրորդական տեղ: Թունանյանի պատկերները մանրամասների մեջ չլինելով՝ ամբողջության մեջ ուժեղ են: Նա այստեղ հետևում է իր ժողովրդին, և չի սիրում հիանալ իր ասածով, նա հետամուտ է իր գլխավոր նպատակին – պատկերել կերպարը, պատմել անցքը, տալ բուն գաղափարը, ազդել գլխավորը ներկայացնելով:

Այստեղից է, որ Թունանյանի բանաստեղծություններն ու պոեմները շատ էլ հագեցված չեն իր սեփական, լեզվական, ոճական գյուտերով, այլ կառուցված են ժողովրդական ոճի, լեզվի ֆակտուրայով:

Նա կառուցող՝ ստեղծագործող վարպետ է, շարում է քարտաշի պատրաստած քարերը, բայց տալիս է իր ընդհանուր շենքը: Այս է Թունանյանի ոճի, լեզվի ժողովրդական լինելը:

Թունանյանը գնաց իր ժողովրդի ստեղծագործությունների ուղիով, բայց անմասն չմնաց այլ ժողովուրդների ստեղծագործության աղբյուրներից: Նրա բազմաթիվ թարգմանություններն ու փոխադրությունները ցույց են տալիս, որ համաշխարհային ողջ ժողովրդական ֆուլկլորը նրա զբաղմունքի առարկան է եղել: Եվ Թունանյանի ժողովրդայնությունը նրան դարձրեց հումանիստ, օպտիմիստ, ազգերի համերաշխության, համամարդկային գաղափարներով տոգորված բանաստեղծ:

Այստեղ է նրա ուժը, նրա այն կենսունակությունը, որ հետագայում (մեր օրերում) նրան տալիս է նոր նշանակություն – համաժողովրդական և ինտերնացիոնալ: Այն ժողովուրդը, որ իր տանջանքների, հալածանքների «մութ աշխարհից» պայքարի, հույսի, պայքարի և հաղթանակի ուժով դուրս եկավ իր լուսավոր ազատության աշխարհը՝ նա հիշում է իր սև անցյալը և այդ անցյալի իր մեծ երգչին: Եվ այն գրականությունը, որ այսօր ազատության և կուլտուրայի մեծ օրն է վայելում, իր զարգացման, ստեղծագործական վերելքում միշտ աչքի առաջ կունենա ժողովրդային մեծատաղանդ բանաստեղծի վիթխարի գործը, որը ճանապարհի հարթեց ներկա գրական կուլտուրայի համար:

Սրտախոր թախծի, ցասման, մարդկային սիրո, հույսի, սպասման, ժողովուրդների եղբայրության, իմաստության, լավատեսության և հորհրդային իշխանությանը ջերմ ժպիտով ողջունող մեծ բանաստեղծը եկավ ժողովրդի հավիտենական սրտից ու հար կապրի այնտեղ:

1939թ.

[1500 78]

Մեծերը ամենամեծի մասին (վերնապան անդամները թումանյանին)

Հրատարակության խորհրդատու՝ **Օ.Ն. Գրիգորյան**
Խմբագիր՝ **Ա.Լ. Սահակյան**

*Գրքի լուսանկարները տրամադրել են թումանյանի և
գրականության ու արվեստի թանգարանները*

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24

A ii
85399